# Էջմիածին



ՌՅՂԹ

Է. ՏԱՐԻ

Մայիս — Յունիս

# ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական Աթոռոյ
Ս. Էջմիածնի

1950

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ի կոնդակը Վարդանանց և Ղևոնդյանց 1500-ամյակի առթիվ . . . . . . . . . . . . . 3
Ազգային Մեծ Տոնը . . . . . . . . . . . . . 13
ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ.ի կենսագրությունը . . . . . . . . . 16
ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՉՅՈՐԵՔՉՅԱՆ, Ս. Էջմիածնի տոնը . . . . 20
ՍՈՂՈՄՈՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ (ԿՈՄԻՏԱՍ), Շնորհալին . . 23
Ե. ՇԱՀԱԶԻԶ, Իմ գրագրությունը էստոնացի դոկտոր Պաուլ Արիստեի հետ Խաչատուր Աբովյանի մասին . . . . . . . . . 27
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց . . . 29
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Հովհաննես Սարկավագի մաթեմատիկական աշխատությունը . . . . . . . . . . . . . 33
ՍԱՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ, Տոները Ս. Էջմիածնում . . . . . . 43
ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՍԼԱՄԱԶՅԱՆ, Այցելություն Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմերին . . . . . . . . . . . 45
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ընդամյա նվաճումները 48
ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ, Տարեվերջի քննությունները Հոգևոր Ճեմարանում . . . . . . . . . . . . . . 52
Ի. ՄԱՐՏԻՐՅԱՆ, Էջմիածին . . . . . . . . . . . . 55
Ք. ԳԵՈՐԳՅԱՆ, Ռուս մեծ զորավար Սուվորովը . . . . . . . 56
Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը և Ամենայն Հայոց Հայրապետությունը . . . . . . . . . . . . 60
Վեհափառ Գևորգ Զ. Կաթողիկոսը Օշականում . . . . . . . 65
Լ. ԱՃԵՄՅԱՆ, Հովհաննես Այվազովսկի . . . . . . . . . 67
ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խրիմյան Հայրիկի նամակագրությունը ծովանկարիչ Հ. Այվազովսկու հետ . . . . . . . . . . . 70
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Մարտիրոս Սարյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկո . . . . . . . . . . . . . 74
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ . . . . . . . . . . . . . 76
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . 81
Դասական հայերենի դասընթացը Բուխարեստի սլավոնական և արևելյան լեզուների ինստիտուտում . . . . . . . . . . 89
Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի մեկնումը դեպի Եվրոպա 90
Ա. Ա., Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյան, Մայր ցուցակ ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու . . . . . 92
Սփյուռքից ստացված նոր հրատարակություններ . . . . . . 94
Գիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ . . . . 95



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր № 417

Հայպոլիգրաֆհրատի № 2 տպարան, Երևան, Կուսակցության փող. № 8, 1950 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Զ.Ի ԿՈՆԴԱԿԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ 1500-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

**ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ:**

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ, ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:**

«ԶԻ ԹԷՊԷՏ ԵՒ ԵՄՔ ԱԾՈՒ ՓՈՔՐ, ԵՒ ԹՈՒՈՎ ՅՈՅԺ ԸՆԴ ՓՈՔՈՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ, ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՏԿԱՐ, ԵՒ ԸՆԴ ԱՅԼՈՎ ՅՈԼՈՎ ԱՆԳԱՄ ՆՈՒԱՃԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ՝ ՍԱԿԱՅՆ ԲԱԶՈՒՄ ԳՈՐԾՔ ԱՐՈՒԹԵԱՆ ԳՏԱՆԻՆ ԳՈՐԾԵԱԼ ԵՒ Ի ՄԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՍ, ԵՒ ԱՐԺԱՆԻ ԳՐՈՅ ՅԻՇԱՏԱԿԻ»: Այսպես է իմաստաքանել հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը մեր երանելի և մեծանուն քերթողահայրը՝ անմահ Խորենացին:

Գրո հիշատակության և հավետ հավերժացման այդ հոգեզմայլ սխրագործությունները չեն եղել երբեք անիմաստ և արտամույծ պատահականություններ: Բազմախորհուրդ, բնածին և հոյակապ այդ մեծագործությունները բարոյական նշանակներն են եղել հայ ժողովրդի և ցայտուն ապացույցը նրա բարձր նկարագրի:

Թռնակալների մշտապես հարուցած դաժան հալածանքների, վայրենի հորդաների և արյունախում ենիչերիների ձեռքով թափած արյան հեղեղի, ավատանու հոյակապ պալատների և ազնիվ շինականաց համեստ խրճիթների ավերածության և հրկիզման, հոգևոր աննման մշակույթի անկրկնելի գանձերի կորստյան, հափշտակության և ոչնչացման անվերջ կրկնորդված դառնագին օրերի, հոգևոր առաքինության, բարոյական կորովի, ազգային մշակույթի և հավաքական հերոսության այս զմայլիչ մեծագործությունները պատգամ ու ավանդ են հանդիսացել Հայկազյան հետնորդ սերունդներին: Նոքա նախորոշել են ազգային առաջընթացի ուղենիշները և կենսատու աղբյուր ծառայել տոհմական նորանոր առաքինությանց՝ հայրենասիրության, ազգաշինության, հոգևոր վերածննդյան, նորահրաշ հերոսությանց, համազգային սփոփանքի, մխիթարության և հուսադրության:

Անթիվ ու անհամար է շարանը այդ սքանչելագործությանց, որոնք խորհուրդ ու փայլ են տալիս մեր պատմական անցյալին, իմաստավորում և առաքինազարդում թե՛ արյունաշաղախ, բայց բազմախորհուրդ անցյալը և հորահոր առաքինությանց ոգեկոչում հերոսածին ազգիս գալիք սերունդներին:

Այդ սքանչելագործություններից ու մեծագործություններից շատերն այժմ տարբեր ձևով են ըմբռնվում հասարակական այս կամ այն խավերի կողմից: Սակայն կա մեկը այդ հրաշագործություններից, որ մեր ժողովրդի հոգում և հայրենական պատմության էջերում եղել է, կա և կմնա հավիտյան որպես անման ու սրբանվեր կոթող: Այդ՝ Ավարայրի հոգեցունց և հիասքանչ ճակատամարտն է, որի 1500-ամյակի անմեռ հիշատակն է տոնելու հայ հավատացյալ ժողովուրդը 1951 թվի Բուն Բարեկենդանին:

«ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ 1036 ՎԿԱՅԻՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» և «ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ» հերոսական գործը՝ երախտապարտ ու երախտագետ Հայրենիքը, Ազգն ու Եկեղեցին անվերապահ միաբանությամբ համարել են և այսօր էլ ճանաչում են որպես մեծագույն և սրբազնագույն դրվագը հայ ժողովրդի անցյալի հերոսական պատմության, իսկ հերոսամարտիկ նահատակներին՝ «նորահրաշ պսակավորներին» արժանապես դասել ազգային-եկեղեցական սրբոց դասը:

Ազատագրված Հայրենիքիս շենցած քաղաքներում թե գործարանային ավաններում, բանվորական արվարձաններում թե կուլտուրական շենքերում, լուսավորության տաճարներում թե գիտության կաճառներում, ամենուրեք նկարազարդված են հիասքանչ գեղակերպարները քաջին Վարդանա՝ շրջապատված սովետահայ հաղթանակակիր հերոսների պատկերներով:

Վեհիրավ Հայրենյաց վաստակավոր վիպասանն ու քնարերգուն, ալեզարդ աշուղը թե երիտասարդ բանաստեղծը, քանդակագործը թե նկարիչը, երաժիշտը թե երգիչը, հրաշակերտել, գեղերգել և ստեղծագործական մեծ ավյունով անմահացրել են կորովի դեմքերը Վարդան-Ղևոնդի:

Եթե այսքան սրտառուչ է պատմական արժեքավորումն ու բարոյական գնահատականը Ավարայրի հերոսամարտի այստեղ՝ Բնաշխարհի հարազատներիս շարքերում, որոնք մեծագույն երջանկությունն ունեն ապրելու, աշխատելու, ստեղծագործելու և մարտնչելու հայրենի հորիզոնների և Ազգային Պետության հովանու ներքո՝ ո՞չ ապաքեն ավելի են զգալու ի Սփյուռս ցրվյալ վտարաբախտ տարագիր զավակներս, որոնք տակավին զուրկ են սիրեցյալ Հայրենիքի գեղատեսիլ երկնակամարը, սիրեցյալ ազգիս ստեղծագործած կուլտուրական բարիքները և հայրենի ազգային իշխանության հզոր պաշտպանությունը վայելելու երանությունից, մեր տարաբախտ որդիները, որոնց համար ազգային հավաքական գոյության բարոյական կենսատու կռվանները ազատ ու անկախ Հայրենիքին արժանանալու վառ հույսերն են:

Ավարայրի ճակատամարտի Վարդանանց հերոսագործության և Ղևոնդյանց նահատակության 1500-ամյակի համազգային և համաժողովրդական բազմախորհուրդ Մեծ Տոնի նախապատրաստման և հետագային կատարմանը այժմեն իսկ հաղորդակից է լինելու ամեն մի հայ, ո՛րտեղ էլ նա գտնվի, քաղաքական ի՛նչ կարգերում էլ նա ապրի, կրոնական ի՛նչ դավանանք էլ նա ունենա, հասարակական ի՛նչ դիրք էլ նա վայելի և կուսակցական ի՛նչ համոզում էլ նա դավանի:

Ավարայրը հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի բարձունքն է հանդիսանում՝ հերոսական արտահայտությունը Հայ Ազգի

բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի:

Հայրենի Իշխանության և Ազգային Եկեղեցու միասնական գլխավորությամբ սքանչելագործված Վարդանանց ճակատամարտի և Ղևոնդյանց նահատակության 1500-ամյակի տոնակատարության նախապատրաստությունը այժմեն իսկ պետք է մեծագույն առիթը հանդիսանա համայն հայ ժողովրդի և առավելապես Սփյուռքի ողջ հայության՝ վերհիշելու այն ալեզարդ անցյալը, որ հրաշակերտեց և իմաստավորեց Ավարայրի անմահ սխրագործությունը: Սակայն սլանալ դեպի այդ հեռավոր աշխարհը՝ ինքնանպատակ չէ, այլ առիթ՝ ուսանելու հայոց այդ մեծ ու սրբանվեր պատերազմի թողած ժառանգական դասը՝ որդեգրելու առաքինին ու հերոսականը՝ մեր այսօրվա հավաքական գոյության հիմքերը կռել-կոփելու՝ անվերապահ վճռականությամբ դեն վանելով և արմատախիլ անելով այն ամենը, ինչ վտանգում է Սփյուռքի գոյության, նաև՝ հայրենի աշխարհին և Ազգային Պետության անվտանգությանը:

Ավարայրի հերոսամարտի 1500-ամյակի տոնակատարության նախօրյակին թե հետագային հավաքական իմաստությամբ պատասխան է տրվելու այն հարցերին, թե պատմական՝ արտաքին թե ներքին ի՞նչ պատճառների արգասիք էր Ավարայրի ճակատամարտը, ազգային-քաղաքական և ազգային-կրոնական ի՞նչ ուժեր որոշեցին ճակատամարտի ընթացքը և քաղաքական թե բարոյական իմաստության ի՞նչ ժառանգություն թողին Վարդանանք ու Ղևոնդյանք հետնորդ սերունդին:

Հայաստանը աշխարհակալ ահարկու ուժերի անապորույն բախումների մշտնջենական արյունոտ թատերաբեմ լինելով, դարեր շարունակ ավերածվում էր: Այդ արյունոտ անցյալում հայ ժողովուրդը կոտորվում էր, հայ հոգևոր մշակույթը հալածվում և հայ ազգային պետականությունը խարխլվում:

Հայոց պատմության այդ հնագույն շրջանում Հայաստանի նվաճմանը ձգտող մրցակից պետություններն էին Բյուզանդիան և Սասանյան Պարսկաստանը, որոնց բախումները ժամանակավորապես դադար առին այդ երկու բռնակալությունների միջև 387 թվի համաձայնությամբ, որը կնքվեց ի հաշիվ Հայաստանի, որ մասնատվեց, ի հաշիվ հայ ժողովրդի, որ ծվատվեց. իսկ փոքր ինչ անց, նաև ազգային միասնական գերիշխան պետության, որ կործանվեց Բյուզանդական զնդանում և Սասանյան մուրճի հարվածների ներքո:

Այս համաձայնությունը իրապես ժամանակավոր զինադադար էր միայն, որ չէր ապահովում և երբեք չէր կարող ապահովել տևական խաղաղություն և տեղական բնակչության բարեկեցությունը, այլ, ընդհակառակը, հայ ժողովրդին և հայ Հայրենիքը դատապարտում էր նորանոր և առավելագույն ծա՜նր և դաժա՜ն աղետների, քանի որ տարանջատել էր երբեմնի միասնական Հայաստանը, ջլատել նախկին անբաժան հայ ժողովուրդը և խորտակել երբեմնի հզոր ու միասնական ազգապետական իշխանությունը:

Թերևս չէր բնավին քրիստոնյա հավատակցի պատմուճանը հագած Բյուզանդական միշտ խարդախող բռնակալության լուծը, ցեզարիստական Բյուզանդիոնի լուծը, որ ի սկզբանե վարժված էր գայթակղեցուցիչ խոստումների և անպատկառ ուխտադրժումների:

Սակայն առավել ծանր էր վիճակը Սասանյան Պարսկաստանի լուծի տակ հեծող մարզպանական Հայաստանի և հայրենաբնակ հայության. ծանր ու դաժան՝ ո՛չ միայն քաղաքականապես, այլ և տնտեսապես: Տնտեսական հրեշ-

ման ու հարստահարության ծանրագույն բեռի տակ տնքում էր, առաջին հերթին և ամենից ավելի, հայ աշխատավորը, հայ շինականը, որ մինչ այդ և հետագային էլ տառապում էր նաև հայրենի նախարարական ավատականության լծի ներքո:

Սասանյան անողոք բռնապետությունը աշխատեց հայ ժողովրդին ամբողջապես քայքայելու համար, փորձեց Հայաստանում աշխարհագիր կազմակերպել, ավելի ծանրացնելու համար տեղից վերցվող հարկերը և տուրքերը: Հայոց մեծ պատերազմի անզուգական պատմիչը՝ ոսկեծղիկն Եղիշե, արտամորմոք արձանագրում է. «ՈՒՍՏԻ ԱՐԺԱՆ ԷՐ ԱՌՆՈՒԼ ՀԱՐԻՒՐ ԴԱՀԵԿԱՆ, ՆՈՅՆՉԱՓ ԿՐԿՆԷԻՆ ԵՒ ԱՌՆՈՒԻՆ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ԵՐԻՑԱՆՑ. (ՀԱՐԿՍ) ԴՆԷԻՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՇԻՆԱՑ, ԱՅԼ ԵՒ ԱՒԵՐԱԿԱՑ: ՆՍ ՃՆԱՐ Ո՞Վ ԻՍԿ ԿԱՐԷ ՊԱՏՄԵԼ ՎԱՍՆ ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՄՏԻՑ ԵՒ ՍԱԿԻՑ, ԲԱԺԻՑ ԵՒ ՀԱՍԻՑ, ԼԵՐԱՆՑ ԵՒ ԴԱՇՏԱՑ ԵՒ ՄԱՅՐԵԱՑ: ՈՉ ԸՍՏ ԱՐՔՈՒՆԻ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌՆՈՒԻՆ, ԱՅԼ ՀԻՆԱԲԱՐ ՅԱՓՇՏԱԿԵԼՈՎ, ՄԻՆՉԵՒ ԻՆՔԵԱՆՔ ԻՍԿ ՄԵԾԱՊԷՍ ԶԱՐՄԱՆԱՅԻՆ ԹԷ՝ ՈՒՍՏԻ՞ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ԳԱՆՁ ԵԼԱՆԷ, ԶԻԱ՞ՐԴ ՉԷՆ ԿԱՅՑԷ ԱՇԽԱՐՀՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ»:

Տնտեսապես արհամարհել Հայաստանը և կտրել հայ ժողովրդի գոյության պատվանդանը— ահա՛ թե ի՛նչ անողոք քաղաքականություն էր ընդգրկել Հազկերտյան բռնակալությունը: Հարվածը ուժգին էր և աղետը համազգային: Աշխարհիկ թե հոգևորական, ավատական թե շինական, արհեստավոր թե առևտրական, կրում էին և զգում տնտեսական հարվածի ծանրությունը: Համազգային աղետը ստեղծում էր միաժամանակ համազգային միասնական դիմադրության պահանջ ու կամք:

Աշխարհակալ զորեղների ձեռքով Հայաստանը չնայած զրկվել էր իր ազգապետական միասնական իշխանությունից և վեհապետական իրավունքներից, սակայն դեռ մնում էր հայոց ազգային զորքը և մանավանդ քաջամարտիկ այրուձին: Հեռացնել Հայաստանից Հայրենիքի պաշտպան ազգային զորքը, զրկել հայ ժողովուրդը ազգային ինքնապաշտպանության և դիմադրության հիմնական ռազմական ուժից, օգտագործելով այն Պարսկաստանի սահմանների անձեռնմխելիությունը և պետականության անսասանությունը պաշտպանելու, խնայելով պարսկական ազգային ռազմական ուժերը ի հաշիվ հայ զորաբանակի և կռվում ոչնչացնելով հայոց ազգային բանակի պանծալի զորական շարքերը— այս էր Սասանյան բռնակալության ճիվաղային ծրագիրը:

Վերացվել էին հայ աշխարհի ազգապետական միասնությունը, քաղաքական գերիշխանությունը և ընդհանրական ինքնուրույն կենտրոնը, սակայն կանգուն էին տակավին նախարարական իշխանությունները աշխարհներում, երկրներում, մարզերում և ամրակուռ բերդերում: Ավատիշխան նախարարների շարքում կային նաև այնպիսիները, որոնք իրենց տոհմական իրավանց շահերը զուգորդում էին ընդհանրական-համազգային իրավանց ու շահերի հետ, իսկ ոմանք այդ նախարարներից, Մամիկոնյանց ղեկավարությամբ, մեծապես նախանձախնդիր էին համազգային միաբանության, համերաշխության և զինակցության, ի փառս Հայրենիքի և ազգի, և ի փրկություն ու վերականգնումն Հայաստանյայց ազգային ինքնիշխան և գերիշխան պետության:

Կանխապես նախատեսել ու ստեղծել ռազմա-քաղաքական համազգային համերաշխություն ու գործակցություն դժվար չէր, քանի որ գոյություն ուներ Սասանյան Պարսկաստանի դաժան և դավադիր քաղաքականությունը Հայաս-

տանի և հայ ժողովրդի նկատմամբ, որն ամեն կերպ հրահրում էր ավանդական միջնախարարական թշնամությունները, քաղաքական նախասիրությունները, փառամոլ տրամադրությունները, կենտրոնախույս ոտնձգությունները, միշտ սպառնալիքներ կարդալով և մերթ խոստումներ շռայլելով։

Սակայն կային նաև մեծապես ներազդեցիկ երկու բարոյական ուժեր, որոնք հոգեպես շաղկապում և համազգայնորեն կազմակերպում էին ողջ հայությունը և պահակում Հայ Հայրենիքը։

Այդ՝ հայ հոգևոր մշակույթն էր, հայեցի գիրն ու գրականությունը։

Այդ՝ Հայաստանյայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին էր և իր նվիրական Մայր Աթոռը։

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ստեղծած սքանչելագործ հայ գիրը և նրանց դաստիարակած թարգմանչաց սերունդի մեծագործությունը՝ հայ գրականությունը՝ հանդիսացան այն հոգևոր ամրոցը, որ բարոյապես վերածնեց հայ ժողովրդին և իմաստավորեց նորա հանրային կյանքը։

Հայ գիրն ու գրականությունն էր, որ ազատագրեց հայ ժողովրդին և՛ հեթանոսական խավարի վերապրուկներից, և՛ ասորահելլենական օտարացնող ազդեցություններից։ Հայաստանյայց Եկեղեցու և հայկական մշակույթի շնորհիվ էր, որ երկրայնորեն անջատեալ և քաղաքականորեն անիրավացյալ հայ ժողովուրդը, Սասանյան Պարսկաստանում թե Բյուզանդական կայսրության լուծի տակ, ինչպես և բնաշխարհից ի Սփյուռս տարագրյալ, պահպանեց իր գոյությունը և մնաց անբաժան-միասնական։

Հայ հոգևոր դասն էր, որ գիտակ իր վեհ կոչման ու խորհուրդին, նախաձեռնողը, շարունակողն ու գլխավորողը, կազմակերպողը, ոգեշնչողն ու իմաստավորողը հանդիսացավ ազգային-կրոնական մշակույթի և ազգային-ժողովրդական միասնականության։ Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց, Հովսեփ Հողոցիմցի ու Ղևոնդ Երեց, Գյուտ Կաթողիկոս թե Հովհաննես Մանդակունի, Մովսես Խորենացի թե Եզնիկ Կողբացի, Եղիշե Վարդապետ թե Ղազար Փարպեցի և ամբողջ երկար շարանը այլ երանելիների ու վաստակավորների, ծնունդ էին հայ ժողովրդի և հայ Եկեղեցու, կրողներն էին ոչ միայն հոգևոր կոչման, այլ և դաստիարակիչը հայության, արթուն պահակողն ու պաշտպանը Ազգի ու Հայրենիքի, կրողն ու կենսագործողը ազգային հոգևոր մշակույթի և միաժամանակ մխիթարիչն ու հուսադրիչը ժողովրդին վիճակված հարատև հալածանաց և աղետից պահին և ավանդապահն ու հրահրողը, կրողն ու կազմակերպողը միացյալ և անկախ Հայաստանի, ազգային և ինքնիշխան պետության գաղափարների։ Հայ հոգևոր դասը խաղաղության թե պատերազմի ժամին, ռազմաճակատում թե թիկունքում, անձնուրաց արիությամբ իր ուսերին կրեց տանջանաց խաչը, բարձրացավ հայկական Գողգոթան և խաչելության իսկ բարձունքից՝ Հայրենիքի ազատության և ազգի փրկության կոչն արեց հայ ժողովրդին։

Կրոնափոխել հայ ժողովրդին, ձուլել հայ քրիստոնեությունը մազդեզականության մեջ և դրանով իսկ վերացնել Հայաստանյայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ արտահայտիչն էր ո՛չ միայն քրիստոնեական անսասան հավատի, այլ և աղբյուր հայ ժողովրդի հոգևոր առաքինության, ազդարար ազգային-քաղաքական ազատության և միասնական Հայրենիքի— ահա թե ի՞նչ չարանենգ ու դաժան արշավում է արձակում Սասանյան Պարսկաստանի գազազած բռնակալությունը Շապուհների և Հազկերտների, Դենշապուհների և Միհրներսեհների բերնով։ Սասանյան Պարսկաստանը ձգտում էր

զրկել Հայ Եկեղեցին և հայ հոգևոր դասը ա՛յն դարավոր իրավունքներից և առանձնաշնորհումներից, որոնք վերապահված էին հայրենի իշխանության օրոք ու ձեռքով, ա՛յն իրավունքներից և առանձնաշնորհումներից, որոնք ի սպաս են դրված եղել հայ գիր ու գրականության, դպրոցների ու հիվանդանոցների, աղքատների ու անկարների:— Խարխլել անտեսական և իրավական հիմքերը եկեղեցու, հոգևոր դասի, զրկել հոգևորականությունը ժողովրդին խնամատարելու, լուսավորելու, մխիթարելու կոչումից և հնարավորությունից, ջլատել Հայաստանյայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցու միասնությունը, ստեղծելով հակաթոռներ, խրախուսելով կենտրոնախույս տարրերը, անարժաններին մեծարելով և արժանավորներին հալածելով, սերմանելով որոմն գժտության, քորքոքելով հատվածամոլ ու տեղասիրական շահերն ու տրամադրությունները, կասեցնել ու իսպառ վերացնել հայ քրիստոնեական կրոնի-հավատի համազգային հողակապիչ էությունը, բնությունն ու գործունեությունը:

Հազկերտ-Միհրներսեհները լավ էին գիտակ, որ Բյուզանդական կայսերական իշխանությունն ևս, իր հերթին, քրիստոնյա կրոնակից հայության դավանափոխության ծրագիրն ու քաղաքականությունն էր առաջ քաշում և երբեք չէր գա օգնության հայ ժողովրդին ու Հայ Ազգային Եկեղեցուն:

Սակայն Սասանյան դաժան ինքնակալությունն անտեսել էր, թե ո՛րքան է արմատավորվել և արգասավորվել քրիստոնեական կրոնը հայ ժողովրդի հոգում, ո՛րքան է նա դարձել հոգեհարազատ և համազգային հայ ժողովրդի համար: Նա հաշվի չէր առել նաև, թե ո՛րպիսի անխզելի կապերով է հողակապվել Հայ Եկեղեցին ու հայ հոգևորականությունը հայ ժողովրդի հետ:

Եվ երբ Հազկերտյան բռնապետությունը անցավ իր ծրագրի կենսագործմանը ու կրոնափոխության հրամանը արձակեց, հայ ժողովուրդը իր երանելի Հայրապետի՝ Հովսեփ Հողոցիմցու գլխավորությամբ, Արտաշատի Ազգային-եկեղեցական մեծ ժողովում տվեց իր հոգեզմայլ պատասխանը. «ՅԱՅՍՄ ՀԱՎԱՏՈՅ ԶՄԵԶ ՈՉ ՈՔ ԿԱՐԷ ԽԱԽՏԵԼ՝ Ո՛Չ ՀՐԵՇՏԱԿՔ ԵՒ Ո՛Չ ՄԱՐԴԻԿ, Ո՛Չ ՍՈՒՐ ԵՒ Ո՛Չ ՀՈՒՐ, Ո՛Չ ՋՈՒՐ, Ո՛Չ ԱՄԵՆԱՅՆ ԶԻՆՉ ԵՒ ԴԱՌՆ ՀԱՐՈՒԱԾՔ»:

Հայ ազգային պետականությունը վերացվել էր, սակայն կենդանի էր և հոգեպես քաջարի հայ ժողովուրդը: Ավատիշխան թագավորը չկար, բայց հայ ժողովրդին պահակում էր Հայ Ազգային Եկեղեցին և հովվում իր արքուն Հովվապետը, որ ազգային-քաղաքական իշխանության վերացմամբ դարձել էր ո՛չ միայն կրոնապետը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, այլ և միաժամանակ ազգապետը համայն հայության:

Հուսադրված Տիզբոն հրավիրյալ հայ նախարարների ուրացությամբ և կրոնափոխության սին խոստմամբ, հավատացած ժողովրդի խոնարհ հնազանդության, Սասանյան Պարսկաստանը, զինված բանակով, զրադաշտական մոգերի հետ միասին ոտք կոխեց մեր հայրենի սրբազան հողը և հանդգնեց ավերել քրիստոնեական տաճարները ու փոխարենը հեթանոսական ատրուշաններ կանգնել:

Եվ ահա այստեղ էր, որ հայ ժողովուրդը զգալ տվեց մոլի ու գոռ Հազկերտին, որ հայը մկրտվել է Տրդատ-Լուսավորչյան ավազանում և վերամկրտվել Սահակ-Մեսրոպյան հոգևոր նոր ավազանում: Հայ ժողովուրդը միակամ և միահամուռ ծառացավ եկվոր բռնակալի դեմ: «ԺՈՂՈՎԵՑԻՆ ՅԻԱՅՄՈՒԹԻՒՆ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ՇԻՆԱԿԱՆԱՑ ԵՒ ԱԶԱՏԱՑ, ԶՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ԶՄԵՆԱԿԵՑԱՑ,— պատմում է Եղիշեն,— ԵՐԵՒԵՑԱՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ ԶԻ-

ՆԵԱԼՔ ԵՒ ՍԱՂԱՒԱՐՏԵԱԼՔ, ՍՈՒՐ ԸՆԴ ՄԷՋ ԵՒ ՎԱՀԱՆ Ի ՁԵՌԻՆ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՐԱՆՑ ՔԱՋԱՑ, ԱՅԼ ԵՒ ԿԱՆԱՆՑ ԱՌՆԱԿԱՆԱՑ, ԳԱՏՐԱՍՏ Ի ՍՊԱՆԱՆԵԼ ԵՒ Ի ՄԵՌԱՆԵԼ»։

Այսպես դիմավորեց հենց ինքը՝ հայ շինական ժողովուրդը, որի շարքերում այդ ժամանակ չկային հայ նախարարներ և իշխաններ, որոնք մոգերի ուղեկցությամբ և պարսից զորքերի հետ գալիս էին Հայաստան, ազգուրացի և ուխտադրուժի դիմակով սևավորված։ Իր իշխանավոր տերերի կեղծուրացության անգիտակ, հայ շինական ժողովուրդը սկիզբը դրեց Բագրեվանդում ազգային-ժողովրդական դիմադրության, ազգային-ազատագրական մեծ պատերազմին, որ սկզբնավորվեց Բագրևանդի Անգղ գյուղավանում, փառապսակվեց Ավարայրում և հաղթանակեց Նվարսակի դաշնագրությամբ։ Բագրեվանդը հերոսական մարտակոչ էր։ Բագրեվանդը միաժամանակ բարոյական մեծախորհուրդ նշանակն էր հայ ժողովրդի և Հայ Ազգային Եկեղեցու հոգևոր-քաղաքական միասնականության։ Բագրեվանդում հանդես եկավ ինքը, բուն ժողովուրդը, որին գլխավորում և առաջնորդում էր ո՛չ թագավոր, ո՛չ նախարար և ո՛չ իշխան, այլ այդ իսկ ժողովրդի հարազատ և անդավաճան հոգևոր հովիվը՝ Ղևոնդ Երեցը։

Բագրևանդի ազգային-ժողովրդական այս հոյակապ ընդվզմամբն սկիզբ էր առնում այն հոգեզմայլ հերոսամարտը, որ առաքինության դափնիներով առհավետ փառազարդեց ու հաչս համայն աշխարհի անմահացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որի ծոցից դուրս են եկել ազգային ազատագրական պայքարի պանծալի հոգևոր դեմքերը՝ Սահակ ու Թաթիկ եպիսկոպոսներ, Արշեն ու Մուշե երեցներ, Սամվել ու Աբրահամ քահանաներ, Քաջաջ սարկավագներ և այլ բազմաթիվ առաքինազարդ կրոնավորներ, որոնց սուրբ հիշատակը հավերժ խնկելի է հավատացյալ հայ ժողովրդի հոգում։

Համաժողովրդական այս խանդավառությունը և քաջարի վճռականությունը անվերապահորեն ոգևորել էր անհաղթահարելի նշանաբան-պատգամներ. «ԳԱՏՐԱՍՏ ԵՄՔ Ի ՍՊԱՆԱՆԵԼ ԵՒ Ի ՄԵՌԱՆԵԼ, Ի ՀԱԼԱԾԱՆՍ ԵՒ Ի ՍԱՀ», «ՔԱՋՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՅՆ ՄԵՌՑՈՒՔ, ԶԱՆՈՒՆ ԵՒ ԶՈԳԻՍ ԵՒ ԵԹ ԺԱՌԱՆԳԵՍՑՈՒՔ», «ՄԱՀ ՈՉ ԻՄԱՑԵԱԼ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ»։

Անձնվեր հայրենասիրության և ուխտապահության այս նվիրական դրոշակի ներքո ալեկոծվեց ու ծառացավ ժողովրդական տարերային ալիքը, ի տես որո կեղծուրացության քողը պատառեցին նաև քաջամարտիկ նախարարք հայոց, փութանակի ձեռնամուխ լինելով կազմակերպել ու ռազմականորեն ղեկավարել վերահաս օրհասական գոտեմարտը Սասանյան գոռոզ բռնակալի հետ։

451 թվի վաղ գարնան, Արտազ գավառի սահմաններում, Տղմուտ գետի ափին, Ավարայր գյուղի մոտ տեղի ունեցավ ճակատամարտը։

«ԵՐԿԻՒՂ ԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԵԱՆ Է ՆՇԱՆԱԿ. ԶԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ ՄԵՔ Ի ՄԷՆՋ ՎԱՂ ՄԵՐԺԵՑԱՔ, ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ԵՐԿԻՒՂՆ ՓԱԽԻՑԷ Ի ՄՏԱՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ ՄԵՐՈՑ»— այսպե՛ս է մարտակոչում քաջարի հայ զորաց քաջահաղթ Սպարապետն հայոց անմահ Վարդանն Մամիկոնյան ճակատամարտի նախօրյակին։

Ըստ Ավարայրի հերոսամարտի պատմիչի վկայության, «ՈՉ ԵՐԵՒԷՐ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ ԱՌԱՒԵԼ ՏԷՐՆ ՔԱՆ ԶԾԱՌԱՅ, ԵՒ ՈՉ ԱԶԱՏ ՓԱՓԿԱՑԵԱԼ ՔԱՆ ԶԳԵՂՋՈՒԿ ՎՇՏԱՑԵԱԼ, ԵՒ ՈՉ ՈՔ ՔԱՆ ԶՈՔ ՆՈՒԱԶԵՑԵԱԼ ՀԱՅՈՒԹԵՆԷ։ ՄԻ ՍԻՐՏ ՑՈՒԺԱՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ԾԵՐՈՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ»։

Սկսում է ճակատամարտը: Ականատես պատմիչը հետևյալ ձևով է նկարագրում այն. «ԵՐԿՈՔԵԱՆ ԿՈՂՄԱՆՔՆ ԼԻ ՍՐՏՄՏՈՒԹԵԱՄԲ, ԵՒ ԳԱԶԱՆԱՑԵԱԼ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՑԻՐԵԱՐՍ ՅԱՐՁԱԿԷԻՆ ԵՐԿՈՔԵԱՆ ԵՒ ԱՄԲՈԽ ԱՂԱՂԱԿԻՆ ԵՐԿՈՑՈՒՆՑ ԿՈՂՄԱՆՑ, ԻԲՐԵՒ Ի ՄԷՋ ԱՄՊՈՑ ՇՓՈԹԵԼՈՑ, ՃԱՅԹՄՈՒՆՍ ԳՈՐԾԷՐ, ԵՒ ՀՆՉՈՒՄՆ ՁԱՅՆԻՑ ԶՔԱՐԱՆՁԱՒՍ ԼԵՐԱՆՑ ՇԱՐԺԷՐ: Ի ԲԱԶՄՈՒԹԵՆԷ ՍԱՂԱՒԱՐՏԻՑՆ ԵՒ Ի ՓԱՅԼՈՒՆ ՊԱՏԵՆԱԶԷՆ ՎԱՌԵԼՈՑՆ ԻԲՐԵՒ ՆՇՈՅԼՔ ՃԱՌԱԳԱՅԹԻՑ ԱՐԵԳԱԿԱՆ ՀԱՏԱՆԷԻՆ: ՆԱԵՒ Ի ԲԱԶՈՒՄ ՍՈՒՍԵՐԱՑՆ ՇՈՂԼԱԼ, ԵՒ Ի ՃՕՃԵԼ ԲԱԶՄԱԽՌՈՒՌՆ ՆԻԶԱԿԱՑՆ ԻԲՐԵՒ ՅԵՐԿՆՈՒՍՏ ԱՀԱԳԻՆ ՀՐԱԶԳՈՒԹԻՒՆՔ ԵՌԱՅԻՆ, ՔԱՆԶԻ Ո՞Վ ԻՍԿ Է ԲԱՒԱԿԱՆ ԱՍԵԼ ԶՄԵԾԱՄԵԾ ՏԱԳՆԱՊ ԱՀԱՒՈՐ ՁԱՅՆԻՑՆ, ՈՐՊԷՍ ԿՈՓԻՒՆՔ ՎԱՀԱՆԱՒՈՐԱՑՆ ԵՒ ԺԱՅԹՄՈՒՆՔ ԼԱՐԻՑ ԱՂԵՂԱՑՆ ԶԼՍԵԼԻՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԽԼԱՑՈՒՑԱՆԷԻՆ... «ԵՒ ՔԱՆԶԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԷՐ ԺԱՄԱՆԱԿՆ, ԾԱՂԿԱԼԻՑ ԴԱՇՏՔՆ ԴԱՌՆԱՅԻՆ ՅՈՐԴԱՀՈՍԱՆՍ ԱՐԵԱՆՑ ԲԱԶՄԱՑ»:

Ժողովրդական հիասքանչ ու հոգեզմայլ հերոսամարտի օրհասական ժամին, ուխտադրուժ մարզպան՝ Վասակ Սյունեցին դավադրաբար ճեղքեց հայոց բանակի միասնական ճակատը և դավաճանական հարված հասցրեց հայ քաջարի հայրենասերների թիկունքին:

Դարեր անցան Ավարայրի մեծ ճակատամարտից, սակայն երախտապարտ ու երախտագետ հայ ժողովուրդն ու Հայաստանյայց եկեղեցին չմոռացան երբեք «Նորահրաշ պսակաւոր» Վարդանանց ու Ղևոնդյանց սքանչելագործությունը, իրենց սրբածին հերոսների քաջագործությունը և հերոսածին սրբերի նահատակությունը:

Անհիշաչար, բայց արդարամիտ ժողովուրդն հայոց չմոռացավ երբեք նաև ուխտադրուժ և ազգադավ փորձը Վասակ Սյունեցու: Դարեր անց, ոմանք հայազն պատմաբաններից իզուր փորձեր կատարեցին «քաղաքական իմաստության և դիվանագիտական շրջահայեցողության» դափնիներով պսակել Վասակյանց անարժան գլուխը և արդարացնել նրանց, սակայն ունայն անցան այդ ջանքերը: Վարդանների և Ղևոնդների դեմքը մնաց պայծառ և հիշատակը՝ խնկելի, իսկ Վասակ անունը՝ հայ ժողովրդի հիշողության մեջ դրոշմվեց որպես նշանակ ազգային դավաճանության:

Ազգի և Հայրենիքի վարած կյանքի և մահվան հերոսական պայքարի ժամին, ո՛վ ոճրագործ հանդգնությունն ունի ճեղքելու ազգային միասնության ճակատը, առավել ևս դավաճանորեն հարվածելու՝ իրավունքի, ազատության և արդարության անձնվեր մարտիկների թիկունքից, ժողովրդի անհիշաչար հոգում անգամ կարեկցության զգացմունք չի վաստակի և դավաճանի սև կնիքը կընդունի իր ճակատին:

Թե՛ Բագրևանդի համաժողովրդական ընդվզումի և թե՛ Ավարայրի նվիրական ճակատամարտի հերոսական օրերին, ո՛չ միայն բարոյական սրտառուչ առաքինության, այլ և մարտական հրաշագործ անվեհերության կատարյալ ու անկրկնելի տիպար հանդիսացավ հայ կինը, որպես որդեսեր գորովագութ մայր, անձնվեր ու անդավաճան ամուսին, հայրենասեր ռազմիկ հարազատ պայքարի ոգևորող անհման քույր, անգամ՝ զենքը ձեռքին իր հրեշտակային կյանքը ողջակիզող ազգանվեր մարտիկ:

Ոսկեծղիկն Եղիշե իր հերոսական պատմության էջերում, մի անօրինակ գորովալից ու հոգեզմայլ սիրո խանդաղատանքով գեղանկարել և հրաշակերտել է հայ առաքինազարդ հերոսածին ու ինքնին հերոսատենչ «Տիկնայք փափկասունք»ը: Համաշխարհային գրականության գոհարն է կազմում ազգը սիրող

և ազգից սիրված բանաստեղծ պատմագրի մարգարտաշար էջերը, որ գորովալից քնքշությամբ ոգված մի սքանչելի օրհներգ է առաքինի կանանց:

Շուրջ 1500 տարի է անցել այդ հավերժանույշ սրբազան օրերից, սակայն երախտագետ հայը չի մոռացել տակավին և չի էլ մոռանա երբեք Վարդանանց և Ղևոնդյանց դարաշրջանի հրաշագործ հերոսուհիների անման սխրագործությունները, որ գեղերգել են միշտ քանքարաշատ հայ քնարերգուները:

Օտար բռնակալի անագորույն հալածանաց և աղետաբեր արշավին՝ հայ տոհմականք թե առաքինուհին տնա թե ի՞նչպիսի անձնվեր առաքինությամբ պատասխանեցին:

Ավարայրի դաշտում հերոսական մահով ընկավ ինքը՝ քաջամարտիկ Սպարապետն հայոց իր անման զինակիցներով, իսկ հերոսամարտ հայ բանակը նախընտրեց նահանջել, շարունակելու համար ազատագրական պայքարը՝ ճակատային պատերազմը վերածելով աշխարհազորայինի, կազմակերպելով համաժողովրդական դիմադրություն: Ռազմա-քաղաքական պարտություն չէր այդ, այլ մարտական ուժերի վերադասավորում՝ ուժաթափելու և տրեհաքամելու Սասանյան բռնակալությունը:

Եվ այդ լավ զգաց Հազկերտյան քաղաքականությունը, փորձելով Բագրեվանդի ու Ավարայրի հերոսականը ոգեշնչող Ղևոնդյանց դաժան գերեվարությամբ ու նահատակությամբ կոտրել հայ ժողովրդի բարոյական արիությունը, ռազմական կորովն ու համաժողովրդական դիմադրությունը, որը ժամանակ անց, գլխավորեց Մամիկոնյան տոհմի մի այլ քաջամարտիկ և իմաստուն զորավար՝ Վահան Մամիկոնյանը:

Սակայն սրբոց Ղևոնդյանց նահատակությունը հանդիսացավ հզորագույն աղբյուր և խթան համաժողովրդական դիմադրության ծավալման և հզորացման:

Եվ Սասանյան ահռելի բռնապետությունը, անկարող լինելով հաղթահարել հայ ժողովրդի ընդհանրական անդուլ դիմադրությունը, հարկադրված եղավ քաղաքականապես նահանջել և Նվարսակի դաշնագրությամբ ճանաչել Հայաստան աշխարհի ազգային ինքնօրեն վարչության իրավունքը և խղճի, քրիստոնեական կրոնի ազատությունը:

Բագրևանդի դիմադրությունը, Ավարայրի ճակատամարտը, Ղևոնդյանց նահատակությունը և Վահանյանց մաքառումը պսակազարդվեցին հայ ժողովրդի բարոյական-քաղաքական հաղթանակով:

Ավարայրի հերոսամարտը հոգեզմայլ-անհասանելի բարձունքն էր ազատագրական մաքառման— ահա թե ինչո՞ւ նա եղել է, կա և կմնա առհավետ ազգապանծ էջը հայոց պատմության, հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել և մխիթարել է հայազն սերունդներին և ազգային-քաղաքական առաքինության ուղիներն է պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն:

***

Այսօր աշխարհիս ընդհանուր խռովահույզ արդի վիճակում, այլ և ազատագրված մեր Հայրենիքի և ազգանվեր հայ սերունդի հերոսական աշխատանքի, ստեղծագործության և մաքառման այս պատմական վայրկյանին, Մենք բարոյական պարտք ու պահանջ ենք զգում անսահման սիրո և երախտագիտության հիշատակը հավերժացնել և համազգայնորեն տոնել ազգային-ժողովրդական և կրոնա-մշակութային մեծ ու նվիրական հերոսամարտի 1500-ամյակը:

Սրբանվեր այդ հերոսամարտի 1500-ամյակը պետք է ազգովին նվիրագործել և տոնակատարել հանուն վերջնական հաղթանակի այն անձնվեր գա-

ղափարների, որոնց հաղթանակի համար իրենց առաքինի կյանքը զոհեցին Վարդանանք և նահատակվեցան Ղևոնդյանք:

Միածնաէջ Սուրբ Տաճարս, Լուսավորչանիստ Մայր Աթոռս և Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետներն են մեր օրերում ևս քաղցրապես խորհրդանշում այս անհետանելի աստվածային ուժը, որ ա՜յնպիսի սիրով և տաղանդով երգել է ազգանվեր ու կրոնասեր բանաստեղծը.

«Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան, Էջմիածին.
Չես ձեռակերտ դու մարդկեղեն ու առօրյա,
Դու շողակաթ լույս խորան, Էջմիածին»:

Հավատարիմ Վարդանանց ու Ղևոնդյանց քաջագործությամբ և նահատակությամբ նվիրագործված սրբազան ավանդների, Միածնաէջ Տաճարիս ամբիոնից և Մայր Աթոռիս գահի բարձունքներից՝ մենք հայտարարում ենք ի լուր և ի մխիթարություն Բնաշխարհում երջանկացած և Սփյուռքում տարագիր համայն հայ ժողովրդին, որ 1951 թվի Բուն Բարեկենդանը հայտարարվում է Ավարայրի հերոսական ճակատամարտի և Ղևոնդյանց նահատակության 1500-ամյակի համազգային-եկեղեցական տոն:

Համաժողովրդական կրոնական այդ մեծ օրը հանդիսանալու է անսահման երախտագիտության և ազնիվ զգացումների արտահայտության օր՝ Վարդանանց ու Ղևոնդյանց սուրբ հիշատակին:

Փա՜ռք հայրենական, ազգային և վեհիշխան Պետության, որը հավասարազոր և ինքնիշխան անդամն է նվիրական և անպարտելի Սովետական Մեծ Եղբայրության:

Թող հաստատ մնա հայ ժողովրդի հոգենարազատ միասնությունը և ամբողջական միաձույլ համակեցությունը հայ Բնաշխարհի հյուրընկալ ծոցում, որ նվիրական բաղձանքն է հայրենաբնակ երջանիկների և խարիսխը փրկության ու երջանկության Սփյուռքի վտարաբախտ տարագիրների:

Մաղթենք, որ ավելի ծաղկի և բարգավաճի հայ ազգային-հոգևոր մեծարժեք մշակույթը Մայր Հայրենիքում և Սփյուռքում, որ հարազատ արտահայտիչն է հայ ստեղծագործող հոգու և անսպառ գանձն ու բարոյական շաղկապը ողջ Հայության:

Հավետ անշարժ ու անսասան մնա լույս խորան Ս. Էջմիածինը, ուր ալեզարդ Գահակալը ի տվընջյան և ի գիշերի ծնրաչոք և ջերմեռանդ աղոթում է Ամենաբարձրյալին՝ աշխարհի խաղաղության և մարդկանց երջանկության համար:

Գևորգ Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տրված Կոնդակս Հայրապետական
ի 1-ին հունիսի 1950 ամի Փրկչական
և բուն տոմարիս Հայոց ՌՆՂԹ
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ




# ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՈՆԸ

Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակը լրանում է 1951 թվին: 451 թվի մայիսի 26-ին, շաբաթ օրը, Ավարայրի դաշտավայրում, Տղմուտ գետի ափին տեղի ունեցավ հայ ժողովրդի օտարերկրյա ներխուժողների դեմ մղած ամենանշանավոր ճակատամարտերից մեկը՝ Վարդանանց ճակատամարտը: Ազատասեր հայ ժողովուրդը հերոսաբար կռվեց պարսից բռնակալության դեմ, որը ցանկանում էր քաղաքականապես գլխատել հայ ժողովրդին, տնտեսապես քայքայել և կոտրելով նրա կամքը կրոնափոխ անել և ձուլել պարսից ժողովրդի հետ: Անհավասար այդ գոտեմարտում չնայած հերոսի մահով ընկավ հայոց բանակի քաջ հրամանատար Վարդան Մամիկոնյանը և նահատակվեցան 1036 մարտիկներ ու հրամանատարներ, սակայն բարոյական հաղթանակը, վերջին հաշվով, մնաց հայոց կողմը: Պարսից բռնակալությունը հարկադրված եղավ տեղի տալ հայ հայրենասերների ցուցաբերած անօրինակ հերոսության և անխախտ կամքի առջև ու հրաժարվել իր բիրտ քաղաքականությունից: Այսպիսով, ազատագրական այս պայքարում հաղթանակեց հայ ժողովուրդը:

Ավարայրի հերոսամարտը, որը հայրենասիրական բարձր զգացմունքներով գրի են առել ժամանակակից պատմիչներ Եղիշեն և Ղազար Փարպեցին, խորը ազդեցություն ունեցավ հետագա սերունդների վրա: Նա ոգեշնչման աղբյուր և ուղեցույց աստղ հանդիսացավ հետագա դարերում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարում: Հայ ժողովրդի պատմության այդ կարևոր իրադարձությունը սրբագործվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կողմից: Հայ հավատացյալ ժողովուրդն ամեն տարի, անխախտ, տոնում է Վարդանանց և Ղևոնդյանց սուրբ հիշատակը:

1500 երկար ու ձիգ տարիներ անցնելուց հետո, մեր ներկա սերնդին է վիճակված տոնելու դարելիցային այդ խոշոր նշանակություն ունեցող ազգային տոնը: Այդ մասին է հրահանգված Նորին Ս. Օծություն Գևորգ Զ. Կաթողիկոսի կոնդակում, որը տպագրվում է «Էջմիածին» ամսագրի ներկա համարում:

Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակում վերլուծված է Հայաստանի քաղաքական իրադրությունը 5-րդ դարում, պարսից բռնակալության կրոնահալած քաղաքականության նոր ընթացքը ու նրա նպատակները, հայ ժողովրդի ազատագրական մաքառումների տարբեր փուլերը, Ավարայրի ճակատամարտը և նրա պատմական նշանակությունը, Հայաստանյայց Եկեղեցու դերը ազատագրական պայքարում և ազգապահպանման գործում և այլն:

Հայաստանը, ինչպես հայտնի է, 387 թվին բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: Արևմտյան Հայաստանը անմիջապես կորցրեց իր քաղաքական անկախությունը: Հինգերորդ դարի երեսնական թվերին իր քաղաքական անկախությունը կորցրեց նաև Սասանյան գերիշխանության տակ ընկած Արևելյան Հայաստանը:

Հինգերորդ դարի կեսերին, պարսից Հազկերտ թագավորը օգտվելով բարենպաստ քաղաքական իրադրությունից, փորձեց իրագործել իր նախնիքների վաղեմի ծրագիրը՝ կրոնափոխ անել հայ ժողովրդին և ձու-

լել նրան պարսից ժողովրդի հետ: Եվ նա իր այդ ծրագիրն իրագործելու համար սկսեց պառակտում մտցնել հայ ազատասեր շարքերում և վստահելի հենակներ ստեղծեց ազգադավ որոշ նախարարներից: Այդ մասին Եղիշեն վկայում է. «Բռնաւորութեամբ զնախարարեանն էարկ ընդ միմեանս եւ յամենայն տուն արար խռովութիւն»:

Այնուհետև նա ծանրածանր հարկեր դրեց շինական ժողովրդի վրա. «Ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից, եւ հարկաց լերանց եւ դաշտաց եւ մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով...», — դառնացած պատմում է ոսկեծղիկն Եղիշե: Ըստ պատմիչի տեղեկության, հարկեր դրվեցին ո՛չ միայն բնակելի վայրերի, այլ և ավերակների վրա: Հայկական եկեղեցին նույնիսկ հարկի տակ դրվեց:

Որոշ ժամանակ անց, պարսից արքունիքի կողմից արվեց կրոնափոխության առաջարկը: Հայաստանի քաղաքական և հոգևոր ղեկավար շրջանը, հայրենասեր Հովսեփ կաթողիկոս Վայոցձորցու գլխավորությամբ, հավաքվեցին Արտաշատում և խորհրդակցելուց հետո համարձակ պատասխանեցին, որ իրենք անսասան մնում են իրենց դավանած հավատքի մեջ և «Յայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել՝ ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ եւ դառն հարուածք»:

Հայտնի են այնուհետև ծավալված իրադարձությունները՝ մոլեգնած Հազկերտի հրամանով հայ նախարարներին Տիզբոն կանչվելը, նախարարների ակամա կեղծ ուրացությունը, առաջին ժողովրդային դիմադրությունը Բագրևանդի Անգղ գյուղում, Ավարայրի ճակատամարտը, Ղևոնդյանց նահատակությունը, ազատագրական պայքարը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ և Նվարսակի դաշնագրությունը: Վեհափառ Հայրապետի կոնդակում նշված են ազատագրական այս շարժման տարբեր փուլերը, որը «սկըզբնավորվեց Բագրևանդով, փառապսակվեց Ավարայրում և հաղթանակեց Նվարսակի դաշնագրությամբ»:

Ազատության համար մաքառող հայ հայրենասերների ընդհանուր նշանաբանը անձնազոհության բարձր գաղափարն էր, որը շատ հաջող ձևակերպված է Ավարայրի հերոսամարտի պատմիչի՝ Եղիշեի մոտ. «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»:

Վարդանանց հերոսամարտը, ըստ Վեհափառ Հայրապետի կոնդակում տրված բնորոշման, «Հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի քարձունքն է հանդիսանում՝ որպես հերոսական արտահայտությունը հայ ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության, ազգասիրության, եկեղեցական ավանդապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի»:

Ավարայրի հերոսամարտը տոնելիս անհրաժեշտ է մեզ հետադարձ հայացք ձգել հայ ժողովրդի անցյալ պատմության վրա՝ հանրագումարի բերելու այն արդյունքները, որոնց հասել է հայ ժողովուրդը հերոսամարտից հետո ձգվող 1500 տարիների պայքարով:— Ի՞նչ էր Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը հինգերորդ դարում և ի՞նչ է այժմ:

Հինգերորդ դարում հայ ժողովուրդը կորցրել էր իր քաղաքական անկախությունը և երկու մասի բաժանված՝ հարստահարված էր մի կողմից Բյուզանդական իսկ մյուս կողմից Սասանյան բռնակալության կողմից: Այժմ Հայաստանն ունի իր քաղաքական անկախ, ազատ պետությունը և Սովետական կենսատու արևի տակ ծաղկում է և բարգավաճում: Ճիշտ է, Հայաստանի արևմտյան մի շարք շրջաններ դեռևս գտնվում են օտար լծի տակ և արտասահմանում դեռևս կան պատմության չար բախտով ցըրված զգալի թվով հայկական գաղութներ, բայց հայ ժողովուրդը լիովին համոզված է, որ արդարությունը վերջ ի վերջո կհաղթանակի— բռնագրավված այդ շրջանները կվերադարձվեն և ցրված հայ համայնքները կվերադառնան իրենց նվիրական Հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

Մենակ էր հայ ժողովուրդը հինգերորդ դարում: Մենակ և անօգնական, բառիս բուկական իմաստով: Դրացի, վրաց և աղվանից ժողովուրդները հազիվ էին կարողանում կազմակերպել իրենց ինքնապաշտպանությունը, իսկ հարևան քրիստոնյա Բյուզանդիոնը ո՛չ միայն չէր օգնում հայ ժողովրդին, այլ փորձում էր օգտագործել նրա դժբախտ վիճակը: Փառք Տիրոջն Ամենակալին, այսօր հայ ժողովուրդը միայնակ չէ. նրա հետ են այժմ Սովետական Միության միասնական ընտանիքի մեջ մտնող բոլոր եղբայրական

ժողովուրդները, ռուս մեծ և ազնիվ ժողովրդի առաջնորդությամբ:

Խեղճ էր հայ ժողովուրդը հինգերորդ դարում, անկազմակերպ և հետամնաց: Պարսից բանակի դեմ գոտեմարտի դուրս եկած հայ հայրենասերներից շատերը չունեին նույնիսկ զենք թշնամու դեմ կռվելու համար: Առանձին նախարարությունների Ավարայր եկած հայկական զորամասերը լավ կազմակերպված չէին, իսկ որոշ նախարարներ իրենց անձնական կույր եսասիրությամբ տարված, նույնիսկ դավաճանեցին ժողովրդին: Այլ է դրությունն այժմ: Ժողովուրդը, աշխատավոր ժողովուրդն ինքն է իր բախտի տնօրինողը և երբեմնի հետամնաց Հայաստանն այժմ ծաղկած արդյունաբերական երկիր է դարձել:

Ավարայրի ճակատամարտում հայ ժողովուրդը տվեց առանձին հերոսներ՝ Վարդաններ, Ղևոնդներ: Սովետական կենսատու իրավակարգի պայմաններում բազմապատկըվեց հերոսների թիվը: Այժմ հերոսները անհատներ չեն, ամբողջ ժողովուրդն է այժմ հերոս: Ո՞ր հայ մարդը հպարտություն չի զգում լսելով այնպիսի անուններ, ինչպիսին գեներալ Բաղրամյանն է, ադմիրալ Իսակովը, օդաչու Ստեփանյանը, գիտնական Համբարձումյանը և բազմաթիվ ուրիշներ:

Եվ, վերջապես, երբ հինգերորդ դարում Մայր Աթոռի գահի վրա ունեինք Հովսեփ Վայոցձորցի հայրենասեր կաթողիկոսը, որը խոշոր գործ կատարեց Վարդանանց հերոսամարտում, ապա այժմ այդ գահը ունի իր արժանավոր գահակալը հանձին հայրենասեր և իմաստուն Հայրապետի՝ Գևորգ Զ. Կաթողիկոսի, նոր ժամանակի Հովսեփ Վայոցձորցու, որի անվան հետ է կապված հայրենական մեծ պատերազմի օրերին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների կազմակերպումը:

Առաջին անգամ չէ, որ իր ջերմ հայրենասիրական կոնդակներով և հորդորներով հանդես է գալիս Գևորգ Զ. Վեհափառ Հայրապետը: Սակայն Վարդանանց 1500-ամյա հոբելյանին նվիրված ներկա կոնդակը բացառիկ արժեք ունեցող վավերագիր է հայ եկեղեցու տարեգրության մեջ և՛ իր բովանդակությամբ, և՛ իր զգայուն ոճով և՛ իր հայրենասիրական իմաստուն հորդորներով:

Ի՞նչ է պահանջում Վեհափառ Հայրապետը:

«Վերհիշել և հավերժացնել Վարդանանց-Ղևոնդյանց հրաշագործ կյանքն ու պատգամները ոչ սին խոսքով, այլ կենդանի գործով:

Առաքինի ազգասիրություն, որ նպատակադրում է ապահովել բնաշխարհի և անդաստական ողջ հայության փրկությունն ու երջանկությունը:

Բազմադարյան ազգային-ժողովրդական մշակույթի զարգացումն ու առաջընթացը ի փառս և ի մխիթարություն ազգային հավաքականության:

Վեհիրավ անսասանություն Հայաստանյայց Ազգային-Առաքելահիմն Սուրբ Եկեղեցու, որ դարեր շարունակ անդավաճան պահապան է եղել Ազգի և Հայրենյաց»:

Երջանիկ է ժամանակակից մեր սերունդը, որ ականատեսն ու անմիջապես մասնակիցն է պատմական այն խոշոր բարեփոխությունների, որոնց հասել է ազատասեր հայ ժողովուրդը իր ճիշտ է ծանր, բայց հերոսական մաքառումների ճանապարհով:

Հոբելյանի օրերին հավատացյալ հայ ժողովուրդը իր երախտագիտական խոսքն ունի ասելու հայ ժողովրդի լավագույն բարեկամին ու ազատարարին՝ Մեծ Ստալինին որը իրագործեց հայ ժողովրդի հայրենասեր զավակների դարեր շարունակ փայփայած ձըգտումները և երազանքը:

Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակը, ինչպես նշված է Վեհափառ Հայրապետի կոնդակում, պիտի տոնել ազգովին և շքեղ: Մի կողմ պիտի դրվեն գաղութահայության մեջ բույն դրած խմբակցական նեղ և կըրքոտ վեճերն ու գժտությունները: Ամենքի հայացքը պիտի ուղղվի դեպի Հայրենիք:

Վարդանանց 1500-ամյա հոբելյանը ավելի սերտ պիտի համախմբի հայ ցրված ժողովուրդը իր սիրելի, իր նվիրական Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը:

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1])

*Ներկայումս խիստ նշանակալից է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հոգևոր դասի ուղղված կոչը. ի պատասխան այն ստորաքարշ քծնության, որ արել է 1947 թվին Ռոյ Հովարդը թյուրքական ժուռնալիստներին։ Երբ ժուռնալիստները հարցնում են նրա կարծիքը հայկական դատի ու հայերի մասին, նա տմարդորեն պատասխանում է. Նշանակություն մի՛ տաք։ Մենք հայերին մարդ էլ չենք համարում։ Սակայն ովքե՞ր են Ռոյ Հովարդները և նրա անվանած ամենքները, եթե ոչ մարդկային կյանքն ու իրավունքները ոտնահարող, բռնության, արյունի և սպանության հետ ընկերացող մի խումբ հակաքրիստոնյա մարդիկ, որոնք առանց ամաչելու հանդես են գալիս ամերիկյան քրիստոնյա բարի ժողովրդի։ Ամերիկայի արդարամիտ հոգևոր դասի անունից, որոնք իրենց ձայնն են բարձրացրել և այժմ համառությամբ պահանջում են հայ դատի արդար լուծումը։*

*Այս իսկ ըմբռնումներով, ներկա ժամանակաշրջանի համար պատմական խոշորագույն երևույթ է Հայրենադարձը, որին Վեհափառ Հայրապետն ամեն կերպ աշխատել է նպաստել։ Դեռևս 1946 թվին, նա իր սրբատառ կոնդակում հայտնանշել է. «Ներգաղթը ներկա հայ կյանքի խոշորագույն երևույթներից գլխավորն է. Նա մեր անցյալ թշվառ կյանքի անվերջ թերթումն է դեպի բախտավոր կյանքը. Նա ազգահավաքման սկիզբն է դնում Հայրենի երկրում, որ պիտի նպաստե հայ ժողովրդի աճման, զորացման և նրա կուլտուրական վերելքին, նաև պիտի ծառայե նրա արդար դատի իրացման։ Յուրաքանչյուր հայ ազգասեր և հայրենասեր մարդու բնական և բարոյական պարտքն է՝ նպաստել այդ ազգային շարժմանը»։*

*Վեհափառ Հայրապետի ազգասիրությունը ծավալուն է և ըստ ամենայնի ընդգրկում է հայ կյանքի բոլոր բնագավառները, այն մտածված, չափված ու կշռված հայրենասիրություն է, որ ունի իր իրական հողը, իրական հոգեբանությունը և գործուն ուժը։ Ան բացարձակապես հեռու է չնախատեսված հանգամանքներից, երազներից, ցնորքներից ու խաբեություններից, որոնք մի ամբողջ հիսնամյակ արյունոտեցին մեր երկիրն ու պատմությունը, ծվատեցին մեր ժողովրդին, բնաջնջման ենթարկեցին մեր հազարամյակներ պարունակող մշակույթը։*

*Սակայն հայ ժողովուրդը իր պատմության վերջին 30-ամյակում իմաստավորվեց և գիտակցության եկավ։ Նա վերածնվեց և վերագտավ իրեն։ Եվ այժմ ո՛չ ոք կարող է շեղել նրան իր նոր ճանապարհից, երջանկության և բախտավորության ճանապարհից, ու ո՛չ ոք կարող է մերժել նրա արդար ցասումն ու զայրույթը, իր ոտնահարված իրավունքների պահանջի առթիվ։*

*Պետք է նշել, որ Վեհափառ Հայրապետի իղձերն ու ակնկալությունները մեր եկեղեցու վերակառուցման ասպարեզում, շնորհիվ փորձառված միջոցառումների, ընդհանրապես արդարացան։ Մեր թեմերի ղեկավարությունը, թեմական պատգամավորական ժողովների գումարումները և թեմական խորհուրդների, եկեղեցական հոգաբարձությունների ընտրությունները և գործի գլուխ*

1. Շարունակված 1950 թվի հունվար—փետրվար և մարտ—ապրիլ համարներից և վերջ։



ՎԵՀԱՓԱՌԸ ԱՇԽԱՏԱՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ

գալը, մեծավ մասամբ մտել են իրենց հունի մեջ և ընթանում են կանոնավոր։

Կապը Սփյուռքի հայության հետ, մեր թեմակալ առաջնորդների և պատրիարքությունների միջոցով, ավելի քան ամրապնդվել է և Ամենայն Հայոց Հայրապետի հմայքն ու իմաստնավորությունը դարձել է ավելի քան համատարած։ Նա արդեն իսկ նվաճել է ժողովրդականություն իր ցույց տված աչալուրջ ղեկավարությամբ՝ կրոնական և ազգային գործերում։ Ի պարծանս հայ հոգևորության և մեր թեմակալ առաջնորդների, պիտի ասել որ նրանք, ըստ ամենայնի, յուրացրել են Վեհափառ Հայրապետի բոլոր սկզբունքները և ծրագիրը և ունեն ճիշտ նույն մոտեցումն ու ըմբռնումը, ինչ որ ունի Վեհափառ Հայրապետը, լինի այդ մեր պետականության է՛լ ավելի հզորացման գործում, ազգահավաքի խնդրում և մեր դատի լուծման ճանապարհում։ Այսպիսի վերաբերմունքը բխում է այն երկու կարևոր սկզբունքներից, որ առաջադրել և արդեն իրականացրել է Վեհափառ Հայրապետը՝ եկեղեցական միասնություն և ազգային միասնություն վսեմ արտահայտությամբ ու գաղափարաբանությամբ։

Վեհափառ Հայրապետի ծավալուն գործունեության մեջ, առանձնապես աչքի է զարնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սահմանադրության մշակումն ու կազմումը։ Նա ավարտել է Սահմանադրության նախագծի կազմումը և պատրաստել է նրան նվիրված մի ընդարձակ ուսումնասիրություն։ Այս ստվարածավալ աշխատասիրությունը որքա՜ն անքուն գիշերներ ու օրեր է խլել Մեծագործ Հայրենասերից, որքա՜ն եռանդ և ավյուն է մաշել նա այս հոյակապ գործը պատրաստելիս, որքա՜ն մտահոգություններ ու հույզեր է ապրել նա մեր եկեղեցու ամրապինդ պատվանդանը կառուցելիս։

Ըստ սմին, պետք է նշել, որ Հայաստանյայց Եկեղեցու սահմանադրությունը դարեր շարունակ գործադրվել ու պահպանվել է մեր թեմերում ու եկեղեցիներում, համայն հայ ժողովրդի հոգևոր կյանքում, սակայն ոչ միանման և ոչ լրիվ կերպով ամենուրեք։ Վեհափառ Հայրապետի ուսումնասիրության կարևոր և պատմական նշանակությունն այն է, որ նա Հայ Եկեղեցու Սահմանադրությունը մի հայտարարի է բերել, հաշվի առնելով ոչ միայն մեր եկեղեցու ընդհանուր պայմանները և հիմնական սկզբունքները, այլև մեր թեմերի և մեր ժողովրդի բացառիկ հանգամանքները։ Վերամշակված և ամբողջացրած այս Սահմանադրությունը կարող է գործադրության դրվել Ազգային-Եկեղեցական ժողովի հավանությամբ և Վեհափառ Հայրապետի հաստատումից հետո միայն։ Սակայն նախքան այն Ազգային-Եկեղեցական ժողովի ներկայացնելը, անհրաժեշտաբար այն պիտի ներկայացվի հայ ժողովրդի քննարկման։ Նոր Սահմանադրությունը կուղարկվի բոլոր թեմերին և առաջնորդներին, ի տեղեկություն և ի քննություն։ Այն կկարդացվի և կուսումնասիրվի թեմական ազգային մարմինների կողմից (պատգամավորական ժողովներում, թեմական խորհուրդներում, եկեղեցական հոգաբարձություններում և այլն), նույնպես մամուլի և անհատ ուսումնասերների կողմից, որից հետո Վեհափառ Հայրապետին կմնա կրկին վերանայել այն, վերջնական խմբագրության համար, հաշվի առնել որոշ կարևոր դիտողությունները ու հավելումները, եթե իրոք նրանք մեր եկեղեցու և ժողովրդի հոգևոր կյանքի համար անհրաժեշտ համարվեն, այնուհետև կքննարկի Ազգային-Եկեղեցական ժողովը և ժողովի հավանությունից հետո, Վեհափառ Հայրապետը հատուկ կոնդակով կպատվիրի այն գործադրել և կիրառել մեր եկեղեցական կյանքում, որպես Հայաստանյայց Եկեղեցու հիմնական օրենք։

Երկրորդ հոյակապ աշխատասիրությունը, որ ավարտել է Վեհափառ Հայրապետը, այդ Հայ Եկեղեցու բարենորոգման ծրագիրն է։ Այս մասին Վեհափառ Հայրապետը զեկուցել է 1932 թվին երջանկահիշատակ Խորեն Կաթողիկոսի կաթողիկոսական ընտրության առթիվ գումարված Ազգային-Եկեղեցական ժողովում, նշել է այն բարենորոգումները, որոնք անհրաժեշտաբար պիտի կատարվեն մեր եկեղեցական կյանքում՝ եկեղեցին ժողովրդին է՛լ ավելի մերձեցնելու նպատակով։ Կյանքը հարատև շարժվում է և փոփոխվում. բնականաբար, Եկեղեցին չի կարող քարացած վիճակում մնալ. նա ևս որպես հասարակական ուժ, պետք է շարժվի կյանքի հետ, դառնալով կյանքի համար ավելի քան կենսունակ։

Վեհափառ Հայրապետի ծրագրային հարցերից անկատար մնաց միայն տպարանի հարցը։ 1945 թվին, Համազգային-Եկեղեցական ժողովում, Բեյրութի պատգամավոր Տիար Մկրտիչ Մսրլյանը խոստացավ մի տպարան նվիրել Մայր Աթոռին, մի քանի ամսից հետո այն Ս. Էջմիածին ուղարկելու պայմանով։ Սակայն բոլորվեց արդեն հինգ տարին և խոստացված տպարանը չեկավ։ Կարծում ենք, Վեհափառ Հայրապետը վաղուց ի վեր ունեցած կլիներ նաև տպարա-

նի խնդիրը, եթե երբեք թերահավատ լինեի խոստացված նվիրատվության հանդեպ։ Եթե Տիար Մկրտիչ Մուրլյանը ցանկություն կամ հնարավորություն չունենար իր խոստումը կատարելու, հետևապես նա շատոնց այդ մասին պիտի հայտնած լիներ Վեհափառ Հայրապետին, մանավանդ որ Վեհի ներկայացուցիչները լինելով Լիբանանում, տեսակցություն են ունեցել Տիար Մուրլյանի հետ, որը հայտնել է նրանց, թե նորագույն սիստեմի մեքենաներով կազմված մի տպարանի պատվեր արդեն տրված է Լոնդոնում։

Կարծում ենք, և ունենք հաստատ հավատ, որ Վեհափառ Հայրապետը մոտիկ ժամանակներում կլուծի նաև այս հարցը։

Բնական է, որ Մայր Աթոռի պահպանումը իր ազգային ծրագրով պիտի հոգա հավատացյալ հայ ժողովուրդը։ Վեհափառ Հայրապետից կյանքը պահանջում է գործ, հետևողական ղեկավարություն, պայմանների և հնարավորությունների ստեղծում, որ արդեն ամենայն բարեխղճությամբ կատարված է։ Հայ հավատացյալ ժողովրդին է մնում ստեղծված պայմանների և հնարավորությունների պահպանումն ու զարգացումը և նրանց լիակատար գործադրումը։

Սակայն այսօր, Ամենայն Հայոց իմաստնագույն Կաթողիկոսի՝ Նորին Սրբազնություն Տ. Տ. Գևորգ Զ.ի 80-ամյա հոբելյանական հանդեսի տոնակատարության առնչությամբ, հայ ժողովրդի հոգացողությունը պետք է շոշափելի և ակնառու հանդիսանա։

Հայոց Հայրապետության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պահպանումը և հզորացումը հայ ժողովրդի արժանապատվության, խղճի և պատվի գործն է, ինչպես և այն լույս գիտակցականությունը, որ հնարավորություն տրվի Հայոց Հայրապետության և Ս. Էջմիածնի, կատարելու անցյալի իր փառավոր դերը, այսինքն՝ ծառայելու իր Հայրենիքին, իր հայրենաբնակ և գաղթաշխարհի ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն։

Անշուշտ մեր այս համառոտակի նշումներով չի պսակվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կենսագրությունը։ Սույն համառոտագրությունը նրա շոշափած խնդիրների ուրվագծումն ու մեկնաբանումն է միայն, բայց ոչ Նորին Սրբության գործունեության լրիվ ամփոփագիրը։ Վեհափառ Հայրապետի գործունեությունը կարոտ է երկար ժամանակի և ուսումնասիրության։ Այս ուրվագիծը կազմված է նրա գործունեության 80-ամյակի տոնակատարության կապակցությամբ, «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին և հայ հավատացյալներին Մեծ Հայրենասերի կյանքին ծանոթացնելու նպատակով։

Այն խնդիրները, որ մենք առաջ ենք քաշել այս հոդվածում և մեր տկար ուժերով փորձել ենք մեկնաբանել, շատ կարճատև ժամանակի, ընդամենը հինգ-վեց տարվա արդյունք են։ Վեհափառ Հայրապետի գործունեության արշալույսները դեռ նոր-նոր պիտի բացվեն Հայ Եկեղեցու հորիզոնում։

Կատարյալ վստահություն ունենք, որ Վեհափառ Հայրապետը Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության և բարենորոգչական ծրագիրներով նոր դարագլուխ պիտի բաց անի մեր Եկեղեցու առջև։

Այդ են ներշնչում մեզ նրա ֆիզիկական, հոգեկան և մտավոր առողջ վիճակը։ Նույնպես համոզված ենք, որ ծերունազարդ Հայրապետը իր բոլոր թեմերով և թեմակալ առաջնորդներով, հայ ժողովրդի եկեղեցական և ազգային միասնականությամբ, հայ ժողովրդի համատարած վստահությամբ և ուժերով, էլ ավելի պիտի խորացնի ու զարգացնի մեր Եկեղեցու «Հայ ժողովրդի հետ և նրա համար, հայ Հայրենիքի հետ և նրա համար» սրբազան կոչը, մեր պապերի և պատմության ավանդը, դարձնելով այն մեր ժողովրդի մեջ միս ու արյուն, դարձնելով այն հայրենական սրբություն։

Այս ուղղությամբ Վեհափառ Հայրապետը բազմիցս նշել է. «Հայաստանյայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին ոչ միայն հոգևորական հաստատություն է, այլև միաժամանակ Ազգային-Հայրենական։ Ազգային-կրոնական այս երկակի բնության ներդաշնակ միասնության մեջն է բարոյական հիմքն ու պատմական խորհուրդը լուսավորչահիմն ազգապահ Հայ Եկեղեցու, որի անարատության և վեհիրավության համար դարեր շարունակ հալածվել, մարտնչել և մարտիրոսացել է բազմաչարչար հայ ժողովուրդը»։

Շնորհավորելով մեր սիրեցյալ Հայրապետին իր 80-ամյա հոբելյանի առթիվ, աղոթենք առ Աստված, որ նա իր հավերժական զորությամբ աջակից ու զորավիգ լինի Նորին Սրբությանը իր հայրենանվեր ու եկեղեցանվեր գործունեության մեջ, տալով նրան անախտ և երկար կյանք, իր բազմաչարչար ժողովրդին, Սփյուռքի իր թափառական հոտին Ավետյաց Երկիրը առաջնորդելու, ամեն։



ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՉՈՐԵՔՉՅԱՆ

# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ[1]

(Քարոզ)

«Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց»։

Բնությունը տալիս է մեզ անվերջ փոփոխվող երևույթների պատկերներ. Մերթ տեսնում ես նա կատաղում է՝ կուտակվում են սև ամպեր, մթնում է երկինքը, որոտում, փայլատակում, շանթեր արձակում և անձրևի հեղեղներ թափելով՝ ամեն ինչ ավերում ու քարուքանդ է անում։ Մերթ տեսնում ես բնությունը մեղմանում է՝ ցրվում են ամպերը, երևում է արևի պայծառ երեսը և ամբողջ բնությունը զովացած ու թարմացած՝ ապրելու և աճելու տենչով է բռնվում։

Միշտ այդպես է նաև մեր կյանքը. Մեկ տեսնում ես կարավանի պես անցնում են առջևից վշտի ու նեղության աննկարագրելի պատկերներ՝ մեռնում են կյանքիդ թանկագին ընկերը և սիրասուն զավակներդ, զրկվում ես հարստությունից, տնից ու տեղից, և այդ հոգսերը դրոշմում են իրենց կնիքը դեմքիդ վրա՝ մազերդ սպիտակում, ճակատդ խորշոմում, երեսդ թխթկում է. և այսպես դեռ չըացված թառամում ես, հրապույրդ կորցնում։ Եվ ո՞վ է վրադ նայողը, երեկվա երջանիկը այսօր թշվառների թշվառն է դառնում։

Վարագույրը իջնում է և պատկերը փոխվում. ահա անցնում են շարան-շարան առջևիդ ուրախության ու երջանկության գրավիչ պատկերներ. Երիտասարդ ես՝ առողջ, առույգ և գեղեցիկ. ամուսնանում ես սրտիդ սիրածի վերա, սիրասուն ու գողտրիկ զավակներ ունենում, նոքա մեծանում են, գիտությամբ ու գեղարվեստով մարզվում, շեն տունդ ես առավել շենցնում, նոր երջանկության աղբյուր դարձնում։

Ահա պատկերներ, որոնք հազարավոր տարիներ կրկնվել են և պիտի կրկնվեն դարձնելով մարդու համար կյանքը ձանձրալի ու աննպատակ, և ստիպելով նրան կամ հուսահատության և հոռետեսության գիրկն ընկնել՝ և կամ՝ յուր հանճարեղ ներկայացուցիչների միջոցով՝ նոր գաղափարներ ստեղծել, կյանքին նոր բովանդակություն շնորհել՝ դարձնելով այն նպատակահարմար և հաճելի։

Մինչև Քրիստոս՝ Հույն-Հռոմեական կյանքը, որ ժամանակակից բարձր կուլտուրայի համաձայն էր սարքված՝ չգոհացրեց մարդուն։ Կյանքը յուր բոլոր գեղեցկությամբ.

1. Ս. Էջմիածնի տոնին նվիրված ներկա քարոզը արտատպություն է Նորին Ս. Օծության Գևորգ Զ. Կաթողիկոսի վարդապետական շրջանում խոսած և սեփական գրչով հրատարակած քարոզագրքից, որը հրատարակվել է Էջմիածնում 1918 թվին։ Տպագրվող ներկա քարոզը վերանայված է Վեհափառ Հայրապետի կողմից։— ԽՄԲ.

նյութական վայելքների նրբությամբ ու բազմազանությամբ. աննպատակ էր թվում նրանց և ստիպում նոր որոնումների երնել։ Մարդիկ համոզվեցին, որ նյութական կյանքը՝ ուտելը, խմելն ու զվարճանալը յուր բոլոր ճաշակավորությամբ. տաղտկալի է և մարդու կյանքի նպատակ չի կարող լինել, այլ կստիպե նրան Սողոմոնի և հույն փիլիսոփաների հետ կրկնել՝ «Ունայնություն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»։

Կյանքի դատարկությունը լցվեցավ, երբ Հիսուս հրապարակ եկավ և նոր գաղափարներ տվավ կյանքին՝ սիրո և անձնվիրության գաղափարներ, որով մեր փտած կյանքը ընդմիշտ պիտի նորոգվեր։

Քրիստոսի գաղափարները՝ սիրո և անձնվիրության մեծ գաղափարները մարմին առին Հոգեգալստյան օրը, երբ վառվեցավ սիրո կրակը մարդոց սրտում և հաստատվեցավ առաջին քրիստոնեական համայնքը՝ առաջին Եկեղեցին։

Նույն այդ սիրո կրակը և լույսի ճրագը վառվեցավ նաև մեր երկրում Ս. Լուսավորչի շնորհիվ, որով ծնունդ առավ Ազգային Քրիստոնեական Եկեղեցին, որ հիմքը դրավ բոլոր հայ եկեղեցիների մայր՝ Ս. Էջմիածնի, որի տարեդարձն ենք տոնում այսօր։

Եվ այսօր ես պիտի խոսեմ մեր Եկեղեցու մասին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին։ Բայց վաղ չէ՞ Եկեղեցու մասին խոսել. չէ՞ որ այդ հետադեմ քայլ է. չէ՞ որ Եկեղեցին շատերի կարծիքով վաղուց հնացած հաստատություն է, որ կորցրել է յուր այժմեականությունը։

Ճիշտ հենց այդ պատճառով էլ պիտի խոսեմ, որ բանամ ձեր առաջ նրա պատմական անցյալը և ցույց տամ՝ թե ի՛նչ մեծ գործ է կատարել նա հայ կյանքի գոյության երկար դարերի ընթացքում, ինչ փոթորիկներ է տեսել՝ և սակայն մեր ազգային նավը խաղաղ նավահանգիստ տարել։

Հայ Եկեղեցու շոշափելի արտահայտությունը Ս. Էջմիածինն է, որ՝ ըստ ավանդության, աստվածային ծագում ունի. Հիսուս իջնում է երկնքից երկիր, լույս սփռում շուրջը և ոսկե ուռամբ բախում երկիրը, ուր հիմնվում է Լուսավորչի ձեռքով այս տաճարը՝ Ս. Էջմիածինը յուր Հայրապետական Աթոռով։

Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետության պատմական արժեքը ուղիղ գնահատելու համար՝ պետք է մեր հոգու առաջ կենդանացնել Հայ Եկեղեցու կրոնական, քաղաքակրթական և հոգևական ամբողջ գործունեությունը յուր բոլոր կողմերով։

Եթե մի թռուցիկ հետադարձ ակնարկ ձգենք մեր անցյալի վրա՝ կըմբռնենք Հայրապետության կատարած դերը և կպարզվի հայի ոգևորության գաղտնիքը։

Հայոց Հայրապետությունը հավատացյալ հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով։ Հայոց Հայրապետությունը հավատացյալ հայի ստեղծող միտքն է եղել, որ՝ լուսավորված քրիստոնեական երկնային լույսով, զորավիգ է հանդիսացել գրականության և գեղարվեստի ստեղծմանը։

Հայոց Հայրապետությունը հավատացյալ հայի ազնիվ և տոկուն կամքի արտահայտիչն է եղել՝ տալով առաքինության հերոսներ, աստվածային կամքի ճշմարիտ աշակերտներ։

Հայոց Հայրապետությունը վեհ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով. եթե հիշենք հայոց հայրապետների շարքը՝ ո՞րպիսի պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ հակամայից կխոնարհի մեր գլուխը՝ որքան էլ մեր սրտի մեջ երախտագիտության զգացմունքը ցամքած և մեր մտքի մեջ ճշմարտության շողը մարած լինի։

Ո՞վ չի ճանաչում Հայաստանի առաքելանման Լուսավորչին, որ տվել է մեզ Հայ Եկեղեցի՝ մեր կյանքի լուսատու լապտերը, ավետարանի լույսով հայ կյանքը լուսավորող ու պայծառացնող մի հաստատություն. կամ Ներսես Մեծին, որ աստվածահաճո հաստատություններով զարդարել է մեր երկիրը և առաքինության սերմեր սերմանել, որոնց միջոցով մարմնացել են Քրիստոսի սիրո և անձնվիրության մեծ գաղափարները։

Ո՞վ չի հիշում երախտագետ սրտով Ս. Սահակին ու Մեսրոպին՝ հայի մտավոր անդաստանի երկու ամոլներին, որոնք գիր ու գրականություն տվին և փրկեցին մեր հոգևոր կյանքը կորուստից, կամ Ղևոնդին՝ յուր հոտի կենդանի նահատակին։

Ո՞վ իրավունք ունի մոռանալու Հայ Եկեղեցու ինքնուրույնության համար մաքառող, ներքին կռիվների ժամանակ համերաշխության կապ հանդիսացող, արտաքին բռնակալների բարկությունը մեղմող, հայրենի երկիրը կորուստից փրկող և հուսահատ հայ հավատացյալ ժողովրդին հույս ներշնչող անձնվեր հայրապետներին։

Հայ Եկեղեցու պատմությունը հայ ազգի տառապանքների և վշտերի մի անվերջ շղթա է, իսկ հայ երկիրը՝ օտար, վայրագ ու անխիղճ ազգերի մրցության ասպարեզ։ Այդ ավերածությունների մեջ Հայոց Հայրապետությունն է, որ մոխրի տակ թաքնված կայծի նման անշեջ մնացել է և հայ հավատացյալների հույս և մխիթարության

միակ ապավենը հանդիսացել։ Ահա թե ո՛ւր է գաղտնիքը այն դյութիչ զորության և հրապույրի, որ ունեցել են և ունեն Ս. Էջմիածին ու Հայոց Հայրապետությունը դարեր շարունակ հավատացյալ հայի աչքում։

Ասում են՝ անդարձ անցել են այն ժամանակները, փոխվել են կյանքի պայմանները, ի՞նչպես կարող է այսօր մի հնացած ու կիսամեռ հաստատություն հայի գոյության հիմքը լինել։

Ո՜րպիսի անգիտություն. մի՞թե կարծում եք Եկեղեցին այս շենքն է, ուր հավաքվել ենք այսօր և կամ նման շենքեր ավելի շքեղ և փարթամ, ուր կատարվում են եկեղեցու խորհուրդներն ու արարողությունները։ Մի՞թե կարծում եք թե Եկեղեցին հոգևորական է՝ մի խումբ քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ. ո՛չ երբեք։

Եկեղեցին ժողովուրդն է, Ս. Հոգով մկրտված ժողովուրդը, որ ուխտել է հետևել Մեծ Վարդապետին, ընթանալ նրա շավղով, ապրել նրա քարոզով։ Ուրեմն իրավունք ունե՞նք հնացած կամ մեռած համարելու Եկեղեցին. մի՞թե այդ չի նշանակում ուրանալ մեր գոյությունը և կամ խաչ քաշել մեր վրա։

Ի՞նչ կունենայինք և ի՞նչ կլինեինք, եթե Եկեղեցին չլիներ մեր դաստիարակը անցյալում, եթե նա ներշնչած չլիներ այն ոգին, որով ստեղծել ենք գեղարվեստ, գրականություն, որոնք հիացնում են օտարներին։ Եվ ի՞նչ գրավական ունենք պնդելու թե՝ եթե մեր դաստիարակը Եկեղեցին չլիներ՝ ավելի մեծ ստեղծագործություն ցույց տված կլինեինք և ավելի կենսունակություն կունենայինք, քան այժմ։

Ճշմարիտ է, Եկեղեցին ժամանակի ընթացքում որոշ սովորություններով ու ավանդություններով քարանում է. սակայն այն ավետարանը, որ հիմքն է Եկեղեցու՝ միշտ ընդունակ է ժամանակի կապանքները խորտակելու, եթե ջանք թափվի։

Այո՛, Եկեղեցին կենդանի քարոզ չէ մեր մեջ այժմ, և ո՛չ էլ կյանք, այլ լոկ ծես. սակայն հավատում եմ, որ կրկին կորոտա ու կփոթորկվի մեր երկինքը և հրանման լեզուներ կիջնեն մեզ վրա, մեր հոգու մեջ թաքնված կրակը կվառվի, ավետարանի ձայնը մեր ականջում զորեղ կհնչե և նրա սիրով կկապվեն մեր սրտերը՝ նոր կյանքի և նոր ստեղծագործության համար։

Ս. Էջմիածնի տոնի և Հայրապետական Աթոռի տարեդարձի օրը խորին ակնածանոք աղոթենք առ Աստված՝ Մայր Աթոռի հաստատության ու հարատևության համար։

Դու՛ էլ, հայ ժողովուրդ, մի՛ մոռանար քո բարերարին, քո հովանավորին, քո ծնողին և մաքուր սրտովդ աղոթիր՝ «Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայցս». Ամեն։



# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՄՐԿ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

(Կոմիտաս)

## ՇՆՈՐՀԱԼԻՆ[1]

## ՆՈՐԱ ԴԱՐԸ ԵՎ ՆՈՐԱ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՒՋՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Աղբյուրք՝ Ընդհանրական, Շնորհալի եւ պարագայ իւր)

### Ա.

### ԺԱ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻ ԵՎ ԺԲ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

*Արդեն Ներսես Շնորհալուց երկու դար առաջ և նույնիսկ նորա ժամանակ Հայաստանում բավական թվով տեղացի և օտար թագավորություններ կային։ Սոքա թեպետ ամենքն էլ գործում էին հօգուտ յուրյանց ժողովրդի բարելավության, ամենքն էլ ջանք էին թափում քաղաքականապես ընդարձակվել և օտարի բռնությունը թոթափել, զարդարում ու շինացնում էին քաղաքները հոյակապ ու շքեղ շենքերով ու եկեղեցիներով, բայց գրեթե բոլորն էլ զատ զատ, մեկը մյուսից անկախ, մինչև իսկ ոխերիմ թշնամի, միմյանցից երկրներ ու հողեր խլելով էին ձգտում աշխարհագրական սահմաններն ընդարձակել, առանց աչքի առաջ ունենալու այն, որ Արշակունյաց թագավորության անկումից հետո երկար ժամանակ Հայաստանը, ժողովուրդը, իշխանական տոհմերն ինչպես՝ հարվածների տակ հեծում ու մաշվում էին, ինչպես՝ արյուն ու քրտինք թափելուց հետո է, որ նախ պարսից Սասանյան բռնակալության, հետո արաբացիների ամիրա իշխանների անգթության և գազանաբարո թյուրք զորավարների ճիրաններից պրծած շունչ էին քաշում, դեռ նոր Հայաստանի անկյուններում մոխրի տակ թաղված կայծերը ցատկում, ավերակների միջից թագավորական թագն ու թուրը, գահն ու գավազանը բարձրանում և հիմք էին դնում Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց, Աղվանից, Վանանդի, Ձորագետի, Գուգարաց, Ռատոյաց, Ռշտունյաց, Անձևացյաց թագավորություններն ու Խաչենի, Խլաթի, Մանազկերտի, Տարոնի և Սասունի իշխանությունները։*

*Այսքան մանր թագավորական և իշխանական տոհմերը հետզհետե հառաջ եկան։ Նախ Բագրատունիք, որ հազիվ էին հաստատվել Արարատյան երկրում (885), մյուս իշխանական տոհմերն էլ, ազատ զգալով, իրենց արքայական թագի ետևից ընկան։ Արծրունիք առաջինն եղան, որ Ժ դարու սկզբին (908) անկախ տերություն հիմնեցին. սորանից ուղիղ 60 տարի հետո, նույնիսկ*

*1. Սողոմոն Սողոմոնյանի (Կոմիտաս) ներկա աշխատությունը— 1893 թվի ապրիլի 25-ին Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանին ներկայացրած ավարտական շարադրությունն է, որը հայտնաբերվել է Հայկ. ՍՍՌ. Պետ. Մատենադարանում և հրատարակվում է առաջին անգամ։—ԽՄԲ.*

Բագրատունյաց տունը երկպառակվեցավ և Վանանդ գավառում առանձին թագավորություն ձևացավ (968) Կարս մայրաքաղաքով, այսպես էլ Արծրունիք բաժանեցան Ռշտունյաց և Անձևացյաց թագավորությանց, այսպես հետզհետե կազմվեցան Սյունյաց (970), Կյուրիկյան Բագրատունյաց (988) թագավորությունը Լոռում և ապա մյուս մանր մունր իշխանությունները ու թագավորությունները կազմակերպվեցան։

Այս բազմազանությունը Հայաստանին չէր վնասի, եթե դրանից յուրաքանչյուրը ներքին կառավարությունը պահելով, ընդհանուր խնդիրներում՝ ինչպես օրինակ՝ Հայրենիքի պաշտպանությունը, հզորագույնի՝ Բագրատունյաց գերիշխանությունը ճանաչելը, մի լինեին։ Բայց հակառակ ուղղությամբ են գործում, որով թագի և գահի կործանման առիթ լինելով, դեռ նորակառույց թագավորական իշխանությանց հիմը չամրացած, մեկը մյուսի հետևից կորուստի անդունդ են գլորվում և քայքայվում։ Հայաստանը հունաց ձեռքն է ընկնում Բագրատունյաց անկումից հետո. շուտով սոքա տեղի են տալիս Պարսկաստանի սելջուկների արշավանքին, որոնք Տուղրիլի և Ալփասլանի առաջնորդությամբ վայրենի հեռուսախմբեր կազմած՝ երկիրը տակն ու վրա են անում։ Հույները, որ երկրի տերն էին, չկարողանալով դեմ դնել սելջուկներին, քաշվում են և ձեռք վերցնում երկրի պաշտպանությունից։ Բայց կարողացան մի քանի քաղաքներ պաշտպանել ու պահել, այն էլ Ալփասլանի որդին՝ Մելիքշահը գրավեց։ Այսպիսով բովանդակ երկիրը տիրում են առանց դժվարության սելջուկները (1086—1092)։ Իսկ մյուս մանր իշխանությունները ու թագավորությունները, որոնք զորություն ունեին, իսպառ ջնջվեցան թաթարների ժամանակ։

Բագրատունյաց թագավորության մարելուց հետո, հայերն իրենց բախտն սկսեցին որոնել Հայրենիքից դուրս, օտար երկնքի տակ։ Գաղթականության շավիղն է բացվում այնուհետև հայերի համար, որոնք նեղվեցան մերթ հույն, մերթ թյուրք բռնակալ կառավարություններից։ Գաղթում են մեծ մասով Կիլիկիա։ Այս երկիրը հայերին վաղ ժամանակներից ծանոթ էր վաճառականական ճանապարհի վերա գտնվելու համար, ուստի այստեղ կամաց կամաց ամրացնելու ետևիցն են ընկնում յուրյանց նոր Հայրենիքը, այսպիսով հիմնում են Ռուբինյանց հարստությունը, որ մոտ երեք դար տևեց (1080—1375)։

Հայ գաղթականները ժառանգում են Կիլիկիան, բայց երկար ժամանակ մաքառելով Հույների, Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանների դեմ և շատ կոտորածով։

Ազգային գաղթականության հետ ի միասին, Հայրապետական Աթոռն էլ փոխադրվեցավ Կիլիկիա, որովհետև կաթողիկոսները քաղաքական իշխանությունից անբաժան և նորա հետ էին գործում։ Այստեղ ինչքան Ռուբինյանց իշխանությունը զորացավ, այնքան էլ Աթոռն ազատ հաստատվեցավ։ Թեպետ մի կողմից իշխանական Աթոռին կից, բայց սոցա լատինների հետ ունեցած խնամության և նույնիսկ նոցանից ակնածության պատճառով, պապական ազդեցությանը ենթարկվեցավ։ Հույներն էլ հայոց նոր թշնամի համարելով, որ մի պատվար էին նոցա աշխարհակալական ճանապարհի առաջ, մեծ եռանդով թե՛ պապերը, թե՛ հույները կամենում են ձուլել, յուրյանց եկեղեցուն միացնել։ Երկուսն էլ եկեղեցու միության պատրվակով ծածկում են յուրյանց նպատակները։ Այս երկու կրոնական պահանջների ժամանակ, Ասորիքի հայոց մեջ էլ շփոթություն է ընկնում. զանազան հին հերձվածները ու մոլորությունները կրկին (են) բուսնում և վիճաբանության առիթ լինում ոչ միայն հայոց և ասորոց մեջ, այլ նույնիսկ հայոց մեջ։ Ժամանակի հայրապետները Գրիգոր Գ. և Ներսես Շնորհալի Պահլավունիները, մեծ եռանդով այս բոլորի դեմ կանգնում և առաջն են առնում, Ասորիքի խռովությունները հանդարտում են Ներսես Շնորհալու գրած թղթով, հոռոմաց և պապերի պահանջների համար էլ ժողով են գումարում. պաշտպանում են Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ուղղափառությունը, հերքում նոցա անհիմն կարծիքները, չեն ընկճվում ո՛չ մեկին և ո՛չ մյուսին. այս դեպքում Արևելյան հայ եպիսկոպոսները թղթերով մեծ գործ են կատարում։

Շուտով պապերի համար հարմար առիթը բացվում է. խաչակիրները. Ս. Երկիրն ազատելու համար մահմեդականների ձեռքից, Արևելք են գալիս և հայ պետերը քրիստոնյա եղբայրներին սիրով են ընդունում քաղաքական տեսակետով, բայց տարբերությունը վնասաբեր հետևանք է ունենում Եկեղեցու համար։

Այսպիսի ժամանակում, երբ Հայրապետական Աթոռը շրջապատված էր ներքին, քաղաքական և կրոնական արհավիրքներով, հայրապետությունը վիճակված էր Գրիգոր Գ., Ներսես Շնորհալի և Գրիգոր Տղա Պահլավունիներին, որոնք ո՛չ պապերին ստրկացան և ո՛չ հոռոմաց պահանջը կատարեցին, այլ հայրենի Եկեղեցու անկախությունն ու սրբությունը ուղղափառ դավանության ամուր հիմքի վրա դրին։

## Բ.

## ՇՆՈՐՀԱԼՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՐԱ ԵՐԵՑ ԵՂԲԱՅՐԸ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1113-ԻՆ. ՍՅԱՎ ԼԵՐԱՆ ԺՈՂՈՎԸ 1114-ԻՆ ԵՎ ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՇՆՈՐՀԱԼԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ՆՈՐԱ ԴԻՐՔԸ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ. ՆՈՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

*Ներսես Շնորհալին Պահլավունի Ապիրատ իշխանի (Գրիգոր Բ. Վկայասերի քեռորդին) որդին էր։ Երբ Կիլիկիո իշխանները թյուրք և հույն ասպատակությունների զորությամբ չկարողանալով դիմադրել, ամեն մեկը քաշվեց յուր բերդը և սկսեց ամրացնել արտաքին թշնամիների հարձակման դեմ դնելու համար։*

*Ապիրատ Պահլավունին էլ (Ներսես Շնորհալու հայրը) այս ու այն կողմը տեղափոխությունից հետո, վերջապես հաստատվեցավ Ծով բերդի մեջ, որ գտնվում է Տլքո գավառում, Անտիոքի մոտերը, և սկսեց ամրացնել ու հող տանել և շենքերով ճոխացնել. մի հոյակապ եկեղեցի կառուց, որ և հետո յուր որդիների հայրապետանոցը դարձավ 25 տարու չափ։ Այստեղ ծնվեց Գրիգորիս 1096 թվին և Ներսես՝ 1102-ին։*

*Հազիվ դեռ Ներսես կաթից կտրած էր, երբ պապը՝ Գրիգոր Բ. Վկայասերը նորան և Գրիգորին Ծով դղյակից բերել տվեց յուր մոտ։ Գրիգոր Բ. Վկայասերը մեծ հոգ տարավ նորա կրթության և դաստիարակության. և որովհետև փոքր հասակից զրկված էին երկու եղբայրներն էլ ընտանեկան գգվանքից և աչքերը բացած, զբաղված տեսել էին եկեղեցական դաս, հոգևոր դաստիարակություն և բարոյական կրթություն. ուստի երկուսն էլ Գրիգոր Լուսավորչի և յուրյանց պապի՝ Գրիգոր Բ. Վկայասերի արժանընտիր հաջորդ եղան և Հայաստանյայց Ս. Եկեղեցու հաստատահիմն սյունը։ Նույն ժամանակի ամենանշանավոր վարդապետի՝ Ստեփանոս Կարմիրվանեցու, որ և «Գիտնական» մականունն ստացավ, աշակերտներն եղան։ Նորա աշակերտակից էին և երկու ուրիշ տղաք՝ Իգնատիոս և Սարգիս, որ կոչվեցավ Շնորհալի։*

*Վկայասերը վախճանեցավ 1105-ին, բայց չմոռացավ Գրիգորիսին և Ներսեսին, նոցա իբրև կտակ ավանդեց Բարսեղ կաթողիկոսին, որ սնուցանե և կրթե։ Գրիգորիսը 10, իսկ Ներսեսը 4 տարեկան էր մոտավորապես, երբ Բարսեղ հայրապետի խնամքին հանձնեց նոցա պապը։*

*Բարսեղ կաթողիկոսի խնամքի տակ երկուսն էլ աճում ու զարգանում էին կրոնական և բարոյական դաստիարակության մեջ։*

*Հայրապետը Գրիգորիսին հինգ կամ վեց տարուց հետո վարդապետ օծեց մոտավորապես 1111-ին կամ 1112-ին, երբ նա արդեն 16-ի մեջն էր։ Վարդապետ ժամանակն էլ նորան առաջնորդում էին դեռ յուր վարժապետը, կաթողիկոսը և ուրիշ անձինք։ Իսկ եղբայրը՝ Ներսես, որ եղբոր վարդապետության ժամանակ 10 տարեկան էր, դեռ ուսումն էր շարունակում և հասակի փոքրության պատճառով, Ստեփանոս վարդապետին երկար աշակերտելու բախտն ունեցավ։ Միևնույն ժամանակ նորա վերա հոգալ սկսեց յուր նորընծա եղբայր Գրիգորիսը։ Իգնատիոսն ու Սարգիսն էլ ավարտեցին ուսումը. առաջինը քաշվելով գնաց Սյավ լերան Շափիր անապատը, երկրորդը Քարաշիթու վանքը քաշվեցավ, յուրյանց ուսումն արդյունավորելու։*

*Բարսեղ կաթողիկոսը զանազան տեղեր այցելության արավ յուր հոտի պետքերը հոգալու, վերադարձին եկավ Քեսուն և այն տեղերի վանքերումն էր ապրում, և սպասում էր Վարդավառի տոներին։ Մտադիր էր Վարդավառն անելուց հետո՝ ուխտ գնալ Երուսաղեմ, և մինչդեռ Վարդահեր ավանում, մի տանիքի վերա, հոգևորական դասով շրջապատված ժամերգություն էր կատարում, տանիքը փուլ է գալիս և վիրավոր հայրապետը խնդրում, որ իրեն տանեն Սյավ լեռը, ուր և կաթողիկոսական քողն ու գավազանը հանձնելով Գրիգոր Բ. Վկայասերի քեռորդի և յուր խնամքին հանձնարարված քսանամյա Գրիգորիսին, պատվիրում է եպիսկոպոսներին, որ կաթողիկոս ձեռնադրեն նորան, և ըստ ոմանց, ինքը ձեռնադրում է նորան եպիսկոպոս և երեսնամյա կաթողիկոսությունից հետո, վախճանում է 1113 թվին։*

*Գրիգոր Պահլավունին 1113-ին կաթողիկոս է օծվում հազիվ 18 տարեկան հասակում, Գրիգոր Գ. Պահլավունի անունով։ Ինչքան էլ որ փոքր հասակում կաթողիկոս լիներ մերձավորներին խորթ չէր քանի որ գիտեին նորա կարն ու ուժը, բայց և այնպես հեռավորներից, մանավանդ Աղթամարի եպիսկոպոսությունը, կամ ըստ ոմանց եպիսկոպոսապետությունը, արհամարհական աչքով մերժեց Գրիգորիսի կաթողիկոսությունը, որովհետև ինքնագլխության ոգին վաղուց արդեն արմատացել էր Աղթամարի եպիսկոպոսների մեջ, երբ նոքա Արծրունյաց թագավորության ժամանակ կաթողիկոսական պատիվ, թերևս կաթողիկոս*

էին։ Գագիկ, Արծրունյաց և Վասպուրականի թագը կապելուց հետո, կամեցավ, որ, ինչպիսին ինքը քաղաքական տեր էր երկրի, ունենալ և յուր անկախ կաթողիկոսը։ Գեորգ կաթողիկոսը նորա խնդրանքով եղբորորդուն (Գագիկի) 921 թվին եպիսկոպոսապետ ձեռնադրեց Եղիա անունով, բայց ոչ անկախ։ Այս եպիսկոպոսապետությունը շարունակում է մինչև Գեորգ Գ. Պահլավունին, երբ Աղթամարի եպիսկոպոսն էր Դավիթը։ Սա, պատճառ բերելով նորընտիր հայրապետի հասակը, հարմար առիթ է համարում այս անգամ իրագործելու իր նախորդների ձգտումը, ուստի չէ ընդունում նորան կաթողիկոս և մերժում է։ Գրիգոր Գ. Պահլավունին անմիջապես ժողով է գումարում 1114 թվին Սյավ լերան վերա, ուր ժողովականները նորան օրինավոր հաջորդ են հաստատում, իսկ Դավիթին յուր համախոհներով նզովելով, հակաթոռ են հռչակում։ Դավիթը հաստատուն է մնում և չէ շեղում յուր դիտավորությունից և առանձին կաթողիկոսության հիմնադիր է լինում Աղթամարում, որ մինչև օրս էլ շարունակվում է։

Ժողովը շրջաբերականով տեղեկացնում է Արևելյան մյուս եպիսկոպոսներին յուր որոշումը, որոնք համակերպում են ժողովին և Դավիթին մերժելով հակաթոռ են համարում։ Այս ժողովով որոշվեցավ դարձյալ կաթողիկոսական ընտրության ժամանակ կարևոր նշանակություն տալ Բջնա, Հաղբատի, Թադեի և տաթևի եպիսկոպոսին։

Գրիգոր Գ. Պահլավունին յուր հարազատ եղբոր՝ Ներսեսին իբրև հայր և եղբայր ջանք դրեց դաստիարակելու և կամաց կամաց եպիսկոպոսական բարձր աստիճանին հասցնելով, (ցանկանում էր) նորան կաթողիկոսական Աթոռին ժառանգ հասցնել. այս անում էր ո՛չ թե նորա համար, որ եղբայրն էր, այլ տեսնելով նորա ընդունակությունը և արժանիքը։ Ներսեսին 1120-ին, երբ նա մոտավորապես 18 տարեկան էր, Գրիգոր Գ.ը վարդապետ ձեռնադրեց։ Ժողովուրդը նկատելով նորա մաքուր վարքը, սուրբ կյանքը, քաղցր կենակցությունը, վայելուչ խոսքն ու շարժվածքը, բազմատեսակ և հաստատ գիտությունը և ընտիր գրիչը, նորան «Շնորհալի» և «Երգեցող» մակդիրներով պսակեց։ Թե ի՛նչ կյանք է ունեցել Շնորհալին մինչև վարդապետությունը՝ գրեթե անհայտ է. այսքան միայն կարելի է ասել, որ այդ շրջանը աշակերտական պետք է համարել, երբ նա դեռ ուսանում էր։ Պարապմունքը, ստացած կրթությունը սոքա են՝ Աստվածաշունչ Ս. Գիրք, վարդապետություն և մեկնություն սուրբ-հայրերի, Սրբոց և Եկեղեցու պատմություն, եկեղեցու կարգ ու կանոնի հմտություն, եկեղեցական երաժշտություն, շարադրություն արձակ կամ ոտանավոր և սոցա նմանները, որոնք ժամանակի անհրաժեշտ գիտություններն էին. միևնույն ժամանակ ընտիր հայկաբանություն էր յուրացրել։ Այս բոլորի մեջ Շնորհալին կատարյալ հմտություն էր ստացել և յուր ձիրքն ու շնորհքը բազմահարուստ հանճարով զարգացան և «Շնորհալի» անվան հասցրին. իսկ նորա ուսման վայրը Ստեփանոս Գիտնականի՝ վարժապետի կացարանը պետք է կարծել, այն է Կարմիր վանքը, կամ նորա շրջակա և մերձակա անապատներից մեկը։

Որոշակի հայտնի չէ Շնորհալու եպիսկոպոսության տարին. ոմանք կարծում են թե նա եպիսկոպոս եղած ժամանակը 30 տարեկան կլիներ, իսկ ոմանք, թե 20-ից շատ չանցած։ Վերջինս գուցե ավելի հավանական լինի, որովհետև նա չէր հոժարում եպիսկոպոս լինել փոքր հասակում։ Մանավանդ խույս էր տալի այն բանից, ոչ լինի թե ժողովրդի մեջ տարածվի թե ինքը Գրիգոր Գ.ի եղբայր լինելովն է հասնում եպիսկոպոսական աստիճանին, բայց ընդհակառակը ժողովուրդը սիրում և հարգում էր և բոլորն էլ արժանի համարելով նորան այդ աստիճանին, դեռ սպասում էին որ կաթողիկոս էլ կլինի։ Վերջապես նա զիջավ և եպիսկոպոս ձեռնադրվեց յուր եղբորից։ Իբրև եպիսկոպոս ունեցել է և մի թեմ. սորա մասին յուր ատենաբանության մեջ հիշում է. «Ո՞չ ի տեսչութեանն սակաւուն հօտի արբուցի զջուրն հանգստեանն»։

Այսուհետև երկու եղբայրները ի միասին ձեռք ձեռքի տված, մեծ եռանդով աշխատում են Եկեղեցու և ազգի բարեզարդության համար։ Կաթողիկոսին վերաբերյալ գործերը Գրիգոր Գ. անմիջապես էր կատարում, իսկ մյուսները գրեթե Շնորհալու ձեռքից էին անց կենում. Երկուսն էլ համերաշխ էին գործում։ Շնորհալու հսկողության տակ էին ոչ միայն ներքին կառավարությունը, հայրապետանոցի հոգսերը, այլ և բոլոր գրվածքները, նամակները, պատգամավորությունները, թեպետ ինքը ոչ աթոռակալ և ոչ փոխանորդ էր հայրապետի, ամեն ինչ տեղն ու տեղը ըստ արժանվույն լրացնում էր։

Սոքա բոլորն էլ ապագա կաթողիկոսության տատասկոտ ասպարեզի մեջ արիություն գալու մի տեսակ փորձություն էին։ Հիրավի ցույց տվեց այդ փորձերի բովում եփված Ներսես Շնորհալին իր կաթողիկոսության ժամանակ, որ փորձերը, եղբոր խնամքը զուր չէին անցել նորա համար։

(Շարունակելի)

# ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ե. ՇԱՀԱԶԻԶ

## ԻՄ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՍՏՈՆԱՑԻ ԴՈԿՏՈՐ ՊԱՈՒԼ ԱՐԻՍՏԵԻ ՀԵՏ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

*1949 թվին ես ստացա Տարտուի համալսարանի ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, Ուգրո-Ֆին լեզուների ամբիոնի վարիչ Պաուլ Արիստեի հետևյալ նամակը Խաչատուր Աբովյանի մասին.*

1.

Տարտու, Ցակոբսոնի, 8–1,
13 փետրվարի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

*Ես կարդացի «Մատենագրության տարեգրության» մեջ, որ Դուք հրատարակել էք «Աբովյանի արխիվը»։ Աբովյանը ապրել է մեր քաղաքում և եղել է մեր համալսարանում էստոնացի բանաստեղծների և ուրիշ գրողների հետ միասին, ինչպես՝* Fr. R. Fählmann (=Faelmann), Fr. R. Kreutzwald.

*Որովհետև այստեղ, էստոնական շրջաններում, հայերեն չեն խոսում, մենք չենք կարող օգտվել Ձեր աշխատանքից, այդ պատճառով էլ ես Ձեզ կխնդրեի, որ Դուք գրեիք ինձ համառոտաբար, թե կա՞ արդյոք Աբովյանի արխիվում մի որևիցե բան էստոնացի գործիչների մասին, և եթե գտնվի այդպիսին, նեղություն քաշի հաղորդել ինձ, թե ի՞նչ թուղթ է և ինչի՞ մասին։*

Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր,
Ուգրո-Ֆին լեզուների ամբիոնի վարիչ՝

ՊԱՈՒԼ ԱՐԻՍՏԵ

*Պատասխանելով նրա այդ նամակին, ես գրեցի, որ Աբովյանի ինձ հայտնի թղթերի մեջ չկա տեղեկություն էստոնացի գործիչների մասին, և խնդրեցի, որ նա, իբրև համալսարանին մոտ կանգնած մարդ, իմանա, թե արդյոք համալսարանի արխիվում մնացե՞լ է մի որևիցե վավերաթուղթ Աբովյանի մասին։*

2.

Տարտու, 2 ապրիլի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

*Շնորհակալ եմ Ձեր նամակի համար։ Սրա հետ միասին ուղարկում եմ Ձեզ Տարտուի «Էդասի» թերթը, որի մեջ զետեղված է մի հոդված՝ Տարտուի ԷՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում եղած Աբովյանին վերաբերյալ նոր տվյալների մասին։*

*Եթե այդ տվյալները Ձեզ համար հետաքրքրական կլինեն, գրեցեք Արխիվի վերատեսուչ ընկեր Միլլերին հետևյալ հասցեով՝ ԷՍՍՌ, Տարտու, Պետական կենտրոնական դիվան, փողոց Լիիվի, Դ. 1։*

Խորին հարգանքով՝

ՊԱՈՒԼ ԱՐԻՍՏԵ

*Պատասխանեցինք՝ «Ինչպես որ Դուք մեր լեզուն չեք հասկանում, նույնպես և մենք Ձերը չենք հասկանում, ուստի և չկարողացանք Ձեր ուղարկած թերթը կարդալ։ Եթե Ձեզ համար նեղություն չի լինիլ, խնդրում եմ գրեք Պետական արխիվում նոր հայտնաբերված տվյալների խորագրերը»։*

3

Տարտու, Ցակոբսոնի, 8–1,
30 մայիսի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

*Ձեր նամակը վաղուց է, որ ստացել եմ, բայց այնքան զանազան աշխատանքներ ու-*

նեի, որ չեմ կարողացել դեռ պատասխանել։
Մեր Կենտրոնական արխիվում հետևյալ նյութերը կան.

1. Խաչատուր Աբովյանի հատուկ իրեն վերաբերյալ գործը, իբրև մեր Համալսարանի ազատ ունկնդիր, որից երևում է, թե նա ի՞նչ և ո՞ր առարկաներն է լսել, ի՞նչպիսի առաջադիմությամբ և ի՞նչ միջոցներով։

2. Գործ Պարրոտի գիտարշավին վերաբերյալ։

3. Մի քանի նկատումներ Համալսարանի մատենագրական գրքերում։

Մի լրագրական հոդված, որ ես ուղարկեցի Ձեզ, խոսում է հենց այդ վավերագրերի մասին։ Արխիվում ինձ ասացին, որ պատրաստում են հրատարակության համար բոլոր այդ վավերագրերը։

Համալսարանի մատենադարանում ես պատահմամբ գտա հյուրերի (ոյ ընթերցողների) գրքում, որ դիակոնոս Աբովյանը եղել է այդտեղ 1835 թվի հոկտեմբերի 5-ին։ Այդ հոկտեմբերին էլ մուծված են այլ անձերի (անունները)՝ Ժոզեֆ Օրբելի, Լոկոմտ Կուշելև Բեզբորոդկո։ Հավանական է, որ այդ երեքն էլ միաժամանակ են եղել։

Խորին հարգանքով՝
ՊԱՈՒԼ ԱՐԻՍՏԵ

**Ծանոթություն.—** Խաչատուր Աբովյանը հայտնի է եղել Դորպատում «Դիակոնոսս» անունով, որ նշանակում է սարկավագ։ Ժոզեֆ՝ հայերեն Հովսեփ։ Հովսեփ Օրբելին մեզ լավ ծանոթ Հովսեփ Օրբելու պապն է եղել, որ Աբովյանի Դորպատում եղած ժամանակ ուսանող է եղել Համալսարանում, բայց չավարտած, վերադարձել է Թիֆլիս և ձեռնադրվել քահանա ու կարգվել Ներսիսյան դպրոցի տեսուչ։

«Լոկոմտ» նշանակում է «կոմս»։ Կոմս Կուշելև Բեզբորոդկոն ռուս հայտնի իշխանական ազգանուն է։

4.

Տարտու, 14 օգոստոսի 1949 թ.

ՄԵԾԱՐԳՈ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

Ուղարկում եմ Ձեզ էստոնական «Էդասի» թերթի մի համարը, որի մեջ Ձեր գրող Պ. Ջորջյանը գրել է Աբովյանի մասին։ Նա, այսինքն ընկեր Պ. Ջորջյանը, Տարտուում է, ուր ծանոթանում է այն տեղերին ու այն ժամանակվա հանգամանքներին, երբ Աբովյանը ապրել է Տարտուում։

Խորին հարգանքով՝
ՊԱՈՒԼ ԱՐԻՍՏԵ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

# ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ


ՄԱԼԽԱՍՅԱՆ Ս., Գարեգին Սրվանձտյան, «Մշակ», 1892 թ., № 137. «Լումայ», 1909 թ., № 11. «Բազմավէպ», 1912 թ., հունվար-փետրվար:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Ս., Գարեգին Սրվանձտյան էրզրումում, «Մշակ», 1892 թ., № 145—146:

ՆԵՐՍԵՀ, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյան, «Արձագանք», 1892 թ., № 144:

ՄԵՐԵՆՑ Գ., Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյան, «Ազգագրական հանդես», Թ. տարի, էջ 272—281:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերը, «Ազգագրական հանդես», ԻԴ. տարի, էջ 111—118, ԻԵ. տարի, էջ 85—107:


*Ծնվել է Վանում 1840 թվի դեկտեմբերի 12-ին։ Աշակերտել է Խրիմյան Հայրիկին՝ Վարագա վանքի Ժառանգավորաց դպրոցում և ավարտելուց հետո նույն վանքի միաբան է դարձել։ Երբ Հայրիկը Կովկաս եկավ՝ իր հետ բերավ նաև Գարեգինին, որ տեսնելով հայրենի ավերակներն ու հնությունները՝ Վան վերադարձին սկսեց «Արծիւ Վասպուրականի» մեջ նկարագրել Կովկասի զանազան վայրերը։ Երբ Հայրիկը գնաց Մուշ, այնտեղ տարավ նաև Գարեգինին և նշանակեց խմբագիր «Արծուիկ Տարօնոյ» թերթին։*

*Իբրև առաջնորդ պաշտոնավարել է Հայաստանի զանազան թեմերում՝ Մուշ, Կարին, Ակն, Տրապիզոն և այլն։ Ամեն տեղ հայտնի է եղել իբրև ազգասեր ու ժողովրդասեր հովիվ, եռանդուն քարոզիչ, Հայրենիքի դատերի պաշտպան։ Այս միջոցին է որ Սրվանձտյանցը հավաքելով ահագին պաշար հայ կյանքի ու պատմության վերաբերյալ՝ սկսում է իրար հետևից լույս ընծայել իր զանազան գրական, ազգագրական ու բանասիրական գործերը, որոնցով առաջին հիմքն է դնում հայ ազգագրագիտությանը։*

*1878 թվին, երբ Հայկական հարցը իր եռուն վիճակի մեջ էր, երբ գավառական հարստահարությունները օրից օր սաստկանում էին և հայ ժողովուրդը որոշել էր միահամուռ գաղթել Հայրենիքից, Օսմանյան կառավարությունը վախենալով այս շարժումից՝ դիմեց Ներսես պատրիարքի աջակցության և խնդրեց որ խաղաղեցնե հայերին։ Ներսես պատրիարքը, որի համար նույնպես ցանկալի չէր հայրենի երկրի դատարկվելը, առիթից օգուտ քաղելով պաշտոն հանձնեց երեք գործունյա հայ վարդապետների՝ ճանապարհորդել գավառները, պաշտոնապես աշխատելու գաղթի առաջքն առնել, իսկ թաքուն կերպով քննելու գաղթականության պատճառները, տաճիկների հարստահարությունը, բարենորոգության խնդիրը, հայոց տնտեսական վիճակը, ժողովրդի թիվը և այլն։*

*Հիշյալ երեք վարդապետներից մեկն էր Գարեգին Սրվանձտյանցը՝ որ իր ճանապարհորդության գիծը սկսեց Սամսոնից և ցամաքային ճանապարհով անցնելով Ամասիա, Մարզվան, Եվդոկիա, Սեբաստիա, Ակն, Արաբկիր, Խարբերդ, Բալու, Մալաթիա, Տիգրանակերտ՝ հաջողությամբ կատարեց իրեն վստահված պաշտոնը։ Այս ճանապարհորդության նկարագրությունը տվեց նա «Թորոս Աղբար» անունով երկհատոր աշխատության մեջ։*

*Սրվանձտյանցի անունը թե իբրև գրող և թե՝ իբրև հայրենասեր ու գործունյա հովիվ հետզհետե բարձրանալով, վերջապես 185[illegible] թվին նա հրավիրվեց Էջմիածին և եպիսկոպոսական ձեռնադրություն ստացավ։ Այս*

անթիվ ճանապարհորդեց և ուսումնասիրեց նաև Կովկասն ու Կովկասի հայությունը։ Առաջնորդ եղավ Կարնո և Տրապիզոնի թեմերում։ Եվ այս միջոցին նա գրում էր Հայերեց ծածկանունով «Մասիսի» մեջ՝ հայ ժողովրդական կյանքի մասին հասարակական բնույթ ունեցող քննադատական հոդվածներ։

Օսմանյան կառավարությունը հաշտ աչքով չէր կարող նայել Սրվանձտյանցի ազգագրական գործունեության. և երբ սկսան հայաջինջ քաղաքականության առաջին խստությունները, և գավառներից սկսան Պոլիս քշել հայրենասեր վարդապետներին, Խրիմյանին, Նաթանյանին և ուրիշների հետ հեռացվեց նաև Սրվանձտյանցը։ Այնուհետև Սրվանձտյանցի ասպարեզը դարձավ միայն Պոլսի թաղերում քարոզչություն և հայ վարժարաններում կրոնի դասավանդություն՝ կառավարության խիստ հետապնդության ենթակա։ Ծանր ու երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց Պոլսի Ազգային հիվանդանոցում՝ 1892 թվի նոյեմբերի 17-ին և թաղվեց Նար-Պեյի կողքին։

Սրվանձտյանցի գործերն են՝ Գրոց-բրոց, Հնոց-նորոց, Շուշան Շավարշանա, Մանանա, Թորոս Աղբար և Համով-հոտով։

**Գրոց-բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ** (Պոլիս, 1874 թ.). մի փոքրիկ հատոր է, որ պարունակում է Վանի և Մուշի շրջանի հայ գյուղական կյանքի նկարագրությունը, և մի ժողովրդական ավանդավեպ՝ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ անունով։ Այս գիրքը գրական արժեք չունի, բայց ունեցավ շատ խոշոր նշանակություն հայ ազգագրության տեսակետով։ Մինչև այն ժամանակ չկար մի այսպիսի գիտություն։ Սրվանձտյանցի այս հատորիկը դարձավ մի հիմնաքար, որի վրա ավելանալով նրա մյուս աշխատությունները, կազմվեցավ ազգագրության գիտությունը։ Սասունցի Դավիթը հիացմունքի և անդրադույն հետազոտությանց առարկա դարձավ։ Պարզվեցավ որ դա ո՛չ թե հասարակ հնարովի հեքիաթ է, այլ մի հին պատմական դյուցազնավեպ՝ որ դարերի ընթացքում ավանդաբար պահվելով ժողովրդի բերանում՝ հասել էր մինչև մեզ։ Այսպիսով երևան եկավ այն, որ հայ ժողովուրդն էլ՝ ուրիշ արևելյան և արևմտյան հին ազգերի նման՝ ունեցել է ընդարձակ բանավոր գրականություն, հատկապես նրա մի առանձին ճյուղը՝ դյուցազներգությունը, որից անծշան հատակոտորներ միայն ունեինք Գողթան երգեր անունով։ Այնուհետև սկսվեց մի առանձին հետախուզություն՝ հավաքելու համար ոչ միայն նույնպիսի դյուցազներգական մնացորդներ, այլ և բանավոր գրականության ուրիշ զանազան բեկորներ։ Եվ այսօր կարող ենք ասել որ ահագին նյութ կա ժողոված թե՛ Սասունցի Դավթից և նրա բազմաթիվ տարբերակներից և թե՛ առհասարակ հայ բանավոր գրականությունից։

Այս գործի եռանդուն աշխատավորներից մեկը հենց ինքը Սրվանձտյանցը եղավ. իր գործերը մեծ մասամբ ազգագրական ժողովածուներ են. այսպես՝

**Հնոց-նորոց** (Պոլիս, 1874 թ.). մի փոքրիկ հատոր է, պարունակում է հին ձեռագրերից քաղված մի քանի պատմական հոդվածներ, Մուշի վանքերի ձեռագրերի ցուցակը, և նշանավոր Քեշե Պոլե կամ Տեր Պողոս քաջասիրտ քահանայի պատմությունը, որ 1820 թվին Սղերդի հայոց և Ոնտվանի եզիտների միացյալ բանակի գլուխն անցած՝ 10,000 զորքով կռվեց Բաղեշի Դավրիշ-Նարի շեյխի և Բոհտանի Միր Մեհեմմեդ իշխանի 30.000 քուրդ զորքերի դեմ, ջախջախեց նրանց և Մեհեմմեդին էլ սպանեց։

**Մանանա** (Պոլիս, 1876 թ.). ընդարձակ հատոր է. պարունակում է Վանի տեղագրությունը, գավառական բարբառով հեքիաթներ, երգեր, առածներ, հանելուկներ, Վանի ժամանակագրությունը, գավառական բառերի ժողովածու և այլն։

**Թորոս Աղբար կամ Հայաստանի ճամբորդ** (Պոլիս, 1879 թ.). երկհատոր աշխատություն է, որի մեջ նկարագրում է 1878 թվին կատարած ճանապարհորդությունը ընդարձակորեն։

**Համով-հոտով** (Պոլիս, 1884 թ.) ունի Վանի, Բաղեշի և շրջակայքի տեղագրությունը, հեքիաթներ, ժողովրդական երգեր և բառեր։

Վերոհիշյալ գործերը սովորաբար գրական գույն չունին. այս պատճառով երկար չենք կարող կանգ առնել նրանց վրա։ Գրական գույնը սկսում է երևան գալ Մանանայի և Թորոս Աղբարի մեջ, իսկ Համով-հոտովի մեջ հասնում է իր կատարելության։ Փոխանակ չոր ու ցամաք տեղագրության, այստեղ նա տալիս է մեզ հայրենի երկրի տեսարաններից այնպիսի հրաշալի պատկերներ, այնպիսի բանաստեղծական երփներանգ գրչով ու հայրենասիրական խանդավառ զգացմունքներով գծված, որ անկարելի է հեղինակի հետ չզգալ, չհմայվել, չարտասվել։ Հատկապես գեղեցիկ են Նարեկի, Արտամետի, Վանա ծովակի, Սեպուհի նկարագիրները։

Սրվանձտյանցի միակ զուտ գրական գործն է **Շուշան Շավարշանա** (Պոլիս, 1875 թ., 109 էջ). երեք արարվածով թատերգություն է, որ ներկայացնում է Վարդանանց պատերազ-

մի և նահատակության պատմությունը։ Առաջին տեսարանը կատարվում է Տարոնում՝ Մեծն Վարդանի տանը։ Վարդանը և նրա հետ մյուս նախարարները գնացել էին Հազկերտի մոտ և առերես ուրացել իրենց հավատքը։ Վարդանի եղբայրը՝ Հմայակ կասկածելով միշտ նրանց ուրանալու վրա՝ ահավոր երազներ է տեսնում և վախենում է թե Հայաստանի գլխին մի մեծ փորձանք է գալու։ Հանկարծ գալիս է ծերունի Վահե հազարապետը և գույժ բերում թե հայ նախարարները ուրացել են և պարսից բանակով եկել Հայաստան՝ քրիստոնեությունը ջնջելու։ Հմայակը հրաման է ուղարկում ամեն կողմ և բոլորը զինվելով՝ պատրաստվում են դիմադրության։ Երկրորդ արարվածը կատարվում է Օշական ավանում՝ Արշավիր Կամսարականի տանը։ Արդեն հայերը պատրաստ են դիմադրության. Աղվանները օգնություն են խնդրել հայերից և Վարդանը մի գունդ զորքով գնում է Աղվանք. Վահեն և Զարեհ Սյունին երկար խոսում ու վիճում են հայոց քաղաքականության մասին. Վահեն պաշտպանում է Քրիստոնեությունը և ուխտապահների քաղաքականությունը. իսկ Զարեհը՝ որ Վասակի կողմից է, հիմարություն է համարում դրանք, պնդում է, թե Քրիստոնեությունը վնասակար է եղել միշտ հայոց, թե ավելի լավ կլիներ ընդունել պարսից կրոնը և թե վերջապես՝ ազգ, հավատք ու հայրենիք դատարկ բաներ են և հարկավոր է հարվել այն ազգության, հավատքին և հայրենիքին՝ որ անձին տալիս է հանգիստ և երջանիկ կյանք։ Նա վստահ է թե Վարդանի բանակը Աղվանքում արդեն խորտակված կլինի պարսից ուժի առաջ և այլ ևս ավելորդ է Հայաստանում դիմադրության մասին մտածել։ Բայց հանկարծ ներս են վազում ավետաբերները և հայտնում թե Վարդանը Աղվանքում չարաչար հաղթել է պարսից։ Զարեհը ամոթահար դուրս է փախչում, իսկ հայերը օրհնում են Աստծուն։ Երրորդ արարվածը կատարվում է Վարդանանց նահատակությունից հետո՝ Վասպուրականի Ոստան քաղաքում։ Ներշապուհ Արծրունին՝ որ շատ ուրիշ հայ նախարարների նման շարունակում էր կռիվը պարսից դեմ և որի հոգին վերացած էր միշտ Վարդանանց նահատակության հիշատակով, բաց աչքով տեսնում է երկնային տեսիլքը. հրեշտակները իջնում են. լուսեղեն հոգիներ են երեւում և հայ նահատակները պսակվում են երկնային անմահության մեջ։ Գիրքը փակվում է մի գեղեցիկ բանաստեղծությամբ, որը ապա դառել է ժողովրդական երգ և որի տխուր եղանակը մրցում է իմաստի ազնվության հետ։

Թե հայրենյաց պսակադիր
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց քաջեր պսակել։

Մասյաց դաշտաց թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստված իջեր ի Հայաստան,
Հայոց արյուն հոտոտել։

Փախեք, ամպեր, Շավարշանեն,
Ալ մի՛ ցողեք ձեր ցողեր.
Շավարշանը ոռոգված է
Հայոց քաջաց արյունեն։

Եվ կծլին և կծնին
Այս դաշտին մեջ ոչ խոտ, վարդ,
Այլ Վարդանա ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հավատ։

Քանդակագործ քաջ Եղիշեն
Գրիչ ի ձեռին գա հԱրտազ,
Ցափե, ձևե, գրե, դրոշմե
Կյանք, մահ, հավատք Վարդանանց։

Ա՜հ, Վարդանա անվան արժան
Մասիս կանգնի մահարձան.
Մենաստաններ խաչն ի գմբեթ,
Ավետարան սուրբ տաճար։

Ծագե՛, արև, քույդ ճառագայթ
Խաղտյաց լեռներ, մութ խորշեր.
Այն տեղ ինկավ քաջ Հմայակ,
Այն տեղ պառկեր նահատակ։

Լուսին, լուսին, աչքովդ անքուն,
Պահե՛ Հայոց ոսկորներ,
Եվ մայիսի զվարթ ցողով
Ցողե անոնց շիրիմներ։

Արծվիք, բազեք Հայաստանին
Եվ արագիլ՝ ամրան հյուր,
Դո՛ւք հսկեցեք այս աշխարհին,
Ժառանգեցեք Հայոց տուն։

Մոխիրներուն վրա նստեք,
Ավերակներ շինեք բույն,
Եվ ծիծեռնակ գա ու երթա,
Մինչև Հայոց գա գարուն։

Այս տառանավորը՝ որ ամբողջովին մեջ բերինք, օրինակն է գրքի ամբողջության. քնարերգական քնքուշ բանաստեղծություն, պարզության մեջ իմաստների բարձրություն, նուրբ լեզու, վառ երևակայություն և եռանդուն հայրենասիրություն փայլում են նրա ամեն մի էջում։ Բայց այս բոլորի հետ տեսնում ենք և արվեստի պահանջած արտաքին ձևերի կատարյալ բացակայություն։ Թատերգության մեջ մինչև իսկ տեսիլները չեն որոշված և արարվածները տեսարան է կոչում հեղինակը. գործողություն բնավ չկա և ինչպես վերը տեսանք, բոլոր գործողությունները կատարվում են բեմից դուրս, իսկ դերակատարները խոսում ու վիճում են նրանց մասին՝ երկար, թեպետ գեղեցիկ ճառերով։ Այս բանը գիտե նաև հեղինակը, որ հառաջաբանի մեջ ասում է. «Որա՞մ պետք է անվանել այս իմ գրական դուզնաքյա գործս՝ թե ողբերգություն, կամ այլ ինչ. ինձ փույթ չէ արվեստական անուն մի տալ այժմ. քանզի և արվեստով չէ գրված, ոչ ձևոց և ոչ ոճո ընտրություն ու խորություն է եղած։ Դերք և դերասացք թերի են և առանց կանոնի, նույնպես և արարվածները. կապն և հանգույցը թույլ են և բացե բաց։ Կարճ ասած, գիրքը չպետք է համարել թատերգություն, այլ մի գեղեցիկ բանաստեղծական վեպ կամ զրույց թատերական ձևով գրված, ուր հեղինակի նպատակն է եղել «Տալ շնչել շունչ մը մեր հայրենյաց սյուքեն. տալ լսել արձագանք մը Հայաստանի քարերեն և անձավներեն. տալ հառաչել հառաչ մը Այրարատա խորշերը և Մասիսի ստվերը սիրողաց սրտերեն... տալ ցողել ցող մը ի ցողո մեր աչաց, խառնել զայն ընդ արյուն հոսյալ մեր հարանց անձինքներեն»։

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ*)

*Մեզ թվում է, որ նախնականը, հարազատը, երկարությամբ շարադրված եռանկյունիներն են (№ 1770 և № 2595 ձեռագրերի աղյուսակները)։*

*Որ նախնականը, իրոք, երկարությամբ շարադրված աղյուսակներն են, այդ երևում է հեղինակի ներածականում հայտնված այն տեղեկությունից, որ ինքը կանգ է առել միայն 14 անկյունների վրա և թվերի համարական կարգը, երկարությամբ, հասցրել մինչև 26-ի. «Յեռանկիւնեաց մինչ ի չորեքտասան գրեցաւ... բաւական համարեցայ կացուցանել դքանակութիւն դորա մինչև ցքսաներորդ վեցերորդ համարս»։ № 1770 և № 2595 ձեռագրերի աղյուսակների անկյունների վերջին թիվը, իրոք, 14 է, իսկ երկարությամբ շարադրվող թվերի համարակարգը՝ 26։ Սակայն, այդպես չէ «Անկյունավոր թվեր»ի լայնքով շարադրվող ձեռագրերում (№ 4150 և այդ խմբի ընդօրինակությունները)։ Այստեղ «չորեքտասան անկիւնի»ի վրա ավելացած է «հնգետասան անկիւնի»ն, ինչպես և՝ «կոճառոք»ի, «քուայք»ի և «երեքկինք»ի աղյուսակների առանձին շարքը։*

*Ցույց տալու համար՝ թե ի՞նչ սկզբունքով են կազմված Հովհաննեսի անկյունավոր թվերը, բերենք սկզբից մի փոքրիկ հատված.*

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ |
| Եռան-կիւնի | Ա | Գ | Զ | Ժ | ԺԵ | ԻԱ | ԻԸ | ԼԶ | ԽԵ | ԾԵ | ԿԶ | ՀԸ |
| | ԺԳ | ԺԴ | ԺԵ | ԺԶ | ԺԷ | ԺԸ | ԺԹ | Ի | ԻԱ | ԻԲ | ԻԳ | ԻԴ |
| | ՂԱ | ՃԵ | ՃԻ | ՃԼԶ | ՃԾԳ | ՃՀԱ | ՃՂ | ՄԺ | ՄԼԱ | ՄԾԳ | ՄՀԶ | Յ |
| Քառան-կիւնի | Ա | Գ | Ե | Է | Թ | ԺԱ | ԺԳ | ԺԵ | ԺԷ | ԺԹ | ԻԱ | ԻԳ |
| | Ա | Դ | Թ | ԺԶ | ԻԵ | ԼԶ | ԽԹ | ԿԴ | ՁԱ | Ճ | ՃԻԱ | ՃԽԴ |
| | ԻԵ | ԻԷ | ԻԹ | ԼԱ | ԼԳ | ԼԵ | ԼԷ | ԼԹ | ԽԱ | ԽԳ | ԽԵ | ԽԷ |
| | ՃԿԹ | ՃՂԶ | ՄԻԵ | ՄԾԶ | ՄՁԹ | ՅԻԴ | ՅԿԱ | Ն | ՆԽԱ | ՆՁԴ | ՇԻԹ | ՇՀԶ |

*Եռանկյունին այս սկզբունքով շարունակվում է մինչև 14-րդ անկյունը։*

*Դժբախտաբար, Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»ի ու մի ընդօրինակության մեջ*

*) Շարունակված նախորդ համարից։

չհայտնաբերվեցին երկրաչափական փնում-ների ցույց տալու համար՝ թե հնում անկյու-նավոր թվերը ինչպես էին երկրաչափական ձևով արտահայտում, ստիպված ենք բերել առաջին դարի հույն մաթեմատիկոս Նիկո-մախի հռմարեն տեքստի եռանկյունիների և քառանկյունիների աղյուսակից մի քա-նի նմուշ[21], որը տառացի համապատասխա-նում է Հովհաննեսի անկյունավոր թվերի հաշվին.—

```
                                                    α
                                       α           α α
                        α             α α         α α α
            α          α α           α α α       α α α α
    α      α α        α α α         α α α α     α α α α α

                                                 α α α α α
                                     α α α α     α α α α α
                        α α α        α α α α     α α α α α
            α α         α α α        α α α α     α α α α α
    α       α α         α α α        α α α α     α α α α α
```

Երկրաչափական գծագրությամբ, այդ թվերը կարելի է արտահայտել հետևյալ ձևով (վերցնում ենք Դոց. Թումանյանի գծագրու-թյունից[22]).





Եռանկյունա թվերի աղյուսակներին հա-ջորդում են նույնկյան արմատների և բոլ-բոլի աղյուսակները՝ շարադրված առանձին առանձին։ Այս աղյուսակներն էլ № 1770 ձեռագրի ձեռագրերում շարադրված են երկա-րությամբ, իսկ № 4150 ձեռագրում՝ լայնու-թյամբ։

Բերենք այդ աղյուսակների երկու փոքրիկ հատվածները, № 1770 ձեռագրից.

Արմատ թվեր

| Շարադասական սոքա Գ.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Դ.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Ե.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Զ.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Է.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Ը.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Թ.անկյունի ծնանին | Շարադասական սոքա Ժ.անկյունի ծնանին |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա |
| Բ | Գ | Գ | Ե | Զ | Է | Ը | Թ |
| Գ | Ե | Է | Թ | ԺԱ | ԺԳ | ԺԵ | ԺԷ |
| Դ | Է | Ժ | ԺԳ | ԺԶ | ԺԹ | ԻԲ | ԻԵ |
| Ե | Թ | ԺԳ | ԺԷ | ԻԱ | ԻԵ | ԻԹ | ԼԳ |

21. Νικομαχου Γερασηνου Πυθαγορικου 'Αριθμητικη ε'ισαγωγη հրատ. R. Hoche, Lipsiae, 1866, էջ 89—90։

22. Հայկական ՍՍՌ Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, էջ 58։

Բուրգոյ թվեր

| Եռանկյունաձև բուրգային | Քառանկյունաձև բուրգային | Հնգանկյունաձև բուրգային | Վեցանկյունաձև բուրգային | Յոթնանկյունաձև բուրգային | Ութանկյունաձև բուրգային | Իննանկյունաձև բուրգային | Տասնանկյունաձև բուրգային |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա |
| Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ժ |
| Զ | Թ | ԺԲ | ԺԵ | ԺԸ | ԻԱ | ԻԴ | ԻԷ |
| Ժ | ԺԶ | ԻԲ | ԻԸ | ԼԴ | Խ | ԽԶ | ԾԲ |
| ԺԵ | ԻԵ | ԼԵ | ԽԵ | ԾԵ | ԿԵ | ՀԵ | ՁԵ |

Արմատի և բողբոջի աղյուսակներին հաջորդում է հետևյալ աղյուսակը (բերում ենք հինգ շարք միայն, վերցնելով № 1770 ձեռագրից)։

| [illegible] | Եռանկյունային | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Բ | Բ | Ա | Ա | Ը | Ա | Ա | Ա |
| Բ | Գ | Գ | Գ | Դ | Ե | Ե | Զ | Զ | Է | Դ | Զ | Գ | Դ | ԺԶ | Գ | Բ | Դ |
| Գ | Զ | Ե | Թ | Է | ԺԲ | Թ | ԺԵ | ԺԱ | ԺԸ | Զ | ԺԲ | Ե | Թ | ԻԴ | Թ | Դ | ԺԶ |
| Դ | Ժ | Է | ԺԶ | Ժ | ԻԲ | ԺԳ | ԻԸ | ԺԶ | ԼԴ | Ը | Ի | Է | ԺԶ | ԼԲ | ԻԷ | Ը | ԿԴ |
| Ե | ԺԵ | Թ | ԻԵ | ԺԳ | ԼԵ | ԺԷ | ԽԵ | ԻԱ | ԾԵ | Ժ | Լ | Թ | ԻԵ | Խ | ՁԱ | ԺԶ | ՄԾԶ |

Այս աղյուսակի առաջին սյունակը եռանկյունու տարրատանն է ( γένεσισ )։ Հաջորդականությունը սովորական թվաշարքով է՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7 և այլն։

Երկրորդ սյունակը եռանկյունու արտաքոյն է, հունական τρίγωνος-ը։ Նրա թվաշարքը ունի հետևյալ պատկերը՝ 1, 3, 6, 10, 15, 21 և այլն։

Երրորդ սյունակը քառանկյունու արմատն է, իսկ չորրորդը՝ քառանկյունու բողբոջը։ Առաջինի թվաշարքն է՝ 1, 3, 5, 7, 9, 11 և այլն, իսկ երկրորդինը՝ 1, 4, 9, 16, 25, 36 և այլն։

Հինգերորդը՝ հնգանկյունու արմատն է, իսկ վեցերորդը՝ հնգանկյունու բողբոջը։ Յոթերորդը՝ վեցանկյունու արմատն է, իսկ ութերորդը՝ վեցանկյունու բողբոջը։ Իններորդը՝ յոթանկյունու արմատն է, իսկ տասներորդը՝ յոթանկյունու բողբոջը։

Ուշադրության արժանի է տասնմեկերորդ

սյունակի «դարքը»՝ զույգ թվերը, որն սկսում է երկուսից և հաջորդ վանդակներում երկու երկու ավելանում՝ 2, 4, 6, 8, 10, 12, 14 և այլն։

Տասներկուերորդը «շումլադարքը» սյունակն է (որոշ ձեռագրերում դա կոչվում է «միահամուռ դարքը»), որն սկսում է դարձյալ երկուսից, ընդունում է չորսի ավելացում և յուրաքանչյուր հաջորդ վանդակի թվանշանի վրա ավելանում են երկու։ Այսպես, նրա թվաշարքը սկզբից հետևյալ պատկերն ունի. 2, 6, 12, 20, 42 և այլն։

Տասներեքերորդ սյունակը «կոճատքն» է՝ կենտ թվերը. 1, 3, 5, 7, 9, 11, 13 և այլն։

Տասնչորսերորդ թվերի սյունակը «շումլակոճատքն» է, որը ունի միայն մեկ՝ № 8973 ձեռագրի ընդօրինակությունը։ Սկսում է մեկից, առաջին վանդակում ավելանում են երեք, իսկ այնուհետև յուրաքանչյուր հաջորդ սյունակում երկու երկու ավելանում։ Նրա թվաշարքը սկզբից հետևյալն է. 1, 4, 9, 16, 25, 36 և այլն։ Այս սյունակը, մեր կարծիքով, ուշ շրջանում է ավելացած։

Տասնհինգերորդը՝ «քուայքն» է։ Նա սկսում է ութից և հաջորդ վանդակում ութ ութ ավելանում՝ 8, 16, 24, 32, 40, 48, 56 և այլն։

Տասնվեցերորդը՝ «երեքկինք» սյունակն է (τριπλάσιοι)։ Սկսում է մեկից, բազմապատկվում երեքով և ստացված գումարը հաջորդ վանդակներում բազմապատկվում երեքով՝ 2, 3, 9, 27, 81, 243 և այլն։

Տասնյոթերորդը՝ «կրկնակք» սյունակն է (διπλάσιοι) երկուսի բազմապատկությամբ՝ 1, 2, 4, 8, 16, 32, 64 և այլն։

Վերջին սյունակը «չորեքկինքի» սյունակն է, չորսի բազմապատկությամբ՝ 1, 4, 16, 64, 256, 1024, 4096 և այլն։

Աղյուսակներին անմիջապես հաջորդում է բացատրական մի տեքստ, «Խրատ քուէից» խորագրով։ Որոշ ընդօրինակություններում, օրինակ № 5284, այդ տեքստը շարադրված է առանց վերնագրի։

«Խրատ Քուէից» գլխին հաջորդում են «Քուայք կրկնակք», «Քուայք եռեքկինք» և «Յաղագս քառակին եւ տասներեկին» վերնագրերով փոքրիկ գլուխները։

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» բուն տեքստը վերջանում է հետևյալ պարբերությամբ. «Բաւական տուաւ քեզ վասն այսոցիկ»։

***

Ո՞րն է Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» սկզբնաղբյուրը, ումի՞ց է օգտվել նա։ Այս հարցադրումը բնական է, եթե ի նկատի ունենանք, որ Հովհաննեսը թվաբանական և երկրաչափական նոր սիստեմ չի ստեղծել, այլ օգտվել է ձեռքի տակ պատրաստի եղած աշխատություններից։

Դոցենտ Թումանյանը, իր «О таблице полигональных чисел А. Ширакаци» վերնագրով հոդվածում, «Անկյունավոր թվերի աղբյուր մատնացույց է արել Նիկոմախին[23]»։ Դոց. Գ. Պետրոսյանն էլ Հովհաննեսի «Անկյունավոր թվերի հավանական աղբյուրն է համարում «Նիկոմախի աշխատությունը կամ ըստ նրա կազմած Թոյեցու և ուրիշների աշխատությունները», չնայած մի այլ տեղ, անկյունավոր թվերի աղյուսակներում գործ ածված մեկ երկու բառերի հիման վրա ենթադրում է, որ «Հովհաննեսը կարող է օգտագործած լինել արաբական մաթեմատիկական աշխատությունները»[24]։

Նիկոմախի թվաբանական աշխատության[25] և Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» նշված տեքստերի համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ Հովհաննեսի մի քանի աղյուսակները, իրոք, նմանվում են Նիկոմախի աղյուսակներին։ Որպես նմուշ կարող ենք մատնացույց անել հետևյալ աղյուսակները։

---

23. Հայկ. ՍՍՌ Մատ.ի «Գիտ. աշխ. ժողովածու», էջ 88։

24. Տեղեկագիր Հայկ. ՍՍՌ Գիտ. Ակադ.ի 1946 թ., № 4, էջ 32։

25. Նիկոմախը ապրել է մեր էրայի առաջին դարում։ Նա է կազմել առաջին թվաբանական ուսմունքը որպես ինքնուրույն առարկա, առանց երկրաչափական պատկերացման։ Նրա «Թվաբանության ներածությունը» կարևոր ձեռնարկ է հանդիսացել հետագա դարերում (տե՛ս այս մասին М. Е. Ващенко—Захарченко, История математики, т. I, Киев, 1883 г. стр. 122—126)։

| Գ․անկիւնի | Ա | Գ | Զ | Ժ | ԺԵ | ԻԱ | ԻԸ | ԼԶ | ԽԵ | ԾԵ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դ․անկիւնի | Ա | Դ | Թ | ԺԶ | ԻԵ | ԼԶ | ԽԹ | ԿԴ | ՁԱ | Ճ |
| Ե․անկիւնի | Ա | Ե | ԺԲ | ԻԲ | ԼԵ | ԾԱ | Հ | ՂԲ | ՃԺԷ | ԺԽԵ |
| Զ․անկիւնի | Ա | Զ | ԺԵ | ԻԸ | ԽԵ | ԿԶ | ՂԱ | ՃԻ | ՃԾԳ | ՃՂ |
| Է․անկիւնի | Ա | Է | ԺԸ | ԼԴ | ԾԵ | ՁԱ | ՃԺԲ | ՃԽԸ | ՃՁԹ | ՄԼԵ |

Ներկա աղյուսակը մենք վերցրել ենք Հայկ. ՍՍՌ մատ.ի № 1711 ձեռագրից[26]։ Նա տառացի համապատասխանում է Նիկոմախի հետևյալ աղյուսակին[27]։

| τρίγωνοι | α | γ | ς | ι | ις | κα | κη | λς | με | νε |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| τετράγωνοι | α | δ | θ | ις | κε | λς | μθ | ξδ | πα | ρ |
| πεντάγωνοι | α | ε | ιβ | κβ | λε | να | ο | φβ | ριζ | ρμε |
| ἑξάγωνοι | α | ς | ιε | κη | με | ξς | ϙα | ρκ | ρνγ | ρϙ |
| ἑπτάγωνοι | α | ζ | ιη | λδ | νε | πα | ριβ | ρμη | ςμθ | σλε |

| Եռանկիւնի | Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Գ | Զ | Ժ | ԺԵ | ԻԱ | ԻԸ | ԼԶ | ԽԵ |




Սակայն, աղյուսակների այս համեմատության հիման վրա մենք չենք կարող պնդել, որ Հովհաննեսի աղյուսակավոր թվերը Նիկոմախի հայերեն տառացի թարգմանությունն է, որովհետև նախ՝ ոչ բոլոր աղյուսակների մեջ նմանություն կա, և ապա, բացատրական տեքստը միանգամայն տարբեր է։

Հովհաննեսի անկյունավոր թվերի աղբյուրը պարզելու տեսակետից արժեքավոր է նրա կենսագրի մի հիշատակությունը։ Վերջինս խոսելով Հովհաննեսի օգտագործած աղբյուրների մասին, այդ շարքում թվում է Փիլոնի մաթեմատիկական մի երկը. «Զթուականաչափ խորոցս Փիլոնի, դարից եւ կոճատաց, եւ զառ ի նոցանէ գծնունդս եւ ի ներքոյ տասնեկին գծնունդս եւթանց, եւ զանկատարութիւնս ի յատուկսն ստուգակարգս, յանուանս եւ

26. Հայկ. ՍՍՌ Մատենադարան, № 1711։

27. Նիկոմախի հունարեն տեքստը, էջ 56։

յանաճականսե»[28]։ Հիշելով Փիլոնի «զայր» և «կոճատ» թվերը և նրանցից սկիզբ առնող մյուս թվերի շարքը, կենսագիրն այստեղ՝ անկասկած, նկատի ունի մաթեմատիկական մի ինչ որ տեքստ։ Մեր ջանքերը՝ գտնելու Փիլոն Եբրայեցու մաթեմատիկական բովանդակությամբ այդ աշխատությունը նրա հրատարակված մատենագրության մեջ, ապարդյուն անցան։ Կրումբախերի Geschicte der Byzantinischen litteratur-ի մեջ մաթեմատիկական նման բովանդակությամբ ոչ մի տեքստ չի հիշվում։ Միայն Փիլոնի մատենագրության հին հայերեն թարգմանության մեջ, որը հրատարակել է բանասեր Ավգերյանը, «զայր և կոճատ» թվերի և անկյունավոր այլ թվերի մասին խոսված է ստորև բերված երկու հատվածներում։

«Եւ երեքանկիւնիք են չորք այսոքիկ, Ա. Գ. Զ. Ժ. որ լինին Ի.։ Չորեքանկիւնիք չորք՝ Ա. Դ. Թ. ԺԶ. լինեն Լ.։ Եւ հնգանկիւնիք չորք, Ա. Ե. ԺԲ. ԻԲ. լինին քառասուն։ Վեցանկիւնիք չորք, Ա. Զ. ԺԵ. ԻԸ. լինին Ծ.։ Եւ եօթնակիւնիք չորք, Ա. Է. ԺԸ. ԼԴ. լինին վաթսուն։ Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց»[29]։

«Չորրորդ, բաղկանայ յերեսուն եւ ի վեցէ եւ ի վաթսուն եւ ի չորից, որ է քուեայ՝ միանգամայն եւ չորեքանկիւնի։ Հինգերորդ՝ բաղկանայ ի մի ըստ միոջէ կոճատացն յայսցանէ, Ա. Գ. Ե. Է. Թ. ԺԱ. ԺԳ. ԺԵ. ԺԷ. ԺԹ. լինին Ճ.։ Վեցերորդ՝ բաղկանայ ի քառուց, ի միակաց կրկնակաց, եւ ի չորեքկնաց կրկնակաց, Ա. Բ. Դ. Ը. լինին ԺԵ.։ Եւ ի չորեքկնացն, Ա. Դ. ԺԶ. ԿԴ. լինի ՋԵ.»[30]։

Բերված հատվածների նմանությունը Հովհաննեսի նշված աշխատության հետ շատ ընդհանուր է և չի համընկնում Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ի հետ։

Մենք փորձեցինք պրպտումներ կատարել Փիլոնի թարգմանական այն տեքստերի մեջ, որոնք պահպանվել են Հայկ. ՍՍՌ Մատենադարանի գրչագրերում և հրատարակված չեն։ Մեր աշխատանքը, բարեբախտաբար, հաջողությամբ պսակվեց. մեզ հաջողվեց պարզել, որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության բացատրական տեքստի աղբյուրն է հանդիսացել Փիլոն Եբրայեցու «Յաղագս տասն բանիցն» մեկնությունը, որը պահվել է Հայկ. ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերում և չի հրատարակված։ Այդ տեքստի մասին հիշատակություն չկա Զարբհանալյանի Մատենագրության պատմության մեջ։

Ուշադրության արժանի է, որ Փիլոնի «Յաղագս տասն բանիցն» աշխատությունը մեկնվել է հայ մի հեղինակի կողմից՝ «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Եբրայեցւոյ» վերնագրով։ Հայ մեկնիչի անձնավորությունը հաստատապես հայտնի չէ, բայց գրիչը, հիմնվելով այն փաստի վրա, որ այս մեկնությանը նախորդել է Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը, ենթադրել է, որ այս մեկնության հեղինակը Հովհաննեսը պիտի լինի։ Գրիչն այդ մասին գրում է. «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Եբրայեցւոյ... Արարեալ ի մերոց վարդապետաց՝ որպէս ցուցանէ կերպն շարադրութեան։ Այլ յումմէ գոլն՝ անյայտ, զի չկայր յօրինակին՝ անուն լուծողին։ Բայց զի անկիւնաւոր թուոց խրատն, որ ի վերդ է, Սարկաւագ Հովհաննէս վարդապետն է արարեալ. ես ես զայն ըստ սոյն գրոցս եւ սոյն դասութեամբ ի միում տփոյ գտի, վասն որոյ թուեցաւ ինձ թէ եւ զայս լուծմունք նա իցէ արարեալ, քանզի եւ բանն համանման երեւի նորին շարադրութեաննս»[31]։

Հովհաննեսն իր «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության մեջ Փիլոնի «Յաղագս տասն բանիցն» աշխատությունից օգտվել է տառացի, ուղղակի պատճենահանել է այն։ Անհրաժեշտ ենք համարում երկու հատված զուգահեռ ձևով բերել այստեղ։

---

28. Հայկ. ՍՍՌ Մատեն. № 2680 (տե՛ս այս մասին մեր ուսումնասիրությունը «Էջմիածին» ամսագրի անցյալ տարվա մայիս-հունիս. միացյալ համարում), Ի դեպ, վերջերս ծանոթանալով պրոֆ. Մելիքսեթ-Բեկովի «Վարդապետք Հայոց հյուսիսային կողմանց» վրացերեն լեզվով գրված աշխատության հետ, իմացա, որ նշված կենսագրականը մեզնից առաջ ծանոթ է եղել մեծանուն պրոֆեսորին և նա մեջբերումներ է արել այդ տեքստից։

29. Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի հայս, աշխատությամբ Ավգերյանի, Վենետիկ, 1826 թ., էջ 69։

30. Նույնը, էջ 281։

31. Հայկ. ՍՍՌ Մատեն., № 2595, թ. 241բ։

«Ժ.եկի շարադրութիւն թիւ ծնանի զԵ.Ն եւ զՄ.Ն, սքանչելի յինքեան ունելով զեդեցկութիւն։ Քանզի նախ առաջին գոյացաւ ի քուէից, ի կրկնակէ եւ յԳ. կնակէ, յայնցանէ, որ մի ըստ միոջէ շարադրեցան։ Իբրու թէ որպէս ի կրկնակին՝ Ա, Բ, Դ, Ը, լինին սոքա ԽԺ.ան։ Երեքկինք եւ Գ.կնէն՝ Ա, Գ, Թ, ԻԷ, որ են Խ եւ են սոքա շարադրելով ԾԵ, (զորս եւ Պղատոն ի Տիմէոսին յիշէ յաղագս ոգէծնութեան, սկսեալ այսպես. Մի՛ ի բաց երարձ յամենայնէ մասն եւ որ զհետ այսորիկ)։

Երկրորդ՝ ԾԵ թիւ, Ժ.եկին է շարադրութիւն, իսկ ԳՃ.Ն, Զ եւ Ե.Ն զօրութեամբ Ժ.եկին է, քանզի եթէ զիւրաքանչիւրս ի սոցանէ, ի միակէն մինչեւ ի Ժ.եակն բազմապատիկ արարեալ շարադրեսցես՝ գտցես զասացեալն թիւ զԳՃ.ոցն զԶ եւ զհինգին։ Իսկ ԳՃ, Զ եւ Ե.Ն յՄ ն Ե.Ն՝ Է.պատիկ է։ (Երից ԾԵ՝ Գ.անկիւնի է, որպէս Զ.Ն եւ որպես նոյն ինքն Ժ.եակն)։

Չորից եթէ թուեսցես զմին, գտցես Զ ըստ բաղադրութեանն տասնեակ, զյՄ եւ զԵ.Ն։ Հինգերորդ՝ սեռականագոյն, Ը.ակ, Զ.եակ իմն բազմապատիկ ինքեան եղեալ զօրութիւն է, որ ծնանի զԼ եւ զԶ, որոյ է՝ երկից չորք. սորա մասունք ծնեալ այսպես. երկից՝ Ը եւ Ժ, Գ՝ ԺԲ, Դ՝ Թ, Զ՝ Զ, Թ՝ Դ, ԺԲ՝ Գ, ԺԸ՝ Բ, երեսուն եւ վեցից՝ մի. միանգամայն լինին մասունք Ը թիւ Մ եւ Ե։ Մակեռանկիւնիքն՝ Ե, որք մի ըստ միոջէ ծնանին զյՄ եւ զԵ.Ն... Իբրու թէ որպես Գ, Զ, ԺԵ, ԻԱ, լինի ԾԵ...»[32]։

«...Եւ վասն այսորիկ որք յիրաւի եւս վեյեւլշաքար զարմացի ունելով (զտասներեակն) յինքեանն զանազան բնութիւն, եւ զզատականն, քանզի անազատ կարգեալ զասի ըստ նշանի միայն, իսկ զատականն ըստ երից տեսակաց, եւ վեր ի վերոյ՝ գծոյ եւ երեւման, եւ հաստատնոյ, քանզի որ երկուք նշանօք յանկեցեալ է՝ գիծ է, իսկ որ յերկուսն դատեալ է վեր ի վերոյ երեւումն ծորեալ ի լայնութիւն գծին։ Իսկ որ յերիս ի հաստատուն երկայնութեան եւ լայնութեանն խորութիւն առեալ, որովք գոյանալ բնութիւնս։ Քանզի աւելի քան զերիս զատութիւնս ոչ ծնաւ։ Եւ սկզբնատիպք սոցա թիւք են. անզատ նշանին՝ մի, եւ գծին՝ երկուն. եւ վեր ի վերոյ երեւմանն՝ երեք...[33]։

32. Հայկ. ՍՍՌ Մատեն., № 2595 ձեռագիր, թ. 127ա—127բ։

33. Հայկ. ՍՍՌ Մատեն., № 2595 ձեռագիր, թ. 128բ—129ա։

«Իսկ որ ի նմանէ որպէս յարմատոյ բուսեալ՝ հինգն եւ յիսունն, յոլովս սասցելովքդ ունի առաքինութիւնս։ Առաջին՝ զի գոյացաւ ի քուէից, ի կրկնակէ, եւ յերեքկնէ, յայնոցիկ, որ մի ըստ միոջէ շարադրեցան։ Ի կրկնակէ այսպես՝ Ա, Բ, Դ, Ը, լինին սաքո ԺԵ։ Երեքկինք, եւ յերեքկնէն՝ Ա, Գ, ԻԷ, շարադրեալք սոքա լինին ԾԵ։

Երկրորդ՝ ԾԵ թիւն տասնեկին շարադրութիւն, իսկ ՑՁԵ.Ն՝ զաւրութեամբ տասնեկին է, քանզի թէ զիւրաքանչիւրս ի նոցանէ, ի միակէն մինչ ի տասնեակն, բազմապատիկ արարեալ շարադրեսցես զերեքհարիւրոցն զՁ եւ հինգին, իսկ յՁ.էն ԾԵ.ին եւթնպատիկ է։

Երրորդ՝ եթէ թուեսցես զմինն՝ գտցես Զ ըստ բաղադրութեանն տասնեակ զՄԵ.Ն։

Չորրորդ՝ սեռականագոյն վեցեակ՝ ինքն յինքեան բազմապատիկ եղեալ զաւրութիւն է, որ ծնանի զԼՄ, որոյ երկից չորք մասունքն ծնեալք այսպես. երկից Ը եւ Ժ, երից՝ երկոտասն, չորից՝ ինն, վեցից՝ վեց, իննից՝ չորք, երկոտասանից՝ երեք. տասն եւ ութից՝ երկու, երեսուն եւ վեցից՝ մի։ Միանգամայն մասունք ութ թիւ՝ ԾԵ։

Հինգերորդ՝ զի ի մակեռանկիւնեաց հնգից մի ըստ միոջէ ծնանի ԾԵ, այսպես՝ Գ, Զ, Ժ, ԺԵ, ԻԱ, լինի ԾԵ...»[34]։

«Եւթներորդ՝ քանզի ունի յինքեան տասնեակդ եւ յերկրաչափութենէ զանազան բնութիւն եւ զզատական։ Անազատ կարգեալ դասի ըստ նշանի միայն, իսկ զատականն ըստ երից տեսակաց մակերեւական գծոյ, երեւման եւ հաստատնոյ, քանզի որ երկուք նշանաւք յանկացեալ է՝ գիծ է, իսկ որ յերկուցն զատեալ է, մակերեւութիւն ծորեալ ի լայնութիւն գծին, իսկ որ յերիս՝ հաստատուն, երկայնութիւն եւ լայնութիւն, խորութիւն առեալ, որովք գոյանալ բնութիւնս, քանզի զաւելի քան զերից զատութիւնս ոչ ծնաւ։ Եւ սկզբնատիպք սոցա թիւք են անզատ նշանին՝ մին, եւ գծին՝ երկուսն։ Եւ վեր ի վերոյ երեւմանն՝ երեքն...» [35]։

34. Վերցրել ենք մի քանի ընդօրինակության հիման վրա մեր կազմած տեքստից։

35. Բերել ենք մեր կազմած տեքստից։

Այսպիսով, պարզվում է որ Հովհաննեսն իր «Ցաղագս անկիւնաւոր թուոցն» բացատրական տեքստի մեջ օգտվել է Փիլոնի «Ցաղագս տասն բանիցն» վերնագիր ունեցող անտիպ աշխատությունից, ըստ որում, օգտվել է հայերեն թարգմանությունից։

Մնում է սակայն պարզել աղյուսակների աղբյուրը։ Դժվար չէ կռահել, որ Հովհաննեսն իր ձեռքի տակ, բացի Փիլոնից, ունեցել է երկրաչափական աղյուսակներ, որոնք, հավանական է, շատ վաղուց հունարենից թարգմանվել էին հայերեն և որոնց փրշրանքները դեռևս պահպանվում էին 12-րդ դարում։ Ուշադրության արժանի է, որ Հովհաննեսի «Ցաղագս անկիւնաւոր թուոցն» որոշ ընդօրինակություններ ունեն գրչի հետևյալ կարևոր հիշատակությունը. «Անգիւնաւոր թուոցդ վախճանն չէ է, բայց այլ վասն կրթության մանկանց Յովհաննու քահանայի արարեալ, զանգիւնաւոր թիւսդ ի փոխադրութենէ երկրաչափական ձեւոցս»։ Ուրեմն, ըստ հիշատակագրի, նախապես անկյունավոր թվերի յոթերորդը եղել է, իսկ շարունակությունը Հովհաննեսն աշակերտների կրթության համար է պատրաստել։

Այս տեսակետից ուշադրության արժանի է Հովհաննեսի վերջին աղյուսակը, ուր շարադրված է միայն մինչև «է.անկիւնիսն»։ Այդ աղյուսակը մեզ պատահում է հաճախ առանձին և հին գրչագրերում։ Այդ հանգամանքը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ այն կազմված է եղել Հովհաննեսից առաջ և նրանից է օգտվել նա և այն նցել իր աշխատությանը որպես հավելված։ Գուցե և ուշ շրջանում այդ աղյուսակն ընդօրինակողներից մեկն ու մեկը ամբողջացնելու նպատակով է կցել Հովհաննեսի տեքստին։ Ի դեպ. դոց. Գ. Պետրոսյանը, իր վերև հիշված աշխատության մեջ, մեզ մեջադրել է այն բանում, որ մենք, իբր թե առանց հիմք ունենալու, նշված աղբյուրը ավելի հին ենք համարել, քան Հովհաննեսի անկյունավոր թվերը. «Ըստ Աբրահամյանի—գրում է նա—դուրս է գալիս, որ նոր հեղինակը (Հովհաննեսը) այդ նոր շարքերը ավելացրել է օգտագործելով Ա. Շիրակացու «դարս» և «կոճատ» թվերից։ Միանգամայն ճիշտ է, որ 7-րդ դարում Ա. Շիրակացին գործ է ածել զույգ և կենտ թվերը... սակայն այդ բոլորը ոչ մի հիմք չեն տալիս վերևում հիշված եզրակացության համար» (էջ 29)։ Իրականում, մենք նշված աղյուսակը ո՛չ միայն չենք համարել Շիրակացու հեղինակած գործը, այլ և այդ խնդրում վիճել ենք դոց. Թումանյանի հետ։ Ինչ վերաբերվում է այդ աղյուսակների ավելի հին լինելուն, ապա այդ մասին վկայում է վերև բերված հիշատակությունը։

***

Հովհաննեսի «Ցաղագս անկիւնաւոր թուոցն վրա. ինչպես ասացինք, հետագայում, այլ հեղինակների կողմից, կատարվել են որոշ լրացումներ։ Դժվար չէ այդ լրացումները ճանաչել համեմատական ուսումնասիրության հիման վրա։ Նկատելի է, որ այդ ավելացումների մի մասը ինքնուրույն են, իսկ մյուս մասը ընդօրինակություններ են անցյալից մնացած մաթեմատիկական որոշ տեքստերի, որոնք կցվում են Հովհաննեսի

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| α | β | γ | δ | ε | ς | ζ | η | ϑ | ι |
| β | δ | ς | η | ι | ιβ | ιδ | ις | ιη | κ |
| γ | ς | ϑ | ιβ | ιε | ιη | κα | κδ | κζ | λ |
| δ | η | ιβ | ις | κ | κδ | κη | λβ | λς | μ |
| ε | ι | ιε | κ | κε | λ | λε | μ | με | ν |
| ς | ιβ | ιη | κδ | λ | λς | μβ | μη | νδ | ξ |
| ζ | ιδ | κα | κη | λε | μβ | μθ | νς | ξγ | ο |
| η | ις | κδ | λβ | μ | μη | νς | ξδ | οβ | π |
| ϑ | ιη | κζ | λς | με | νδ | ξδ | οβ | πα | ϟ |
| ι | κ | λ | μ | ν | ξ | ο | π | ϟ | ρ |

Nicomax, էջ 51

«Այս է դուռն Պիւթագորային»

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ժ |
| Բ | Դ | Զ | Ը | Ժ | ԺԲ | ԺԴ | ԺԶ | ԺԸ | Ի |
| Գ | Զ | Թ | ԺԲ | ԺԵ | ԺԸ | ԻԱ | ԻԴ | ԻԷ | Լ |
| Դ | Ը | ԺԲ | ԺԶ | Ի | ԻԴ | ԻԸ | ԼԲ | ԼԶ | Խ |
| Ե | Ժ | ԺԵ | Ի | ԻԵ | Լ | ԼԵ | Խ | ԽԵ | Ծ |
| Զ | ԺԲ | ԺԸ | ԻԴ | Լ | ԼԶ | ԽԲ | ԽԸ | ԾԴ | Կ |
| Է | ԺԴ | ԻԱ | ԻԸ | ԼԵ | ԽԲ | ԽԹ | ԾԶ | ԿԳ | Հ |
| Ը | ԺԶ | ԻԴ | ԼԲ | Խ | ԽԸ | ԾԶ | ԿԴ | ՀԲ | Ձ |
| Թ | ԺԸ | ԻԷ | ԼԶ | ԽԵ | ԾԴ | ԿԳ | ՀԲ | ՁԱ | Ղ |
| Ժ | Ի | Լ | Խ | Ծ | Կ | Հ | Ձ | Ղ | Ճ |

Հայկ. ՍՍՌ. Մատեն. № 1711, թ. 14բ-15ա։

վերև հիշված աշխատությունը ամբողջացնելու, ամփոփելու նպատակով։

Անհրաժեշտ է նշել, որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» վրա կատարված հավելումներից մի քանիսը խիստ արժեքավոր են և հնարավորություն են տալիս մեզ՝ որոշ պատկերացում ունենալ մաթեմատիկայի զարգացման վիճակի մասին մեզ մոտ անցյալում։

Այդ տեքստերից առանձնապես արժեքավոր են Պյութագորասի բազմապատկության աղյուսակները, որոնցից մի նմուշը հրատարակել ենք մեր «Անանիա Շիրակացու Մատենագրությունը» և «Հայկական Հնագրություն» աշխատությունների մեջ։ Մաթեմատիկայի պատմությամբ զբաղվող մեր մասնագետներին նյութ մատակարարելու նպատակով, անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ Պյութագորասի բազմապատկման հունական աղյուսակներից մեկը, համեմատելով հայկական թարգմանության հետ (տե՛ս էջ 40)։

Պյութագորյան նման աղուսակներ ունենք Հայկ. ՍՍՌ Մատենադարանի մի քանի ձեռագրերում, որոնցից հնագույն ընդօրինակությունը 1463 թվականից է (№ 1711, թ. 14բ—15ա)։

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» վրա կատարված նման արժեքավոր ավելացումներից է № 1711 ձեռագրի ավելացումը, որը քաղված է Պյութագորասի աղյուսակից և գործնական խորհուրդներ պարունակող մի տեքստից, բազմապատկություն կատարելու եղանակի մասին։

Բազմապատկության գործնական խորհուրդներ պարունակող տեքստը բարդ, բայց միաժամանակ հետաքրքիր տեքստ է։ Տեքստը երկար է, չենք բերում, բայց որոշ պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում համառոտակի ծանոթացնել նրա բազմապատկության եղանակի հետ։ Վերցնենք 8-ով 9-ը բազմապատկելու նրա օրինակը.

1) ութը գումարվում է իննին՝ 8+9=17, 2) 17-ի տասնավորը բազմապատկվում է միավորով՝ 10×7=70, 3) 10-ից հանվում է առաջին գումարելին՝ 10—8=2, 4) ապա հանվում է երկրորդ գումարելին՝ 10—9=1, 5) երկու մնացորդները բազմապատկվում են՝ 2×1=2, 6) մնացած թիվը գումարվում է երկրորդ գործողության գումարի վրա՝ 70+2=72[36],

Կամ վերցնենք երեք այլ թվերի բազմապատկությունը.

| 6×7 | 4×9 | 6×8 |
|---|---|---|
| 6+7=13 | 4+9=13 | 6+8=14 |
| 10×3=30 | 10×3=30 | 10×4=40 |
| 10—6=4 | 10—4=6 | 10—6=4 |
| 10—7=3 | 10—9=1 | 10—8=2 |
| 3×4=12 | 6×1=6 | 4×2=8 |
| 30+12=42 | 30+6=36 | 40+8=48 |

Եվ այս ձևով կարելի է միլիոնավոր թվեր բազմապատկել, միայն այն պայմանով, որ մեծ թվերն անպայման վերջանան զերոյով և գումարելիների գումարը տասից ցածր չլինի։ Միավորից բարձր թվերը բազմապատկելիս համապատասխան քանակով ավելացվում են զերոները։

Մաթեմատիկայի պատմության մասնագետ Վիգոդսկին իր դասընթացում գանգատվում է, որ մեզ չի հասել ո՛չ մի տեղեկություն այն մասին, թե ի՛նչպես էին կատարում թվաբանական գործողությունները[37]։

Ահավասիկ բազմապատկման գործողություն կատարելու մի ձև, որը պահել է մեր ձեռագրերից մեկը և որը մաթեմատիկայի պատմությամբ զբաղվող մասնագետների ուշադրությանն ենք ներկայացնում։

Հովհաննեսի անկյունավոր թվերի վրա կատարվել են նման կարգի արժեքավոր այլ ավելացումներ ևս, որոնք մենք ավելորդ ենք համարում բերել այստեղ։

Հիշված աղյուսակներից բացի, Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» վրա հետագա հեղինակները կատարել են այլ գրառումներ ևս, որոշ դեպքում նշելով այդ մասին։ Այսպես օրինակ, № 5254 ձեռագրում, Հովհաննեսի անկյունավոր թվերի տեքստը վերջացնելուց հետո, շարունակության մեջ, «Այլուստ» վերնագրի տակ, շարադրված է մաթեմատիկական մի տեքստ, որն անմիջապես չի կապվում Հովհաննեսի աշխատության հետ և բովանդակում է թվանշանների բացահայտությունը ըստ նրանց նշանակության (թ. 29բ)։

***

Վերջին հարցը, որի վրա ուզում ենք կանգ առնել, այդ Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» արժեքավորման հարցն է. ի՞նչ տեղ ունի նա գիտությունների պատմության մեջ Հայաստանում։

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» ամենամեծ արժեքը կայանում է

36. Հայկ. ՍՍՌ Մատեն. № 1711, թ. 15բ—16բ։

37. М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире. Москва — Ленинград, 1941 г., стр. 193.

նրանում, որ նա ապացուցում է որ հայկական գիտական գրականությունը, մասնավորապես մաթեմատիկան, բավականաչափ զարգացած է եղել Հայաստանում միջին դարերում։ Դրա անժխտելի ապացույցն են հունարենից հայերեն թարգմանված Պյութագորասի, Նիկոմախի և Էվկլիդեսի մաթեմատիկական աշխատությունները և տեղում գրված մաթեմատիկական ինքնատիպ տեքստերը (Շիրակացի և ուրիշները)։ Փիլիսոփայության, ճարտասանության, տիեզերագիտության և գիտական այլ ճյուղերում համաշխարհային գիտական գրականության վրա ներդրումներ ունեցող հայ ժողովուրդը, ինչպես տեսնում ենք, անմասն չի մնացել թվաբանության և երկրաչափության ասպարեզում։

Վերջապես, Հովհաննես Սարկավագի «Յաղագս անկիւնաւոր թուոցն» արժեքավոր է նաև անցյալում մեզ մոտ գոյություն ունեցող հաշվարկումների սիստեմը, գործածվող տերմինները և թվաբանական նշանները պատկերացնելու տեսակետից։

Դրական գիտությունների պատմության գծով, համեմատաբար, քիչ աշխատանք է կատարված հայագիտության մեջ։ Գիտական արժեք ունեցող հայ մատենագրության մասնագիտական լուրջ ուսումնասիրությունը վերջերս է սկսվել և կապված է այն հայագիտության սովետական շրջանի հետ։ Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը, անկասկած, մաթեմատիկոս մասնագետների լուրջ ուշադրության առարկան կդառնա և անցյալից մեզ հասած այս աշխատությունն էլ իր համեստ տեղը կգտնի գիտության պատմության մեջ։

Եզրակացություն

1) Հովհաննես Սարկավագի հեղինակությամբ հայագիտության մեջ հայտնի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը տոմարական աշխատություն չէ, ինչպես անցյալում, թյուրիմացաբար, ենթադրել են հայագետներից ոմանք, այլ՝ մաթեմատիկական։

2) Հովհաննեսի նշված աշխատությունը մեզ հասել է ո՛չ թե հատվածներով, ինչպես կարծել են Ալիշանը, Զարբհանալյանը և ուրիշները, այլ ամբողջական ձևով։ Զանազան մատենադարաններում մեզ հայտնի են այդ տեքստի ավելի քան 15 ձեռագիր-ընդօրինակությունները։

3) Հովհաննեսի այդ աշխատության մեզ հասած ձեռագիր-ընդօրինակություններից լավագույնները Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 1770, № 2595 և Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի № 157 ընդօրինակություններն են։

4) Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության բացատրական տեքստի աղբյուրն է Փիլոն Երբայեցու «Յաղագս տասն բանիցն» աշխատության հայերեն թարգմանությունը, որը հայտնաբերվել է Հայկ. ՍՍՌ Մատենադարանում և չի հրատարակված։

5) Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատության աղյուսակների աղբյուրն է հանդիսացել առաջին դարում ապրած հույն մաթեմատիկոս Նիկոմախի կազմած աղյուսակները, որոնք, ինչպես երևում է, հունարենից հայերեն էին թարգմանվել Հովհաննես Սարկավագից շատ առաջ։

6) Հովհաննեսի նշված տեքստի վրա ընդօրինակող գրիչները կատարել են որոշ «լրացումներ», որոնցից ուշադրության արժանի են Պյութագորասի աղյուսակները և բազմապատկություն կատարելու մասին անծանոթ մի տեքստ։

7) Հաստատապես կարող ենք այժմ ասել, որ հույն երեք կլասիկ մաթեմատիկոսների՝ Պյութագորասի, Էվկլիդեսի և Նիկոմախի աշխատությունները հատվածներով կամ ամբողջական, թարգմանված են եղել հայերեն և մեկնվել, լրացվել, ընդարձակվել։ Սրան զուգընթաց, գրվել են ինքնուրույն, ինքնատիպ լուրջ մաթեմատիկական տեքստեր (Շիրակացի, Մխիթար Այրիվանեցի և ուրիշներ)։

8) Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը նոր ապացույց է դրական գիտությունների զարգացած վիճակի միջնադարյան հայ իրականության մեջ։

9) Հովհաննեսն աչքի ընկնող մատենագիր է ո՛չ միայն տոմարի, քերթողական արվեստի և փիլիսոփայության ասպարեզներում, այլ և մաթեմատիկայի պատմության մեջ։ Նոր հայտնագործությունները գալիս են լիովին արդարացնելու հանգուցյալ պրոֆ. Մ. Աբեղյանի այն եզրակացությունը, որ հանձին Հովհաննեսի մենք ունենք լուսավոր մտքով մի հեղինակ, «խուզարկող և որոնող մի անձնավորություն, որ հարարձ է կանգնած եղել միջնադարյան թանձրամած խավարից»[38]։

38. Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, Ա. գիրք, Երևան, 1946 թ., էջ 49։

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍԱՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

## ՏՈՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Հայ Եկեղեցին, զատկական տոնից հետո մինչև Հոգեգալստյան առաջին կիրակին, տոնում է հատկապես Տերունական տոներ և այդ ժամանակամիջոցում Սրբոց տոներ չեն հիշատակվում։*

*Հոգեգալստյան երկրորդ շաբաթից հետո միայն սկսվում են սրբոց հիշատակների տոները և Հայ Եկեղեցին, բնականաբար, իր հարգանքը, երախտագիտությունն ու նախապատվությունը պիտի տար այն սրբերին, որոնք Հայաստանում եղել են քրիստոնեական հավատի ռահվիրաները։*

*Քանի որ Հայաստանում քրիստոնեական հավատի առաջին նահատակները եղել են 37 մաքրակենցաղ կույսերը, այդ պատճառով էլ Հայ Եկեղեցին սահմանել է սրբոց տոներն սկսել Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերի հիշատակությամբ։*

*Հայ Եկեղեցին այդ կույսերի համար հորինել է հատուկ շարականներ և սահմանել՝ հանդիսավոր տոնել բոլոր եկեղեցիներում նախատոնակով և հետևյալ օրվա Ս. Պատարագով, հատկապես այդ սրբերի գերեզմանների վրա կառուցած հոյակապ վանքերում։*

*Ս. Գրիգոր Լուսավորիչը, Խոր-Վիրապից ելնելով, Տրդատ թագավորի ձեռքով նահատակված և ինն օր անթաղ մնացած մարմինները հողին է հանձնում և Ս. Հռիփսիմեի և 32 կույսերի նահատակված տեղում մատուռ կառուցում 301 թվին։*

*618 թվին, Կոմիտաս կաթողիկոսը մատուռը քանդելով, փառահեղ եկեղեցի է կառուցում, որը հետագայում կաթողիկոսները վերանորոգում են և վանքի վերածում։ Այսօր այդ վանքը հայ հնագույն կոթողների մեջ իր ինքնուրույն տեղն ունի և հայկական ճարտարապետության գերազանց գործերից մեկն է։*

*Ս. Հռիփսիմեի տոնի հետեվյալ օրը տոնվում է Ս. Գայանեի և իր երկու ընկերուհիների տոնը Գայանեի վանքում, որոնց գերեզմանների վրա դարձյալ Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով մատուռ էր կառուցված 301 թվին։ 630 թվին Եզր կաթողիկոսը, քանդելով այդ մատուռը, նոր եկեղեցի է շինում հրաշալի կաթողիկեով։ Սա էլ ժամանակին ավերվում է և Փիլիպպոս կաթողիկոսը այն նորոգում է 1652 թվին։*

*Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցում է նաև մի վկայարան այն հնձանում, որտեղ ապրում էր Հռիփսիմե կույսը իր ընկերուհիներով։ Ներկա եկեղեցին կառուցել է Նահապետ կաթողիկոսը 1694 թվին և կոչվում է Շողակաթի վանք։ Ըստ ավանդության, այստեղ նահատակվել է մի մենավոր կույս, որը հիվանդության պատճառով չի կարողացել փախչել։*

*Ահա այս խնկելի առաջին նահատակների տոներն էին, որ փառավոր հանդիսավորությամբ տոնվեցին հունիսի 5-ին, 6-ին և 8-ին Մայր Աթոռի ամբողջ միաբանության, Հոգևոր Ճեմարանի սաների և հավատացյալ հայ ժողովրդի մասնակցությամբ։*

*Այս տոների հետ, Հայ Եկեղեցին, անշուշտ, չէր կարող մոռանալ այդ մաքրակենցաղ անմեղ սրբերի մարմինները հավաքող, հողին հանձնող և նրանց գերեզմանների վրա մատուռ կառուցող այն մեծ հովվապետի հիշատակը, որը Խոր-Վիրապից ելնելով, առաջին սուրբ պարտականությունը համարեց անմեղ նահատակներին ամփոփել*

*Դա Սուրբ Գրիգորն էր, ազգիս Լուսավորի-*

ը, որի Խոր-Վիրապից ելնելու տոնի հիշատակը Հայ Եկեղեցին որոշել է կատարել կույսերի տոներից անմիջապես հետո։

Հունիսի 9-ին, Միածնաէջ Մայր Տաճարում Ս. պատարագ մատուցվեց ազգիս ծերունազարդ Վեհափառ Կաթողիկոսի ներկայությամբ, որտեղ Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը, իր բնատուր հռետորական խոսքերով, դրվատեց Ս. Գրիգոր Լուսավորչի դերը Հայ Եկեղեցու, ինչպես և հայ ազգի գոյության և զարգացման ասպարեզում։

Մի՞թե կարելի էր մոռացության տալ և այն հնաշխարհիկ կոթողի տոնը, որը Միածին որդու ցուցմունքով, համաձայն տեսլյան, հիմնարկել էր Ս. Գրիգոր Լուսավորիչը 301 թվին և ավարտել 303 թվին։

Հունիսի 10-ին կատարվեց նաև Ս. Էջմիածնի տոնը։

Ս. Էջմիածի՞ն։ Ո՞հ, որքա՜ն քաղցր է հնչում այդ անունը ամեն մի հայ մարդու բերանում։ Ինչպիսի՜ երախտագիտությամբ է տոնում հայ հավատացյալը բուն Հայրենիքում և ինչպիսի՜ անձկությամբ է հիշում ու մորմոքվում հայ տարագրի սիրտը օտար երկրում, օտար երկնակամարի տակ և օտար ազգերի մեջ։

Հայ ժողովուրդը, որ իր գոյության ընթացքում ունեցել է ուրախ և տխուր շրջաններ, միշտ Էջմիածինն է հիշել։ Էջմիածինն է հիշել հայը իր ամբողջ տարագրության ընթացքում։ Էջմիածինն է, որ հիշեցրել է հային իր Հայրենիքը, իր ծագումը։ Էջմիածնին է պարտական հայ ազգը, որ այսօր պահպանել է իր լեզուն՝ շնորհիվ Մեսրոպների, Խորենացիների և Նարեկացիների։ Էջմիածնի կարոտն է, որ քաշում է ամեն մի հայ՝ Հայրենիքից դուրս։ Էջմիածնից դուրս ելած հայրապետական նվիրակներն են եղել, որ ի մի են ձուլել հայ ժողովրդի սրտերը և կապել նրան Մայր Հայրենիքի հետ։

Էջմիածնի միաբաններն են եղել, որ հայ ժողովրդի գոյությանը, հայրենիքին և կրոնին վտանգ սպառնալիս, սուրն ու խաչը ձեռքին, ազգի լավագույն զավակների հետ արյուն են թափել՝ հանուն Հայրենիքի ու հավատի։

Էջմիածինն է եղել այն օրորոցը, որը Մասիսի ստորոտում իր քաղցր մեղեդիներն է երգել ամեն մի հայ մարդու ականջին և հիշեցրել իր փառավոր անցյալը՝

Էջմիածինն է եղել, որ լեզու է տվել մեր բանաստեղծներին ու գուսաններին, որոնք Էջմիածնի գովքն են երգել ու մեծագործ հայրապետներին մեծարել՝

Հավատացյալ հայը սիրել և սիրում է Էջմիածինը։

Եթե օտարազգին Հայաստան է գալիս ուսումնասիրության, նա պարտք է համարում անպայման Էջմիածին այցելել։ Այդ օտարազգիները իրենց բազմահատոր գործերում Էջմիածինն են դրվատել, ուրեմն՝ ո՞րքան ավելի պիտի սիրե ու պաշտե հայը իր սրբություն սրբոցը, որ 1600 տարվա ծանրություն է կրում վրան։

Ահա այդ սրբավայրի տոնն էր, որ կատարվում էր հունիսի 10-ին։ Պատարագիչն էր Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը։ Երգում էր Հոգևոր Ճեմարանի խումբը։ Ներկա էին Վեհափառ Կաթողիկոսը, միաբանությունը, հոծ բազմություն. թե՛ բնիկներից և թե՛ եկվորներից։ Տաճարի բակը լցված էր ուխտավորների ավտոմեքենաներով։

Ս. Պատարագի ժամանակ բացվում է թանգարանը։ Ժողովուրդը խռնվում է և լցվում թանգարանը, որպեսզի իր աչքով տեսնի այն բոլոր սրբություններն ու հնությունները, որ դարերի ընթացքում պահել-պահպանել է Սուրբ Էջմիածինը։

«Հայր մերից առաջ պատարագիչ Գեր. Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը իր քարոզում վեր է հանում Ս. Էջմիածնի կատարած դերը հայ ազգի պատմական անցյալում և ներկայում։

Ս. Պատարագից հետո կատարվում է մաղթանք Գեորգ Զ.ի հանդիսավորությամբ՝ Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետության հարատևության համար։

«Էջ միածինն ի հօրէ» շարականի հետ ղողանջում են Մայր Տաճարի զանգերը և ուրախությամբ լցնում հավատացյալների սրտերը։

Մաղթանքը վերջանում է։

Վեհափառ Հայրապետից վերցվում է խաչը, գավազանն ու շուրջառը։ Վեհին մատուցվում է ոսկեգլուխ «սասա» կոչված գավազանը, որից հետո միաբանությունը նրան առաջնորդում է դեպի Վեհարան։

Հավատացյալները իրար հրելով մոտենում են Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելու։ Թափորը հազիվ հազ հասնում է մինչև Վեհարանի դարպասը։ Դարպասի մոտ Վեհին մատուցվում է գոհարազարդ խաչը և նա պահպանիչով օրհնում է ժողովրդին։

Մինչև ուշ երեկո ժողովուրդը խռնված էր Մայր Տաճարի գավթում և ապա ցրվում է, իր հետ տանելով հոգեկան քաղցր ապրումների լավագույն հիշողությունները Մայր Աթոռից՝

«Տե՛ր, անսասան պահիր միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռը։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՍԼԱՄԱՋՅԱՆ

(Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի Հայոց թեմերի առաջնորդական փոխանորդ)

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԹԵՄԵՐԻՆ

*Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը 1949 թվի հուլիսի 1-ին մեզ հանձնեց հատուկ կոնդակ Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի միացյալ թեմերի առաջնորդական փոխանորդի պաշտոնում նշանակելու մասին։*

*Մի շարք գործեր կարգավորելու հետևանքով, մեկնեցինք մեր թեմերը հուլիսի վերջերին։*

*Մեկնելուց առաջ, մեր սրբազան պարտքը համարեցինք որդիական անկեղծ զգացումներ արտահայտելու ծերունազարդ Վեհափառ Հայրապետին, որը լցված էր հայրական վստահությամբ և մեծ սիրով դեպի իր հոգևոր զավակը։*

*Ծանկություն չունենալով անհանգստացնել բազմաթիվ հոգսերով ծանրաբեռնված Վեհափառ Հայրապետին, երկու խոսքով հայտնեցինք մեր երախտագիտական շնորհակալությունը՝ մեր ճկատամամբ ցուցաբերած նրա մեծ վստահության համար։*

*Թեպետ շատ հեռու չէինք մեկնում և ոչ էլ օտար մի աշխարհ, սակայն կան խորը զգացմունքներ, որոնք ստեղծում են հուզմունք մարդու հոգու մեջ։*

*Ծերունազարդ Վեհափառ Կաթողիկոսը, ջերմ հայրական զգացմունքներով լցված ու հոգու ջինջ հուզմունքով, բարի ճանապարհ մաղթեց մեզ և ասաց հետևյալը.*

*«Հայր Կարապետ, ես գիտեմ, դու կամք ունես, դու սիրում ես ժողովրդին և խոսել գիտես, գնա աշխատիր, օգտակար եղիր մեր եկեղեցուն և մեր սիրելի ժողովրդին։ Ես համոզված եմ, որ դու կսերտացնես Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի հավատացյալների կապը Մայր Աթոռի հետ»։*

*Ճիշտ է, մեր մեջ կար. կամք, կորով ու եռանդ հայ ժողովրդի շահերին նվիրվելու, սակայն մեր ծերունազարդ Վեհափառ Հայրապետի ոգևորիչ խոսքերն ավելի ևս եռանդ ներշնչեցին մեզ ու մենք սպասում էինք այն պահին, երբ կարդարացնենք մեր վրա դրված պարտականությունը։*

*Մենք մեր առաջ խնդիր դրինք, ամենից առաջ, ծանոթանալ միացյալ թեմերում գտնված եկեղեցիների, նրանց վիճակի ու եկեղեցական խորհուրդների հետ, որպեսզի կարողանայինք գործնական ղեկավարություն ցույց տալ ու կարգավորել թեմերի գործերը։*

*Էջմիածնից մեկնեցինք ուղիղ Նոր Նախիջևան։ Նոր Նախիջևանում, ռուս ժողովրդի հետ միասին, ապրում են բազմաթիվ հայեր, որոնք մտերմական հարաբերության մեջ են։ Քաղաքում կա երկու եկեղեցի, մեկը՝ Ս. Լուսավորիչ, մյուսը՝ գերեզմանատան Ս. Կարապետ եկեղեցին։ Ս. Լուսավորիչ եկեղեցին ունի երկու քահանա՝ Տեր Մկրտիչ ավագ քահանա Զորչոփյան և Տեր Գևորգ քահանա Դարբինյան։ Եկեղեցին ունի նաև քառաձայն խումբ, որը ղեկավարում է Տեր Գևորգ քահանան։ Քահանաները հարգված են ծխականներից։ Եկեղեցին բավական մեծ է և գեղեցիկ, ունի ընդարձակ ծառազարդված բակ։*

*Բավական գեղեցիկ է նաև Նոր Նախիջև-*

վանի գերեզմանատան Ս. Կարապետ եկեղեցին, շրջապատված ծառերով ու ծաղիկներով. գարնանը ու ամառը ուղղակի հրապուրիչ զբոսավայր է։ Գերեզմանատունը պատկանում է հայերին և ռուսներին։ Եկեղեցու քահանան է Տեր Հուսիկ Ջանգոսլյանը, մի համեստ ու բարձր բարեմասնություններով օժտված մարդ, հարգված իր ծխականներից։ Այդ եկեղեցումն է ռուս քահանան, որը եղբայրական մտերմությամբ է կապված Տեր Հուսիկ քահանայի հետ։

Մեծ նվիրվածությամբ են աշխատում նաև երեցփոխները, որոնցից հատուկ գովեստի արժանի է Ս Լուսավորիչ եկեղեցու երեցփոխ Եփրեմ Շիշմանյանը, որը հոգում է եկեղեցու մասին այնպես, ինչպես իր հարազատ զավակի մասին։ Նույն նվիրվածությամբ կապված է գերեզմանատան եկեղեցու հետ Ավգեի Բարփյանը, որը ջանք չի խնայում գեղեցկացնելու եկեղեցին և կազմակերպելու եկեղեցու եկամուտները։

Հետագայում մենք Տեր Մկրտիչ ավագ քահանա Ջորչոփյանի ու երեցփոխ Շիշմանյանի հետ մեկնեցինք Ռոստովից 18 կիլոմետր հեռու Չալթր ու Թոփտի հայաբնակ գյուղերը, ուր կան հայկական դպրոցներ և եկեղեցիներ։

Շնորհիվ Սովետական իշխանության հոգացողության և աջակցության, այդ գյուղացիները, որպես կոլխոզնիկներ, ապրում են փարթամ և ուրախ կյանքով։ Բոլորն էլ ունեն սեփական մի հարկանի բնակարաններ, իրենց հարմարություններով ու բակով։

Մենք մեծ ցանկություն ունեինք ծանոթանալ կոլխոզնիկների ներքին կյանքի հետ։ Շատ ուրախացանք, երբ համոզվեցինք, որ բոլորն էլ ապրում են լիառատ ու կուլտուրական կյանքով։ Սենյակները վերին աստիճանի մաքուր, կահ-կարասիները ճաշակով դասավորված։ Հոգեկան մեծ մխիթարություն էր մեզ տեսնել կոլխոզնիկների բարեկեցիկ նիստ ու կացը և նրանց ապրուստն ու կյանքը։

Թե՛ Չալթր և թե՛ Թոփտի գյուղերում կան հոյակապ եկեղեցիներ, աննշան վիրավորված ֆաշիստների ռումբերով։

Մեր հանձնարարությամբ Չալթր գյուղում հավաքեցին եկեղեցու վերանորոգման համար 4620 ռուբլի։ Չալթր գյուղի քահանան է Տեր Սարգիս Բարաշյան, մի հարգված, համեստ ու խոհուն, միջնակարգ կրթությամբ քահանա, նույն գյուղի զավակը։ Իսկ Թոփտի գյուղի քահանան է Տեր Հակոբը, դաստիարակված, համեստության տիպար մի անձնավորություն։

Բարեկեցիկ ու փարթամ վիճակումն է գտնվում Ռոստովից 18 կիլոմետր հեռու գտնվող Մեծ Սալա գյուղը, իր վիթխարի բարձրությամբ ու մեծությամբ եկեղեցիով։ Մեզ հիացմունք պատճառեց մեծ սալացիների կուլտուրական կյանքը՝ մաքուր սենյակներ, գեղեցիկ կահ-կարասիք, քաղաքավարի վերաբերմունք, դուրեկան նիստ ու կաց։ Կոլխոզնիկների բնակարաններում դուք կտեսնեք էլեկտրական լույս, ռադիոընդունիչ, հեռախոս և այլն։

Նոր Նախիջևանի թեմում, ըստ նախապես մշակված ծրագրի, մեր աշխատանքները վերջացնելուց հետո, մեկնեցինք Հյուսիսային Կովկաս և հետևյալ կարգով կատարեցինք մեր հովվական այցելությունները.

Նախ այցելեցինք Արմավիր։ Արմավիրի եկեղեցին Կովկասում եղած մեր եկեղեցու շենքերից, կարելի է ասել, ամենագեղեցիկն է։ Տեղի համայնքի քահանան է Տեր Գրիգոր Անանյանը, որը կարողացել է եկեղեցու շուրջը հավաքել հավատացյալներին։ Գոյություն ունի շատ սերտ, եղբայրական փոխհարաբերություն հայ և ռուս հոգևորականների միջև։

Արմավիրից մեկնեցինք Ջաուձիկաու (Նախկին Վլադիկովկաս)։ Հայոց եկեղեցին այստեղ բավական հին կառուցվածք ունի. հաստ սյուներ, որոնց վրա խոյանում է հսկա գմբեթը։ Հայ հավատացյալ համայնքի քահանան է Տեր Վահան Թավարբեկյանը, ճեմարանավարտ, պատրաստված անձնավորություն։ Հավատացյալ համայնքում մեծ հեղինակություն ունի երեցփոխ Բեկլարյանը, մի խոհեմ, կազմակերպչական մեծ ընդունակություն ունեցող անձնավորություն։

Ջաուձիկաուից մեկնեցինք Կրասնոդար։ Եկեղեցին այստեղ փայտաշեն է, ընդարձակ։ Քահանան է ծերունի Տեր Վահան Մկրտչյանը, մի հեզաբարո և համակրելի անձնավորություն, որը մեծ հեղինակություն ունի համայնքում։

Կրասնոդարից մեկնեցինք Բուդյոնովսկ։ Բուդյոննովսկն ունի փոքրիկ փայտաշեն եկեղեցի։ Քահանան է Տեր Հակոբ Տեր-Հակոբյանը։ Հայերը բոլորն էլ խոսում են մայրենի լեզվով։

Այնուհետև այցելեցինք թեմի մյուս քաղաքներում, ստանիցաներում և գյուղերում եղող հավատացյալ համայնքներին, որոնց մասին առանձին առանձին հիշելը շատ տեղ կզբաղեցներ։

Հայ համայնքները լսել էին մեր այցելության մասին և անչափ հարգալից ընդունելություն էին ցույց տալիս։ Ամենուրեք եկեղեցիներում, մեծ հանդիսավորությամբ,

*մենք կարդում էինք Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը, որի ընթերցումը խորը տպավորություն էր թողնում հավատացյալների վրա և մխիթարում նրանց։*

*Միաժամանակ մեր խոսքում պատմում էինք թանկագին Սովետական Հայաստանի վերելքի ու հաջողությունների, կրթական և գիտական հաստատությունների, գիտա-հետազոտական հիմնարկների, բացված և բացվելիք գործարանների ու ձեռնարկների մասին։ Ուրախության հուզմունքները մեծ ոգևորություն էին առաջացնում հավատացյալների շրջանում։*

*Հովվական այցելության ժամանակ, հաճախ առիթ էինք ունենում ծանոթանալ ռուս հոգևորականության հետ։ Ռուսաց Եկեղեցու ներկայացուցիչները այցելում էին մեզ և բարի գալուստ մաղթում։ Մենք ևս փոխադարձ այցելություն էինք տալիս։*

*Ինչպիսի՜ համերաշխություն և քրիստոնեական սերտ և անկեղծ փոխհարաբերություն գոյություն ունի այժմ տեղի հայ և ռուս հոգևորականության և, ընդհանրապես, հավատացյալ համայնքների միջև։ Սովետական Միության ժողովուրդների մեջ հաստատված հավասարության և եղբայրության բարձր գաղափարը զգալի չափով իր բարեբար ազդեցությունն է թողել նաև հայ և ռուս եկեղեցիների փոխհարաբերության վրա։*

*Նոր Նախիջևանում եղած ժամանակ, Մայր Աթոռից ստացվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի շրջաբերականը և որոշումը՝ Ամենայն Հայոց Հայրապետի հոբելյանի մասին, որը տեղի պիտի ունենա այս տարվա սեպտեմբերի 30-ին։ Այդ որոշումը մեծ ուրախություն պատճառեց բոլորին, մասնավորապես վեհափառին ծանոթ շրջանին։ Վեհի բարեկամները, աշակերտները, ծանոթները, որոնք քաղցր հուշեր ունեն մեծ Հայրապետի Նոր Նախիջևանի հայոց գյուղում կատարած մանկավարժական աշխատանքների շրջանից։ Թեմի բոլոր համայնքները պատրաստ են պատշաճ վայելչությամբ նշելու Վեհափառի հոբելյանը։*

*Պետք է ասել, որ բոլոր այն համայնքներում, ուր մենք գտնվեցինք, հավատացյալները վառ զգացմունքներով են կապված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ։ Ամենուրեք ստացվում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածինը» և հավատացյալները իրազեկ են Մայր Աթոռի անցուդարձերի հետ։ Այդ համայնքները, հնարավորության սահմաններում, աշխատում են նյութապես օգնել Մայր Աթոռին, առանձնապես Հոգևոր Ճեմարանին, որի պահպանումը, ինչպես հայտնի է, խոշոր ծախսերի հետ է կապված։*

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

(Հոգևոր Ճեմարանի Ռեկտոր)

# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀՆԳԱՄՅԱ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը բացվեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի ջանքերով, 1945 թվի վերջերին, Հայրենական Մեծ Պատերազմից անմիջապես հետո։ Եռամյա նախապատրաստական դասընթացից հետո, կազմվելու էր Ճեմարանի լսարանական-բարձրագույն դասընթացի կորիզը՝ Ա. լսարանը։

Հոգևոր Ճեմարանում ուսման բարձրագույն դասընթաց ունենալը, անկասկած, կապված էր մի շարք դժվարությունների հետ։ Բոլորովին այլ են ու բարդ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական պահանջները ինչպես կրթական, նույնպես և նյութական տեսակետից։ Անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել՝ բարելավելու հաստատության և ուսանողության կարիքներն ու պահանջները։

Շնորհիվ Վեհափառ Հայրապետի անմիջական օժանդակության, ինչպես նաև դասախոսական կազմի անխոնջ ջանքերի, Հոգևոր Ճեմարանը բարեհաջող կերպով բոլորեց իր ուսումնական հինգ տարիները։ Ճիշտ է, տնտեսական որոշ պատճառներով, վերջին երկու ուսումնական տարիներում Հոգևոր Ճեմարանը նոր ընդունելություն չհայտարարեց, սակայն նախորդ տարիներում պատրաստված ուսանողներն արդեն փոխադրվեցին լսարանական բաժին, լսարանում, մենք ունեցանք Ա. և Բ. լսարաններ, իսկ այս ուսումնական տարվանից ունենալու ենք նաև Գ. լսարանը։

Ճեմարանի լսարանական բաժնի ծրագրում նախատեսված էին մի շարք նոր և մասնագիտական առարկաներ՝ հայոց հին մատենագրություն, եկեղեցական մատենագրություն, պատրոլոգիա (Հնագրություն), տոմարագիտություն, աստվածաբանություն, կրոնների պատմություն, ներածություն Ս. Գրոց, մեկնություն Հին և Նոր Կտակարանների, Հիսուսի կյանքը, փիլիսոփայություն, հոգեբանություն, տրամաբանություն, հայոց լեզվի պատմություն, լեզվի տեսություն, գրականության տեսություն, հայոց գրականության պատմություն, ռուս գրականության պատմություն։

Մայր Աթոռի միաբանությունը, ընդհանրապես, Հոգևոր Ճեմարանի նկատմամբ բացառիկ հոգածու վերաբերմունք է ցուցաբերում։ Միաբաններից ոմանք դասախոսում են Ճեմարանում։ Այսպես, Գերաշնորհ Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը մինչև արտասահման մեկնելը դասախոսել է Ճեմարանում։ Հանգուցյալ Ներսես եպիսկոպոս Աբրահամյանն ու հանգուցյալ Եղիշե վարդապետ Հարությունյանը նույնպես դասախոսել են Ճեմարանում։ Հայ եկեղեցական երաժշտության լավագույն մասնագետ՝ Տ. Նիկողայոս ավագ քահանա Թավեկյանը միշտ տրամադրել է իր ուժերը, ինչպես եկեղեցական երգեցողության ուսուցման, նույնպես և առանձին ելույթներում։ Տ. Կարապետ վարդապետ Ասլանագյանը դասավանդել է կրոնագիտական առարկաներ և մաթեմատիկա։ Վարչատնտեսական հարցերում, որպես Տնտեսական խորհրդի Նախագահ, հարատև ու անխոնջ կերպով աշխատել ու օժանդակել են Տ. Սահակ Ծ. վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Տ. Կոստանդին վարդապետ Թաղյանյանն ու Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։

Անհրաժեշտ էր մասնագետ դասախոսներ հրավիրել, և, ընդհանրապես, կարող ուժեր համախմբել Հոգևոր Ճեմարանի շուրջը նաև դրսից։ Ճեմարանի մայրաքաղաքից որոշ

տարածությամբ հեռու լինելու հանգամանքը դժվարացնում էր այդ հարցը։ Այսու հանդերձ, Ճեմարանի վարչությանը հաջողվել է աչքի ընկնող մասնագետներ, և բառի ամենալայն, կարող և բարձրագույն դասախոսներ հրավիրել։ Այսպես, Հնգամյա ժամանակաշրջանում Ճեմարանում դասախոսել են՝ աստղագետ-տոմարագետ պրոֆ. Լեոն Սիմյոնովը, դոցենտ Առաքել Առաքելյանը, պատմական գիտությունների թեկնածու՝ Ասլան Շահնազարյանը, պատմական գիտությունների դոկտոր՝ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը, բանասիրական գիտությունների թեկնածու՝ Արմենակ Գողոսյանը, արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր՝ Դանիել Ղազարյանը, բազմամյա դասատու Գեորգ Մինասյանը, երկարամյա դասախոս՝ Անուշավան Միքայելյանը և ուրիշները։

Հ. Ճեմարանը կազմակերպել է մի շարք էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր։ Ամեն տարի, Սրբոց Թարգմանչաց՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի տոնին, Ճեմարանի բոլոր ուսանողները, վերատեսչի ու դասախոսների ուղեկցությամբ այցելել են Օշական ու երախտագիտությամբ ծնրադրել հայ գրերի գյուտարար մեծ հայու խնկելի շիրիմի առաջ և պարծանքով դիտել են հայ իշխան Վահան Ամատունու հուշարձանը, որը կանգնած է նույն եկեղեցու բակում։ Ուսանողները գնացել են Գառնի և Գեղարդ, Կարմիր բլուր և հնագիտական այլ վայրեր։ Նրանք այցելել են Հայ գրողների պանթեոնը։ Նրանք բազմիցս եղել են և մանրամասն դիտել Երևանի Պետական Թանգարանները (պատմական, գրական, կերպարվեստի և այլն), ինչպես նաև Երևանի Քաղաքային Թանգարանը և մի շարք այլ տեսարժան վայրերում և ուսումնասիրություններ կատարել։ Ճեմարանի երաժշտության դասախոսի ղեկավարությամբ և դասախոսականների ընկերակցությամբ, մեր ուսանողները մի քանի անգամ գնացել են Երևանի Սպենդիարյանի անվան պետական օպերան և լսել հայկական օպերաներ (Անուշ, Ալմաստ և այլն), ինչպես նաև եղել են Երևանի Սունդուկյանի անվան պետական թատրոնում և դիտել մի քանի պիեսներ։ Էջմիածնում նրանք դիտել են բազմաթիվ կինո-նկարներ և մի շարք թատերախաղեր։



Հոգևոր Ճեմարանի Վերատեսուչ տիար Մինաս Մինասյան

Հոգևոր Ճեմարանն ամեն տարի ունեցել է բազմաթիվ հանդեսներ ու գրական երեկույթներ՝ նվիրված ազգային-եկեղեցական և պետական տոներին, որոնց ակտիվ մասնակցել են Ճեմարանի շնորհալի ուսանողներն իրենց ինքնուրույն արձակ կամ չափածո ստեղծագործություններով, ինչպես նաև արտասանություններով, երգերով ու նվա-

գով (մեներգ, խմբերգ և նվագախումբ)։ Մի շարք ուսանողներ երեկույթներում հանդես են եկել ինքնուրույն պատմական կամ բանասիրական ուսումնասիրություններով, արժանանալով ունկնդիրների և, մանավանդ, Վեհափառ Հայրապետի գոհունակությանն ու գնահատականին։

Հոգևոր Ճեմարանում հանդեսներ են կազմակերպվել Վարդանանց, Թարգմանչաց, Լուսավորչի, Էջմիածնի և այլ պատմական տոների առթիվ։

Ճեմարանն ունեցել է նաև գրական-գեղարվեստական երեկույթներ՝ նվիրված հայ երաժշտության անզուգական մշակ, անմահ Կոմիտասի ստեղծագործություններին, հայ խոշորագույն գրողներ՝ Խաչատուր Աբովյանին, Հովհաննես Թումանյանին, ինչպես նաև ականավոր ռուս գրողներ Մաքսիմ Գորկուն և Ա. Պուշկինին և ուրիշներին։

Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը արժանավայել ձևով նշեց հայ ժողովրդի լավագույն բարեկամ Մեծ Ստալինի ծննդյան 70-ամյակը։

Ահա իմ սեղանի վրա է Ճեմարանի ուսանողության կողմից կազմված ու խմբագրված համեստ ու գողտրիկ Գրական ալմանախը, նվիրված սիրելի առաջնորդ Ստալինի ծննդյան 70-ամյակին։ Ալմանախի մեջ զետեղված են համաշխարհային գիտնականներից ու գրողներից արժեքավոր տողեր, հայ բանաստեղծներից սրտագեղ քառյակներ, ինչպես նաև Ճեմարանի ուսանողների սրտաբուխ տողերը։ Ալմանախում հանդես է եկել Ի. Մարտիրյանը՝ «Փառք Մեծ Ստալինին» արձակ ձևով, Փ. Գևորգյանը՝ «Հայ ժողովրդի սրտի ձայնը» (Ստալինի կերպարը՝ սովետահայ բանաստեղծության մեջ և գուսանական երգերում) բանասիրական ուսումնասիրությամբ, Փ. Այնթարյանն իր ոգեշունչ բանաստեղծությամբ, Ա. Տերտերյանը, Տ. Մարտիկյանը և ուրիշներ իրենց հուզիչ ու զգայուն ոտանավորներով, և վերջապես դասախոս՝ Ա. Գ. Մինասյանը «Մեծ Ստալինին» երգով, որ ձայնագրված է ուսանող Հակոբ Խանջյանի կողմից։

Ճեմարանի դահլիճում կախված է Մեծ Ստալինի մեծադիր յուղանկարը, որը շնորհալի ուսանող Վարդան Արզումյանի վրձինի արգասիքն է, ինչպես նաև Կոմիտասի, Թումանյանի, Պուշկինի յուղանկարները և այլ նկարները, դարձյալ Ճեմարանի սան՝ Բ. Հակոբյանի և ուրիշների աշխատությամբ։

Այս բոլորը մի առ մի թվում ենք մանկավարժի սրտագին գոհունակությամբ և գուրգուրալի հրճվանքով, հիշելով, թե ի՛նչպես մի քանի տարի առաջ, այդ նույն ուսանողները, որոնք եկել էին Սովետական Հայաստանի զանազան շրջաններից, արտասահմանից, Լեռնային Ղարաբաղից, Վրաստանից ու Սովետական Միության այլ վայրերից թերի-միջնակարգ կրթությամբ, այժմ ձեռք են բերում բարձրագույն կրթություն և դրա զուգընթաց գրում են, ստեղծագործո՛ւմ, երեկույթնե՛ր են ունենում, նկարո՛ւմ ու նվագո՛ւմ։

Ուսանողներից ոմանք աշխատակցում են «Էջմիածին» ամսագրին (Այնթարյան Փայլակը, սարկավագներ Գևորգյան Քաջիկը, Մարտիրոսյան Իգնատիոսը, Մարտիրոսյան Ռուբիկը և ուրիշներ)։ Կան ուսանողներ որոնք հանդես են եկել իրենց բանասիրական շնորհալի շարադրություններով (սարկավագ Ղազարյան Մովսես, Մուրադյան Գուրգեն և ուրիշները)։ Վերջապես, գոհունակությամբ պետք է հիշել, թե ինչպիսի մեղվաջան աշխատությամբ, այս տարվա Ա. լսարանի ուսանողները, դասախոսի ղեկավարությամբ, կարճ ժամանակվա ընթացքում հնագրության դասընթացը ավարտելուց հետո, ուսումնասիրեցին և ցուցակագրեցին Մայր Աթոռի մի շարք ձեռագրերը, որոնց ցուցակը պարբերաբար կհրատարակվի «Էջմիածին» ամսագրում։

Առանձին ուրախությամբ հիշում ենք անցյալ տարիների այն օրերը, երբ աշխարհի բոլոր կողմերը ցրված, սուլթանական Թյուրքիայի արյունարբու կառավարության սրից ու հրից ազատված Սփյուռքի դժբախտ հայության հայրենադարձ երջանիկ զավակներից ոմանք ընդունվեցին Հոգևոր Ճեմարան։ Դրանցից են ներկայումս Ա. լսարանի ուսանող Արմենակ Տերտերյանը, որ Իրանում հազիվ 4—5 տարի դպրոց է հաճախել, իսկ հետագա տարիները բանվորությամբ և հողագործությամբ է զբաղվել, այժմ գերազանց սովորող սաներից մեկն է։ Ահա Ռումինիայից հայրենադարձ, ռումինական դպրոցում կրթություն ստացած, այժմ Գ. կուրսի ուսանող Պերճ-Արամ Քեչյանը, որ երբ Ճեմարանն ընդունվեց, հայերեն կարդալ գրել չգիտեր։ Կարդալով իր որդու նամակները, չափազանց հուզիչ տողերով է արտահայտում իր զգացմունքները նրա հայրը՝ տիար Առաքել Քեչյանը Բուխարեստից՝ ուրախացած իր որդու հաջողություններով։ Ահա և մյուսները. Եգիպտոսից ներգաղթած Տիգրան Գարչյան (Տիքը), որը հայերեն շարադրություն կամ լրիվ նախադասություն կազմել չէր կարողանում, արաբական կրթություն ստացած արաբախոս Ջամբիկյան Հովհաննես (Հաննան), Ֆրանսիայից Հայ-

րենադարձ, ֆրանսիական կրթություն ստացած, ֆրանսախոս Տեր-Խաչատրյան Հովհաննես (Ժանը), և վերջապես Սիրիայից հայրենադարձ թյուրքախոս Բուդակյան Սարգիս (երբեմնի դարբին Սերգիսը)։ Նրանք բոլորը, շնորհիվ Ճեմարանի դաստիարակչական կազմի թափած ջանքերի և իրենց տքնաջան աշխատանքի, հասել են մեծ հաջողությունների ուսման մեջ։ Տարեվերջի քննության օրերին, Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշ անդամներ ներկա եղան քննություններին։ Ուսանողները իրենց հաջող պատասխաններով արժանացան Նորին Վեհափառության ուշադրությանն ու գնահատության։

Հոգևոր Ճեմարանն ընթացիկ ուսումնական տարում Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռին տվեց իր երախայրիքը— հինգ ուսանողներ՝ Գաբրիելյան Անդրանիկ, Գևորգյան Քաջիկ, Ղազարյան Մովսես, Մարտիրյան Իգնատիոս և Մարտիրոսյան Ռուբիկ սարկավագ ձեռնադրվեցին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Ճեմարանի վերատեսչության միջոցով, ստացել է չորս ուսանողներից ևս սարկավագ ձեռնադրվելու դիմում։

Կարևոր է այստեղ հիշել, որ նորընծա սարկավագներից մեկը՝ Մովսես Ղազարյան, ամերիկահայ հայտնի բարերար տիար Հայկ Գավուքչյանի որդեգրած երեք սաներից մեկն է։ Բացի վերոհիշյալից, մյուս երկու սաներն ևս (Փայլակ Ալիխանյան և Արմենակ Գրիգորյան) թղթակցական սերտ կապ են հաստատել իրենց բարերարի հետ, և տիար Գավուքչյանը, չնայած իր զբաղմունքով ծանրաբեռնված լինելուն, միշտ պատասխանում է իր սաների գրած նամակներին, քաջալերական ու հայրական խորհուրդներ տալիս նրանց,— մի հանգամանք, որ առավել ևս ոգևորում է սաներին։ Ինչքա՜ն ցանկալի կլիներ, որ Սփյուռքի մեծահոգի բարերարները հետևեին տիար Գավուքչյանի օրինակին։

Տարեվերջի քննություններին ներկա լինելուց բացի, տարվա ընթացքում ևս, Վեհափառ Հայրապետը, չնայած իր բազմապիսի զբաղմունքներին և խիստ ծանրաբեռնված լինելուն, միշտ ժամանակ է գտել Հոգևոր Ճեմարան այցելելու և լսելու մի շարք դասախոսների դասերը և արել արժեքավոր դիտողություններ։ Վեհափառը ներկա է եղել նաև Հոգևոր Ճեմարանում կազմակերպված գրական-գեղարվեստական երեկույթներին։ Նա բազմաթիվ առիթներով օգտավետ զրույցներ է ունեցել վերատեսչի և դասախոսների հետ փիլիսոփայական, հոգեբանական, երաժշտական, մանկավարժական և աստվածաբանական հարցերի շուրջը և որպես հին մանկավարժ, մեթոդական արժեքավոր ցուցմունքներ տվել։

Այս բոլորը ցույց են տալիս Հայոց Հայրապետի տածած անկեղծ սերն ու հայրական գուրգուրանքը դեպի Հոգևոր Ճեմարանն ու նրա ուսանողները։

Ճիշտ է, Վեհափառ Կաթողիկոսն ու Մայր Աթոռը, ինչպես նաև որոշ բարերարներ, ըստ հնարավորության ամեն ջանք թափել են Հոգևոր Ճեմարանի գոյության և բարգավաճման համար, սակայն պետք է խոստովանենք, որ Հոգևոր Ճեմարանի կարիքները խիստ մեծ են։ Բացի ուսումնական, վարչական ու տնտեսական անհրաժեշտ և ընթացիկ ծախսերից, անհրաժեշտ է Հոգևոր Ճեմարանի դահլիճը, գրադարան-ընթերցարանը, դասարանները և ճաշարանը պատշաճ ձևով կահավորել։

Ինչպես ամեն տարի ասել ենք, նորից մենք պարտք ենք համարում կրկնել, որ Հոգևոր Ճեմարանի կարիքները լիովին բավարարելու համար հարկավոր է ստեղծել նյութական կայուն բազա։ Սպասվում է, որ Սփյուռքի հայրենասեր հայերի միջև լինեն այնպիսի բարեսեր անձնավորություններ, որոնք անձամբ հանձն առնեն կամ նախաձեռնարկ լինեն մշտական մի ֆոնդ հիմնելու համար, այդպիսով թեթևացնելով Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի ուսերին ծանրացած այս հաճելի և գուրգուրալի, բայց բավական ծանր բեռը։

Վեհափառ Հայրապետը բացառիկ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում Հոգևոր Ճեմարանի ուսանողության և մեծ հույսեր է կապել նրանց հեռանկարների հետ։ Հավատացած ենք, որ մեր ուսանողությունը կարդարացնի Վեհափառ Հայրապետի և Հավատացյալ հայ ժողովրդի հույսերը։

Նոր ուսումնական տարվա սեմին, Հոգևոր Ճեմարանի վարչությունն ու դասախոսական կազմը, ինչպես նաև երիտասարդ ու եռանդով լի ուսանողությունը նոր թափով կլծվեն աշխատանքի ու կրկնակի եռանդով կշարունակեն իրենց ջանքերը, վստահ լինելով, որ լիովին կարդարացնեն իրենց վրա դրված հույսերը։

# ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

*Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը պատրաստված դիմավորեց տարեվերջի քննությունները։ Վեհափառ Հայրապետի ամենօրյա օբեկտիվ խնամքն ու հոգատարությունը, վերջին դասերի ընթացքում եղած կրկնությունները, դասախոսների առողջ և ճիշտ գծած ուղղությունը և ուսանողների տքնաջան աշխատանքը պսակվեցին հաջողությամբ։*

*Քննությունների առաջին օրը՝ հունիսի 5-ին, տեղի ունեցան Բ. Լսարանի Հայոց մատենագրության պատմության (դասախոս՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Աբրահամյան), Ա. Լսարանի Հայոց լեզվի և գրականության, Գ. Կուրսի Հայոց լեզվի և գրականության (դասախոս՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղողոսյան) առարկաների քննությունները։ Քննություններին ներկա էին Ամենայն Հայոց Հայրապետը, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանության մի մասը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ Ե. Շահազիզը և Ս. Կամսարականը։ Քննությունները վերջանալուց հետո, բոլոր ուսանողները հավաքվեցին Հոգևոր Ճեմարանի դահլիճը, Վեհափառ Հայրապետի տպավորությունները և հորդորները լսելու։*

*«Խաղաղահոգի Գեորգ Դ. Կաթողիկոսը,—ասում է Վեհափառ Հայրապետը,—1874 թվին հիմնադրելով Գեորգյան Ճեմարանը, հետապնդում էր մի շարք կրթական-կազմակերպչական նպատակներ։ Նախկին Ճեմարանը այն ժամանակ միակ միջնակարգ կրթական հաստատությունն էր, որը տալիս էր ազգային կրթություն, իսկ բարձրագույն հայկական ու մի կրթական հաստատություն չկար։ Նախկին Ճեմարանը ուներ երեք ուղղություն՝ հայագիտական, մանկավարժական և աստվածաբանական։*

*Գեորգյան Ճեմարանը մեծ դեր ուներ կատարելիք ազգային, կրթական ուղղությամբ։ Չկային հայկական կրթական բարձրագույն հաստատություններ, իսկ նախակրթական դպրոցների համար անհրաժեշտ էին ուսուցիչներ։ Մանկավարժական բաժնում Ճեմարանը պատրաստում էր ուսուցիչներ, որոնք ավարտելուց հետո պաշտոնավարում էին հայկական դպրոցներում։ Աստվածաբանական բաժնում պատրաստվում էին հոգևորականներ, որոնք հայ հավատացյալ ժողովրդին բարոյական և հոգևոր գաղափարներով պետք է առաջնորդեին։ Հարկ է շեշտել, որ Գեորգյան Ճեմարանը պատվով կատարեց իր առաքելությունը, տալով հայ ժողովրդին աչքի ընկնող գիտնականներ, հոգևորականներ և ուսուցիչներ։*

*Այժմու Ճեմարանը մի ուղղություն է ունենալու, նա նպատակ ունի տալ բարձր կրթություն ունեցող հոգևորականներ։ Անհրաժեշտ է հայագիտական առարկաների վրա հատուկ ուշադրություն դարձնել։ Մեր եկեղեցականները ոչ միայն պիտի լավ գիտնան աստվածաբանական առարկաները, այլ և հայոց պատմությունը, հայ մատենագրություն և հարակից այլ գիտություններ։ Հայ եկեղեցականը դարերի ընթացքում գիտությունից, արվեստից և գրականությունից կտրված չի եղել և այժմ էլ կտրված չէ։ Հայագիտության տիրապետելը ամեն հայու սրբազան պարտականությունն է։ Աստվածաբանական բաժնում կպատրաստվեն կրթված հոգևորական կադրեր, հայ հավատացյալ ժողովրդին բարու, գեղեցիկի և հոգեկանի գաղափարներով դաստիարակելու և առաջնորդելու։ Այդպիսի հոգևորականների պահանջը շատ մեծ է հայ ժողովրդի համար։ Ներկա Ճեմարանից մանկավարժական ուղղությունը հանված է, նկատի առնելով որ այժմ Սովետական Հայաստանում կան մի շարք բարձրագույն մանկավարժական հաստատություններ, որոնք որակյալ մասնագետներ են պատրաստում Հայաստանում լայնորեն տարածված դպրոցների ցանցի համար։ Եթե առաջ մի քանի քաղաքներում նախակրթական դպրոցներ միայն կային, ապա այժմ յուրաքանչյուր գյուղ ունի իր օրինակելի դպրոցը, էլ չեմ խոսում բազմաթիվ բարձրագույն կրթական հաստատությունների մասին։*

*Այսօր առաջին հերթին լսելով Հայ մատենագրության պատմության քննությունը, ես հոգով մխիթարված եմ։ Պատմագրությունը հայագիտության հիմքն է։ Դուք որոշ չափով տիրապետում էք ձեր անցյալի պատմության. այդ փաստ է, որ դուք սիրում էք ձեր ազգը։ Ազգը չի կարելի սիրել առանց նրա անցյալն ու ներկան լավ իմանալու։ Հայ հոգևորականների դարավոր տրադիցիաներն են եղել՝ ծառայել Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և հայրենի պետության, իսկ այդ բոլորին հասնելու համար, անհրաժեշտ է լավ ճանաչել ազգը, լավ ուսումնասիրել նրա պատմությունը, կուլտուրան, սովորույթները, որպեսզի կարողանաք այն գնահատել և սիրել,*

որպեսզի կարողանաք յուրացնել այն բոլոր լավը, առաջավորը, ինչ ստեղծել է հայ ժողովուրդը դարերի ընթացքում։ Ես հուսով եմ, որ դուք կշարունակեք խորանալ պատմության մեջ, կշարունակեք խորացնել ձեր հայագիտական-պատմական գիտելիքները, նոր քարեր ավելացնելով ձեր գիտական պատի վրա։ Դուք սկսել էք մասնագիտանալ ձեր առարկայի մեջ և այդ շատ ուրախալի է։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ դուք այժմ պատմություն այնքան գիտեք, ինչքան նախկին Ճեմարանի ավարտողները։ Ջանքով տիրապետում եք գիտելիքներին՝ հայ ժողովրդի կրթված զավակները դառնալու։ Իմանալով այս բոլորը, ես վստահ եմ, որ ինձ հետ մխիթարված կզգան իրենց և ձեր բարերարները և ամբողջ հավատացյալ հայ ժողովուրդը։ Այս բոլորը խրախուսիչ և քաջալերական են։

Լա՛վ իմացեք, կյանքում առաջ կգնան նրանք, ովքեր գիտեն համառ և հետևողական աշխատանք կատարել։ Աշխատանքը գիտության առաջին և հիմնական պայմանն



Վեհափառը, Գերագույն Հոգևոր Խորհրդի մի քանի անդամներ և Վերատեսուչը Հոգևոր Ճեմարանի տարեվերջի քննություններին

Այս ուղղությամբ չի կարելի չհիշել այս տարի նոր հրավիրված պրոֆ. Աբրահամյանի բարեխիղճ և արդյունավետ աշխատանքը։ Սրտանց շնորհակալություն եմ հայտնում հարգելի պրոֆեսորին։

Բոլորին հայտնի է, որ ներկա Ճեմարանը պահվում է հայ հավատացյալների և բարերարների աջակցությամբ։ Նրանք ձեզ համար պայմաններ են ստեղծում, և ցանկանում են որ դուք սովորեք։ Այժմ լսելով ձեր քննությունները, ես ձեր կողմից հայ հավատացյալ ժողովրդին և ձեր բարերարներին կարող եմ վստահեցնել, որ իրենց տրամադրած միջոցները իզուր չեն ծախսվում, որ դուք ուսման տենչ ունեք։ Ձեր վրա մեծ պարտականություններ են դրված, հայ ժողովուրդը ձեզանից մեծ ակնկալություններ ունի։ Ես հուսով եմ, որ դուք կարդարացնեք ձեզ վրա դրված հույսերը. այդ արդեն երևում է նրանից, որ դուք անխոնջ աշխատանք է։ Թերթեցեք բոլոր մեծ մարդկանց, մեծ գիտնականների կենսագրությունները և դուք կտեսնեք, որ դրանք եղել են անդուլ աշխատանքի ցայտուն օրինակներ։ Ձեռք բերածով հանգստացողները կմնան իրենց տեղում։ Երբե՛ք չհանգստանաք ձեր ունեցածով, աշխատեցե՛ք միշտ նորը ամբարել, միշտ նոր էջեր բաց անել գիտության մատյաններից։ Սովորեցե՛ք և նորից սովորեցե՛ք, որպեսզի ապագայում կատարելագործվեք և դառնաք ազգի համար, մարդկության համար պիտանի անհատներ։

Օրհնում եմ ձեզ և նորանոր հաջողություններ եմ ցանկանում։

Վեհափառ Հայրապետի խրատական և իմաստալից խոսքերից հետո, որոնք ուսանողների մեջ աշխատանքի նոր կորով և նվիրվածություն բորբոքեցին, խոսք է առնում մեծանուն հայագետ, բազմավաստակ գիտ-

նական, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ դոկտոր Ե. Շահազիզը։

«Դպրոցը ուղղություն է տալիս,—ասում է նա,—իսկ կյանքը՝ գիտություն և այդ գիտությունը ձեռք է բերվում համառ աշխատանքով։ Ես տասներկու տարեկան մի կիսագրագետ երեխա էի, երբ գյուղից գնացի Մոսկվայի Լազարյան Ճեմարանում սովորելու։ Ռուսերեն ո՛չ մի բառ չգիտեի, իսկ հայերեն հազիվ կարողանում էի կարդալ և գրել։ Այնտեղ հորեղբորս՝ բանաստեղծ Ս. Շահազիզի օգնությամբ և տքնաջան աշխատանքով ես կարողացա գիտություն ձեռք բերել։ Այդ այնքան էլ հեշտ չի, հիշեցեք որ ծաղկալից ճամբաները մեծության չեն տանում։

Լա՛վ սովորեցեք ձեր ժողովրդի պատմությունը, որպեսզի կարողանաք սիրել նրան։ Սիրեցե՛ք ձեր ժողովուրդը, բայց մի՛ ատեք ուրիշ ազգերին։ Իր մորը չսիրող որդին պարզ է, որ ուրիշին մորը չի կարող հարգել։ Անդուլ աշխատանքով տիրապետեցե՛ք հայ ժողովրդի պատմության, որպեսզի կարողանաք ճիշտ գնահատել և սիրել այն։

Վեհափառ Հայրապետի հետ, այսօր մենք ամբողջ հոգով մխիթարված ենք զգում մեզ, որ հայ հավատացյալ ժողովրդի և բարերարների տրամադրած միջոցները, մեր աշխատանքն ու հոգածությունը իզուր չեն անցնում»։

Լսելով Վեհափառ Հայրապետի և Ե. Շահազիզի քաջալերիչ, սրտապնդող և միաժամանակ պարտավորեցնող ու իմաստալից խոսքերը, Հոգևոր Ճեմարանի ուսանողները սրանից հետո է՛լ ավելի մեծ խանդավառությամբ և նվիրվածությամբ կսովորեն, կտիրապետեն գիտության, հայ ժողովրդի կըրթված զավակների շարքը անցնելու սրտաբաղձ փափագով, Հոգևոր Ճեմարանի ուսանողները զգում են իրենց վրա դրված ծանր բայց քաղցր պարտականությունը և ամենայն նվիրվածությամբ կաշխատեն արդարացնել Վեհափառ Հայրապետի, իրենց բարերարների և ամբողջ հավատացյալ հայ ժողովրդի ակնկալությունները ու հույսերը։

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ






Ի. ՄԱՐՏԻՐՅԱՆ
(Բ՝ լսարանի ուսանող, սարկավագ)

# ԷՋՄԻԱԾԻՆ

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ.
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

*Քանդակեցին պատերն իմ կամարներն այս հիասքանչ,*
*Որպես կոթող հավատքի, հայրենական սրբություն,*
*Որպես խորհուրդ վեհիմաստ, ստեղծագործ, աննահանջ*
*Եվ գալիքի լույս հավատք՝ անքակտելի, հաստատուն...*

*Էջմիածինը կանգնեց հայ պետության կողքին ի վեր,*
*Հայրենիքին զերդ նեցուկ, բարեպաշտին որպես հույս,*
*Դպրության ջահը վառեց ժողովրդիս կարեվեր,*
*Եվ խավարի դեմ կանգնեց որպես անմար. պայծառ լույս։*

*Արյունահեղ մարտերում երբ ծեծվեց ազգն իմ դժբախտ,*
*Երբ հորդաներն խուժեցին ամեն կողմից Հայաստան,*
*Եղավ վշտի ամոքիչ, նա միշտ մնաց անվհատ,*
*Եվ միշտ նայեց հավատքով դեպի լուսե ապագան...*

*Եվ վերջապես երկիրն իմ սովետական աստղի տակ*
*Ոսկեցնցուղ շողերով պայծառացավ անթախիծ,*
*Երջանկությամբ հորդեց մեր հարկերում անխորտակ,*
*Ժողովուրդն իմ տառապած գտավ կյանքն իր բերկրալից.*

*Էջմիածի՛ն... անունն այդ հավատքի շողն է պայծառ,*
*Սիրտը ջենշող հայության, լույսի փարոս շողշողուն.*
*Խաղաղության աղավնի, որ ճախրում է անդադար,*
*Հայրենիքի սուրբ հավատք, համբուրելի սրբություն...։*

Զ. ԳԵՈՐԳՅԱՆ

(Թ. լսարանի ուսանող, սարկավագ)

# ՌՈՒՍ ՄԵԾ ԶՈՐԱՎԱՐ ՍՈՒՎՈՐՈՎԸ

*Մայիսի 18-ին լրացավ Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովի մահվան 150-րդ տարեդարձը։*

*Սովետական Միության ժողովուրդները նշեցին ռուս հանճարեղ զորավար Ա. Վ. Սուվորովի մահվան 150-ամյակը։*

*Սուվորովի անվան հետ են կապված 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին ռուսական քաջարի բանակի բոլոր հաղթանակները։ Նա ոգեշնչող կերպար է հանդիսացել ազատության համար մարտնչող հետագա հայրենասեր սերունդների համար։*

*Ա. Վ. Սուվորովն իր մեջ մարմնավորել է ռուս ժողովրդի լավագույն գծերը՝ կրակոտ հայրենասիրությունը, պարզ միտքը և կայուն բնավորությունը։*

*Սուվորովի գործունեության հետ են կապված ռուս ժողովրդի ռազմական անցյալի փառապանծ էջերը։ Սուվորովը ավելի քան 50 տարի, իր փոթորկոտ կյանքի ընթացքում, նվիրվածությամբ ծառայել է իր Հայրենիքին և կռվել նրա փառքի համար։ «Բարի անուն ունենալ,— գրում է Սուվորովը Բիբիկովին ուղղված իր նամակում.— ես անձամբ այդ բարի անունը փնտրել եմ իմ Հայրենիքի փառքի մեջ, իմ հաջողության նպատակը բացառապես եղել է նրա բարեկեցությունը»։*

*Իր առաջին մարտական մկրտությունը զորավարը ստացել է Յոթնամյա պատերազմի ժամանակ՝ Ֆրիդրիխ Երկրորդի պրուսական բանակի դեմ մղված մարտերում։ Այդ պատերազմում, երիտասարդ փոխ-գնդապետ Սուվորովն իրեն ցուցաբերեց որպես եռանդուն և ձեռներեց սպա։ 1760 թվականին նա մասնակցեց Բեռլինի գրավմանը։*

*Որպես ինքնուրույն տաղանդավոր զորավար, Սուվորովն առաջին անգամ աչքի է ընկել լեհական կամպանիայի ժամանակ։ Սուվորովյան «Հաղթելու գիտության» հիմքը հենց այստեղ է դրվում։ Բայց Սուվորովին, որպես զորավարի, մեծ փառք բերեցին այն հաղթանակները, որ նա տարավ ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ։ Այդ պատերազմներում Սուվորովի երեք փառապանծ հաղթանակները Ֆոքշանի, Ռիմնիկի և Իզմայիլի մոտ, ընդմիշտ մտան պատմության մեջ, որպես ռազմական արվեստի կլասիկ օրինակներ։*

*1789 թվի ամառը Սուվորովի հրամանատարությամբ ռուսական զորքերը գրոհեցին և ջախջախեցին Ֆոքշանի մոտ գտնվող թյուրքական ամրացված ճամբարը, որտեղ կար ավելի քան երեսուն հազար զինվոր։*

*Նույն տարվա աշնանը, Սուվորովը ունենալով մոտ քսանհինգ հազար զորք, հանկարծ հայտնվեց Ռիմնա և Ռիմնիկ գետերի միջև և գրոհեց թյուրքական հարյուր հազարանոց բանակի վրա, որը պատրաստվում էր հարձակման։ Հավատարիմ մնալով իր այն կանոնին, որ «Պետք է գործել ոչ թե թվով, այլ հմտությամբ», Սուվորովն այստեղ ևս փայլեց մեծ զորավարի իր արվեստով և ջախջախեց թյուրքերին։*

*1790 թվականին, Իզմայիլ ամրոցի գրավումը Սուվորովին հռչակեց ամբողջ աշխարհով մեկ։ Իզմայիլի գրոհը եզակի դեպք է պատմության մեջ։ Ինքը, Սուվորովն ասում էր, որ այդպիսի գրոհ կարելի է կատարել կյանքում միայն մեկ անգամ, Նա Իզմայիլի գրավման կապակցությամբ իր գրած զեկուցագրում հետևյալն է ասում. «Չի եղել ամուր բերդ, քան Իզմայիլը, ավելի կատաղի պաշտպանություն, քան Իզմայիլի պաշտպանությունը, բայց Իզմայիլը գրավված է, շնորհավորում եմ»։*

*Սուվորովի ռազմական փայլուն տաղանդը, նրա զորավարական արվեստը հատկապես երևաց Արևմտյան Եվրոպայում՝ իտալական և շվեյցարական նշանավոր արշավանքների ժամանակ։*

*1799 թվին Ռուսաստանը մտավ հակաֆրանսիական կոալիցիայի մեջ։ Ռուսաստանի կայսր Պավել Առաջինը պարտավորություն էր վերցրել ֆրանսիացիների դեմ ուղարկել ռուսական նավատորմը, ինչպես նաև քսան հազարանոց մի բանակ, որը պետք է օգներ ավստրիացիներին, որոնք մինչև այդ մեկը մյուսի հետևից պարտություն էին կրում։ Անգլիական թագավորը և ավստրիական կայսրը խնդրեցին Պավել Առաջինից՝ դաշնակիցների զորքերի հրամանատար նշանակել Սուվորովին։*

*Մեծ զորավարն այն ժամանակ Պավելի՝ ռուսական բանակում պրուսիական դաստիարակություն մտցնելու դեմ պայքարելու համար աքսորվել էր Նովգորոդի Կոնչանսկոյե գյուղը։ Պավելը աքսորից հետ կանչեց Սուվորովին և նշանակեց դաշնակիցների*

*գործերի ընդհանուր հրամանատար։ 1799 թվի ապրիլի 7-ին սկսվեց իտալական արշավանքը։*

*Սուվորովի հաղթանակները ֆրանսիացիների դեմ Տրեբբիա գետի ափին, Նովի քաղաքի մոտ, Ալպյան լեռներով նրա լեգենդար անցումը՝ ռուսական բանակի հաղթանակների այն շղթան էին, որոնք առաջ բերին ամբողջ Եվրոպայի զարմանքը։ Շվեյցարական արշավանքը, որի ընթացքում ռուսական զինվորները ցուցաբերեցին ոգու բացառիկ ուժ, մեծագույն կայունություն, դարձավ Սուվորովի ռազմական փառքի գագաթը։*

*Շվեյցարական արշավանքը վերջացավ ռուսական զենքի փառավոր հաղթանակով։ Իտալական և շվեյցարական արշավանքների համար Սուվորովը ստացավ գեներալիսիմուսի կոչում։*

*Արշավանքից հետո ծերունի զորավարը հիվանդ վիճակում վերադարձավ Պետերբուրգ, որտեղ և 1800 թվականի մայիսի 18-ին վախճանվեց 71 տարեկան հասակում։*

***

*Սուվորովի հաղթանակների բանալին զորքերի լավագույն ուսուցման և շարքային զինվորների հետ ունեցած նրա անխախտ կապի մեջ էր։ Դեռևս ստորին աստիճանում անցկացրած ծառայության տարիները Սուվորովին մոտեցրին զինվորին, հնարավորություն տվին ուսումնասիրել նրա բնավորությունը և հասկանալ նրա կարիքները։ Հետագայում էլ ավելի սերտ կապ պահելով զինվորների հետ, Սուվորովը կարողացավ նրանց մեջ զարգացնել բարձր հայրենասիրություն, հայրենիքին անձնվիրաբար ծառայելու զգացմունք և մարտական վարպետություն։*

*Սուվորովը հոգատար էր դեպի զինվորը՝ «Ինձ համար զինվորը ինձանից թանկ է»,—ասում էր Սուվորովը։*

*Սուվորովը հաստատեց ռուս զինվորի դաստիարակման նոր սիստեմը, այսպես կոչված՝ Սուվորովյան սիստեմը։ Այդ դաստիարակության հիմքում Սուվորովն ամենից առաջ դնում էր սերն ու նվիրվածությունը Հայրենիքի հանդեպ, մի զգացմունք, որը կարմիր թելի նման անցնում է նրա երկարամյա ռազմական գործունեության միջով։*

*Սուվորովի պահանջը զինվորներից պարզություն ու ջանասիրություն էր։ «Սովորելը դժվար լինի՝ արշավանքը դյուրին կլինի, սովորելը դյուրին լինի՝ արշավանքը դժվար կլինի»,— ասում՝ էր Սուվորովը։*

*Նա պահանջում էր խիստ կարգապահություն, որը հիմնված էր ո՛չ թե պատժի, այլ գիտակցության վրա։*

*Սուվորովը հեգնանքով ու չարությամբ ծաղրում էր բանակում ստեղծված նոր, այսպես կոչված պրուսական կարգերը։ «Պուդրան վառոդ չէ, խոպոպները թնդանոթ չեն, ծամը սուսեր չէ և ես էլ գերմանացի չեմ, այլ բնածին ռուս»։ Քայլը փոքրացնելու մասին ասում էր. «Այսպես ուրեմն, քառասունի փոխարեն երեսուն վերստ կքայլենք դեպի թշնամին»։*

*Սուվորովը ջանք չէր խնայում որպեսզի զինվորներին կոփի, նրանց մեջ տոկունություն զարգացնի։ Միաժամանակ նա պահանջում էր նրանցից տիրապետել մարտական արվեստին, լինել դիմացկուն, արիասիրտ և գիտակից վերաբերմունք ցույց տալ դեպիստանձնած պարտականությունները։ «Յուրաքանչյուր ռազմիկ պետք է հասկանա իր մանևրը»,— ասում էր Սուվորովյան կանոնը։*

*Քաջությունը զարգացնելու հետ միասին, Սուվորովը միաժամանակ պահանջում էր սպաներից ու գեներալներից գիտություն։ «Հարկավոր է հաղթել գիտությամբ և ոչ թե քանակով»,—ասում էր նա։*

*Սուվորովը բացառիկ նշանակություն էր տալիս սրընթաց արշավների անցկացմանը և իր զորքերը շարունակ մարզում էր այդպիսի արշավներ կատարելով, տեղանքի զանազան պայմաններում և տարվա ամեն եղանակին։*

*Լեհական կամպանիայի ժամանակ Սուվորովի սովորական անցումները 40-60 կմ. էին, բայց նա հաճախ 90 կմ. էլ էր անցնում և հանկարծակի երևալով ու հարվածելով հակառակորդին, ապահովում հաղթանակը։ «Զարմացնել ու հաղթել,— ասում էր Սուվորովը.— արագությունն ու հանկարծակիի բերելը փոխարինում են քանակին»,— այս էր նրա կանոնը։*

*Սուվորովն իր մարտական ողջ կյանքի ընթացքում վարելով միշտ հարձակողական մարտեր, խուսափել է պաշտպանողականի դիրք բռնելուց, իսկ երբ ստիպված է եղել այդ անել, ապա պաշտպանության խնդիրները նա լուծել է հարձակողականի ձևով։*

*Նահանջի մասին նա լսել անգամ չէր ուզում։ «Նահանջ» բառը նա արտասանում էր հեգնանքով, հաճախ գերմաներեն լեզվով և հավատացնում էր, թե ռուսաց լեզվում դրան համապատասխանող հասկացողություն գոյություն չունի։*

*Քիչ չեն եղել Սուվորովի ռազմական արվեստի երկրպագուները, քիչ չեն եղել նաև նրա ռազմական հանճարը չընդունողները, բայց ռուս մեծ զորավարի կարևորությունը չի*

տվել ո՛չ մեկի և ո՛չ էլ մյուսի կարծիքներին։ Նա լավ գիտեր իր արժեքը և քիչ էր մտահոգվում այն բանով, թե ուրիշները ի՛նչ են մտածում իր մասին։ Ահա թե ի՛նչ է ասում Սուվորովը, երբ ցանկություն են հայտնում նրա կենսագրությունը կազմել. «Ներողություն մի կրեք, ես ինքս իմ մասին կասեմ. Թագավորները ինձ գովաբանել են, զինվորները՝ սիրել, բարեկամներս՝ զարմացել ինձանով, թշնամիները հայհոյել են ինձ, պալատականները ծիծաղել են ինձ վրա։ Պալատներում որպես Եզոպոս հանդես գալով, առակներով ես ճշմարտությունն եմ ասել, հայրենիքի շահի համար ձգել եմ Բալակիրյև (Պետրոս Ա.-ի ծաղրածուն) և աքաղաղի պես կանչել ու թմրածներին արթնացրել, իսկ եթե ես ծնված լինեի Կեսար, ես նրան նման հպարտ կլինեի, բայց կզգուշանայի նրա արարքներից»[1]։

***

Ռուս զորավարի անունը սերտորեն կապված է անդրկովկասյան ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի հետ։

Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ադրբեջանցիները, ենթարկվելով դաժան շահագործման պարսկական սատրապների և թյուրք փաշաների կողմից, դեռևս 16—17-րդ դարերից իրենց փրկությունը փնտրում էին ռուսական զորեղացող պետության օգնության մեջ։

Սուվորովը առաջին անգամ հայ ժողովրդին վերաբերվող հարցերով զբաղվել է 1778 թվականին, երբ Ղրիմում ապրող հայերը գաղթեցին Ազովյան նահանգը և բնակություն հաստատեցին Դոն գետի ափին, այժմյան Ռոստով քաղաքի շրջանում։

Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրի համաձայն, ինչպես հայտնի է, Ղրիմն ազատագրվեց սուլթանական լծից։ Ռուս կառավարությունը ձեռնարկեց հայ և հույն բնակչության գաղթեցմանը։ Այս բավականին բարդ և դժվար գործը հանձնարարվեց Սուվորովին։ Հայերի արտագաղթին խանգարում էր Շահին Գիրեյ խանը՝ նկատի ունենալով այդ ձեռնարկության նպատակն ու հետևանքները Ղրիմի համար, որի տնտեսական տերերը պետք է զրկվեին հիմնական հարկատու բնակչությունից, արհեստավոր ու առևտրական տարրերից։ Սուվորովի հոգատարության և ցուցաբերած աջակցության շնորհիվ, տասնհինգ հազար հայ գաղթականներ ապահովաբար հասցվում են Ազովյան նահանգը և այնտեղ հաստատում իրենց բնակությունը։

1779—1781 թվերին Սուվորովը զբաղվում է հայ ժողովրդի և անդրկովկասյան ժողովուրդների ազատագրման խնդիրներով։

Դեռևս Պետրոս Մեծի պարսկական արշավանքներից սկսած, ռուսական արտաքին քաղաքականության առաջնակարգ խնդիրներից մեկն էր Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։ Ռուսաստանի այդ քաղաքականությունը լրիվին համապատասխանում էր Անդրկովկասի ժողովուրդների ձգտումներին, որոնք իրենց ազատագրումը կապում էին Անդրկովկաս կազմակերպվող ռուսական բանակի արշավանքների հետ։

1779 թվի վերջերին, Եկատերինա Երկրորդը Պետերբուրգ կանչեց Սուվորովին և համապատասխան հրահանգներ տալով, կարգադրեց գնալ Աստրախան՝ կազմակերպելու Անդրկովկասյան արշավանքը։ 1780 թվի հունվարին, Աստրախան մեկնելուց առաջ, նա մասնակցեց Պոտյոմկինի, Արղությանի և Լազարյանի Պետերբուրգի խորհրդակցությանը։

Աստրախանում, Սուվորովը երկու տարի շարունակ նախապատրաստվում է ծրագրվող արշավանքին, միաժամանակ կապեր հաստատում Ղարաբաղի հայ մելիքների հետ։

1781—1791 թվականներին, ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ, Սուվորովն օժանդակում է Արղության արքեպիսկոպոսին, Մոլդավիայի, Վալախիայի և Բուկովինայի հայերին Ռուսաստան գաղթեցնելու։

Ուշագրավ է այն, որ Սուվորովի խիզախ զինվորների շարքում եղել են հայ տղաներ։ Ահա թե ի՛նչ է գրված այդ մասին Լազարյան ճեմարանի «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» ժողովածուում. «Հռչակավոր զորավար գեներալիսիմուս իշխան Ալեքսանդր Վասիլևիչ Իտալիյսկու, գրաֆ Սուվորով Ռիմնիկսկու գլխավորությամբ տեղի ունեցած պատերազմների և արշավանքների մեջ հայերից գտնվում էին փոխ-գնդապետ Խաստատովը, փոխ-գնդապետ Մաներ և մայոր Լալաևը։ Այս վերջին երկուսը Գեներալիսիմուսի հավատարմատար անձերն ու սիրելիներն էին։ Խաստատովն իր քաջության և մատուցած ծառայությունների համար հետագայում արժանացավ գեներալ-մայորի աստիճանի և շքանշանների, իսկ Մաներ, ի ցավ զորավարի և բոլոր նրան ճանաչողների, սպանվեց Իզմայիլի գրավման ժամանակ։ Սույն քաջարի Մաներ արտասովոր անվեհերությամբ աչքի ընկավ գրոհի ժամանակ» (том III, стр. 302):

Ուշադրության արժանի է 1950 թվի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» № 6 համարում հրատարակված (մինչև այժմ անհայտ մնացած) մի նա-

1, «Սուվորով», Պետհրատ, 1939 թ., Երևան, էջ 111։

մակ, որը Սուվորովին ուղարկել է Երուսաղեմի Հայոց պատրիարքը՝ Հովակիմ Քանաքեռցին։ Այս նամակից պարզվում է, որ Սուվորովը, պատրիարքի եղբայր Գաբրիել վարդապետի և ածայրագույն նվիրակի միջոցով Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքին է ուղարկել մի նկար, անկարեալ ձեռամբ հանճարեղ արուեստատարին, պատուական եւ գոյնզգոյն երանգօք։ Թե ինչո՞ւ Սուվորովը Երուսաղեմի Հայոց պատրիարքին նվեր է ուղարկել, առ այժմ պատճառը հայտնի չէ, բայց փաստը մնում է փաստ, որ Սուվորովը կապված էր հայկական շրջանների հետ, իսկ վերջինները մեծ հույսեր էին կապում նրա օգնության հետ։

Նման բազմաթիվ փաստեր, նամակներ և այլ աղբյուրներ ցույց են տալիս, որ ռուս ժողովրդի մեծ զորավար Սուվորովը, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման գործում ունեցած իր մասնակցությամբ և սրտացավ վերաբերմունքով, մեծ սեր ու համբավ ստեղծեց այդ ժողովուրդների մեջ։

Հայ ժողովուրդը, ռուս մեծ ժողովրդի և մեր Սովետական Հայրենիքի մյուս ժողովուրդների հետ միասին, նշում և մեծարում է ռուս մեծ զորավարի և իր լավագույն բարեկամի հիշատակը, մի մարդու՝ որն իր մարտական անմահ սխրագործություններով և բոցաշունչ հայրենասիրությամբ ոգեշնչել ու ոգեշնչում է ազատասեր ժողովուրդներին։

Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(Բ. լսարանի ուսանող, սարկավագ)

# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Կարդացված Օշականում, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի տոնին, 1950 թվի հունիսի 29-ին)

*Հինգ տարի է անցել այն օրից, երբ հիմք դրվեց Ս. Էջմիածնի Նորաբաց Հոգևոր Ճեմարանին։*

*Դա 1945 թվին էր։*

*Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Կաթողիկոսի անմիջական և անդուլ ջանքերով և իմաստուն ղեկավարությամբ, Նորաբաց Հոգևոր Ճեմարանը 1945 թվից սկսեց ուսման իր ընթացքը։*

*Հայ Եկեղեցին, հավատացյալ հայ ժողովուրդը մեծ հույսեր էին կապել Նորաբաց Հոգևոր Ճեմարանին, ծանր պարտավորություններ էին դրված թե՛ ուսանողության և թե՛ դասախոսական կազմի վրա։ Հոգևոր Ճեմարանը իր առջև դրել էր մի սրբազան նպատակ, որով պիտի ընթանար ապագա ճեմարանավարտը։*

*Ո՞րն էր այդ սրբազան նպատակը, գաղափարական այն ուղին, որով պիտի ընթանար ապագա ճեմարանավարտը և ո՞րքանով Ճեմարանը իր գոյության հինգ տարում հասավ իր այդ նպատակին։*

*Հոգևոր Ճեմարանը ունի միայն ու միայն մի նպատակ, այն է՝ լուսամիտ, բարձր պատրաստություն ունեցող աշխատողներ տալ հոգևոր ասպարեզին։*

*Հայ ժողովրդի համար ճեմարանավարտը, լինի աշխարհիկ թե հոգևոր, միայն մի նպատակ պիտի ունենա, այն է՝ լինել իր ժողովրդի հարազատ և հավատարիմ զավակը։ Հոգևոր Ճեմարանը Հայ Առաքելական Եկեղեցուն պիտի տա պատրաստված, անձնվեր, քաջ ու հավատարիմ հովիվներ, որոնք իրենց առաքինազարդ վարքով փայլեցնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ընդհանրապես Հայոց Եկեղեցին։*

*Նախկինում, երբ չունեինք պետականություն, երբ ազգի ուսումնական հաստատությունների կառավարման և հաստատման ծանր բեռը ընկած էր Մայր Աթոռի ուսերին, Գևորգյան Ճեմարանը լսարանական մասով իր ժամանակին Հայաստանում եղած միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն, որը և անմիջականորեն Մայր Աթոռի կարիքների համար ծառայող ուսումնական հաստատություն էր, տալիս էր բազմակողմանի մասնագիտության տեր շրջանավարտներ։*

*Այսօր խնդիրը միանգամայն տարբեր է։ Այսօր մենք ունենք ամուր պետականություն։ Սովետական իշխանությունը հոգում է մեր ուսումնատենչ երիտասարդության ուսման դժվարին և պատասխանատու գործը։ Բացված են բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ հազարավոր ուսանողներ ստանում են բարձրագույն կրթություն իրենց ընտրած ու սիրած մասնագիտությունների բնագավառում։ Այժմ Մայր Աթոռը ազատ է նախկինում ունեցած իր ծանր պարտականություններից, հետևաբար և Նորաբաց Հոգևոր Ճեմարանը միանգամայն նոր հիմունքների վրա դրված դպրոց է, այն կրոնական ազգային մի եզակի հաստատություն է։ Այսօր Հոգևոր Ճեմարանը պիտի պատրաստե պատմաբանասիրական մեծ պատրաստությամբ և առողջ մտքի տեր հոգևորականներ, ուսուցիչներ, ինչպես հնում էին ասում՝ վարդապետներ, որոնք զուգընթացաբար պիտի ուսումնասիրեն մեր անցյալի հարուստ ազգային կուլտուրան, ձեռագրերը և հնությունները, մանրանկարչությունն ու գեղարվեստը, գիրն ու գրականությունը, մեր մոտ անցյալի բանասիրական գրականությունը, և այդ բոլորի վրա ավելացնելով նորը, նրանք պիտի դառնան լավագույն հայագետներ, բանասերներ։*

*Ահա սրանք են այն գլխավոր և առաջնահերթ խնդիրները, որ պիտի իրագործե Հոգևոր Ճեմարանը առաջիկայում։*

*Հինգ տարի առաջ Հոգևոր Ճեմարանը ուներ մի դասարան 35 ուսանողներով։ Վեհափառ Հայրապետի անմիջական հոգացողության ներքո, Հոգևոր Ճեմարանի Վերատեսչի և ուսումնական մանկավարժական խորհրդի ջանասեր ղեկավարության շնորհիվ, Ճեմարանը հետզհետե ապահովվեց որակյալ, բարձրագույն կրթության տեր դա-*

սախոսական կազմով, պարտաճանաչ և հոգածու վերակացուներով։ Բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ուսանողության համար, նրանք ապահովվեցին ամեն տեսակ հարմարություններով։ Ճեմարանի ապահով, խաղաղիկ ու հանգիստ կյանքը այն ամենամեծ պայմանն է, որով Հոգևոր Ճեմարանի ուսանողը կարող է հասնել խոշոր և լուրջ հաջողությունների ուսման բնագավառում։

Անտեսել այն դժվարությունները, որոնց առաջ կանգնած էր Հոգևոր Ճեմարանը, և այն դժվարությունները, որոնք շարունակվում են, չի կարելի։ Իհարկե, մեծ գործերը պահանջում են և մեծ դժվարություններ։

Դժվարություններից ամենամեծը Հոգևոր Ճեմարանի տնտեսական ապահովման խնդիրն է, որի ամբողջ ծանրությունը համարյա իր վրա է կրում Մայր Աթոռը։ Այսօր հայկական բոլոր եկեղեցիների վրա, հայ հավատացյալ համայնքի վրա մի սրբազան պարտականություն կա դրված՝ մուծել իրենց արժանավոր լուման հօգուտ Հոգևոր Ճեմարանի, Մայր Աթոռի այդ հիմնական ու կարևոր հաստատության։

Անցան իրար հետևից տարիները, և այդ անցած տարիների ընթացքում շատ բան փոխվեց դեպի լավը։ Ուսանողության կրթական մակարդակը գնալով հետզհետե ավելի բարձրացավ։ Այժմ Ճեմարանում կա զարգացած ու կրթված երիտասարդություն, որը և լավ ապագա է խոստանում։

Ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է մեծ պատրաստականության տեր գիտական աշխատակիցներով (պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, ավագ դասախոսներ)։ Լավ հիմքերի վրա է դրված ուսանողության հանգստի և կուլտուրական սպասարկման խնդիրը։ Հինգ տարիների ընթացքում, Ճեմարանը միշտ էլ պատվով է կատարել իր ստանձնած պատասխանատու խնդիրները։ Ամեն տարի Ճեմարանը իր ուսումնական տարին փակում է պատվով ու նշանակալից առաջադիմությամբ։ Տարեվերջին բազմաթիվ ուսանողներ ստանում են բազմաթիվ նվերներ, գերազանց առաջադիմության և վարքի համար։

Ամեն տարի թե՛ դասերի և թե՛ հատկապես տարեվերջի քննություններին ներկա է գտնվում Ծերունազարդ Հայրապետը։ Զնայած իր պատկառելի հասակին, Նա ուշադիր և համբերատար լսում է բոլորի պատասխանները, հարցեր տալիս ուսանողներին, հետաքրքրվում է, թե ո՛րքանով են նրանք յուրացրել անցած դասընթացը, ո՛րքանով առաջադիմել անցած տարվա համեմատությամբ, տալիս ուղղություն տալիս դասախոսներին այս կամ այն հարցի վերաբերյալ։ Եվ երբ լսելով ուսանողների համարձակ, դիպուկ և ճիշտ պատասխանները, Վեհափառը համոզվում է նրանց ձեռք բերած գիտելիքների ամբողջական լինելու մասին, այն ժամանակ նրա դեմքը փայլում է գոհունակությունից։ Չէ՞ որ այդ բոլորը իր ցանած սերմերն են, որոնք պտուղ են տալիս, սերմեր, որոնք ընկել են մաքուր, արգավանդ հողում և նման են Ավետարանի հատիկին, որ «բազում արդիւնս առնէ», ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։

Այսօր Հոգևոր Ճեմարանը ունի մի դասարան և Ա. և Բ. լսարաններ։ Եկող տարի, երբ նա կբոլորի իր վեցամյա ուսումնական տարեշրջանը, կունենա երեք լսարաններ, ամբողջացնելով նրա բարձրագույն ուսումնական լրիվ դասընթացը։

Հոգևոր Ճեմարանը իր գոյության տարիներին տվել է հինգ կուսակրոն երիտասարդ սարկավագներ, որոնք լինելով Մայր Աթոռի կրտսեր միաբաններից, միանգամ ընդ միշտ իրենց նվիրել են Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և Հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործին։ Սարկավագության համար կան նաև ուրիշ թեկնածուներ։ Այսպիսով, Հոգևոր Ճեմարանը արդեն իսկ հասել է իր առաջնահերթ խնդիրներից մեկի իրագործմանը, այն է՝ տալ Հայ Առաքելաշավիղ Եկեղեցու համար արժանավոր հոգևորականներ։

Բարձր արդյունքներով փակելով հինգերորդ ուսումնական տարին, Հոգևոր Ճեմարանը կանգնած է վեցերորդ ուսումնական տարվա շեմքին։ Դա վերջին և վճռական տարին է Բ. լսարանցիների համար և վճռական է նաև ամբողջ Հոգևոր Ճեմարանի համար, քանի որ պիտի երևա ա՛յն արդյունքը, որին ա՛յնքան երկար և հուսալից սպասում են բոլորը։ Մենք այսօր, այս նվիրական ժամին, Ս. Մեսրոպի գերեզմանի առաջ, պիտի պատվավոր խոսք տանք էլ ավելի լավ սովորել, գիտության մեջ խորանալ, հարստացնել մեր ուսման մակարդակը նորանոր գիտելիքներով, բոլորի համար բարոյականության և կարգապահության օրինակելի տիպարներ դառնալ։

Թող հեռու լինեն մեզանից մեծ պատմահոր նկարագրած աշակերտների տիպարները՝ «Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն՝ աստուածաբանք»։

Հոգևոր Ճեմարանի ուսանողին վայել չեն ծուլությունն ու մեծամտությունը, անհոգությունն ու անհամեստությունը։ Նա իր աշխատասիրությամբ, մարդասիրությամբ և

ընկերասիրությամբ պիտի փայլի բոլորի աչքին։ Աշխատանքը նրա կիրքը պիտի լինի, ուսման տենչը երբեք պիտի չհանգչի նրա սրտում։ Նա պիտի նմանվի ժրաջան մեղվի, որը օրն ի բուն քաղցր նեկտար է հավաքում զանազան ծաղիկներից։ Ճեմարանականը օր ու գիշեր պիտի ամբարե գիտության պաշարը, տքնի, չարչարվի, զարգանա, կատարելագործվի հօգուտ իր ազգի, իր ժողովրդի և իր հարազատ Հայրենիքի։ Ճեմարանի ուսանողը, բառի իսկական նշանակությամբ, ազատ է տնտեսական ամեն տեսակի հոգսերից։ Նրան մնում է միայն ամուր կպչել գործին, և որ ամենակարևորն է՝ ժամանակը շահել և չկորցնել։ Ժամերով գրքի վրա հակվելը, գրքերի մեջ թաղվելը, ուսումնասիրությունն ու բեղմնավոր, տքնաջան աշխատանքը նրա գլխավոր ամենօրյա աշխատանքը պիտի լինեն։ Ճեմարանի սանը մի բան լավ պիտի իմանա, որ ինքը ընդհանուրի գուրգուրանքի առարկան է և իր վրա շատ մեծ հույսեր կան դրված։ Նա պիտի աշխատի ի դերև չհանել այդ փայփայված հույսերը և առաջին հերթին՝ Վեհափառ Հայրապետի հույսերը։

Հոգևոր Ճեմարանի ուսանողին, ապագա Ճեմարանավարտին, հոգևորականին, պիտի զարդարի երկու գլխավոր բարեմասնություն՝ եկեղեցասիրությունը և հայրենասիրությունը։ Ճեմարանավարտը և երիտասարդ հոգևորականը, այդ միևնույն է, պիտի սիրի իր Առաքելաշավիղ և ավանդապահ Ս. Եկեղեցին և իր մաքրափայլ, անբասիր վարքով և կենցաղավարությամբ պիտի զարդարե նրան։ Ապագա հոգևորականի ամենամեծ զարդը հայրենասիրությունը պիտի լինի։ Հայ եկեղեցականը միշտ էլ իր ժողովրդի հետ քայլել է, պաշտպանել է նրան ամեն տեսակի վերահաս արհավիրքներից և վտանգներից, իր ժողովրդի ցավն ու վիշտը կիսել է միասին, սատար է հանդիսացել իր ժողովրդին օտարության մեջ և հարկ եղած դեպքում զենքով թե գրչով, խաչը ձեռքին մաքառել է օտարերկրյա բռնակալների դեմ, հանուն իր Հայրենիքի և հանուն իր դավանանքի և ինքնուրույնության։

Հայ եկեղեցին այլ շահ չի ունեցել, բայց միայն ժողովրդի շահը։ Նա միշտ էլ հնչեցրել է Քրիստոսի սերը, մարդասիրության և համերաշխության սրբազան գաղափարները ընդդեմ բռնակալների, որոնք իրենց շահագործման ծանր լուծն են դրել հայ ժողովրդի ուսին։

Ահա այս վեհ սկզբունքներն են, որ նրան ապրեցրել են դարեր շարունակ։

Բավական է հիշել այնպիսի մեծ հոգևորականների, ինչպիսիք էին Սահակ Պարթև կաթողիկոսը և հայ ամենամեծ մարդը՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը, որոնք իրենց աշակերտների հետ միասին, հինգերորդ դարում գիր ու գրականություն տվին հայ բազմաչարչար ժողովրդին, այնպիսի մի ժամանակ, երբ որոշվում էր հայ ժողովրդի լինել կամ չլինելու խնդիրը։ Նրանք մի անխորտակ զենք տվին հայ ազատասեր ու շինարար ժողովրդի ձեռքին, որը նրան միշտ էլ պետք եկավ իր դարավոր ազատագրական պայքարի ընթացքում, որի միջոցով նա իր գոյությունն ու անկախությունը պաշտպանեց, և ապրում է զարգացնելով իր գրականությունը, արվեստը և կուլտուրան։ Բավական է հիշել քաջ Ղևոնդ Երեցին և Հովսեփ կաթողիկոսին, որոնք Վարդանանց սիրտն ու հոգին էին, և որոնք, իրենց Հայրենիքի սերը սրտում, ընկան թշնամու սրով։ Ով մի՞թե Վարդանանք Սահակի և Մեսրոպի ու նրանց աշակերտների արդյունքը չէին։ Մի՞թե նրանք իրենց ուսուցիչներից ստացածը՝ ազգային լեզուն ու ոգին, Հայրենիքի սերը և անկախության գաղափարը չե՞ր որ պաշտպանեցին։ Կարող էի՞ն նրանք այդ բոլորը հեշտությամբ հանձնել թշնամուն և անձնատուր լինել։ Նրանք դիմագրավեցին մինչև վերջ և զիմացեալ մահով ընկնելով, փառաց պսակ հյուսելով իրենց անվան շուրջը, հաղթեցին բռնությանը։ Այդպես հաղթեց հայ ժողովուրդը դարեր շարունակ։

Հայրենասեր Սահակ Ձորափորեցի կաթողիկոսը աչքի ընկավ իր անձնվեր հայրենասիրական գործով։ Նա գնաց մինչև Միջագետքի Խառան քաղաքը ընդառաջ անգութ բռնակալին (Օգուբային), նրանից գթություն հայցելու իր անմեղ հոտի համար և այնտեղ էլ մահացավ։ Ծերունի կաթողիկոսի աղաչանքը իզուր չանցավ և հայ ժողովուրդը փրկվեց կոտորածից։

Գանձասարի Եսայի անվեհեր կաթողիկոսը, հետագայում Հովսեփ Արղության արքեպիսկոպոսը և ուրիշները քիչ գործ չարեցին հայ ժողովրդին փրկելու աշխատանքում։ Նրանք իրենց դիվանագիտական նամակներով, խնդրագրերով հրավիրում էին ռուսաց զորքին՝ գալ ազատելու հայ ժողովրդին անօրեններից՝ պարսից բռնակալներից։

«Հայրենյաց պաշտպան» Ներսես Աշտարակեցին, 1827 թվին, ռուսական բանակում հայ զորքերին առաջնորդեց պարսից դեմ մղված պատերազմին, անձամբ մասնակցեց կռիվներին և իր կոչերով ոտքի հանեց հայ զանգվածներին ընդդեմ պարսկական բռնակալության։

Բավական է հիշել ժողովրդասեր կաթողիկոս Խրիմյան Հայրիկին և ուրիշներին։

Եվ ի վերջո, այսօր Ճեմարանցին օրինակ պիտի վերցնի իր իմաստուն Հովվապետից՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։ Հայրենական պատերազմի ծանր օրերին. ինչ գործ չարեց Նա անարգ թշնամուն ջախջախելու ճիգում, հավատացյալ հոտի օգնությամբ կազմելով տանկային շարասյուներ՝ ռազմաճակատին օգնելու համար։

Այսօր, աշխարհի բոլոր ծայրերում, պատմական ճակատագրի բերումով ցրված հայությունը, կամաց կամաց հավաքվում է իր հայրենի օրրանը։ Բացվել են Հայրենիքի դռները, ամեն կողմից շարան շարան ձգվել են հայրենադարձ հայ պանդուխտների հայրենատենչ կարավանները դեպի Մայր Հայրենիք։ Հայը այլևս չի դիմի կռունկին, չի՛ հնչի այլևս նրա մելամաղձիկ ու տխուր երգը օտար աշխարհում, ղարիբի աչքերից չի՛ հոսի արտասուքը, կարոտ իր Հայրենիքին, իր շեն օջախին։

Մի կողմ նետած պանդխտության փոշեթաթախ ցուպը, իրենց ոտներից թոթափած օտարի փոշին, միանգամ ընդմիշտ ազատված օտար երկնքի տակ դեգերելուց, վտարանդի հայերը արդեն ներս են մտել ա՛յն երկրի սեմից, որը իրենցն է եղել և ուր վերջ է տրվում այն անլուր տառապանքներին, որ կրել են նրանք հեռավոր հորիզոններում, և այժմ նրանք, երջանիկ և ուրախ իրենց Հայրենիքում, աշխատանքի և հաղթանակի երգեր են երգում։

Եվ ո՜րքան ուրախ ու փերկրալի է իմանալ, որ այդ մեծ ու պատվավոր գործին իր խոշոր մասնակցությունը ունի նաև Հայ Եկեղեցին, Մայր Աթոռը, հանձին Վեհափառ Հայրապետի, որը միայն ու միայն պատիվ է բերում նրան։

Քիչ չեն Վեհափառ Հայրապետի ջանքերը հայ արդար դատի իրականացման գործում։ Նա իր կոչերով, կոնդակներով ու զանազան գրություններով պահանջում է հայ ժողովրդի արդար իրավունքը, այն է Թյուրքիայի կողմից անիրավացիորեն բռնագրավված հողերի վերակցումը Սովետական Հայաստանին, որը հայ դատի ամենաճիշտ և խելացի լուծումն է։

Եվ, վերջապես, Հայ Եկեղեցին, Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետը, պայքարում են ամենակարևոր հարցի համար՝ խաղաղության համար, խաղաղությա՛ն, որը մարդկանց օդից ու ջրից էլ կարևոր է, խաղաղությա՛ն, որը ծնում է ամեն տեսակի բարիքներ։ Ստոկհոլմի կոնֆերանսի խաղաղության Կոչի տակ, մեկ մարդու նման ստորագրել են առաջին հերթին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը։ Մայր Աթոռը իր պատգամավորությունն է ուղարկել Պրագայի խաղաղության կոնֆերանսին։ Այսպիսով, նա իր խոսքն է ասել համայն աշխարհին, հայ ժողովրդի խոսքը, մի ժողովուրդ, որը ամենից շատ է տենչացել խաղաղության, որը իր կաշվի վրա լավ է զգացել թե ի՛նչ է պատերազմը, թե ի՛նչ են կոտորածն ու ավերը։ Հայ ժողովուրդը ոգի ի բռին պայքարել է խաղաղության համար։ Բավական է հիշել այն բոլոր սարսափելի կոտորածներն ու արհավիրքները, որոնք անցել են հայ խաղաղասեր ու տոկուն ժողովրդի գլխով, որպեսզի մարդ ապշի։ Այդ բոլորը խոր խոցեր են առաջացրել հայ ժողովրդի սրտում։ Այդ խոցերից ոմանք արդեն բուժվել են և ոմանք էլ բուժվում են։

Ամեն մի խաղաղ ժամանակաշրջանում, Հայաստանը միշտ էլ աճել ու բարգավաճել է, թե՛ կուլտուրապես և թե՛ տնտեսապես։

Հայ հավատացյալը, իր մրմնջած աղոթքներով, միշտ էլ խաղաղություն է հայցել. «Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր ես քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ»։

Հայ հոգևորականը իր հուժկու քարոզն է հնչեցրել՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի...»։

Այսպես, հայոց պատարագի և ժամակարգության ամեն մի տողը տոգորված է խաղաղության վեհ գաղափարով։ Եվ մի՞թե այս բոլորը պատահական են, կամ այս բոլորը մի՞թե խորթ են ժողովրդի ոգուն, և մի՞թե Ս. Ավետարանը մեր, խաղաղություն և եղբայրություն չի քարոզում աշխարհին, կամ մեր Փրկիչը սիրո և խաղաղության վարդապետը չէ՞ր։

Այս բոլորը գալիս են ասելու ա՛յն, որ Հայ Եկեղեցին, հավատարիմ Փրկչի խաղաղասիրական ավանդին և իր ժողովրդի ձայնին, իր խաղաղության ձայնն է միացնում ողջ աշխարհի Փրկչի Ավետարանին հավատարիմ մնացած եկեղեցիների ձայնին, ողջ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների հուժկու ձայնին։

Վեհափառ Հայրապետը, իր բեղմնավոր և շինարար գործունեությամբ, հայրենասիրությամբ, եկեղեցասիրությամբ և համեստությամբ, փայլում է Ս. Լուսավորչի ադամանդազարդ գահի վրա, որպես մի կատարելության տիպար։

Ճեմարանականը, աշխարհիկ թե հոգևոր, պիտի լինի ազնիվ քաղաքացի, իր ժողովրդի և հայրենի Պետության հավատարիմ ու արթուն պահապանը։

«Ազգն առավել քան երբեք, ու Եկեղեցին այսօր եղբայրական համերաշխության և ազգային եկեղեցական միախոհության ու միակամության անհրաժեշտության են զգում»,— գրում է Վեհափառ Հայրապետը իր սրբատառ կոնդակում։ Մի բան բոլորի համար պարզ է, որ Հայ հոգևորականը պիտի խիստ կերպով պայքարի այն բոլոր ոտնձգությունների դեմ, որ կատարվում են Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և հայ Հայրենիքի հանդեպ. դրանով նա պաշտպանած կլինի իր ժողովրդի և իր իսկ շահերը։

Այսօր հայ հավատացյալը, հայ մարդը, ո՛րտեղ էլ լինի նա, Ամերիկայում թե Ֆրանսիայում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում թե հեռավոր Հնդկաստանում, մի փափագ ունի միայն— վերադառնալ իր դարավոր օրրանը, իր չքնաղատեսիլ ու հարազատ Հայրենիքը, տեսնել Ս. Էջմիածինը, համբուրել նրա խնկի ծխից սևացած քարերը, և արտասվալից աչքերով, վանքի հնադարյան կամարների տակ աղոթքներ մրմնջալ, որ Աստված խաղաղություն պարգևի համայն աշխարհին։ Եվ նրա ցանկությունը կլինի համբուրել իր ալեզարդ Հովվապետի Ս. Աջը և ստանալ Նրա հայրական բարի օրհնությունը։

Մենք էլ աղոթենք Ամենաբարձրյալին, որ նա միշտ անսասան և ամուր պահե Լուսավորչահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ Լուսավորչի կանթեղը այնտեղ միշտ վառ ու անմար մնա։

Աղոթենք, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը բարգավաճի ու զարգանա և դասախոսներն ու ուսանողությունը նորանոր հաջողությունների հասնեն։

Աղոթենք, որ Մայր Աթոռի միաբանությունը է՛լ ավելի աճի, և սերն ու միաբանությունը անպակաս լինեն նրանից։

Եվ թող Աստված երկար կյանք, քաջառողջություն և յամերամ ժամանակօք ապահով անդորրությամբ պարգևե իր ընտրյալին, համայն հայության առաջնորդ, իմաստուն, քաջ և աստվածարյալ Հովվապետին, Ս. Լուսավորչի արժանավոր հաջորդ ու բազմերախտ գահակալին՝ Գևորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսին։

# ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

*Հունիսի 29-ին, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Թարգմանչաց տոնին, Վեհը բարեհաճեց գնալ Օշական և ներկա լինել Ս. Պատարագին։*

*Գեղածիծաղ առավոտ է։ Վանքի բակը եռուզեռի մեջ է։ Ամենն էլ ուրախ, զվարթ, սրտները բերկրալի՝ քանի որ գնում են հայ տառերի ռահվիրա Ս. Մեսրոպի շիրմի առաջ՝ ծնրադրելու, համբուրելու և իրենց երախտագիտական զգացմունքը արտահայտելու և պարտքը կատարելու։*

*Կարգադրիչ մասնաժողովի նշանով, ավտոմեքենաները՝ միաբաններով, ուսանողներով, դասախոսներով և այլ հյուրերով, սուրում են։*

*Օշականում ենք։ Այստեղ են թե՛ Օշականի և թե՛ այլ գյուղերից եկած ուխտավորները։ Գավիթը լեփ լեցուն է ժողովուրդով։ Տեղացիները լուռ են Վեհի ժամանման մասին. բոլորն էլ սրտատրոփ սպասում են նրա մեքենայի երևալուն։*

*Ահա և Վեհը։ Մեքենայից իջնում են Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները՝ մոտ հարյուրամյա բազմավաստակ գրականագետ Երվանդ Շահազիզը և դասախոս Ստեփան Կամսարականը։ Մի ակնթարթում մեքենան շրջապատվում է ժողովրդով։ Միաբանությունը, շուրջառազգեստ, ամպհովանու առաջ կանգնած, սպասում է։ Վեհը վեհորեն իջնում է ինքնաշարժ մեքենայից։ Վեհին տրվում են շուրջառ, գավազան և խաչ։ Վեհը մտնում է ամպհովանու ներքև։ Սկսվում է «Ուրախ լեր» շարականը։ Երկու բուրվառակիր սարկավագներ, համաչափ շարժումներով խնկարկելով, հրավիրում են Վեհին եկեղեցի։ Սաղմոսի ընթերցանությանը հետևում է Ս. Պատարագը։ Պատարագիչն է Մայր Տաճարի դասապետ Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանը։*



Վեհափառը Օշականում՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներով, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմով և ուսանողներով:

Ս. Պատարագի քաղցր, ներդաշնակ երգեցողությանը միանում է ժողովրդի սրտաբուխ աղոթքը։ Ամենքն էլ գոհ են ու սրտները ուրախությամբ լի։

Սարկավագները ձայնում են «Առաքելոց սրբոց» քարոզը։

Գետնափորում գտնված շիրիմը լուսավորված է ժողովրդի վառած մոմերով։ Վեհը, վեղարը հանելով, խոնարհվում է և համբուրում այն մեծ մարդու շիրիմը, որը տվել է հայ ազգին գիր և որի շնորհիվ ծաղկել է հայ դիրն ու գրականությունը։ Վեհի դուրս գալուց, միաբանները զույգ զույգ խոնարհվելով Վեհի առաջ, մտնում են դամբարան, որին վերջը հետևում է ժողովուրդը։

«Հայր մերից» առաջ Սահակ Ծ. Վարդապետը քարոզ է խոսում։

Ս. Պատարագը վերջանում է։ Վեհը նստած է հայրապետական բազկաթոռի վրա։ Ժողովուրդը, մեծից փոքրը, ծնրադիր, համբուրում է Վեհի Ս. Աջը։

Եկեղեցուց դուրս գալով, Վեհը առաջնորդվում է նույն գավիթում եղած դպրոցը, որտեղ Վեհի, միաբանության և հյուրերի համար պատրաստված էր նախաճաշ։

Նախաճաշից հետո, դպրոցական դահլիճում չտեղավորվելու պատճառով, ժողովրդի հարմարության համար, եկեղեցու գավթում սկսվում է գրական-երաժշտական ցերեկույթը։ Ելույթ են ունենում լսարանցի սարկավագները, ուսանողությունը և դասախոսները։ Մեջ ընդ մեջ երգվում են երգեր, և երաժշտական գործիքների անսամբլը, որը կազմված է Ճեմարանի սաներից՝ ղեկավարությամբ երաժշտագետ Դ. Ղազարյանի, նվագում է ընտիր եղանակներ։ Ի պատիվ Վեհափառի և հյուրերի սկսվում են երիտասարդների հայկական պարն ու յալլիները։

Այնուհետև հյուրերը հրավիրվում են դպրոց, որտեղ դասարաններից մեկում պատրաստված էր ճաշասեղանը։

Դրվում է Վեհափառի բազկաթոռը։ Վեհափառ Հայրապետի նստելուց հետո, բոլորն էլ նստում են ըստ դիրքի և աստիճանի։

Ճաշասեղանի առաջ ելույթ են ունենում սեղանակիցներից շատերը իրենց բաժակաճառերով։ Ճաշը անցնում է ուրախ և քաղցր տրամադրությամբ։

Բավական ուշ, բոլորն էլ գոհ, վերադառնում են Ս. Էջմիածին։



# ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Լ. ԱՃԵՄՅԱՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

(Մահվան 50-ամյակին առթիվ)

Երկիրը նշեց մահվան 50-ամյակը հայ մեծ ծովանկարիչին, որ իր անօրինակ տաղանդը ի սպաս դնելով ռուս ժողովրդին, փառքով պսակեց նրա գեղարվեստը, դառնալով նրա սիրելին, նրա պարծանքը կազմող հոյակապ անձնավորություններից մեկը։ Այդ հիսնամյակը ուրախությամբ և հպարտանքով նշեց նաև մեր ժողովուրդը, զգացված դառնությամբ հիշելով այն մյուս տաղանդները, գուցե նաև հանճարները, որոնք դեռ օր ու արև չտեսած, անհետ կորան բռնության այն երկրներում, ուր բարբարոսության, տգիտության և մոլեռանդության շունչը խամրեցնում է ամեն արժեք։

Այվազովսկին ծնվել էր 1817 թվին Ղրիմի Թեոդոսիա քաղաքում, ուր ծովը, իր հանդարտ րոպեներին, տարփոտ խանդաղատանքով է գուրգուրում եզերքի խարակներն ու ժայռերը, իսկ հուզումի և բարկության ժամերին՝ մոլեգին հարվածներ է հասցնում իր հառաջընթացությունը խանգարող այդ արգելքներին, մռնչում ու գոռում, ջրի հսկա սյուներ բարձրացնելով դեպի երկինք։

Այվազովսկին Թյուրքիայից գաղթած հայ ընտանիքի զավակ էր, հաստատված այդ քաղաքում, ուր իր մանկությունն անցնում էր գաղթականի աննպաստ պայմաններում։ Այդ տարիքում նրա առաջին փորձերը պիտի լինեին մատիտով ընդօրինակություններ հասարակ նկարների, որոնց մեջ սակայն մի ընտանեկան բարեկամ ճարտարապետ՝ Կոխ, ապագա մեծ ծովանկարիչն էր նկատել և պերսպեկտիվի դասերով նրա ընդունակությունները զարգացրել։ Պատանի Այվազովսկին, հետևելով հանդերձ գավառական վարժարանի դասընթացներին, քիչ ժամանակ հետո ցույց է տալիս այնպիսի հառաջադիմություն Կոխի դասերում, որ ճարտարապետը գաղափար է հղանում նրան հանձնարարելու քաղաքագլուխ Կազնաչեևին, ներկայացնելով նաև նրա մի քանի նկարները։ Քաղաքագլուխը հմայվում է այդ նկարներից և ցանկություն հայտնում մոտիկից ծանոթանալ դեռատի արվեստագետի հետ։

Երբ պատանի Այվազովսկին հորը և Կոխի հետ ներկայանում է Կազնաչեևին, սա զարմացմամբ բացականչում է.

— Բայց սա նույն փոքրն անցած շաբաթվա երաժիշտն է, որին ես հանդիպեցի մի տան առաջը ջութակ ածելով զբաղված։ Կազնաչեևը հետո պատմում է, թե ի՛նչպես իրե՛ն նկատելուն պես, նա թաքցրել է ջութակը, բայց իր պահանջումով վերսկսել է նվագել և երկար ունկնդրելուց հետո հեռացել։

Քաղաքագլուխը նույն օրը նկարչական ընտիր նյութեր է նվիրում փոքրիկ Հովհաննեսին, իր պաշտպանության տակ առնում նրան և արտոնում բարեկամություն հաստատել իր զավակի հետ։

Մի տարի հետո, 1830 թվին, երբ Կազնաչեևը ընդհանուր նահանգապետ է նշանակվում Տավրիկյան նահանգներին և հաստատվում Սիմֆերոպոլ քաղաքում, հետն է վերցնում իր պաշտպանյալ փոքրիկին և իր զավակի հետ աշակերտ արձանագրում տե-

ղական գիմնազիայում։ Ընդլայնվում է պատանի Հովհաննեսի բարեկամական շրջանակը, ծանոթանում է Ֆեոդոր Դիմիտրիեվիչի հետ և մի օր նրան նվիրում է մի նկար՝ «Աղոթքով զբաղված մի խումբ հրեաներ»։ Նվերընկալ պատանին նկարը ցույց է տալիս մորը, որ հմայված, ստանձնում է նրա ապագան հաստատ հիմքերի վրա դնելու հոգսը և հավաքելով նրա նկարները, ուղարկում է Մոսկվա, իր ծանոթներից Դոնչի ճարտարապետին, խնդրելով ներկայացնել նրանց արքունիքին ու բարեխոսել դեռափթիթ պատանու համար։ Ճարտարապետը



Հովհաննես Այվազովսկի

կատարում է հանձնարարությունը և ահա մի գեղեցիկ օր հրամայվում է իշխան Վոլկոնսկուն,— որի միջամտությանն էր դիմել Դիմիտրիևիչի մայրը,— պատանի Հովհաննեսին տեղավորել Պետերբուրգի Գեղարվեստական ակադեմիան (1833 թ.)։

Այստեղ, սակայն, ապագա մեծ ծովանկարիչին սպասում էին դժվարություններ, որոնց ամենածանրը նախանձն էր մի ֆրանսիացի ուսուցչի, որ չէր ների իր աշակերտին՝ գերազանցել իրեն։ Բայց Այվազովսկին անվհատ շարունակում է իր վերելքի ուղին և արքունիքի կողմից արժանանում 1,000 ռուբլի պարգևի և կայսեր կողմից ուղեկից նշանակվում իշխան Կոնստանդին Նիկոլայևիչին, որը մի նավային պտույտ պիտի կատարեր դեպի Ֆիննական ծովածոցը։ Եվ այստեղից էլ սկսվում է Այվազովսկու փառքի շրջանը։

1839 թվին Այվազովսկին ավարտում է իր ուսումը Ակադեմիայում՝ «Առաջին կարգի նկարիչ» տիտղոսով, ընդհանուր համակրություն ստեղծելով մայրաքաղաքի զարգացած դասի մեջ։ Ռուսական արվեստի այս հանճարեղ ներկայացուցչի համբավը, անցնելով երկրի սահմանները, տարածվում է Եվրոպայում, ապա ողջ աշխարհում, մանավանդ 1842 թվի Վենետիկի և 1843 թվի Փարիզի իր ցուցահանդեսներից հետո։ 1845 թվին Այվազովսկին ռուսաց կառավարությունից պատվվում է Ս. Աննայի Գ, իսկ մի տարուց հետո, Ա աստիճանի ասպետության պատվանշանով, անդամ է ընտրվում Ամստերդամի Արքունական գեղարվեստների ակադեմիային (1847 թ.). ֆրանսիական կառավարությունը նվիրում է նրան Պատվո Լեգեոնի խաչ, հայտնելու համար իր հիացումը Փարիզում կազմակերպած նրա երկրորդ ցուցահանդեսից հետո (1857 թ.)։ Վերջապես, նա նշանակվում է ուսուցիչ Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիային, որին աշակերտել էր նա վեց տարի՝ 1833—1839 թ. թ.։ Պետերբուրգի կայսերական ակադեմիան, ի գնահատություն ռուսական արվեստի այս մեծ վարպետին, 1887 թվին փառաշուք հանդեսներով տոնում է իր նախկին աշակերտի հիսնամյա գործունեության հոբելյանը, իսկ տասը տարուց հետո (1897 թ.), Թեոդոսիան է փառաբանում իր մեծասքանչ զավակին, նրա 60-ամյա գործունեության համար։ Այվազովսկու կուրծքը զարդարվում է «Ալեքսանդր Նևսկի» բարձր պատվանշանով, որին շատերը չեն որ արժանացել են։

Իր կյանքի վերջին տարիներին նա ապրեցավ ծննդավայր Թեոդոսիայում, մինչև վերջը չձգելով վրձինը, որ այնքան հրաշալիքներ էր արտադրել, ու մեռավ 1900 թվի ապրիլի 29-ին, վերջնականապես բաժանվելով ծովից, որի ամեհի խռովքին ու թովիչ հանդարտության անձնախումբաց նկարիչը եղած էր միշտ։

Իր նկարնե՞րը։ Ահա՛ մի քանիսը նրա նշանավոր ստեղծագործություններից։ Բայց այստեղ խոսքը տանք Մ. Պարսամովին՝ Թեոդոսիայի Ի. Կ. Այվազովսկու անվան պատկերասրահի դիրեկտորին, որ ամենից ավելի ձեռնհաս է այդ մասին։

«1839 թվականին,— գրում է Մ. Պարսամովը[1],— Ն. Ն. Ռաևսկովսկու հրավերով նկարիչը մասնակցեց ռազմա-ծովային էքսպեդիցիային և նկարեց իր առաջին Բատալիան՝ «Չոկատի դեսանտը Սուպաշի հովտում»։

«1840 թվականին Այվազովսկին մեկնեց արտասահման։ Նա այն ժամանակ արդեն Ակադեմիայի սակավաթիվ աշակերտ չէր, այլ փայլուն վարպետ, որը յուրացրել էր ռուսական գեղանկարչության նվաճումները։ Նա ռուս գրականության և երաժշտության մեջ լավ ծանոթ մարդ էր, առաջավոր, պրոգրեսիվ մտքի տեր։ Նա արդեն այդ ժամանակ ստեղծել էր «Ծովափը» նշանավոր նկարը, որն այժմ գտնվում է Տրետյակովյան պատկերասրահում։

«Մեկ տարուց հետո Այվազովսկին Իտալիայում դարձավ ամենաժողովրդական նկարիչը։ Նրա ստեղծագործության մասին գրում էին ընդարձակ հոդվածներ, նրան նմանվում էին։ Այվազովսկին հպարտանում էր այն բանով, որ արտասահմանում խոնարհվում են ռուսական արվեստի հաջողությունների առաջ։

«Այվազովսկին նկարել է միայն ծով, բայց նրա նկարների սյուժեներում մեծ բազմազանություն կա։ Նկարիչը խոր կերպով ուսումնասիրել է ծովի կյանքը, գիտեր ծովը, նրա բոլոր բազմազան ձևերով, կոլորիտի քմահաճ փոփոխականությամբ։

«Այվազովսկին ըմբռնեց ծովի շնչառության անորսալի ռիթմը, ծովային ալեբախման զարկը, զգաց ծովային տարերքի վեհությունը և գեղեցկությունը։ Այդ է վկայում թեկուզ և «Սև Ծով» նկարը, որի մասին Կրամսկոյը գրել է. «Սա ամենահոյակապ նկարներից մեկն է, որ ես գիտեմ»։

«Այվազովսկու ստեղծագործության մեջ լայնորեն արտացոլված են ռուսական ռազմա-ծովային նավատորմի թե՛ աշխարհաքային առօրյան և թե՛ հերոսական գործերը։ Այվազովսկու պատանեկական հիշողությունների հետ է կապված «Մերկուրի» երկկայմանի առագաստանավի փառապանծ մարտը թյուրքական նավերի դեմ 1829 թվականին։

«Իր կյանքի վերջում Այվազովսկին հիանալի նկար պատրաստեց նվիրված այդ ճակատամարտին։ Այվազովսկին ժամանակակից է եղել Սինոպի ճակատամարտին և երկու անգամ նկարել է այն։

«1854 թվականին նա գտնվում էր պաշարված Սևաստոպոլում, ռուս հերոսական ծովայինների հետ։ Հետագայում նա տվեց մի շարք նկարներ, որոնք պատկերում են Սևաստոպոլը 1854—1855 թվերի պաշտպանության օրերին։

«Այվազովսկին աշխարհում առաջինն է նկարել շոգենավերի մարտը՝ կապիտան-լեյտենանտ Բուտակովի հրամանատարության տակ գտնվող «Վլադիմիր» ֆրեգատի մարտը թյուրքական տասնութնդանոթավոր «Փերվազ Բահրի» շոգենավի հետ։ Այվազովսկին իր ստեղծագործության մեջ արտացոլել է ոչ միայն ծովային նավատորմի կյանքից վերցրած իրադարձությունները, որոնց ժամանակակից ու ականատես է եղել ինքը, այլև հայտնի ճակատամարտերի մեծ մասը, որոնք տեղի են ունեցել ռուսական նավատորմի ամբողջ պատմության ընթացքում, սկսած «Օլեգի արշավանքից Ցարեգրադի վրա»։

«Այվազովսկին երեք գործ նվիրել է Պետրոս Առաջինին և այն ժամանակվա ռուսական նավատորմին։ Նա պատկերել է նաև Չեշմեի նշանավոր ճակատամարտը։

«Այվազովսկին նկարել է 1827 թվականի հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած նավային ճակատամարտը, երբ ռուսական նավատորմն իր վրա ընդունեց թյուրքական և եգիպտական միացյալ նավատորմի գլխավոր հարվածը։

«...Մեր ժողովուրդը գիտե, գնահատում և սիրում է Այվազովսկու ստեղծագործությունը, որը բռնել է ժամանակի քննությունը։ Հարյուր տարի առաջ Այվազովսկին տվեց իր նշանավոր նկարը, «Իններորդ ալիքը»։ Այսօր մեր երկրում յուրաքանչյուր դպրոցական գիտե այդ նկարը։ Դրա մեջ է Այվազովսկու արվեստի անթառամ երիտասարդության, կենսասիրության և անմահության երաշխիքը»։

Երևանի մեր Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահը մեծ արվեստագետից ունի հանրածանոթ «Թասոսը» և «Նոյի վայրէջքը Արարատից» նկարները և ուրիշ երկու պաստառներ, իսկ պատկերասրահը՝ նրա բազմաթիվ ստեղծագործությունները։

1. Սովետական Հայաստան, 1 մայիսի 1950 թ.։

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Հայկ. ՍՍՌ Պետ. կենտ. արխիվի
ավագ գիտ. աշխատող)

# ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՎԱՆԿԱՐԻՉ Հ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՀԵՏ

*Հայկ. ՍՍՌ Պետ. կենտ. արխիվում մեզ հաջողվել է հայտնաբերել մի շարք վավերագրեր, որոնք կապված են աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու կյանքի և գործունեության հետ և կարող են օգտակար լինել մեծանուն նկարչի ընդարձակ կենսագրությունը կազմելու համար։ Հայտնաբերված այդ վավերագրերը, հիմնականում, վերաբերվում են երեք կարևոր խնդիրների. ա) Այվազովսկու ամուսնալուծությանը, բ) նրա տոհմական ծննդաբանությանը և գ) նրա հասարակական գործունեությանը՝ կապված հայկական կոտորածների հետ։*

*Այվազովսկու ամուսնալուծությանը վերաբերվող վավերագրերից երևում է, որ նա սկզբում ամուսնացած է եղել լյութերադավան անգլուհի Յուլիա Գրեվսի հետ։ Այս ընտրությունը անհաջող է եղել, և Այվազովսկին չկարողանալով ապրել անգլուհու հետ՝ վերջինիս ծանր բնավորության պատճառով, 1870 թվին դիմել է Էջմիածին և ամուսնալուծություն խնդրել, ցանկանալով ամուսնանալ Աննա Սարգսյանի հետ (Եվդոկիա քաղաքից)։ Այվազովսկու ամուսնալուծման խնդիրը Էջմիածնում քննվել է ավելի քան 17 տարի և լուծվել Խրիմյան Հայրիկի միջամտությամբ և թույլատրվել նրա կրկնամուսնությունը։*

*Երկրորդ խմբի նյութերը կապված են Այվազովսկու ծննդաբանության հետ։ Սիմֆերոպոլի ճարտարապետ Համբարձում Կարապետյանը բանակցություններ է վարել Խորեն եպիսկ. Ստեփանեի հետ՝ կազմելու Այվազովսկու գիտական կենսագրությունը, հաղորդելով այդ մասին արժեքավոր տեղեկություններ նրա ծնողների և նախնիքների մասին։*

*Երրորդ խումբը, որ մենք հրատարակում ենք այժմ, Խրիմյան Հայրիկի և Այվազովսկու նամակագրությունն է և ունի հասարակական բնույթ։*

***

*1893 թվին Էջմիածնի թափուր գահի վրա դահակալ է ընտրվում և Էջմիածին ժամանում Մկրտիչ Ա. (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսը։ Ի շարս հազարավոր շնորհավորական հեռագրերի ու նամակների, մենք գտնում ենք նաև Հովհաննես Այվազովսկու Թեոդոսիայից ուղարկած շնորհավորական հետևյալ նամակը։*

ՎԵՀԱՓԱՌ ՏԷ՛Ր,
ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

*Լուր ընտրութեան Վեհափառութեանդ յաթոռ Լուսաւորչի հրճուանօք եւ ցնծութեամբ լցուցին սիրտ իմ որպէս եւ բոլոր աշխարհի ազգայնոցս, որոց համակրանքը եւ սէրը ի վաղուց հետէ ըստ արժանւոյն վայելած է Սրբութիւնդ բազմամեայ եւ բազմարդիւն գործունէութեամբ յօգուտ ազգիս եւ եկեղեցւոյ։ Մեր Պեսարապիոյ վիճակը առաջինն է Ռուսաստանի հողին վրայ, որ բարեբախտութիւն ունի շնորհաւորել զսուրբ գալուստն Վեհափառութեանդ։ Ցաւելով կը ցաւիմ որ հասակս եւ ըստ մասին առողջութիւնս չեն ներեր ինձ անձամբ փութալ ընդառաջ Ձեր վասն շնորհաւորութեան սրբազնագոյն Հօրդ, որ գուցէ Աստուած արժանի արասցէ յայլ դէպ ժամանակի։ Իսկ այժմս կրկին շնորհաւորելով զգալուստ շնորհաբեր Վեհափառութեանդ, ի բոլոր սրտէ (մաղթեմ) յաջող ճանապարհորդութիւն ի Սուրբ Էջմիածին եւ երկար կեանք ի մխիթարութիւն եւ ի փառս ազգիս Հայոց։*

*Աստուածարեալ Աջոյդ համբոյր մատուցանելով մնամ խոնարհ ծառայ՝*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Ի Թէոդոսիա, 24 օգոստոսի 1893 ամի.
Առ Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տէր Մկրտիչ Ա.

(Պետ. կենտ. արխիվ, ֆոնդ № 56, վարչական բաժին, գործ № 167, էջ 80)

***

Շնորհավորական այս գրության կապակցությամբ կաթողիկոսը օրհնության կոնդակ է ուղարկել Այվազովսկուն։ Վերջինս ստանալով այն, 1893 թվի դեկտեմբերի 18-ին, փոխադարձաբար, նամակ է ուղարկել, շնորհավորել է գալիք նոր տարին և առողջություն մաղթել Վեհին։ Նա իր այդ նամակում Խրիմյանին հայտնել է իր բաղձանքը՝ սեփական աչքերով տեսնելու նրան։ Ապա նա գովաբանել է Խորեն եպիսկոպոս Ստեփանեի գործունեությունը Թեոդոսիայում ու Ղրիմի Ս. Խաչ վանքում։

Ահա՛ և այդ նամակը։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ամենախորին յարգանօք եւ ջերմ շնորհակալու մտօք ընկալեալ զկոնդակ օրհնութեան Սրբութեանդ, փութամ շնորհաւորել զառաջիկայ տարեմուտ 1894 ամի, մաղթելով երկար կեանս եւ կատարեալ առողջութիւն Վեհիդ՝ յուրախութիւն եւ ի պարծանս ազգիս Հայոց, որոյ երախտագիտութիւն եւ սէր որդիական վայելէք ի հերուն հետէ փոխարէն բազմամեայ հայրախնամ գործոցդ, ի փառս նոյն ազգիս եւ Եկեղեցւոյ։ Ուստի մեծ է, Վեհափառ Տէր, փափագ ժողովրդեանս աչօք տեսանել զՀայրապետն իւր՝ թէ՛ ի հեռաւոր վիճակս եւ թէ՛ ի մօտակայս։ Ի թիւս առաջնոցն գտանիմք եւ մեք, յուսալով զի Վեհափառութիւնդ արժանացուսցէ եւ զմեզ այցելութեան Ձերոյ, յանհնարին ուրախութիւն եւ մխիթարութիւն սրտից մերոց պանդխտացս։

Ոչ աւելորդ համարիմ, յայս դէպս՝ յայտնել զուրախութիւն իմ վասն գտանելոյ Խորէն վարդապետ Ստեփանէի ի թիւս միաբանաց Վեհափառ տեառնդ, որով բացցի նմա, անշուշտ, առաւել ընդարձակ ասպարէզ. քան զայն յորում գործէր նա աստ, ի միջի բազմատեսակ արգելանաց։ Այնու ամենայնիւ, աննկուն գործունէութեամբ իւրով, ի Թէոդոսիա եւ ի Սուրբ Խաչ վանս Ղրիմու, յաղթեալ զխոչընդոտս, անմոռանալի յիշատակ եթող ի միջի մեր նորոգութեամբ եւ բարեկարգութեամբ բազմադարեան աւերակ տաճարին մերոյ, բարուոքութեամբ վարժարանիս եւ մանաւանդ ստէպ քարոզութեամբ ազդու բանիւք լի առնէր զամայացեալ եկեղեցիս հաւատացելօք, եւ բացի յայնմանէ, ջանայր միշտ ուղղել զբարս եւ զվարս ժողովրդեան։ Զայսմ ամենայնէ պարտ անհրաժեշտ համարիմ վկայել առաջի Հովուապետիդ։

Աստուածարեալ աջոյդ ի համբոյր խոնարհեալ մնամ Վեհափառութեանդ հարազատ որդի՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Թէոդոսիա, ի 18 դեկտեմբերի 1893 ամի

(Պետ. կենտ. արխիվ, ֆոնդ № 56, 1-ին ցուցակ, գործ № 37, էջ 134)

***

1895 թվին Խրիմյանը ցարին ներկայանալու համար մեկնում է Պետերբուրգ։ Ճանապարհին երկար կանգ է առնում Նոր Նախիջևանում։ Այվազովսկին իմանալով Վեհափառի Նոր Նախիջևանում գտնվելը, 1895 թվի մարտի 20-ին մի նամակ է գրում և հայտնում, որ ինքը վաղուց ի վեր փափագել է տեսնել նրան և հույս ունի, որ կկարողանա հանդիպել նրան Նոր Նախիջևանում։ Բերում ենք ստորև այդ նամակը։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ.

Ձերոյդ Սրբութեան բազմավաստակ կենաց համաշխարհեայ համբաւը եւ մեծամեծ գործերը որ կատարած էք յօգուտ ազգին շատոնց ի վեր գրաւած են իմ սիրտս, ուստի Ձեր Սրբութեան Աջը համբուրելը միշտ եղած է իմ ամենամեծ փափագս։ Իմանալով ցնծութեամբ որ Ձեր Սրբութիւնը ժամանակաւոր եկած էք Նախիջեւան քաղաքը, ես մտադիր էի անձամբ ներկայանալու Ձեզ։ Բայց ստիպուած լինելով անձնային գործերուս պահանջօքը այսօր Թէոդոսիա մեկնելու, ես կարող եմ Նախիջեւան հասնելու միայն ապրիլի տասին, յուսալով որ Ձեր Սրբութիւնը դեռ այնտեղ կը գտնեմ։

Ձերոյդ Վեհափառութեան սուրբ օրհնութիւնը խնդրելով և Աջդ համբուրելով, մնամ նուաստ ծառայ Ձերդ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Ս. Պետերբուրգ, 20 մարտի 1895 թ.

(Պետ. կենտ. արխիվ, ֆոնդ № 56, վարչակազմակերպչական բաժին, գործ № 184, էջ 14)

***

Մկրտիչ կաթողիկոսի նույն թվի նոյեմբերի 22-ի Այվազովսկուն ուղղված կոնդակից տեղեկանում ենք, որ վերջինս վեհափառին իր շքախմբով Թեոդոսիա է հրավիրել և մեծ պատվի ու հյուրասիրության արժանացրել։ Ի պատիվ կաթողիկոսի, Էջմիածնի նորակառույց թանգարանին է նվիրել իր հռչակավոր «Տիեզերք» նկարը։

Այդ հոյակապ նկարի նվիրման կապակցությամբ Հայրապետը առանձին կոնդակով իր ջերմագին շնորհակալությունն է հայտնել նկարչին, միաժամանակ ցանկություն հայտնել, որ այդ երկնային ձիրքով օժտված մեծագործ ճարտարարվեստ մարդը այցելի Մայր Աթոռ, տեսնի այն մեծ լեռը, որի վրա հանգավ Նոյի տապանը և նկարի այն։ Դժբախտաբար, Այվազովսկուն չի հաջողվել գալ Հայաստան, աչքով տեսնել իր հայրենի հնությունները և իր փափագած Մասիսը։

## ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ...

Նորին Գերազանցութեան մեծահռչակ ծովանկարիչ եւ պատուական բարեկամի մերոյ Պարոն Յովհաննու Կոստանդինեան Այվազեանց, հարազատ որդւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի նուիրեմք յԱռաքելական Աթոռոյս ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Զառ ի Աստուածուստ ի քեզ գեղեցիկ ամբաւ շնորհացն, որով ի հիացմունս կարգես զամենեսին զհայեցողս հրաշից ճարտարարուեստ քոյդ մատանց, նկարացն ասեմ քոյոց փառաւորացն որք զարդարեն կարդիս զպալատս եւ զթանգարանս պետութեանց աշխարհիս, ապաքէն, տան մեզ փառատրել զանուն շնորհողին քեզ զայդչափ ձիրս շնորհաց, որովք փառաւորեալ եւ բարձրացեալ կաս արժանապէս իբրեւ զմին ի մեծագործաց աշխարհիս եւ գիտես տալ զկայսերն կայսեր, զԱստուծոյն Աստուծոյ։

Ցնծութիւն բազում եղեւ հոգւոյ մերում տեսեալ զհարազատիդ սրտաբուխ նուէրն ի զարդ նորակառոյց թանգարանի Մայր Աթոռոյս, որ հասեալ մեզ անեղծ եւ ապահով։ Պատկեր չքնա՛ղ եւ հոյատիպ, յորում արտայայտեն իսկ ողորմութիւն աստուածային առ ստեղծագործեալն մերմէ աշխարհս. յորում Աստուած ստանձնեալ կայ իջանելով փառաւորութեամբ հրեշտակաց տարածեալ զամենահզօր բազուկս իւր ի վերայ նորոյ երկնի եւ նորոյ երկրի արտափայլեալ լուսովն ի տեղւոջէ Երուսաղեմի, յորմէ հանդերձեալ էր լոյս գերազանց Փրկչին ամենայն աշխարհի։

Ոչ այնքան ընդ պատկերն հիացեալ, որքան ընդ ջերմեռանդութիւն նկարողիդ եւ նուիրողիդ եմք զգացեալ, որ իբրեւ որդի հաւատարիմ եւ հարազատ, փութացեր երախտահատոյց լինել առ Մայրն Աթոռ պանծալի, ընդ որոյ հովանեաւ կեաս եւ վայելես զհոգեւոր բարիս, վասն ցանկամք լինել Ձեզ տեսանել զցանկալին համայնից հայոց զԱրարատեան Մայր Կաթողիկէն եւ զլեառն մեծ յորոյ վերայ հանգեաւ տապանն ապրեցուցիչ պահելով զմնացորդս ի համատարած ջրհեղեղէն։

Արդ, մնա մեզ այսու հայրապետական կոնդակաւ յայտնել ջերմեռանդն շնորհակալիս մեր՝ Ձեզ եւ սիրասուն ամուսնոյդ, հոգեւոր դստերն մերոյ, վասն անգնահատելի նուիրաբերութեան եւ վասն սիրալիր ընդունելութեան, որով ընկալայք եւ հիւրասիրեցիք զմեզ եւ զհետեւորդսն մեր, թողլով ի հոգիս մեր զքաղցր եւ զանջնջելի իմն յիշատակս։

Տէր զարդիւնալի կեանս Ձեր ի պարծանս ազգի մերոյ եւ Եկեղեցւոյ, երկարելով եւ պահպանելով յամենայն արկածից եւ պատահարաց, շնորհք եւ խաղաղութիւն Ամենասուրբ Երրորդութեանն իջցէ եւ հանգիցէ ի վերայ Ձեր անսպառ արարեալ զողորմութիւն իւր ի տանէ Ձերմէ։

Ի 22 Նոյեմբերի 95 թ.
Համար 990.

(Պետ. կենտ. արխիվ. ֆոնդ № 56, կոնդակագրային բաժին, գործ № 310, էջ 104)

Այվազովսկու «Տիեզերք» նկարը պատկանում է աշխարհահռչակ նկարչի ստեղծագործությունների թվին։

«Տիեզերք» նկարը ներկայացնում է երկրագունդը՝ շրջապատված մոլորակներով և փոքրադիր աստղերով։ Պայծառ ճառագայթներով լուսավորված ամպերի միջով սլանում է տիեզերքի Ստեղծողը իրեն շրջապատող հրեշտակներով։ Ի դեպ, 1894 թվին Պետերբուրգում ցուցադրվելիս, այցելուների մեջ խոսակցության առարկա է դառնում՝ մոլորակների տեղադրությունը երկրագնդի հանդեպ՝ նկարչի ոչ ճիշտ պատկերացման մասին։ Մինչդեռ հայտնի աստղագետ Գլազենապը ուսումնասիրելով այդ չքնաղակերտ պատկերը՝ գերվում է նրանով և իսկական գիտնականի հատուկ համեստու-

*թյամբ հայտնում է. «Իրոք, որ մենք աստղաբաշխներս այլապես ենք պատկերացնում տիեզերքը, քան այն, ինչ որ ներկայացրած է սույն պատկերում։ Բայց այն, ինչ որ գիտության մեջ համարվում է ենթադրություն, նկարչի հանճարը գուցե ավելի ճիշտ վճռում է իր երևակայության ուժով»։ Այվազովսկու նվիրած այս նկարը այժմ Հայկ. ՍՍՌ Մատենադարանի սեփականություն է կազմում և կախված է ձեռագրատանը։*

***

*Օսմանյան բռնապետությունը, հետևելով իր հայաջինջ քաղաքականության, կոտորում էր արևմտյան Հայաստանի հայերին։ 1895 թվի ջարդերը հասել էին այնպիսի չափերի, որ ցնցվել էր ո՛չ միայն հայությունը, այլև օտար աշխարհը։*

*Այվազովսկու 1896 թվի սեպտեմբերի 8-ին Հայրիկին ուղղած նամակից երևում է, որ վշտահար Կաթողիկոսը առաջարկել է աշխարհահռչակ նկարչին նկարել կարմիր գույնով հայոց կոտորածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար Հայոց Հայրիկին անբրակաց վերայ։ Դժբախտաբար, երիմյանի նամակը մեզ չհաջողվեց հայտնաբերել։ Երիմյանի այդ առաջարկը մենք իմանում ենք Այվազովսկու պատասխան նամակից, որը բերում ենք ստորև։*

ՎԵՀԱՓԱՌ ՏԷ՛Ր,

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏ.

*Պատիւ մեծ ունեցայ ստանալու Ձեր սրբատառ գրութիւնը։ Մխիթարուած եմ և երախտապարտ, որ շնորհ ունիք առ իս եւ անուշադիր չթողիք իմ խնդիրը եղբօրս նպատակոպաս Սանեփաննէի վերաբերմամբ։ Թող տուք ինձ յուսալ, որ Ձեր Վեհափառութեան պատրաստած փառաւոր պաշտօնն անշուշտ համապատասխան պիտի լինի նորա ընդունակութեանց, ուր պիտի կարողանայ օգտակար լինել Հայոց եկեղեցւոյն եւ ժողովրդեան։*

*Վեհափառ Տէ՛ր, ի վաղուց սրտիս փափագն է այցելութիւն անել Մայր Աթոռոյդ եւ դորա Վեհափառ Գահակալին, եւ կը ցանկամ, որ Տէրը յաջողէ միջոց գտնելու փափագս կատարելու։*

*Ձեր Օծութիւնը շատ զգայուն եւ գեղեցիկ առաջարկութիւն կ՚անէք ինձ նկարել կարմիր գունով Հայոց կոտորածի պատկեր, արեան դաշտեր եւ լեռներ եւ վշտահար Հայոց Հայրիկին անբրակաց վերայ։ Եթէ Տէրը կը հաճի ինձ դեռ մի քանի կեանք պարգեւել, կու գայ օր, որ կը կատարեմ այդ սրտաշարժ առաջարկութիւնը։ Այո, Վեհափառ Տէ՛ր, խորին ցաւով վշտացած է սիրտս անբախտ Հայոց չլսուած չտեսնուած կոտորածով։ Ձեր Վեհափառութիւնը այդտեղ, մեք այստեղ, եւ ամէնքն իրենց տեղեր, կու լանք եւ կ՚ողբանք մեր թշուառ կորստեան մատնուած Հայոց վերայ եւ կը խնդրենք աստուածային գթութիւն։*

*Կը խոնարհիմք ես եւ ամուսինս ի համբոյր Ս. Աջոյդ, մաղթելով առաւել մխիթարական օրեր։*

*Ձեր Վեհափառութեան խոնարհ ծառայ եւ որդի՝*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Թէոդոսիա, սեպտեմբերի 8, 1896 թ.

(Պետ. կենտ. արխիվ. ֆոնդ № 56, կալոնիկենցադոյին բաժին, գործ № 349, էջ 122)

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

*Երևանի հասարակայնությունը նշեց Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ, ՍՍՌՄ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ Մարտիրոս Սարյանի ծննդյան 70-ամյակը։*

*Սարյանն իր մասնագիտական նախնական ուղղությունը ստացել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, աշակերտելով մի շարք ռուս ականավոր նկարիչների, այդ թվում Վ. Սերովին և Կ. Կորովինին։*

*Իր ստեղծագործությունների թեմա ընտրելով Արևելքը, հատկապես Հայաստանը, Սարյանը 1919—1923 թվերին կատարում է մի շարք ճանապարհորդություններ դեպի Հայաստան, Եգիպտոս, Պարսկաստան և այլ վայրեր։ Այդ ճանապարհորդությունների ընթացքում նա մոտից ուսումնասիրում է տեղի ժողովուրդների կյանքը, մարդկանց և բնությունը, հանդես գալով որպես ռեալիստ նկարիչ։ Այդ շրջանի նրա լավագույն նկարներից են՝ «Փյունիկյան արմավենիներ», «Եգիպտական կանայք», «Կանաչ ծաղիկները» և այլն։*

*Սովետական իշխանության տարիներին լիովին բացահայտվում են Սարյանի ստեղծագործական ուժն ու տաղանդը։ Սարյանը խորապես վերանայում է իր անցած ստեղծագործական ուղին ինչպես թեմատիկայի, նույնպես և արտահայտության միջոցների խնդրում։ 1921 թվին նա տեղափոխվում է և հաստատվում Երևանում, նկարչի ստեղծագործության թեման է դառնում հայրենի բնությունը, Սովետական Հայաստանի վերակառուցվող կյանքը, առաջավոր մարդիկ և այլն։ Նկարչի արվեստը հարստանում է և ընդգրկում գեղանկարչության և գրաֆիկայի գրեթե բոլոր ժանրերը։*

*Ստեղծագործական այս բեկումն իր արտահայտությունն է գտել Սարյանի գրեթե բոլոր գործերում, որ նա կերտել է 1920-ական թվականների երկրորդ կեսից սկսած, հատկապես Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ձևավորման մեջ, որն արժանացավ բարձր գնահատականի՝ Ստալինյան մրցանակի։*

*Սարյանը հայ ժողովրդի և Հայաստանի բնության ճշմարտացի պատկերողն է։ Նա նկարել է նշանավոր գիտնականների և շարքային բանվորների, ծաղկած դեղձենիներ ու լեռնային ջրվեժներ, նոր կամուրջների կառուցումներ, աշունն Արարատյան դաշտում ու Թուրքմեն կոլխոզնիկի բակը և այլն։ Նրա նկարներում միշտ ու ամենուրեք կյանքն արևով է ողողված։*

*Չափազանց ուշագրավ է Սարյանի ստեղծագործական հարուստ պատկերասրահը։ Իր նկարներում արվեստագետը խոսում է իր ժամանակակիցների և եկող սերունդների հետ։*



Մարտիրոս Սարյան

*Ահա կանգնած է ձեր առաջ Թորոս Թորամանյանի պատկերը, Թվում է հնագույն մեր հուշարձաններից պոկված, քարակոփ մի ծանր բեկոր է։ Նրա կողքին նայում է ձեզ իր երազուն ու շեղակի հայացքով ակադեմիկ Թամանյանը, որ կարծես տեսնում է*

վերածնված ժողովրդի մայրաքաղաքի ավարտուն պատկերը։ Սարյանի ստեղծագործ վրձինի ուժով պատկերված են զինվորներ ու սպաներ, զորավարներ ու կոլխոզնիկներ, բանաստեղծներ, բանվորներ, երաժիշտներ ու օդաչուներ։ Տարբեր են այդ մարդիկ իրենց դեմքերով ու խառնվածքով, բայց ամեն մեկի մեջ կա մի բան որ ընդհանուր է բոլորի համար։— Դա ստեղծագործական եռանդի և կամքի մշտական արտահայտությունն է։

Սովետական ժողովուրդը և կառավարությունը, բարձր գնահատելով Սարյանի ստեղծագործական ու հասարակական աշխատանքը, նրան պարգևատրել են երկու անգամ Լենինի շքանշանով, «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Պատվո նշան» շքանշաններով։ Հայ ժողովուրդը բարձր գնահատելով իր արժանավոր զավակին, ընտրել է նրան ՍՍՌՄ Գերագույն Սովետի երկրորդ և երրորդ գումարումների դեպուտատ։

***

Մայիսի 3-ի երեկոյան, մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչները, արվեստի, գրականության և գիտության գործիչները, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները հավաքվել էին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում՝ հոբելյարին մեծարելու համար։ Ներկա էին նաև Մոսկվայի ու եղբայրական Վրաստանի նկարիչների ներկայացուցիչները։

Հանդիսավոր երեկոն ներածական հակիրճ խոսքով բաց է անում բանաստեղծ Գ. Բորյանը։

Ներկա եղողների բուռն ծափահարությունների տակ ընտրվում է պատվավոր նախագահություն։

Հոբելյարի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Վ. Հարությունյանը։ Նա մանրամասնորեն պատմում է նկարչի ստեղծագործական մեծ ուղու մասին, ա՛յն մարդու, որի կտավները շնչում են կենսուրախ օպտիմիզմով և սովետական հայրենասիրության զգացմունքով։

Հայաստանի կառավարության անունից հոբելյարին ողջունում է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Բ. Աստվածատրյանը, ՍՍՌՄ Մինիստրների սովետին կից Արվեստի գործերի կոմիտեի կողմից՝ Նիկոֆորովը, Սովետական նկարիչների միության կողմից՝ Կրավչենկոն, Վրաստանի նկարիչների կողմից՝ արվեստի վաստակավոր գործիչ Մամալաձեն։ Ողջույններով հանդես են գալիս նաև նկարիչ Է. Իսաբեկյանը, Ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանը, գրող Ս. Զորյանը և ուրիշները։

Հոբելյարին հանձնվում են շնորհավորական ուղերձներ ռեսպուբլիկայի կուլտուրական և հասարակական զանազան կազմակերպությունների կոլեկտիվների կողմից։

Սովետական Միության բոլոր ծայրերից, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի հասցեով ստացվել են ողջույնի ավելի քան 200 հեռագրեր։ Հեռագրեր են ուղարկել՝ Ադմիրալ Իսակովը, Բանակի գեներալ Բաղրամյանը, գրող Մ. Շահինյանը, կոմպոզիտորներ Ա. Խաչատրյանը, Դ. Շոստակովիչը, նկարիչ Ս. Գերասիմովը, քանդակագործ Մուխինան և ուրիշները։

Իր պատասխան խոսքում հոբելյարը շնորհակալություն է հայտնում կառավարությանը՝ արվեստի գործիչների նկատմամբ ցուցաբերվող փացառիկ հոգատարության համար և իր երախտագիտության զգացմունքն է հայտնում հանդեսին ներկա գտնվող և մեծարող հասարակայնությանը։

Վերջում տեղի է ունենում մեծ համերգ։

# ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

*Ռեսպուբլիկայի բարձրագույն դպրոցներում շարունակվում են պետական քննությունները և սեսիաները։*

*Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում քննություն են տալիս մոտ երկու հազար ուսանողներ։ Նախնական արդյունքները ցույց են տալիս, որ տարվա ընթացքում ուսանողները ձեռք են բերել բարձր գիտելիքներ։ Հարյուրավոր ուսանողներ ստացել են գերազանց և լավ գնահատական։*

*Այս տարի համալսարանն ավարտում են 356 բիոլոգներ, պատմաբաններ, ֆիզիոլոգներ, քիմիկոսներ, տնտեսագետներ և այլ մասնագետներ։*

*Հաջող են անցնում քննությունները նաև մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում։*

*Ռեսպուբլիկայի 14 բուհերն այս տարի երկրին կտան ավելի քան 1,800 շրջանավարտ։*

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

*Այս տարի Երևանում կառուցվում են դպրոցական մի շարք նոր, բազմահարկ շենքեր։*

*Յոթնամյա դպրոցների շենքերն են կառուցվում Մոլոտովյան ռայոնում՝ Մետաքսաթելի ֆաբրիկայի մոտ, Սպանդարյան ռայոնում՝ Թաղրամյանի փողոցի վրա։ Միջնակարգ դպրոցների շենքերն են կառուցվում Ամիրյանի փողոցի վրա և Այգեստանում։*

*Այդ շենքերից հինգը այս տարի կհանձնըվեն շահագործման։ Նրանք ունենալու են բազմաթիվ դասասենյակներ, լաբորատորիաներ, կաբինետներ, դահլիճներ և այլ հարմարություններ։*

*Դպրոցական այդ շենքերի շինարարության համար նախատեսված է ծախսել ավելի քան 9 միլիոն ռուբլի։*

## ՀԱՅ ՄԵԾ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը կազմակերպել է հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Գ. Թոփյան (նախագահ), Մ. Շաթիրյան, Ա. Գոզալյան, Օ. Գուլազյան, Ավ. Ավետիսյան, Վ. Վաղարշյան, Տ. Շամիրխանյան, Վ. Վարդանյան, Ավ. Իսահակյան, Վ. Համբարձումյան, Ավ. Իսակովյան, Վ. Համազասպյան, Լ. Ջոհրաբյան, Մ. Մկրյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Բեկ-Նազարով, Հ. Մամիկոնյան, Վ. Աճեմյան, Ս. Թուրյան, Ա. Նազ, Շահսուրուհլի։*

## Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՊԻԵՍՆԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Մոսկվայի «Իսկուսստվո» պետական հրատարակչությունը լույս է ընծայել հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի պիեսների ժողովածուն, որի մեջ մտնում են դրամատուրգի երեք լավագույն գործերը՝ «Պեպո»ն, «Խաթաբալա»ն և «Էլի մեկ զոհ»։*

*Ժողովածուում զետեղված է «Պեպո»ն Վահան Տերյանի թարգմանությամբ և Մ. Գորկու խմբագրությամբ։ Թարգմանությունը կատարվել է 1915 թվին, «Հայ գրականության ժողովածուի» համար։ «Խաթաբալա» պիեսը թարգմանել են Ս. Սարինյանը և Ս. Խեստուրովան, իսկ «Էլի մեկ զոհը»՝ Ա. Արշարունին և Ա. Գլեբովը։ Ժողովածուին կցված է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանի՝ մեծ դրամատուրգի կյանքի ու ստեղծագործության ուղին բնութագրող հոդված։*

## ՔԱՌԱՁԱՅՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Արտաշատի կուլտուրայի տանը կազմակերպվել է քառաձայն երգեցիկ խումբ, բաղկացած տեղի շնորհալի ուժերից։

Երգեցիկ խմբը, որի գեղարվեստական ղեկավարն է Մ. Քրիշչյանը, այժմ եռանդուն կերպով պատրաստվում է, որպեսզի իրավունք նվաճի 1951 թվականի օլիմպիադային մասնակցելու համար։

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ

Երևանի Ա. Ա. Ժդանովի անվան Ռուսական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը հայ պոեզիայի մեծանուն վարպետ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ավետիք Իսահակյանի հետ։

Ընկ. Մ. Դալլաքյանի բացման խոսքից հետո, Ավետիք Իսահակյանի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Հ. Ղանալանյանը։ Ելույթներ ունեցան նաև Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր, վերջերս Երևան ժամանած Հ. Կուրիկյանը, դասախոս Տ. Մելիք-Ստեփանյանը և ուսանողուհի Օ. Միքայելյանը։

Այնուհետև հանդես եկավ Ավ. Իսահակյանը։ Վերջում ուսանողական գիտական ընկերության նախագահ Մ. Դալլաքյանը հայտնեց Ավ. Իսահակյանին ընկերության խորհրդի պատվավոր անդամ ընտրելու որոշումը և անդամության տոմս հանձնեց բանաստեղծին։

## ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒՄ

Երևանի կենդանաբանական այգին բնակչության սիրելի վայրերից մեկն է։ Հատկապես ամառվա ամիսներին շատ երևանցիներ ամեն օր գալիս են տեսնելու կենդանաբանական այգում տեղավորված հարյուրավոր վայրի գազաններին, կենդանիներին, թռչուններին։

Կենդանաբանական այգում կան փիղ, առյուծներ, արջեր, վագրեր, կապիկներ, չայլամներ և այլ կենդանիներ ու թռչուններ։

Հունիսի 7-ին կենդանաբանական այգին Մոսկվայի կենդանաբանական այգուց, Ստալինաբադից, Հեռավոր Արևելքից, ինչպես նաև Համբուրգից, Պրագայից, Վարշավայից և այլ վայրերից ստացավ բազմաթիվ կենդանիներ՝ կապիկներ, թռչուններ, բծավոր եղջերուներ, ջրշուն, որսորդական շներ, ոսկեզօծ ֆազաններ, սիրամարգներ, վայրի ոչխարներ, արծիվ և այլ կենդանիներ ու թռչուններ։ Մի քանի օրից ստացվելու են նաև վագր, ընձառյուծ, հնդկական փիղ, զանազան կապիկներ։

Այժմ լայն աշխատանք է կատարվում այգու շինարարության ու բարեկարգման ուղղությամբ։

Ասֆալտապատվում և կանաչապատվում է այգու տերիտորիան, կառուցվում են նոր շենքեր կենդանիների և հատուկ շենք փղերի համար։ Այդ շենքերի կառուցումը կավարտվի մինչև հունիսի վերջը։ Բացի այդ, կառուցվում են թռչունների համար ձմեռելու շենք, օձերի, առյուծների և այլ կենդանիների համար շենքեր։

Ստացվելու են կարապներ, որոնց համար նախատեսված է այս տարի սկսել լճակի կառուցումը։

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒՄ

Պիոներների, դպրոցականների, երեխաների, աշխատավորների սիրած վայրերից մեկն է Երևանի Մանկական երկաթուղու կուլտուրայի և հանգստի պարկը։ Մայիսի 2-ին բացվել է Մանկական երկաթուղին, որի ծառուղիները, անցուղիները, հրապարակները, շենքերը զարդարված էին տոնականորեն։ Առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան 8-ը աշխատում էր Մանկական երկաթուղին, որին սպասարկում էին բացառապես պիոներները։ Տեղական ռադիոհանգույցի միջոցով կազմակերպվել էին հաղորդումներ ու համերգներ։ Գործում էր գրադարան-ընթերցարանը։ Սպորտային խաղերի հրապարակներում տեղի էին ունենում վոլեյբոլի, բասկետբոլի, թեթև ատլետիկայի մրցումներ դպրոցական թիմերի միջև։

## ՆՈՐ ԿԻՆՈ-ԹԱՏՐՈՆ

*Միկոյանի պողոտայի և Ալավերդյանի փողոցի անկյունում բացվեց «Երևան» կինո-թատրոնը։ Կինո-թատրոնը սարքավորված է սովետական կատարելագործված ապարատուրայով։ Այստեղ օրվա ընթացքում ցուցադրվելու են կինոխրոնիկաներ, իսկ երեկոները՝ լիամետրաժ նկարներ։*

## ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐ

*Երևանի Կինոստուդիան ավարտել է «Կուբանի Կազակները» երաժշտական կինոկոմեդիայի հայերեն կրկնօրինակը։ Դա վեցերորդ կինոնկարն է, որի հայերեն կրկնօրինակը պատրաստվել է այս տարի։ Ստուդիան այժմ ձեռնամուխ է եղել «Նրանք ունեն Հայրենիք» գեղարվեստական կինոնկարի հայերեն կրկնօրինակի պատրաստմանը։*

## ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՍԵԶՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

*Մայիսի 2-ից Հայաստանում սկսվեց կուրորտային սեզոնը։ Կիրովականի սանատորիան ընդունեց բուժվողների առաջին խումբը՝ թվով 129 մարդ։ Մայիսի 5-ից սկսեց գործել նաև Արզնի կուրորտը։ Արդեն բացվել է Ախթալայի հանգստյան տունը։ Աշխատավորների ամառային հանգստի և կուրորտային բուժման համար ծախսվելու է ավելի քան 20 միլիոն ռուբլի։*

## ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՆՈՐ ՊԱՐԿ

*Նոր Արեշ ավանում այս տարի զգալի աշխատանք է կատարվել կուլտուրայի ու հանգստի պարկ հիմնելու համար։ Տասնութ հեկտար տարածության վրա արդեն տնկվել է մի քանի հազար դեկորատիվ ծառ, փորվել և մաքրվել են ջրատար առուները։ Նոր պարկը ունենալու է ամառային կինո-թատրոն, լողարան, դրվելու են ցայտաղբյուրներ և քանդակներ։*

## 50 ՀԱԶԱՐ ՌՈՒԲԼՈՒ ՇԱՀՈՒՄ

*ՄՏ կայանի տրակտորիստ Սարիբեկ Սուշյանը ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման երկրորդ պետական փոխառության 039843 սերիայի № 04 պարտատոմսով շահել է 50 հազար ռուբլի։ Շրջանում մեծ թվով կոլխոզնիկներ շահել են հազարական ռուբլի։*

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄՈՆՈՒՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

*Արագորեն առաջ է տարվում Երևանում կառուցվող Հաղթանակի մոնումենտի շինարարությունը։ Արդեն ավարտելու վրա է մոնումենտի պատվանդանի կառուցումը։ Անվանի վարպետ Հ. Քարիմյանի բրիգադան շուտով կվերջացնի պատվանդան-շենքի ճակատի զարդաքանդակները, իսկ Գ. Զոտագյանի գլխավորած մասնագետների խումբը մոնումենտի գլխավոր ճակատում քանդակում է «Հաղթանակ» հսկայական շքանշանը, որն ունի երկու մետր բարձրություն։ Փ. Բալդայանի և Գ. Տերմեչյանի գլխավորությամբ աշխատող բետոնագործները մրցեցին մոնումենտի գմբեթը մայիսի 31-ին ավարտելու համար։*

*Հունիսի 1-ից սկսվեց Ստալինի ֆիգուրայի մոնտաժը։ Այդ նպատակով Մոսկվայից Երևան է ժամանել արձանի հեղինակ՝ ՍՍՌ Միության ժող. նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ, քանդակագործ Ս. Դ. Մերկուրովը հինգ վարպետների հետ միասին։*

*Ստալինի ֆիգուրան ունենալու է 16, իսկ պատվանդանի հետ միասին 50 մետր բարձրություն։ Հաղթանակի Մոնումենտը լրիվ պատրաստ կլինի Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-ամյակի օրը։*

## ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ Ի. Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՄԱՀՎԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

*Երևանի արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ երեկո՝ նվիրված մեծ ծովանկարիչ Ի. Կ. Այվազովսկու մահվան 50-ամյակին։ Երեկոն կազմակերպել էին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության ու տեսության սեկտորը և Հայաստանի կերպարվեստագետների միությունը։ Ներկա էին կերպարվեստագետներ, արվեստի աշխատողներ, ինչպես նաև Գեղարվեստական ինստիտուտի և ուսումնարանի ուսանողներ։*

*Երեկոն բացեց Ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը։ Հանճարեղ ծովանկարիչի կյանքի և գեղարվեստական-հասարակական գործունեության մասին զեկուցեց ընկ. Մ. Սարգսյանը։*

## ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԸ

*Երևանի Միկոյանի անվան պողոտայի վրա օրերս շահագործման հանձնվեց Երկաթուղու Երևանի բաժանմունքի բանվորների բնակելի շենքը։*

*Հայկական ճարտարապետության ոճով կառուցված բազմահարկ շենքը բաղկացած է 3—4 սենյականոց բնակարաններից։ Շենքում բնակություն են հաստատում Երկաթուղու Երևանի բաժանմունքի բանվորները, ծառայողները, ինժեներա-տեխնիկական անձնակազմի ընտանիքները։*

## ԽԻԶԱԽ ՈՐՍՈՐԴԸ

*Որսորդ Միքայել Բեկլարյանը, Թումանյան գյուղի անտառներով տուն վերադառնալիս, գայլի հետքեր է նկատում։ Հետքերով գնալով, շուտով նա հայտնաբերում է գայլի որջը։ Տեսնելով որսորդին, գայլը հարձակվում է նրա վրա, սակայն խիզախ որսորդը կարողանում է ձեռքով խեղդամահ անել գայլին։*

*Բեկլարյանը տեսնելով որ խեղդվածը մայր գայլ է, լայնացնում է որջի մուտքը և այնտեղից դուրս է բերում գայլի 4 կենդանի ձագ։ Խիզախ որսորդ Միքայել Բեկլարյանը որսորդկոոպ միության կողմից արժանացել է դրամական պարգևի։*

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ Ա. Վ. ՍՈՒՎՈՐՈՎԻ ՄԱՀՎԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

*Ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի հիշատակը հարգելու համար Երևանի Սպայի տանը հավաքվել էին մայրաքաղաքի աշխատավորների և Երևանի կայազորի զորամասերի ներկայացուցիչները։*

*Ա. Վ. Սուվորովի մահվան 150-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոն ռեսպուբլիկական հանձնաժողովի կողմից բաց արեց Սովետական Միության հերոս ընկ. Գ. Միքայելյանը։*

*Բուռն խանդավառությամբ ընտրվեց պատվավոր նախագահություն՝ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի քաղբյուրոն, մեր հաղթանակի ոգեշնչող ու կազմակերպիչ Մեծ Ստալինի գլխավորությամբ։*

*Ա. Վ. Սուվորովի կյանքի և ռազմական գործունեության մասին զեկուցեց ընկ. Գ. Ա. Գանիևը։*

*Բուռն և երկարատև ծափահարությունների տակ ընդունվեց ողջույնի նամակ՝ ուղղված Սովետական ժողովրդի Մեծ Առաջնորդ Գեներալիսիմուս ընկեր Ստալինին։*

*Վերջում տրվեց ճոխ համերգ։*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

*ՀՍԳ Միության դահլիճում կայացավ Մոլոտովյան ռայոնի երիտասարդության հանդիպումը երիտասարդ գրողների հետ։*

*Իրենց նոր բանաստեղծությունների ընթերցումով հանդես եկան երիտասարդ բանաստեղծներ Արշ. Սարոյանը, Պ. Սևակը, Վ. Կոտենցը, Ա. Պողոսյանը, Ա. Ալեքյանը, Մ. Ռաշիդը, Ս. Մուրադյանը, Ն. Մովսիսյանը, Ա. Քոչարյանը, Վ. Հարությունյանը, Պ. Միքայելյանը և Հ. Շիրազը։*

*Ներկա եղողները ջերմորեն ընդունեցին երիտասարդ բանաստեղծներին և նրանց առաջ պահանջ դրին ստեղծել սովետական երիտասարդության կյանքը պատկերող նոր, բարձրարվեստ գործեր։*

## ՍՏԱՑԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ

*Ղափան.— Ավարտվեցին Շհարջիկ, Բեխ, Վաչագան և Բաղաբերդ գյուղերի էլեկտրիֆիկացման աշխատանքները։ Իլյիչի լամպերը վառվեցին կոլխոզնիկների բնակարաններում, հասարակական վայրերում ու անասնապահական ֆերմաներում։ Կոլխոզներում մի շարք աշխատանքներ կատարվելու են էլեկտրական էներգիայի միջոցով։*

## ՆՈՐ ՊԱՆՐԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

*Նոր Բայազետ.— Հայկական ՍՍՌ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության Մինիստրության Նոր Բայազետի կաթնամշակման գրասենյակը շրջկենտրոնում և Լճափ գյուղում կառուցում է երկու նոր պանրագործարան։*

*Լճափի գործարանը սպասարկելու է Հարևան Սախան, Աղչալու, Այրևան գյուղերի կոլխոզներին։*

## Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՐԿԵՐԸ ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

*Մ. Աբեղյանի անվան Գրական ինստիտուտը պատրաստում է տպագրության Մ. Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին ռուսերեն հրատարակությունը։ Առաջին հատորը, որի մեջ մտնելու են մեծ դեմոկրատ գրողի գեղարվեստական ստեղծագործությունները, լույս կտեսնի 1950 թվի վերջերին։*

## ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ

*Հոկտեմբերյանի շրջանի կոլխոզներն այս գարնանը հիմնել են 38 հեկտար խաղողի տնկարաններ։*

*Արմավիրի, Հոկտեմբերի, Գետաշենի, Մրգաշատի, Սովետականի և այլ գյուղերի կոլխոզներից յուրաքանչյուրը հիմնել է 2—2,5-ական հեկտար խաղողի նոր տնկարան։*

*Տնկարանները առաջիկա տարիներին տնկերով կապահովեն կոլխոզներին՝ մոտ հազար հեկտար նոր այգիներ ստեղծելու համար։*

## Պ. ՊՌՈՇՅԱՆԻ „ՀԱՑԻ ԽՆԴԻՐ"-Ը ՌՈՒՍԵՐԵՆ

*Մոսկվայի Գազիդիզդատ հրատարակչությունը հրատարակել է Պերճ Պռոշյանի «Հացի խնդիր» վեպը ռուսերեն լեզվով Աննա Հովհաննիսյանի թարգմանությամբ և Ա. Արավանսկի առաջաբանով։ Գիրքը ձևավորել է նկարիչ Մ. Արտալյանը։*

## ՍԿՍՎԵՑ ՁԿԱՆ ՈՐՍԸ

*Սևան-Հայձուկ տրեստի բաժանմունքները սկսեցին ձկան որսը։ Այս տարի կատարվելու է 2 հազար ցենտներով ավելի ձկան որս, քան անցյալ տարի։*

*Մտնելով Սովետական Հայաստանի 30-ամյակի պատվին ծավալված սոցիալիստական մրցության մեջ, ձկնորսները պարտավորվել են տարվա առաջադրանքը կատարել ժամկետից երկու ամիս շուտ։*

## ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը տարիներ առաջ սկսել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրաց ցուցակի հրատարակությունը։ Սակայն 1944 թվի առաջին համարում մեկ ձեռագրի նկարագրությունը լույս ընծայելուց հետո, խմբագրությունից անկախ պատճառով, ցուցակը թերի մնաց։ Այժմ, երբ Մայր Հայրենիքի և Սփյուռքի թեմերից բավականաչափ նվեր ձեռագրեր են ստացված Մայր Աթոռում, հայագետների լայն շրջանի օգտագործման համար դյուրություն ստեղծելու նպատակով, անհետաձգելի խնդիր է դառնել նրանց ցուցակի հրատարակությունը։

Նման ցուցակի հրատարակությունը անհրաժեշտ է և այն տեսակետից, որ յուրաքանչյուր նվիրատու ի վիճակի կլինի իրազեկ դառնալ իր ուղարկած ձեռագրերը Մայր Աթոռում ստացվելու մասին և, մյուս կողմից, խրախուսիչ օրինակ կհանդիսանա ձեռագիր ունեցող մեր հայրենակիցների համար՝ կորստից և փչացումից փրկելու համար իրենց ձեռագրերը ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր ամենից ապահով վայրն է խնամքով պահելու մեր գրասեր պապերից մեզ մնացած նվիրական հիշատակները։

### № 1

### ԳԱՆՁԱՐԱՆ

Թերթերը՝ 303։—Պրակները՝ 22, յուրաքանչյուրը միջին հաշվով 12 թերթից։—Մեծությունը՝ 24×18×6,8։—Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ՝ դրոշմված զծազարդերով։ Ներսից փակցրված է կարմրագույն ալաջա կտավ։—Վիճակը՝ սկզբից և վերջից թերի է, պրակները կազմելու ժամանակ խառնված են։ Կան ցեցակեր թերթեր, որոնց մի մասը նորոգված է։—Գրությունը՝ միասյուն։—Տողերը՝ միջին հաշվով 42։—Գիրը՝ խոշոր բոլորագիր։—Զարդագրեր՝ կան թռչնագրեր։ Վերնագրերը միշտ կարմիր թանաքով։—Ժամանակը՝ ՋԼԵ (1486 թ.)։—Գրիչը՝ Հովսեփ։—Կազմողը՝ Անանուն։—Տեղը՝ Ագուլիսի Աստվածածին վանքում (52բ, 301ա)։

Սկզբից թերի. սկսում է երրորդ պրակից.

«... Ուամից վերածեր,
Ընկալ զերգս բարի,
Ուարուն հաւաքեալ,
Ուամեալ բոլորից,
Ուամք քեզ ժողովեա,
Լոյս մեզ առաքեա...»։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 52բ.—Բարեխաւսութեամբ սրբոյն Սարգսի զաւրավարին եւ ամենայն սրբոց նահատակութեամբ, որ աստ կան հաւաքեալ, ողորմեայ Տէր գծողի սորայ Յովսեփի։

Թ. 302ա.—Փառք արարչին ամենայնի,
Եւ գովութիւն ամէն յեզուի.
Հոգի Սուրբ Տէրն ամենի,
Լիցի պահող տէր Յովսեփի,
Պարգեւք առատ ի սա հեղցի,
Եւ անփորձ պահէ զսա յաշխարհի,
Զգրող յայս գանձարանի։

Թ. 301ա—302ա.— Փառք ամենայսուրբ Երրորդութեանն... Որ ետ կարողութիւն տկար ոգոյ եւ մեղսասէր եւ ախմար անձին Յովսեփի լոկ անուամբ աբեղայի հասանել յաւարտ այսըմ գանձարանի յամի ՋԼԵ (1486 թ.) թըվականի մերումս տումարի։ Որ գրեցաւ ի վանքս Ագուլեաց ընդ հովանեաւ ամէնաւրհնեալ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Թումայ Առաքելոյս առ ոտս երջանիկ եւ փառաւոր հաւրս եւ հայրապետիս մերոյ Տէր Ազարիին։ Աստուած ընդ երկայն աւուրս պահէ, ամէն։ Այլ եւ զմիաբանքս վանաց՝

զՏէր Բարսեղ Հայրայ[ն]գլուխ եղբայրն իմ եւ դասաւոր վանացս, զՏէր Հայրապետն՝ ամենայն բանի հոգատար, զՏէր Շմաւոն՝ հայր պետ վանացս, զՏէր Անանիայ՝ քաջ գրագիր եւ կազմող, զՏէր Յովանէս եւ զիւր աշակերտն Փիլիպոս, սաղմոսերգողքն՝ զՏէր Թադէոս Դեխայն, որ անոշահամ ձայնով զմեզ ճաշակեաց, զՏէր Յակոբն, երախտաւոր վանացս, զՏէր Դանիէլ՝ փականաւոր. Քրիստոս Աստուած զսոսայ ի խորին ծերութիւն հասուցէ, որ շատ աշխատանօքութեամբ սպասաւորեցին մեզ եւ կերակրեցին ամենայն բարութեամբ։ Եւ զայլ աշխատաւորք վանացս՝ զտնտես Պապն, զՄուքերի Աբրահամն եւ զայլսն. Աստուած նոցա աշխատանացն վարձս հատուցանէ, ամէն։

Զստացող զանձարանիս զՏիրանանց, որ ստացաւ զսա յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորացն՝ զհայ(ր)ն իւր Վարդան եւ զմայրն իւր Ղադամ, եւ զեղբայրն իւր Վարդան, եւ զքոյրն իւր Ըսթէ եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զՍախաթան, եւ զՍէվլի, զՈխաթան, զՓիրաթան, զԱղայան, զԱմիրջան, զԱաֆար, զԴմսխաւշայ, զԱխերան, Քահնափուշ, Ամնադին, զԱյնայ, Աստւզան, Փէրիխան, Թուրսանդայ։

Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սորայ տեսութեամբ կամ աւգտութեամբ ինչ իւիք, կամ աւրինակելով, յիշեցէք ի միտս բարի եւ ի հայցուածս պատկանաւորս։ Զստացող լուսազարդ տառիս զՏիրանանց, Վարդանայ դուստր, զկողակիցն իւր Ղադամ յիշեցէք ի բարի։

Եւ զիս՝ զբազմամեղ եւ զանարհեստ գրիչս զՅովսէփ յիշել աղաչեմ, որ շատ եւ բազում աշխատեցայ ի գրելն սորայ։ Բայց սխալանաց եւ խոշորութեան սորա անմեղադիր լերուք, վասն զի կար մեր այս է։ Այլ եւ զգպիրքս՝ զՈպուբարէն, զՄկրտիչն, որ զթուղթն կոկեցին, յիշել աղաչեմ, ԶՏէր Ներսէս կոյսակրաւն աբեղայն, որ շատ աշխատեցաւ ընդ նմին, եւ զխամած Վելին, որ զստակն ապասպարեց, յիշել աղաչեմ։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 302բ.— Փառք ամենայ[ն] սուրբ Երրորդութեանն... Արդ ես Տիրանս գնեցի զզանձարանս ճ (100) թանկայ յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց՝ Վարդանին, եւ Ղատամին եւ զատերացն իմոց՝ Աստղանին, Փարիխանին եւ Մրւաթին։ Եւ զփեսայքն իմ՝ զՔահնափուշն, և զուստր Ախիյանն, և զՊուստաղն, և զհոգոյ որդին իմ քզուստր Աթաջանն, եւ զթոռներն իմ՝ զՄարի խաւչայն, զԱրքայունն, զՍաւայան, զՂուլիջան, զԱմենադինն, զԷնայն, զՍալթանչան, զՓաշա խաթունն, զՄաքթում փաշէն, զՍուլթան խանն, զՇայիչան խաթունն, զԱսլիչան խաթունն, եւ Սինաքարինն, զեռալլու խաւչայ, զՓիրուզ բաղտն, զինամ փաշէն, ամէն։

Թ. 303ա— Յիշեցէք ի Քրիստոս զեկեղեցոյ միաբանքս՝ զՏէր Մարգարէն, զՏէր Մխիթարն, զՏէր Պօղոսն, զՏէր Մաթէոսն, զՏէր Ներսէսն, եւ ինձ Հակոբիս եւ Պաւղոս կազմօղաց եւ զթերի գրողացս։ Յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ վարդապետի իմոյ՝ Տէր Ազարիա քաջ փիլիսոփայի եւ մահդասի Տէր Ստեփանոսին։ Էի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

Նորոգեցաւ զանձարանս թուին հայոց ՌԺԱ.ին (1562)։ Արդ՝ աղաչեմք զձեզ, ո՛վ լու(սեր)ամ դասք քահանայից, յիշեցէ՛ք ի մաքրափայլ եւ յերկնացնոց յաղաւթս ձեր զպարոն Միրզա եւ հեզահոգի զ(Տիրան)ս յիշատակ հոգոյ իւրոյ (և) ծնաւղացն՝ հայրն Ղուլթյու փաշին եւ մայրն՝ Փաշաշանին, եւ կողակիցն իմ՝ Սուլթանաթունն, եւ որդին իմ՝ Տէր Մխիթարն եւ միւս որդին, որ հանգուցեալ է առ Քրիստոս՝ Անտոնն, եւ զատերքն իմ՝ Սիրաղուխտն, Սազզարն, եւ թոռունքն իմ՝ Յովհաննէսն, Գրիգորն, Անտոնն եւ զամենայն արեան մերձաւորսն՝ զհարսն իմ՝ Փարէզ խանն, զկենդանիքն եւ զհանգուցեալսն յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։ ՌԿԵ (1616)։ Զվերջին ստացաւղ սուրբ գրութեան զպարոնՄիրմ Մխիթար քահանայն, յոր ստացաւ զսա հոլաւ... (պատռված է)։

№ 2

## ՑՐԱ ՊԵՏՐՈՍԻ ԳԻՐՔ ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Թերթերը՝ 259։— Պրակները՝ 22, ամեն մի պրակը 12 թերթից։— Մեծությունը՝ 20×15×4,3։— Նյութը՝ սովորական թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ ազատ զարդագծերով։ Կազմի առաջին երեսի վրա տպված է ներսումով. «Յիշատակ է պարոն Իսախանին, թվին ՌՃԻԳ (1674)»։— Ձեռագրի վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ թղթեր՝ 157բ—162բ։— Տողերը՝ միջին հաշվով 28։— Գիրը՝ նոտր։— Զարդագրեր՝ վերնագրերը կարմիր թանաքով, կան քիչ թվով լուսանցազարդեր։ Սկզբնատառերը՝ թռչնագրերով։— Գրիչը՝ Ոսկան։— Գրության ժամանակը՝ ՌՃԻԲ (1673)։— Պատվիրատուն՝ Իսախան։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— «Գիրք Յաղագս Առաքինութեանց։— Զօրութիւն ելանէր ի նմանէ եւ բժշկէր զամենեսեան...» (ԺԸ գլուխ)։

Թ. 20ա.— «Յաղագս Երից աստուածային առաքինութեանցն։— Յետ ասելոյն յառաքինութեանցն հասարակարար...» (Կ. գլուխ)։

Թ. 163ա.— «Յաղագս յուսոյ։— Ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի ի յանթառամ ժառանգութիւնս...» (ԺԸ գլուխ)։

Թ. 201ա.— «Յաղագս սիրոյ։— Գլուխ պատուիրանին սէր է ի սուրբ սրտէ...» (ԻԳ գլուխ)։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 19բ— Որով արժանի արարեալ Տէրն առաքինութեանց զստացող սորա զբարեմիտ և հեզահոգի Իսախանն եւ զծնօղսն իւր սպիտակացեալ զգեստիւք վերանալ ի բարձունս եւ հանգչիլ ընդ երամս սրբոցն, ամէն։*

*Թ. 200բ— Ով հանդիպիք ի յա(յ)սմ տառիս կամ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք զըստացօղս սորա հեզահոգի պարոն Իս(ա)խանն եւ իւր արեան մերձաւորսն, ամէն,*

*Թ. 259բ.— Կատարեցաւ գիրքս աստուածային առաքինութեանցս թվին ՌՃԻԲ (1673), յամսեանն փետրուարի ԺԵ.ումն։ Ի վայելումն պարոն Իսախանին եւ իւր ծնօղացն աղա Ջէյինումն։ Եւ իւր յամենայն արեան մերձաւորացն յիշատակ յաւիտենից եղիցի։ Որ ոք կարդայ կամ օրինակէ, թերան մի հայր մեղա ասէ, Աստուած իւրոց արքայութիւն պարգեւեսցէ։*

Ծածկագիր՝ *գրքի վերջում ․*



*Վերծանվում է՝ ՈՍԿԱՆ ԳՐԻՉ։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. պահպանակի 1ա.— Երանի որ ընթեռնու առաքինութեանց գիրքս եւ պահ(է) զմիտս։*

*Թ. 1ա.— Թվին ՌՄԽԱ, դեկտ. Ը-ումն, Բանդար Բուշեռ. Քրիստոսի ծառայ Մարկոս որդի իմ Յակոբջան....*

## № 3

## ԱՊՏԻ ԽԱՀՄԱՆԻ ԹԷՊՐԻԶԵՑԻ ԲԱՆԱԼԻ ԱՍՏԵՂԱՑ

Թերթեր՝ *177։*— Պրակներ՝ *13, յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *17,1×11,5×2,2։*— Նյութը՝ *թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ։*— Պահպանակները՝ *հասարակ թղթից։ 1-ը առջևում, 2-ը վերջում։*— Վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *միասյուն։*— Դատարկ թերթեր՝ *112ա—129բ։*— Տողերի թիվը՝ *միջին հաշվով 23։*— Գիրը՝ *նոտր։*— Զարդագրությունը՝ *վերնագրերը կարմիր թանաքով։*— Գրիչը՝ *Գեորգ դպիր։*— Գրչության ժամանակը՝ *1768 թ.։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.—* Այս գիրք բանալի աստեղաց։ *Թարգմանեալ ի պարսկականէն մեզուաչան աշխատութեամբ Գէորգայ չնչին դպրի բնիկ տեղեաւ Կոստանդնուպօլսեցւոյ, ընդ հովանեաւ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն Հայոց որ ի Գալաթ։ Յամի Փրկչին մերոյ 1768-ի, յաւուրս փրկագործ պասքային։ Այս է երկրորդ օրինակ։ Եւ որ յետ այսորիկ գրիցի՝ լինի երրորդ օրինակ, եւ զկնի այնր՝ չորրորդ օրինակ. եւ այսպէս զկնի հետեւալքն զայս կանոնս պահեսցեն։*

*Թ. 2ա.—* Յառաջաբանություն·— *Արդ ծանիր, զի առյն համառօտիկս է, զոր այս տկար Ապտիւլ Ազիզ, որդին Ապտի Ռահմանի Թէպրիզեցի հաւաքեալ է յաղագս գիտութեան աստեղաց, եւ վասն գրքիս անունն եդեալ է* Բանալի Աստեղաց, *որպէս զի արդիւնաւորիլ զայս գիտութեանս գիտրին լիցի հետեւողաց։ Յաւուր շաբաթու ի սկիզբն Ճէմազիւլ էվվէլ ամսոյն ի թուականի եօթն հարիւր քառասուն ամի հիճրէթին եւ բոլոր այս գիրքս ի վաթսուն պրակս տրամատեալ է։ (Կ գլուխ)։ Վջ. 60բ։*

*Թ. 61ա.— Հավելված աստղաբաշխական առանց խորագրի։ Սկ. «Եւ եւս տեղեակ լեր զի երեսակն յիւրաքանչիւր կենդանակերպի երկու տարի և կէս լինի...» (ԺԲ գլուխ)։ Վջ. 79ա։*

*Թ. 82ա.—«Այս մասեան վասն միզանդաբաթի ուսպի դայիրէին։ (Յուսուֆ էֆենդի գադեհի)։— Այս մատեանս բացայայտէ...»։ Վջ. 103բ. «...Աւարտեցաւ մատեան միզանդէրաին։ Շարադրող գրքոյս Եուսիւֆ էֆենդի դատէն էր»։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 80ա.—*Յիշատակարան:—*Փառք եւ պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. որոյ օգնականութեամբն գաղափարեցաւ պատուականագոյն գիրքս, որ կոչի (Բանալի Աստեղաց), ի վայելումն Կեսարացի Մահտեսի Յակոբին։ Յամի Ներմարմնութեան 1773-ին եւ յամսեան հոկտեմբերի 4-ին, ձեռամբ Գէորգէոս չնչին դպրի, ի փառս Աստուծոյ եւ ի օգուտ ընթերձասեր եղբարց, ամէն։*

## № 4

## ՍԻՄԷՕՆԻ ԳԱՌՆԻՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՅ ՊՐՈԿԶԻ

Թերթեր՝ *195։*—Պրակներ՝ *25, յուրաքանչյուրը բաղկացած 8 թերթից։*—Մեծությունը՝ *17×13×3,6։*—Նյութը՝ *հասարակ թուղթ։*—Կազմը՝ *մուգ կարմրագույն, կաշեպատ տախտակ, ոսկեծո զարդարանքներով։*—Պահպանակներ՝ *3 թերթ հասարակ թուղթ։*—Վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *19։*— Գիրը՝ *նոտր։*— Զարդագրությունը՝ *վերնագրերը կարմիր թանաքով։ Տեքստերի սկզբում գլխատառերը կարմիր թանաքով զարդագրված։*— Գրիչը՝ *Մատթեոս։*— Ժամանակը՝ *1771 թ.։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1բ.*—Ցանկ Գրոցս Պրոկղի:

*Թ. 4ա.*—Սիմէոնի Գառնւոյ եպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն Գրոցն Պրոկղի: (*Ա—Մժ հատվածներ*)։

*Թ. 193բ.—194ա.*— Ցիշատակարան թարգմանողի գրոցս.— *Թարգմանեցաւ գիրքս Պրոկղի Դիադոխոսի Պղատոնական իմաստասիրի ձեռամբ Սիմէոնի անպիտան քահանայի եւ կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզու ի յերկիրս Հայոց, ի վանս վրաց, որ կոչի Պղնձահանք, ի յաւիտենից թուականին վեց հազար եօթն հարիւր ՄՁ թուին։ Արդ՝ աղաչեմ զձեզ ո՛վ եղբայրք, ներել ինձ, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի. Նախ՝ զի ոչ էի արժանի այսպիսւոյ սպասաւորութեան, սակս շաղախեալ գոլոյս մեղօք։ Երկրորդ՝ զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաչաց, ի մտաց եւ ի զօրութենէ, զի զվաթսուն ամենեօք էի։ Բայց զի ո՛չ էր թարգմանեալ սա ի մեր լեզու, յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս լինիցի սա յազգէս մերմէ։ Արդ, աղաչեմ, որք ընթեռնուք եւ կամ օրինակէք, յիշեսջիք յաղօթ գիս, եւ զիմ փոքր բանս գրեսջիք զկնի. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։*

*Թ. 194ա—195ա.*—Բան առ ընթերցողդ.— *Դիտասջիք եւ զայս վերջապէս, սիրելի՛քդ իմ ուսումնասէր եղբարք, զի այս գրոցս Պրոկղի, յետ ժամանակաց, Յամելախոս կոչեցեալ եպիսկոպոս ոմն արարեալ էր զլուծմունս նախապէս։ Եւ յետոյ, ի թուականութեանս հայոց հազարերորդի ուսումնասէր քահանայ ոմն Սիմէոն անուն, թարգմանեալ է զսա հանդերձ լուծմամբն Յամելախօսին ի վրաց լեզուէ ի հայ լեզու։ Իսկ ի հազար հարիւր թուոյն մերում Ջուղայեցի Սիմէոն գերիմաստ վարդապետն, որ էր եպիսկոպոս Գառնւոյ, վերստին արար սմա զնոր լուծմունս պարզ ոճով. որք ի նաւարտս իւրաքանչիւրոց պրակաց բնաբանիցն եդեալք կան։ Նաեւ սոյնոյ վարդապետիս է արարեալ զքերականութիւնն, տրամաբանութիւնն ըստ լեզուիս հայոց, Նաեւ զայն, որոյ յսկզբանն առէ. Եւ բազձն ասելիք են այսոքիկ. թերեւս եւ զայլ բանս։ Բայց այս վարդապետս, ըստ շնորհաբուղխ մտաց իւրոց, ի մեկնելն զգիրս զայս, յուրեք յուրե(ք) ոչ է այնքան հոգ տարեալ զբառից եւ զբանից ըստ շարադրութեանն, զորս իբր դիւրիմաց գոլ վարկելով զանց էր արարեալ։*

*Այլ եւ ի յոլով տեղիս բազում սխալմունք եւ աղճատմունք եւս էին ներմուծեալք ի գիրս յայս ի յանհմուտ գրչաց եւ յօրինակաց վասն խրթնամիտ շարադրութեանն։ Յորոյ պատճառ է որքան յայս գիրս յառաջանային անտեղեկութիւնք եւ կորուստ մտաց բանիցն։ Վասն որոյ, ես, յետինս ի բանասիրաց Սիմէօն վարդապետս յերկրէն Այրարատու, ի քաղքէն Երեւանու, եւ միաբան սրբոյն Էջմիածնի ընդհանրականի աթոռոյն, գոլով իբր սիրահարեցեալ ի գրոցս յայսմանէ, ի թուականութեանս մերում ՌՃՂԹ (1750), ժողովեցի առ իս բազում օրինակս գրեցեալս ի հնոց և գրեցի զայս իմով ձեռնագրով, որ թէպէտ անսխալ միայն Աստուած է, նաեւ գիրս իմ յոյժ տգեղատես, սակայն յամենայնի ջանիւ կարի ուշադրութեամբ եւ մտառութեամբ գրեցի։ Նաեւ զոմանս բանս զանց եղեալսն ի սիմէօնի վարդապետէն լուծեցի ըստ կարեաց իմոց եւ եդի յաւարտսն Սիմէօն վարդապետի լուծմանցն իւրաքանչիւր լուսանցսն հանդէպ իմոց բանից սկզբանց գծագրեցի զխաչանշան գիծս, որովք որոշեցին բանք իմ եւ Սիմէօն վարդապետին։ Ուրեմն, ի դնելն թուոց հանդէպ բնաբանից, եւ լուծ՝ հանդէպ լուծմանց Սիմէօն հեղինակին իմոյ, դնի եւ խաչ հանդէպ իմոց բանից։*

*Վասն որոյ աղաչեմ զձեզ, որք հանդիպեալք այսմ, հաւանեցիք, եւ օրինակել կամիցիք, գրեցէք եւ զիմ բանսն իւրաքանչիւրն տեղւոյ, եւ նոյնով խաչանիշ գծիւն որոշեցէք, որովք յատկացցին իւրաքանչիւրքն եւ զիս հանդերձ իմայնօքն յիշեսջիք ի յաղօթս ձեր տալով զփառս տուողին ամենայն շնորհաց։ Իսկ եթէ ոչ հաւանիցիք իմոցն բանից, մի՛ գրիցէք, սակայն մի մեղադրիցէք զմեզ իբր դատաւոր լինելով ի վերայ այլոց, զի մի է Տէր եւ դատաւոր ամենայնի։ Որում փառք յաւիտեանս, ամէն։*

*Թ. 1ա.— Գրոցն Պրոկղի։ Արարեալ ի Սիմէօնէ Գառնւոյ եպիսկոպոսէ յառաջագոյն ի ՌՃ (1651) թուականին մերում։ Իսկ ի ՌՃՂԹ (1730) թուոյ մերում վերստին սրբագրեցեալ ի բազմաց հեղինակաց եւ ոմանց դժուարիմաց բանիցն եւս նորապէս արարեալ լուծմունս խառն ընդ առաջնոյն եւ ուրոյն նշանաւ տեառն Սիմէօնի գերերջանիկ Հայրապետի Ամենայն Հայոց ի վարդապետութեան իւրում։ Յորոց ձեռագիր հեղինակէն օրինակեցաւ գիրքս այս ի վայելումն նորին յետնեալ ծառայիս տէր Իսահակ մեղսակիր աբեղայիս ի թուոյ Փրկչին ՌՉՀԱ (1771) եւ ի մերում թուոյ ՌՄԻ (1771) ապրիլ ամսոյ Զ (6), ի գերահրաշ Աթոռս Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին։*

*Թ. 165բ.—Զմեղաւոր Մատթէոս գրիչս յիշել աղաչեմ ո՛վ եղբարք։*

*Թ. 187ա.— Զերում ազնուութեանդ պարտական ծառայ և տուից զմեղաւոր Մատթէոս սևազգեստ գրիչս յիշել աղաչեմ, աղաչեմ։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբից երրորդ պահպանակի շուռ տված երեսի վրա. «Գնեցի պարոն Կարապետս Բաղդասար Լեյլումեջեն 12 ռուփի, 8 անայ, 1883 թիւ 19 յունի(սի). Ռանգուն, Հայրապետ դ(ի) Տեռանինս»։

### № 5

### ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՌԱՐԱՆ

Թերթերը՝ 284։— Պրակները՝ 15, յուրաքանչյուր պրակը 12 թերթից։— Մեծությունը՝ 16,5×10,2×5,4։ — Նյութը՝ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Պահպանակը՝ մի թերթ մագաղաթ, հին գոթական գրությամբ։— Վիճակը՝ ոչ բավարար, ցեցակեր. կազմը փոքր ինչ քայքայված. վերջում մի քանի թերթ պակասում է։— Գրությունը՝ մինչև 130բ. միասյուն, իսկ այնուհետև՝ երկսյուն։ Տողերը՝ միջին հաշվով 23։— Գիրը՝ նոտր, սկզբնատառերը կարմիր թանաքով։— Գրչության թվականը՝ ՌՃՀԹ (1730)։— Գրավիրատուն՝ Բարսեղ վարդապետ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.— Ընդօրինակություն խաչքի վանքի արձանագրութեան.— «Այս է թագաւորն Վասակ, զոր կայ ի վանս խաչքիւ Աստծու, ես Վասակ արքայ միաբանեցայ սուրբ ուխտիս խաչքի եւ միաբանքս տուին Բ(2) ժամ նոր Կիրակին. կատարիչքն օրհնին յԱստուծոյ. թուին ՉԿ (1311)»։

«Սկիզբն կամեցող եղեւ շինութեան գաւթիս, ես տկար Ռուաստոցի Յոհաննէս եպիսկոպոս կատարեցի բազում աշխատութեամբ, որք երկրպագէք, յիշէք ի Տէր. թուին ՉԻԸ (1279)»։

«Աւգնեա Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ, ամէն»։

Թ. 2ա.— Սիմէոնի վարդապետի Ջուղայեցւոյ արարեալ Քերականութիւն ըստ կեզոսի մեռում ճայկազանց։— «Քերականութիւն է գիտութիւն տառից եւ ասութեանց...»։ Վջ. Թ. 69բ։

Թ. 70ա.— Անխորագիր, փոքր աղոթք։ Սկ. «Քրիստոս Աստուած շնորհեաց եկեղեցեաց հաստատութիւն, քրիստոնէից անդորրութիւն...»։ Վջ. Թ. 70ա։

Թ. 70բ.— Ընթերցուածս ի Դանիէլէ մարգարէէ.— «Յամին ութուտասաներորդի, Նաբուգոդոնոսորայ արքայի...»։ Վջ. Թ. 73ա։

Թ. 74ա.— Անխորագիր, Ներբող՝ նվիրված Քրիստոսին, Մովսէսին, Դաւթին եւ այլոց։ Սկ. «Իսկականն էութիւն եւ անեղանելի գոյացութիւն, անսահման բարութիւն եւ ինքնաբաւական զօրութիւն...»։ Վջ. Թ. 101բ։

Թ. 102ա.— Աւրհնութիւն ժողովրդեան եւ շրջաբերականի: Սկ. «Ի գթութեանց տեառն Աստուծոյ ամենակալէն եւ ի վերնական պետականէն, ի յեռանձնեայ աստուածութենէն...»։ Վջ. Թ. 110բ։

Թ. 111ա.— Անխորագիր: Սկ. «Ամենասուրբ Հոգին, որ զարդարեաց զտիեզերս ամենայն, զարդարեսցէ եւ զձեզ, ի զարդ անկողոպտելի...»։ Վջ. Թ. 113ա։

Թ. 113ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին, և Սրբոյն Յովհաննու Կարապետին, եւ Սրբոյն Ստեփաննոսի նախավկային...»։ Վջ. Թ. 115ա։

Թ. 115ա.— Անխորագիր: Սկ. «Այն անեզական, բազմակն Փր(կ)չական, գութն աբարչական...»։ Վջ. Թ. 117բ։

Թ. 117բ.— Անխորագիր: Սկ. «Եւ որպէս օրհնեաց զԴաւիթ արքայ եւ զՍողոմոն եւ զամենայն բարեպաշտ թագաւորսն որ ի տանէն Դաւթի եւ յաղթող արար ընդդէմ Գողիաթու...»։ Վջ. Թ. 118ա։

Թ. 118ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ ժողովրդապետն ամենայնի Տէր մեր Յիսուս Քրիստոս օրհնեսցէ զառհասարակ ժողովրդականքդ...»։ Վջ. Թ. 119բ։

Թ. 119բ.—Անխորագիր: Սկ. «Աւրհնեալ է արարչագործ Աստուած եւ շնորհաբաշխն ամենեցուն, անճառելին, անքննելին...»։ Վջ. Թ. 122ա։

Թ. 122ա.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ որպէս Տէրն մեր ամենի զԱբրահամ ընտրեալ իւր սիրելի երկիցս հրեշտակօք ի խորանն նորա հանգանակի...»։ Վջ. Թ. 126բ։

Թ. 126բ.— Անխորագիր: Սկ. «Այլ եւ մխիթարիչ Հոգին Սուրբ ճաճանչ Աստուած եղէն լուսովն, որ քաղցր բարբառ հնչմամբ ճառագայթեցաւ ի սուրբ վերնատանն...»։ Վջ. Թ. 129բ։

Թ. 129բ.— Աղօթք զոր կարդան ի վերայ ճիւանդաց: «Տէր Աստուած, որ դթածդ ես եւ ողորմած...»։ Վջ Թ. 130ա։

Թ. 130ա.— Անխորագիր: Սկ. «Աղաչեմք զքեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ խնդրեմք առատ ողորմութենէ քումմէ...»։ Վջ. Թ. 131ա։

Թ. 131ա.— Բառարան:

Սկ. «Աբբիաք Ա.

| | |
|---|---|
| Աբարբոլի | անշէն |
| Աբանայ | հօր աւրհնութիւն |
| Աբարիմ | անցք կամ անցանօղք... |
| Փարաարացեալ | գիրացեալ |
| Փարաւօն | վան...» (Թերի)։ |

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1բ.—«Թուին ՌՃՀԹ (1730), դեկտեմբերի, ի վայելումն տիրացու Եղիազարին։*

*Թ՝ 2ա. — «Ես Թոմաս վարդապետս […]ացայ սուրբ գիրքս իմ հօրեղբօր որդի Հաււանին թվին ՌՃՁ-ին (1731) դեկտեմբերի ԻԲ (22)։*

*«Ես անարժան Հաււանս գիրեցի։*

*«ՌՃԿ (1711) Վարագայ Սուրբ Խաչին ձեռնագրեց Յոհվաննէս վարդապետ Տէր Խաչատուրն։*

### № 6

## ՅՈՒՍՏՈՒԼԱՊԻ

Թերթերը՝ *235։*— Պրակները՝ *20, միջին հաշվով յուրաքանչյուրը 12 թերթից։*— Մեծությունը՝ *19,5×16×3,7։*— Նյութը՝ *սպիտակ թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, վրան զանազան զարդանախշեր դրված։*— Պահպանակները՝ *2 հատ առաջից՝ հաստատ թղթից։*— Ձեռագրի վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Դատարկ թղթեր՝ *196բ—198ա, 205բ—206բ, 210ա—211բ։*— Տողերը՝ *27—28։*— Գիրը՝ *նոտր։*— Վերնագրերը՝ *կարմիր թանաքով։*— Ժամանակը՝ *ԺԷ դար։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.*— «Ցանկ վասն յուսառլապի արարողութեան, յորում կայ այ(ս)քան ինչ»: *Վջ. Թ. 6ա։*

*Թ. 6բ.*— «Բան առ իմաստատենչ ընթերցողս...»: *Վջ. Թ. 7ա։*

*Թ. 8ա.*—«Սկիզբն արարցուք Աստուծով վասն յայտնութեան եւ իմաստութեան ստուռլապի արուեստիս, որ է գործիք երկրաչափութեան եւ աստեղաբաշխութեան, որ է մեծ իմաստութիւն ուսումնասիրաց:— *Դուռն առաջին վասն ցուցանելոյ գործարանացն, որ կայ ի վերայ նորա» (170 գլուխ)։ Վջ. Թ. 69ա։*

*Թ. 69ա* — «Ցանկ ուստուռլապի» *(երկրորդ գրքի)։ Վջ. Թ. 70ա։*

*Թ. 70ա.*—«(Դ)ուռն առաջին որ իմանաս...» *(65 գլուխ)։ Վջ. Թ. 95բ։*

*Թ. 96ա.*— «(Ա)յս ի յայլ գրոց է փոխած. ի բան գալ ի բան...» *Վջ. Թ. 130ա։*

*Թ. 132ա.*— «Ցանկ վասն ուստուռլապի եւ աստեղագիտութեան»: *Վջ. Թ. 133ա։*

*Թ. 133ա.*— «Դուռն առաջին վասն գիտենլոյ երթայ...» *(51 գլուխ)։ Վջ. Թ. 144ա։*

*Թ. 145ա.*— «Յաղագս աստեղաբաշխական իմաստութեան: *Ուսումնական մակացութիւն քառակի բաժանի...»։ Վջ. Թ. 158բ։*

*Թ. 158բ.*— «Վասն ծագման եւ մտման աստեղաց: *Մեծ հոգացողութենէ ճանաչել...»։ Վջ. Թ. 166ա։*

*Թ. 168ա*— «Ամանէք դնեն յիւրաքանչիւր կլիմայս»: *Վջ. Թ. 205ա։*

*Թ. 207ա.*—Հայատառ թյուրքերեն աստղաբաշխություն: *Սկ. «Վասաբիասէմսիլէ մատագայի շիմալիլէ պոլաշտուցի պուծաք դըր...»։ Վջ. Թ. 235բ։*

### № 7

## ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ *166։*—Պրակները՝ *14, յուրաքանչյուրը 12 թերթ։*— Մեծությունը՝ *17×14×4,3։*— Նյութը՝ *լավորակ հաստ թուղթ սպիտակ՝ քիչ դեղնած։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, երկրաչափական գծերով զարդագծված։*— Ձեռագրի վիճակը՝ *բավարար։ Սկզբից թերթի—սկսվում է 12-րդ պրակից։*—Գրությունը՝ *միասյուն։*—Տողերը՝ *21։*— Գիրը՝ *բոլորագիր։*— Զարդագրությունը՝ *խորագրերը կարմիր թանաքով։ Կան կիսախորաններ, թռչնագրեր և լուսանցազարդեր։*— Գրիչը՝ *Գրիգոր։*— Գրչության ժամանակը՝ *1439 թ.։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.*— «Ձեռնադրութիւն քահանայից աստիճանաց...»: *Վջ. Թ. 19ա։*

*Թ. 19բ.*— «Ձեռնադրութիւն: *Յորժամ ի քահանայութիւն զոք կոչեն ի սարկաւագութենէ...», Վջ. Թ. 40ա։*

*Թ. 40բ.*—«Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կատարի մահուամբ...»: *Վջ. 133ա։*

*Թ. 133բ.*— «Յերկրորդումն աւուր երթան ի գերեզման...»:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 33բ.—34ա. (Ներքևի լուսանցքում)*

*«Արդ՝ ես Գրիգոր ծրող գրոյս,*
*Յաղաւթս ձեր ունիմ մեծ յոյս.*
*Արձակեցէք զիս ի կապոյս,*
*Որ իմ մեղացն է տարեկոյս։*
*Եպիսկոպոս մեր Նահանկոյս,*
*Տէր եւ տեսուչ հարկան սեռոյս,*
*Սուրբ քահանայք եկեղեցոյս,*
*Եւ հորընձայք ի յայս ժամուս,*
*Ունկն դրէք իմոյ խնդրոյս,*
*Եւ մաղթեցէք առ Տէր Յիսուս,*
*Որ ճարն նա է գլորեկոյս՝*
*Մաքրէ զհոգիս մեղաց աղմոյս։*
*Իմ դեղն դուք խոցեալ հոգոյս,*
*Զի յիշեցէք անտարբեկոյս,*
*Յիշողքդ արհնիք յայսմ սրբոց և*
*յեկեղեցւոյս ամէն»։*

*Թ. 165բ.—166ա.*

*«...Փառք հաւր համապատուն,*
*Համագոյ որդոյն,*
*Փառակից հոգոյն,*
*Որ ետ զաւրութիւն*
*Եւ կարողութիւն,*
*Հասոյց ի կատար*
*Այսմ համառաւտաց*
*Հայրապետաժողով տառիս։*

Նախ սուրբ խաչին և արհնութիւն.
խաչալուսայ զհետ նորին.
Աւրհնեալ զշուրն ի սրբութիւն,
Եւ զաւազանն ի ծնողութիւն.
Շարժեալ սեղան՝ պգծեալ տաճարին.
Մկրտութիւնն մեզ ի քաւութիւն.
Պսակ փուսից է աւրհնութիւն.
Հազորդութիւնն մեզ ի սրբութիւն.
Աշխարհաթաղն է ազատութիւն.
Եւ այգնալացն է մխիթարութիւն.
Եւթնաւրի կարգ՝ կատարելութիւն.

Եւ այլ բազմահ(ա)ւաք բան, զինչ որ խնդրես եւ պատշաճ է, կարգեցաք ի գիրքս յայս վասն յիշատակ հոգոց մեր ննջեցելոց. Գրեցաւ մաշթոցս ձեռամբ անյարմար Գրիգորի եւ արժան (ընագրում այսպես, կժան իմաստով) ծառայի, առհասարակ մեծի եւ փոքու, որ էր թիւն հայոց ՊՃՁԸ (1439), ի դառն եւ ի նեղ ժամանակի, վասն ծուլացեալ իմոյ մեղացն. Որք վայելէք զմաշտոցս, եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորաց թողութիւն խնդրեցէք ի բարերարէն Քրիստոսէ եւ զձեր թողցէ ամենակարողն Աստուած եւ նմա փառք յաւիտեանս ամէն.

Զվերջին ստացա(ղ) զԱստուածասէր դհաստատարիմ ամենայն աւրհնութեանց...ն (պատռվել է թերթը).

№ 8

## ՄԱՇՏՈՑ

Թերթեր՝ 125.— Պրակներ՝ 13, յուրաքանչյուրը 10 թերթից.— Մեծությունը՝ 22×15,5×3,5.—Նյութը՝ հաստաբակ թուղթ, քիչ դեղնած.— Կազմը՝ կաշեպատ տախտակ.— Ձեռագրի վիճակը՝ առաջին երկու թերթերը փտասված, անընթեռնելի. ԺԱ-րդ պրակի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ թերթերը պատռված են. Առաջից և վերջից որոշ թերթերը ցեցերը ծակծկել են. — Գրությունը՝ միասյունակ.— Տողերը՝ 19—21.— Գիրը՝ բոլորգիր.—Զարդագրությունը՝ կան 5 կիսախորաններ (Թ. 1ա, 23ա, 49ա, 73ա, 81ա) և 5 լուսանցազարդեր (Թ. 23ա, 49բ, 73ա, 79ա, 81բ). Համանների առաջին տառերի սկզբնատառերը զարդանկարված են. Կիսախորանները և զարդանկարները անվարժ նկարչի գործեր են. Զարդանկարների մեջ գործ են ածված սրճագույն, կարմիր և սև գույները.— Գրիչը՝ անհայտ.— Գրչության ժամանակը՝ 1711.— Պատվիրատուն՝ Իշխանցի Խոճա Պապի կին Մարգարիտը.— Գրչության վայրը՝ Սեբաստիա.

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 125բ.— Փառք Ամենայնսուրբ Երրորդութեանն... Արդ՝ աւարտեցաւ գիրքս, որ կոչի մաշտոց, ի փառս ամենամեծին Աստուծոյ, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տեառն Աղեկսանդր կաթուղիկոսի, ի թուականութեանս կենարարին ՌՉԺԱ (1711), ի հայոցն ՌՃԿ, յունիս ամսումն Ժ եւ Ը (18). Գրեցաւ ի մայրաքաղաքն Սեբաստիայ, ի դուռն Սուրբ Սարգիս եկեղեցւոյն.

Յիշա(տա)կ է մաշտոցս Իշխանցի Խոճա Պապին կնոջն՝ Մարգարիտին եւ միւս հանգուցեալ կնոջն՝ Մելքին եւ իւր որդոցն՝ Ասլանին, Եղիային, Տամիկին, Սարգիսին, Խաչատուրին, դստերացն՝ Աննային, Մարթային եւ իւր հօրն Սինանին եւ մօրն Մարթային.

Տէր Աստուածն ամենայնի կենդանեաց արեւշատութիւն պարգեւեսցէ, ննջեցելոցն մեղաց թողութիւն եւ յերկնից արքայութիւն պարգեւեսցէ եւ անթառամ պսակին արժանի արասցէ, ամէ(ն). (Այստեղ ընդհատվում է հիշատակարանը).

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 125ա.— «Ի գուղըն Թամզարայցի Մուսեղին տէր Կարապետին. յիշատակ է հօր կամ մօր հոգուն, թուին ՌՄԾԲ.ին (1803) հոգդըբէրի Գ.ին»

№ 9

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 236.— Պրակներ՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից.— Մեծությունը՝ 26×19×7.— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ.— Կազմը՝ կաշեպատ տախտակ, ապածո զարդարանքներով. Առաջին փեղկի վրա կա արծաթյա փոքրիկ խաչ, վրան Հիսուսի խաչելությամբ.— Ձեռագրի վիճակը՝ բավարար.— Գրությունը՝ երկսյուն.— Դատարկ էջեր՝ 68բ—69ա.— Տողերը՝ 28.— Գիրը՝ բոլորագիր.— Զարդագրեր՝ ունի չորս ավետարանիչների նկարները, չորս կիսախորաններ և բազմաթիվ լուսանցազարդեր.— Գրիչը՝ Խաչատուր.— Գրչության վայրը՝ Արտամէտ.— Գրչության ժամանակը՝ ՌՂԴ (1645).

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 235բ.— Փառք ամենասուրբ Երրորդութեան... որ արժանի արար զնեխեալ մեղաւք եւ զանարհեստ եւ զանարժան Խաչատուր գրիչ սուտանուն քահանայ հասանել ի վերջին գիրս սրբոյ աւետարանիս. Ի թուաբերութեան հայկազեան տումարիս ՌՂԴ (1645), ի քաղաքն Արտամէտ. Արդ, երես անկեալ աղաչեմ զընթերձողքս սուրբ աւետարանիս եւ զհանդիպողքս յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ զանարժան գրիչս եւ զծնաւղսն իմ, զի բազում աշխատութեամբ եւ ջանիւ գծագրեցի սուրբ աւետարանս...

(Այլ ձեռագրով) Աստուածն եւ ամենայն յարեան մերձաւորք յիշեցէք եւ ողորմի ասացէք, ամէն.

Թ. 68ա.— Զսակաւ ծրող սուրբ աւետարանիս, զԽաչատուր սուտանուն յիշեցէք ի Քրիստոս.

*Թ. 111ա.— Ջանարհեստ եւ զանարժան ծրօղս խաչատուրս՝ սոստանում քահանայ, եւ զծնօղս իմ յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի առհասարակ, ամէն։*

*Թ. 69բ.—* Ծածկագիր

 *խա չՃվ մզե լմծ ըՓ*

*Թէ գպիր ես կարդա, Թէ ոչ վզիգ արա եւ հազա։*

*Աղավաղված կարդացվում է՝ «Տփեծ գրիչս յիշեա»։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.—Որ ողորմի սուրբ սոփի դրոշս. զբարեխիս եւ զհեզահոգի Աստուրն, հայր իւր Փոլասն, եւ մայրն խանումթանն, եղբայր Մուրայիլն, եւ քուրն Թուրվանդէն, եւ կողակիցն Ազիզն, եւ որդիքն, Սարգիսն, եւ կողակիցն Սառէն, եւ որդիքն՝ Առաքելն, Կիրակոսն, եւ Մարգարէն, եւ դստերն Վալիսէն, Մայրանն, եւ միւս որդին Փոլասն, եւ կողակիցն Հայոցն (|), եւ որդիքն Այվազն եւ Փարսամն, և դստերց Աստուրի Գայրան Սանդուխտն, Թուրվանդէն և խանումթանն եւ հանգուցեալ որդից Թաթոսն, Գալուստն, Մարտիրոսն, Ըռըստակէսն, եւ դու(ս)տր Վառվառն, եւ յամենայն յարեան մերձաւորք յիշեցէք եւ ողորմի ասացէք նոցա, եւ Աստուած ձեզ ողորմի իւր արքայութեանն, ամէն։*

*Ծիշեա զգպիր Մուրասս եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։*

*Թ. 2բ.— Ծիշատակ է սուրբ աւետարանս, որ ես Տէր Յարութիւնի որդի Աներկեցի Տէր Գրիգորս, եւ քոյրն իմ Խոսրով, եւ փեսայն իմ Սարգիս, զի մեք եսուք զայս աւետարանս ի դուռն Սուրբ Կուսաւորչին Խոր Վիրապայ, ձեռամբ առաջնորդ Ներսէս վարդապետին, յաւիտենան յիշատակ հոգոց եւ ամենայն ն(ն)ջեցելոց մերոց։ Եւ որ զսա անտի հանցէ եւ ծախեսցէ, առաջի ատեանին Քրիստոսի ամօթապարտ լիցի սա եւ ի հանգերձեալն, ամէն։*

*Թ. 3ա.—(Նախորդ ձեռագրով) Թուին ՌՄԿԷ (1818) յունուարի մէկնւ Ի վերայ սորոյ աւետարանիս եղեալ փաթութելոյ ալլուխնգն, որք են Դ (4) հատ շուշֆայ եւ Գ (3) յոյժ մանր խալը։*

*Թ. 68բ.— Ես, տիրացու Գրիգորըն, թվ. 1876 Ներսէսըն վարդապետինցըն Աստուծով շատ շնո(րհ)ք վեր կալանք ՌՄԼՁ(|)։*

*Թ. 183ա.— Ծիշատակ է սուրբ եւ ընտրեալ ոսկէ հատրնտիր եւ խատակ սուրբ աւետարանս մուտունցի բաէս Ղազարին եւ որդոցն՝ պարոն Շահպազին, Ասվատուրին եւ թոռանցն Սեւօին, Մաժլումին, Մանուկին, Շահինին, Ցալապուն, Մանասին, Շահքարամին, եւ հարսն Գոհարին, Թամամին, Եղիսալին եւ թոռնիկին, Գուլպայեազին, Նուպարին, Փարռն, եւ որք առին զսուրբ աւետարանս եւ եսուն անջնջելի յիշատակ Մուսունա սուրբ Յակոբ կոյին։ Որ եւ պարեպաշտ եւ երկիւղած Ղազարն, եւ կենակիցն Գուլումն, եւ ի հոգւոյ ընկէցն եսուն որ եւ մեայ յիշատակ յաւիտենից... Ով սուրբ եկեղեցու քահանայք եւ մանկունք, խնդրեմք եւ թողաչեմք, որ մէկ հայր մեզայիւ յիշէք բաէս Ղազարն, եւ ուստերցն եւ դստերցն, եւ դուք յիշեալ լինիցիք Ցիսուսէ Քրիստոսէ մերմէ, ամէն։*

*Եւս կրկին պարոն Այվազն եւ կողակիցն իւր Մարիամին, եւ որդոցն՝ Խաչօին, Շահնազարն, Ղարիպջանն, եւ այլ ամենայն մեծ եւ փոքրն, եւ դարձեալ Պետրոսն, եւ իւր կենակից Մահպուպն, եւ որդիքն՝ Ալամչէն, Ասլանն, Յարութիւնն, Սահրատն, Սարօխանն, և սոցին հին եւ նոր ննջեցելոցն ողորմի ասա(ս)ցացն Աստուած ողորմեսցի, ամէն։ Հայր մեր...*

*Ի Տէր Կիրակոսէ ծրեալ ՌՃՁԳ (1734) թվին ունվար ԻԶ (26)։*

*Թ. 194բ.— Սուրբ Յոհաննէս աւետարանիչն է։ Ես գրեցի Յովհաննէս Նուասա վարդապետս դպիր Վարդանին ի 1899 ամի յունիսի 24ն։ Աշտարակեցի ի Ս. Վ. Լ.։*

### № 10
### ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ *308*։— Գրակներ՝ *27, յուրաքանչյուրը 82 թերթից*։— Մեծությունը՝ *17×18,2×6*։— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, ներսից փակցրած է կտոր՝ տպված կարմիր զարդերով*։— Գույնը՝ *երկայուն*։— Պահպանակները՝ *հասարակ թղթից*։— Վիճակը՝ *բավարար*։— Դատարկ թերթեր՝ *87ա—88բ, 234ա—235բ*։— Տողերի թիվը՝ *միջին հաշվով 20*։— Գիրը՝ *բոլորգիր*։— Զարդագրությունը՝ *ոսկի ավետարանիչների նկարները, խորաններ և կիսախորաններ։ Կան բազմաթիվ թռչնագրեր և զարդագրեր*։— Գրչության ժամանակը՝ *ՌՃԻԱ (1672)*։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 307բ.— Սկզբից թերի է։ «...եւ միասնական անբաժանելի սուրբ երրորդութեանն յաւիտենանս յաւիտենից, ամէն։*

*Արդ, շնորհօք Սուրբ Հոգւոյն աւարտեցաք զսուրբ աւետարանս ի յերկիրն Շօշ, որ ասի Ասպահան, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի, ձեռամբ յոգնամեղ Մկրտիչ քահանայի, ի հայրապետութեան տեառն Յակոբի խաղաղասէր կաթողիկոսի եւ ի հովուապետութեան Տէր Դաւթի Ջուղայեցոյ արհեպիսկոպոսի եւ քաջ բաբունապետի հեզահոգի աստուածաբան վարդապետի, ի թուականիս Հայոց ՌՃԻԱ (1672) ամին, ի թագաւորութեան պարսից շահ Սուլէմանին, ի խնդրոյ բարեմիտ եւ երկիւղած...» (վերջը թերի է)։*

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Հիշատակագրություններից երևում է որ ձեռագիրը 1920 թվին պատկանել է Աղեքսանդր քահանա Հակոբյանին, որը գնել է Ջուղայեցի Հարկից (8) ռուբլով։ Թողել է հիշատակագրություններ թ. 1բ—3ա, 85բ—87ա, 233բ—234ա էջերում, ուր խնդրում է հիշել իր ընտանիքի անդամներին, բարեկամներին և ազգականներին։*

(Շարունակելի)

# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԸ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

*Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիային կից Պատմության ինստիտուտի տնօրենության և մասնավորապես Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ազգային մեծ ժողովի պրեզիդիումի փոխ-նախագահ ակադեմիկոս պրոֆ. Կոնստանտինեսկու Յաշի բարյացակամության շնորհիվ, այս տարվա սկիզբը վերսկսավ դասական հայերենի (գրաբար) դասընթացքը Բուքրեշի Սլավ և Արևելյան ինստիտուտին մեջ։*

*Արձանագրված են 28 հայ և ռումեն ուսանողներ, որոնցմե դասընթացքին հետեվեցան կանոնավոր կերպով միայն 24 հոգի, իսկ քննության ներկայացան 20 ուսանողներ։ Քննության արդյունքը շատ գոհացուցիչ էր, որովհետև ուսանողներուն մեծամասնությունը ստացավ լավ նիշ։*

*Հանձնախումբը, որ ներկա եղավ քննության, նկատեց որ ուսանողները մեծ ճիգեր են թափած շատ պատվավոր կերպով ներկայանալու իրենց համար շատ դժվար այս քննության, որովհետև տարվան ընթացքին դասարանը սկսած էր նաև դասական հայերենով գրված բնագրերու ուսումնասիրության։ Հարկ է թերևս հոս հիշատակել, որ երկու հայ ուսանողներ՝ Օրիորդ Պողոսյան և Պարոն Ղրմըրիկյան, ինչպես նաև ռումեն ուսանողուհի Օրիորդ Թեոդորեսկու, ստացան բարձրագույն նիշերը։*

*Ինստիտուտի վարիչները չափազանց գոհ մնացին թե՛ ուսանողներու կանոնավոր հաճախումեն և թե՛ դասընթացքին հետևողներուն ստացած նիշերեն, ինչ որ մասնավորապես վեր հանեց ակադեմիկոս պրոֆ. Կոնստանտինեսկու Յաշ Ինստիտուտի տարեվերջի հանդեսին, հանդես՝ որուն ներկա եղավ նաև Հայաստանյան ճակատի մեկ ներկայացուցիչը։ Ընկ. պրոֆ. Վ. Բրնըցիանու չգոհացավ միայն լեզվի դասերու ավանդումով, այլ շաբաթական ժամ մը ևս հատկացուց Հայոց Պատմության և Հայկ. հնագիտության, իսկ նոր ուսումնական տարեշրջանին, առաջադրած է ավելցնել նաև Հայ գրականության ուսումնասիրությունը, սկիզբեն մինչև մեր օրերը։*

*Ակադեմիկոս Կոնստանտինեսկու Յաշ, ձեռք բերված ընդհանուր գոհացուցիչ արդյունքեն մղված, զոր հաստատեց ինք ևս, հայտարարեց թե՝ Ինստիտուտը պիտի վերածվի պաշտոնական բնույթ ունեցող հաստատության մը, ենթարկվելով Հանրային կրթության նախարարության և Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիային — նախագիծ մը, որ մշակվելու վրա է ներկայիս։ Այս հանգամանքը դպրոցին տվելեն անմիջապես վերջ, ուսանողները պիտի վայելեն պաշտոնական բարձրագույն վարժարանի մը բոլոր իրավունքները և պիտի ստանան վկայականներ և կարելիություններ հայկական հազարավոր գրչագրերու ուսումնասիրության, որոնք պիտի լուսաբանեն մեծ մասամբ կարգ մը Հայոց Պատմության վերաբերյալ խնդիրներ, Ռումեններու պատմության կապակցությամբ։ Բացահայտեց որ ասոր համար պետք պիտի ըլլա հայերեն դասընթացքին մեջ ներմուծել նաև հնագրության և դիվանագիտական թուղթերու ուսումնասիրության դասը։ Կրնանք հաստատապես ըսել թե՝ հայ լեզվի և պատմության ուսումնասիրությունը ընթացավ լավագույն կերպով, շնորհիվ, ինչպես ըսի, լայն հասկացողության ոգիին և օժանդակության ռու-*

մեծ գերագույն գիտական հաստատությանց մարմիններուն։

Հայկական ուսումնասիրության զարկ տալու համար, պրոֆ. Վ. Բընըցիանու պիտի ջանա համարագույն առիթը օգտագործել կազմելու համար գիտական ընկերություն մը «Հայկական ուսումնասիրությանց» նվիրված, որուն կորիզը պիտի կազմեն լավագույն ուսանողները և Ինստիտուտին ապագա շրջանավարտները և ուրիշ հայեր, որոնք կշահագրգռվին այս տեսակ ուսումնասիրություններով։

Կան և դժվարություններ, որոնք պիտի հաղթահարվին. օրինակ՝ դասագրքերու պակասը, ինչպես նաև՝ բնագրերու։ Ասոր լուծումն է՝ կարգ մը ընտիր բնագրերու վերահրատարակությունը, փոքր թվով տեսակ մը հավաքածոյի կազմություն, իսկ դասագրքերու համար պետք է սպասենք հնարավորություններ ստեղծելու արտասահմանեն ստացման և կամ հոս՝ Ռումանիո մեջ տպագրման համար։

Գալով դպրոցական նոր տարեշրջանին. Ինստիտուտի առաջին նիստին որոշվեցավ, որ դասընթացքը սկսվի հոկտեմբեր 1-ին, արձանագրությունները շարունակելով մինչև սեպտեմբեր 30։ Առաջին տարին լրացնող ուսանողները պիտի արձանագրվին երկրորդ տարվան դասընթացքին համար. իսկ վերոհիշյալ թվականին բոլորովին նոր արձանագրվիլ փափաքողները պետք է Ինստիտուտ գան առաջին տարվան դասընթացքը ավարտողներու բարձրության աստիճանին վրա գտնվելու դիտավորությամբ։

Այն ուսանողները, որոնք հետաձգած էին իրենց քննությունը աշնան նստաշրջանին, պետք է ներկայանան Ինստիտուտի քարտուղարության՝ Str. Nic. Iorga, Nr. 21, սեպտ. 20—30.

Կհուսանք, թե հայ երիտասարդությունը պիտի դիմավորե ավելի մեծ շահագրգռությամբ դասական հայերենի դասընթացքի երկրորդ տարին։ Այս գեղեցիկ գործին նախաձեռնողները են եղած Ռումեն բարձրագույն գիտական մարմինները, որոնք այս երկրի համակեցող ազգություններուն կընծայեն լավագույն զարգացման մը բարձր հնարավորությունները։

«Հայաստանյան ճակատ», 25 սեպտ.ի 1949 թ.։

# Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ

«Ես ծառան եմ իմ կարգին և իմ ժողովրդին»։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Դարձյալ մեծ եռուզեռ մը կա Կիլիկիո Կաթողիկոսարանին մեջ։ Վանական գործեր պահ մը կանգ կառնեն և Դպրեվանքի թե Ազգ. Մեսրոպյան Նախակրթարանի ուսանողությունները, Տպարանի ու վանական այլ հաստատությանց գործավորները դաս ու գործ ձգած կուղղվին Վեհարան։ Եպիսկոպոս, վարդապետ, քահանա ու սարկավագներ տոնական օրերու հանդիսավորությամբ տեղ բռնած են Վեհարանին մեջ։ Ինքնաշարժներու շարանը ծայր կուտա և վանքին բակը կլեցուի հայ եկեղեցական ու աշխարհական դասերու ներկայացուցիչներով, որոնք եկած են հարգանքի իրենց տուրքը վճարելու Կիլիկիո Գահակալ Վեհափառ Հայրապետին, որովհետև անիկա պիտի մեկնի Եվրոպա, առողջական և վանական այլ և այլ գործերու հետ կապված պատճառներով։

Այցելումներու աչքին մեջ կպրիսմակվի ուրախության արցունքներուն ծիածանիլը, որովհետև Կիլիկիո գաղթական կաթողիկոսությունը սկսած է վերհառնել և իր դարերու առաքելության նկրտող հարյուրե ավելի իր ուսանողական ու միաբանական կազմով։

Հոն են Կիլիկիո Կաթողիկոսության Կենտրոնական Վարչության հարգելի Ատենապետ՝ Տիար Տաճատ Սրապյան, Լիբանանի Կրոնական Ժողովի արժանապատիվ հայրերն ու Քաղաքական Ժողովի Դիվանի անդամները, Կաթ. Փոխանորդ՝ Գեր. Տ. Խադ. Արքեպիսկոպոսը, Նոր Հաճըն, Թիրո, Ռըմեյլ և Մազրա թաղերու և Զահլե քաղաքի թաղական խորհուրդները, Հ. Բ. Ը. Միության Շրջանային, Տեղական, Կրթական Յանձնախումբի, Տիկնանց և Օրիորդաց օժանդակ, Անդր Նահրի վարչության և այլ ճյուղերու ներկայացուցիչները, Հ. Ե. Ընկերակցության Բեյրութի և Անդր Նահրի զանազան վարչությունները, Թեքեյան Մշակութային Տան Արանց և Կանանց մասնաճյուղերը և այլ կազմակերպ-

ղութիւններու ներկայացուցիչներ և անհատ անձինք։

Ջոյգ զանգակներու ղօղանջը՝ դուրսը՝ հանդիսավոր պահը երբ կավետե, Ներսը Վեհափառ Հովվապետը իր առանձնասենյակին մեջ կընդունի Միաբանության անդամներն ու Դպրեվանքի ուսուցչական կազմը և անոնց յուրաքանչյուրին կուտա իր հայրապետական օրհնությունները ու թելադրությունները և ծափահարությանց տարափին ընդմեջեն մուտք կգործե Վեհարանի դահլիճը ու կխոսի՝ իրեն ողջերթի եկած և զինք սպասող հասարակության և աշակերտության՝ պարզելով անոնց Իր Եվրոպա ուղևորության նպատակը։ Խոր հուզումի ընդմեջեն կը լսվի Անոր ձայնը, որով կապավինի Իր հոտի աղոթքին. «Աղոթեցեք որ արժանի լինեմ Ձեր իմ վրա ունեցած համակրանքին։ Ես ծառան եմ իմ կարգին և իմ ժողովրդին»:

Ժամանակը հասած է և պետք է ճամպաբել դեպի օդակայան։ Վեհը, առաջնորդությամբ Միաբանության անդամներուն, կիջնե Ս. Տաճար և ավագ սեղանի առջև ծնրադիր ու արտասվաթոր կաղոթե... Վեհը վերացած է. կխոսի Աստուծո հետ և Անկե կհայցե անքույթ ճանապարհորդություն.—Տէ՛ր, ուղղեա զգնացս մեր...։

Հոգևոր և աշխարհական հետևորդներու աչքերեն կհոսին արցունքներ։ Կենտրոնական Վարչության Ատենապետ՝ Տիար Տաճատ Սրապյան չի կրնար նույնպես զսպել իր արցունքները և երբ Տաճարեն դուրս կուգա՝ այսպես կարտահայտվի. «Հավատացյալ և անկեղծ հոգևորական մը, որ կհավատա իր գործին և կապրի միայն իր ժողովրդին ու Եկեղեցիին համար»։

Վեհափառ Հայրապետը դուրս կուգա Մայր Տաճարեն և կբազմի իր անձնական կառքին մեջ։

Ցոթանասունէ ավելի ինքնաշարժներու շարանը, առաջնորդությամբ չորս մոտոցիկլիստներու, կշարժի դեպի օդակայան, անցնելով Նահրի հայկական պողոտայեն ու կամուրջեն,— ուր Վեհը կարժանանա ժողովրդական, ուսանողական և սկաուտական կազմակերպությանց հարգանքի արտահայտությանց — Թուրջի վրայով կհասնի օդակայան։

Օդանավ բարձրանալու միջոցին Հ. Բ. Ը. Միության Կանանց և Օրիորդաց օժանդակն ու Թեքեյան Մշակութային Տան Կանանց բաժինը Վեհափառին կմատուցանեն շքեղ ծաղկեփունջեր, մաղթելով Անոր բարի երթուդարձ։

Վեհը բոլորի ծափահարությանց ընդմեջեն թռիչք կառնե օդին մեջ դեպի Եգիպտոս, ընկերակցությամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Գեր. Տ. Դերենիկ Եպիսկոպոսի, 1950 մայիսի 12-ին, կեսօրվան ժամը 12.45-ին։

Բարի և հաջող առաքելություն ու վերադարձ կմաղթենք մեր և ամենուն սիրելի Հայրապետին։

Գ.

(«Հասկ», 1950 թ., № 5, էջ 152—153)

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՅՈՒՐՄԵՅԱՆ, ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔՈՒՄՆԵՐՈՒ. ՓԱՐԻԶ 1950 Թ., 90 ԷՋ

*Ամենապատիվ Արտավազդ Արքեպիսկոպոսը հայագիտության բեղմնավոր աշխատողներից մեկն է։ Նրա գրչին են պատկանում հայոց պատմության և մատենագիտության հարցերին նվիրված ավելի քան քսան աշխատություններ։ Աղբյուրագիտության համար մեծ արժեք ունեն առանձնապես նրա կազմած հայկական ձեռագրաց ցուցակները։ (Նա հրատարակել է Հալեպի հայկական ձեռագրաց ցուցակները երկու հատորով, որոնք լույս են տեսել 1936—1937 թվերին և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հայկական ձեռագրերի ցուցակի առաջին հատորը, որը լույս է տեսել նախանցյալ տարի)։ «Եվրոպայի մասնավոր հավաքումներու հայկական ձեռագրաց ներկա ցուցակը, որի մասին մենք ուզում ենք երկու խոսք ասել, ըստ կարգի, հեղինակի կազմած երրորդ ցուցակն է։*

*Համաշխարհային առաջին մեծ եղեռնից հետո, երբ Արևմտյան Հայաստանի բնակչությունը կոտորվեց կամ տեղահան արվեց, դրա հսկայական հարստության հետ կողոպուտի և կորուստի ենթարկվեցին նաև վանքերում կամ առանձին անհատների սեփականությունը կազմող զգալի թվով ձեռագրեր։ Պատերազմից հետո, երբ նորմալ փոխհարաբերություններ սկսվեցին առանձին երկրների միջև, կողոպտված ձեռագրերից որոշ մասը սկսեց երևալ միջազգային շուկաներում։ Հայկական այդ ձեռագրերի մեծ մասը գնեցին և այժմ գտնում են թանգարանները և մատենադարանները, բայց կան որոշ թվով ձեռագրեր, որոնք գնել են անհատ անձինք։ Արտավազդ Արքեպիսկոպոսը, անցյալի հայ գրչությանը նվիրված վաստակավոր հոգևորականի գովելի տրադիցիայով, երբ եկեղեցական աշխատանքը սերտորեն համատեղում էին մատենագրականին, օգտվելով բարեպատեհ առիթից, որ նա Ամենայն Հայոց Հայրապետության կողմից նշանակված է Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական փաստոր պատվիրակ և հնարավորություն ունի շրջագայել իր համայնքները, հետաքրքրվել և պարզել է՝ թե Արևմտյան Եվրոպական ո՞ր երկրում և ո՛ւմ մոտ ի՛նչ հայկական ձեռագրեր կան, որոնք և ուսումնասիրելով կազմել է քննության նյութ հանդիսացող ձեռագրաց ցուցակը։*

*Հեղինակը ցուցակի առաջաբանում, տվյալ աշխատության կազմելու հանգամանքների մասին խոսելիս, հաղորդել է հետևյալ տեղեկությունը. «1946 օգոստոսեն մինչև 1949 նոյեմբեր, ավելի քան երեք տարի, պաշտոնիս բերումով ուր որ այցելեցինք, հետամուտ եղանք, նույնիսկ լրագրական հայտարարությամբ, փնտռելու հայերեն ձեռագիրներ ու ցուցակագրելով փրկելու անոնց մատենագրական ու գեղարվեստական բովանդակությունն ու արժեքը հօգուտ հայ և օտար բանասիրության»։*

*Արտավազդ Սրբազանի կազմած ձեռագրաց այս ցուցակը պարունակում է 38 հայկական ձեռագրերի նկարագրությունը։ Տարբեր անհատների մոտ ցրված այդ ձեռագրերը գրված են զանազան ժամանակներում՝ սկսած ԺԳ (13-րդ) դարից մինչև ԺԷ (17-րդ) դարը։ Իրենց բովանդակությամբ նրանք, մեծ մասամբ, կրոնական-կանոնական տեքստեր են՝ ավետարաններ, շարակնոցներ, սաղմոսարաններ, մաշտոցներ, ժամագրքեր և այլն։ Ոչ կանոնական տեքստերից ուշադրության արժանի են՝ «Ճառք Ս. Ներսէս Լամբրոնացւոյ» (№ 25) «Կանոնագիրք» (№ 26), «Երգարան» (№ 30) «Համառօտ հաւաքումն վարդապետաց» (№ 31) և մի քանի այլ ձեռագրեր։*

*Նկարագրված 38 ձեռագրերի մեջ մանրանկարչական մեծ արժեք ունեցող ունիկում ձեռագիրը՝ Կիլիկիո հայոց Լևոն թագավորի պատվերով գրված ժամագիրքն է։ Ձեռագրի գրիչն ու ծաղկողն է Ստեփան Վահկացին։ Գրչության վայրը որոշակի հայտնի չէ, բայց պիտի ենթադրել, որ նա գրած պիտի լինի Սսում կամ Արքայակաղին վանքում։*

*Գրչի թողած հիշատակարաններից ուշադրության արժանի է ձեռագրի գրչությանը վերաբերվող հետևյալ տեղեկությունը. «...Նուաստ յորդիս եկեղեցոյ և փծուն գրիչս Ստեփաննոս Վահկայցի յանգ ելեալ կատարեցի հրամանաւ և ծախիւք քրիստոսապսակ բարեպաշտին և աստուածուննակ արքային Հայոց Լեւոնի՝ որդւոյ Հեթմոյ, որդւոյ Կոս-*

տանդեռ(յ) և մայրենի ազգաւ՝ որդի Զապէլ Թագուհոյ, որդւոյ Լեոնի Թագաւորին Հայոց առաջնոյ յԽորհինանցս։

Խոսքն այստեղ Լևոն երկրորդի մասին է, Հեթումի որդու, որը գահակալել է 1270—1282 թվերին։ Ճիշտ է վարվում Արտավազդ Սրբազանը, երբ նույն ձեռագրում գրչության ժամանակի մասին եղած ուշ շրջանի մի սխալ հիշատակագրությունը՝ 1224 թիվ, առաջարկում է ուղղել 1274 թվով։ Անկասկած, այդ սխալը առաջացել է հիշատակագրի շփոթության պատճառով։

Ձեռագրի գրիչը՝ Ստեփաննոս Վահկացին հայ մատենագրության մեջ ճանաչված անձն է։ Մեզ են հասել նրա օրինակած երկու ավետարանները, մեկը 1279 թ. Սսոյ Ս. Հոգի վանքում (տե՛ս Զարբ. Հին. դպր., էջ 802) իսկ մյուսը՝ 1280 թ. (տե՛ս Conybeare M. A., A Catalogue of the Armenian Manucripts in the British Museum, London, 1913, p. 13)։

Իր հնությամբ և մանրանկարչական արվեստով արժեքավոր է նույնպես № 15 ավետարանը, որը սակայն հեղինակը ի վիճակի չի եղել մանրամասն նկարագրել, որովհետև ձեռագրի սեփականատերը ձեռագիրը հեղինակի տրամադրության տակ դրել է ընդամենը կես ժամ։ Այդ մասին բանասեր հեղինակը, դառնացած, տվել է էջի տակ հետևյալ ծանոթությունը. «Այս արժեքավոր Ավետարանը քննելու և ցուցակագրելու համար, դժբախտաբար, ինձի միայն կես ժամ ատեն տրվեցավ. այլապես պարտավոր էի ավելի երկար ատեն կենալ անոր գեղարվեստական հորինվածքներու առջև»։

Ցավալի է ասել, որ երբեմն ձեռագրի տեր անհատները այնքան անգետ մարդիկ են, որ ո՛չ միայն չգիտեն և ի վիճակի չեն որոշել իրենց ունեցած ձեռագրի արժեքը, այլ և իրենց մտավոր սահմանափակվածությամբ նույնիսկ դժվարություններ են ստեղծում մտքի անխոնջ մշակների առաջ։ Այդպիսիների համար ձեռագրերը ո՛չ թե անցյալի մշակույթի նվիրական փշրանքներ են, որի մեջ անցյալով զբաղվող մասնագետները տեսնում են մեր նախնիքների ստեղծագործական պատկերը, այլ զարդարանք, յուրատեսակ մնացած, բյուրեղացած մի իր՝ ձեռագրական հավաքածուն մեծցնող։

Պատմական մեծ արժեք ներկայացնող հիշատակարանները և հիշատակագրությունները, համեմատաբար, քիչ են, սակայն կան մի քանիսը, որոնք կապված են 16—17-րդ դարերի պատմական իրադրությունների հետ։

Ձեռագրերը նկարագրված են մանրամասն. նախ տրվում է ձեռագրի սիգնատուրան, ապա բերվում է պարունակած նյութի բովանդակությունը, ուր բացի վերնագրից մեջ է բերվում նաև տեքստի սկսվածքը, և վերջում, առանց կրճատումների, տրվում են հիշատակարանները և հիշատակագրությունները։ Եթե ձեռագիրն անցյալում ունեցել է որևէ թվահամար, այդ ևս նշված է ձեռագրի նկարագրությունից առաջ։ Ի դեպ, այդ շատ կարևոր է տվյալ ձեռագրի պատմությունը վերականգնելու տեսակետից։

Ցուցակը տպագրված է լավորակ թղթի վրա։ Տպագրությունը մաքուր է։ Ցուցակը վերջում ունի հատուկ անունների ցանկ, որը զգալի չափով հեշտացնում է ուսումնասիրողների գործը։

Արտավազդ Սրբազանի ներկա աշխատությունը շնորհակալ գործ է հայագիտության համար։ Մեղվաշան հոգևորականի ներկա ցուցակը մեծ պատիվ է ո՛չ միայն իրեն, այլ հայ հոգևորականության ընդհանրապես, որ անցյալում քիչ մուծումներ չի արել հայ մշակույթի գանձարանում և ջանք չի խնայել խնամքով ու փայփայանքով պահել ու մեզ հասցնել, անցյալի նվիրական այդ հիշատակարանները։

Ա. Ա.

# ՍՓՅՈՒՌՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## UN ART FONDAMENTAL: LE TAPIS

## (ՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ՝ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)

(Ալբերտ Աչչյան, Փարիզ, 1949 թ., 287 էջ)

*Տիար Ալբերտ Աչչյանը, Հայկական թանգարանի ընդհանուր քարտուղարը Ֆրանսիայում և հիմնադիրը, 1949 թվին Փարիզում հրատարակել է մի ստվար հատոր, նվիրված գորգագործության ուսումնասիրությանը։*

*Հարգելի արվեստագետը իր աշխատասիրությունից մի օրինակ, հատկապես տպագրված ընտիր թղթի վրա, նվիրել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ. ին, նշելով այդ մասին.* „Exemplaire imprimé spécialement pour sa Sainteté Kévork VI, Catholicosse des Arméniens du Monde et offert par l'auteur".

*Մեծածավալ այս հատորը բաղկացած է 287 էջից, չհաշված առջևի պահպանակներն ու վերջի բովանդակությունը։*

*Հեղինակին աշխատակցել են, ինչպես ցույց է տալիս հատորի վերջում զետեղված հիշատակագրությունը, մի խումբ մասնագետներ տարբեր արվեստների գծով։*

*Աշխատությունը Ֆրանսերենից թարգմանվել է անգլերենի տիկին Դեգորիի կողմից, և հրատարակվել երկու լեզուներով, հանդիպակաց երկու էջերի վրա և երբեմն միևնույն էջում միմյանց տակ։ Ցավալի է, որ զուգընթաց չի տրված հայերենը։*

*Հատորի սկզբում տրվել է մի քարտեզ գորգի գործվածքի տեղագրության վերաբերյալ։ Գրքի առաջաբանին հաջորդում է «Հրատարակչի ազդը (էջ 28—30) և ապա մի գլուխ՝ Գորգերի պատրաստության, պահպանման, նորոգության և փորձագիտության (էքսպերտիզացիա) մասին (էջ 30—39)։ Հաջորդական գլուխներում քննության են առնվում եգիպտական (էջ 43—50), հայկական (էջ 53—90), պարսկական (էջ 93—124), հնդկա-պարսկական (էջ 127—132), իսպանա-արաբական (էջ 135—142), աֆղանական (էջ 145—146), թյուրքեստանական (էջ 149—158), չինական և հնդկաչինական (էջ 161—172), փոքր-ասիական (թյուրքական) (էջ 175—214), Բալկանների (էջ 217—224), լեհական (էջ 227—234), իսպանական և պորտուգալական (էջ 237—248) գորգերն ու կապերտները (կիլիմ) և այլն։ Աշխատության վերջում տրված է ընդարձակ բիբլիոգրաֆիա գորգագործության մասին։*

*Աշխատությունը պատկերազարդված է։ Միագույն (սև) պատկերներից և մասնագիտական բացատրությունների հատուկ գծագրություններից և մակետներից բացի, կան գունատիպ իլյուստրացիաներ։*

*Հեղինակը ընդարձակ տեղ է հատկացնում հայկական գորգի ուսումնասիրությանը։ Նա իր աշխատության մեջ նկատի է առնում 13-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին կեսի աչքի ընկնող հայկական գորգերի նմուշները։ Հայաստանում «Դեկորատիվ արվեստների միջև,—ասում է աշխատասիրողը,— գորգագործությունը վստահաբար առաջին կարգի վրա կարելի է դնել։ Ամենահին գորգերը, կամ հանգուցավոր գորգերի կտորները, որոնց վրա մենք կարող ենք հիանալ մեր օրերում, հայկական են»։ Հեղինակը շեշտում է՝ թե հայկական գորգերը իրենց հատկանշական գծերը կորցրին, երբ Հայաստան ընկավ օտարների տիրապետության տակ։ Իհարկե, ցանկալի է, որ նա առիթը ունենար գտնվելու Սովետական Հայաստանում, որտեղ մեր արվեստագետները ճարտարապետության, քանդակագործության, մանրանկարչության, գորգագործության կամ արվեստի այլ բնագավառներում, ծաղկեցնում են հայ արվեստը, օգտագործելով հին և ընտիր մոտիվները։ Այս մասին, դժբախտաբար, կանգ չի առել աշխատասիրողը։*

*Արվեստների պատմությամբ զբաղվողների և գորգի մասնագետների համար հետաքրքիր և օգտավետ գործ է այս հատորը։*

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սերվանտես, *Հնարամիտ Հիդալգո Դոն Կամանչեցի, հատոր 1-ին, խմբագրություն և առաջաբան Հ. Մամիկոնյանի, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 494 էջ, տիրաժ 5.000։*

Միկլուխո-Մակլայ, *Ճանապարհորդություններ, թարգմանություն Ս. Սուքիասյանի, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 329 էջ, տիրաժ 5.000։*

Սիրաս Հմայակ, *Արարատ, վեպ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 744 էջ, տիրաժ 5.000։*

Տոլստոյ Ալեքսեյ, *Տառապանքի ուղիներով, Տրիլոգիայի 2-րդ մասը, Տասնութ թիվը, թարգմանություն Ա. Խոնդկարյանի, Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 448 էջ, տիրաժ 4.000։*

Տոլստոյ Ալեքսեյ, *Տառապանքի ուղիներով, Տրիլոգիայի 3-րդ մասը, Մռայլ առավոտ, թարգմանություն Ա. Խոնդկարյանի. Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 547 էջ, տիրաժ 4.000։*

Խաչատրյան Մ. Մ. *(դոցենտ), Քարտեզագծություն, քարտեզ կազմելու և հրատարակելու աշխատանքներ, Հայկ. ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1949 թ., 277 էջ, իլյուստրացիաներով, տիրաժ 1.100։*

Տրոնսկի Ի. Մ., *Անտիկ գրականության պատմություն, մասն 1-ին, Հունական գրականություն, Հայկ. ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1949 թ., 463 էջ, տիրաժ 1.500։*

Մկրտչյան Աշոտ *(դոցենտ), Նյութեր 10—18 դարերի Հայոց գրականության պատմության, պրակ 2-րդ, Հայկ. ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1949 թ., 178 էջ, տիրաժ 2.500։*

Գրիգորյան Հրաչյա, *Սոցիալիստական ռեալիզմի պոեզիայի հիմնադիրը (Վլադիմիր Մայակովսկի), Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 338 էջ, տիրաժ 3.000։*

Թաքիկյան Շահեն, *Հաղթանակի օրը (արձակ բանաստեղծություններ և պատմվածքներ), Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 152 էջ, տիրաժ 5.000։*

Մուրադյան Մ. Հ., *Քրիստափոր Կարա-Մուրզա, կյանքը և երաժշտական-հասարակական գործունեությունը, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 149 էջ, տիրաժ 1.000։*

Ղուկասյան Հովհաննես, *Խավարի աշխարհում, վեպ Իրանի կյանքից, 1-ին մաս, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 183 էջ, տիրաժ 4.000։*

Երիտասարդ գրողների ալմանախ *(արձակ և չափածո գրվածքներ), 1-ին գիրք, խմբագրություն Հ. Սիրասի և Ս. Վահունու, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 175 էջ, տիրաժ 4.000։*

Զարյան Նաիրի, *Աղբյուրի մոտ, Կոմեդիա 4 արարով, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 66 էջ, տիրաժ 2.000։*

Գուլիա Գեորգի, *Գարունը Սակենում, թարգմանություն Բ. Շահումյանի, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 238 էջ, տիրաժ 5.000։*

Կոզլով Ի., *Ղրիմի ընդհատակում, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 473 էջ, տիրաժ 4.000։*

Շարիրյան Մ., *Պատմվածքներ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 203 էջ, տիրաժ 4.000։*

Վասիլևսկայա Վանդա, *Ծիածան, վիպակ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., տիրաժ 5.000։*

Գորկի Մաքսիմ, *Գրական հրապարակախոսական հոդվածներ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 478 էջ, տիրաժ 5.000։*

Գորկի Մաքսիմ, *Երկերի ժողովածու, 4-րդ հատոր, պիեսներ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 572 էջ, տիրաժ 5.000։*

Գորկի Մաքսիմ, *Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Մայրը և Ամերիկայում, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 598 էջ, տիրաժ 5.000։*

Հոգնրանություն, *պրոֆ. Կոռնիլովի խմբագրությամբ, 3-րդ վերամշակված և լրացված հրատարակություն, Հայկ. ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1950 թ., 706 էջ, տիրաժ 2.000։*

Տոլստոյ Լև, *Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, Հարություն, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 613 էջ, տիրաժ 5.000։*